Ի՞ՆՉ ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս ԽՈՍԵԼ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Հանրակրթական դպրոցների «Հասարակագիտություն» առարկայի

7-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ

ՈՒՍՈՒՑՉԻ ՁԵՌՆԱՐԿ

ԻՆՉ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԽՈՍԵԼ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Հանրակրթական դպրոցների
«Հասարակագիտություն» առարկայի

7-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ

ՈՒՍՈՒՑՉԻ ՁԵՌՆԱՐԿ

Երևան 2024

Սույն ձեռնարկը մշակվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից՝ Շվեդիայի կառավարության աջակցությամբ:

Բովանդակության համար պատասխանատվություն են կրում հեղինակները, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Շվեդիայի կառավարության տեսակետները:

Ձեռնարկը ենթակա չէ վաճառքի:

ՀՏԴ 373.016:343.35:328.185
ԳՄԴ 74.2+67.518.1g7
Հ 843

Հեղինակ՝ Անահիտ Հովակիմյան
Հիմնական փորձագետներ՝ Սերոբ Խաչատրյան, Հայաստան Գրիգորյան, Սոնա Այվազյան, Արմեն Խուդավերդյան, Անուշ Հակոբյան
Պատասխանատու խմբագիր՝ Մարիամ Հովեյան

Ձևավորող՝ Նորա Գալֆայան
Օգտագործված պատկերները՝ freepik կայքից

Հ 843 Ի՞նչ և ինչպե՞ս խոսել կոռուպցիայի մասին: Հանրակրթական դպրոցների «Հասարակագիտություն» առարկայի 7-12-րդ դասարանների ուսուցչի ձեռնարկ / Ա. Հովակիմյան.- Եր.: «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, 2024.- 256 էջ:

Դպրոցականների և ուսուցիչների շրջանում կոռուպցիայի և դրա դեմ պայքարի մասին իրազեկվածության բարձրացման նպատակով «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ն մշակել է «Ի՞նչ և ինչպե՞ս խոսել կոռուպցիայի մասին» ուսուցչի ուսումնաօժանդակ ձեռնարկը: Ձեռնարկի վեց գլուխներում ներկայացված են տեսական նյութեր, գործնական աշխատանքներ, ինչպես նաև ուսումնաօժանդակ նյութեր սովորողների և ուսուցիչների համար:

Ձեռնարկը երաշխավորվել է գործածության ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի հունիսի 26-ի N 1151-Ա/2 հրամանով:

ISBN 978-9939-1-1892-5
© «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, 2024
Կայքէջ՝ www.transparency.am

Բովանդակություն

Նախաբան 5
Ինչո՞ւ է կարևոր հակակոռուպցիոն կրթությունը 6
Կոռուպցիային առնչվող թեմաների դասավանդման առանձնահատկությունները 8
Ինչպե՞ս օգտվել ձեռնարկից 11
Օգտագործված հապավումներ 13

ԳԼՈՒԽ 1. 7-րդ դասարան 14
1.1 Մարդ-հասարակություն 16
1.2 Մարդ-բարոյականություն 21
1.3 Մարդ-իրավունք 27
1.4 Մարդ-տնտեսություն 31
1.5 Նախագծային աշխատանք 35

ԳԼՈՒԽ 2. 8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ 40
2.1 Ի՞նչ է արդարությունը: Արդարության իրավական և բարոյական կողմերը 42
2.2 Հավասարություն 46
2.3 Պատասխանատվություն և հանդուրժողականություն 51
2.4 Ժողովրդավարություն 57
2.5 Կոռուպցիա և իշխանության չարաշահում 64
2.6 Նախագծային աշխատանք 89

ԳԼՈՒԽ 3. 9-րդ դասարան 94
3.1 Ընտրություններ 96
3.2 Հանրային բարիք և անձի ինքնագիտակցություն 104
3.3 Հանրային քաղաքականության գործընթացները և հիմնախնդիրները 110
3.4 Ակտիվ քաղաքացի 117
3.5 Մասնակցություն և առաջնորդություն 125
3.6 Քաղաքացիական հասարակություն.Հասարակական կազմակերպություններ 132
3.7 Շուկայական տնտեսությունը՝ որպես ազատ ձեռնարկատիրության հենասյուն 137
3.8 Նախագծային աշխատանք 143

ԳԼՈՒԽ 4. 10-րդ դասարան 148
4.1 Ժամանակակից մարդու և հասարակության հիմնախնդիրները 150
4.2 Շուկայական տնտեսություն 156
4.3 Նախագծային աշխատանք 164

ԳԼՈՒԽ 5. 11-րդ դասարան 170
5.1 Իրավախախտում և պատասխանատվություն: Իրավական պատասխանատվության սկզբունքները 172

5.2 Արդարադատություն 178
5.3 Պետության դերը հասարակության մեջ 184
5.4 Պետական իշխանության բաժանման հիմնախնդիրը 187
5.5 Ազգային անվտանգություն 193
5.6 Պատերազմը որպես հասարակական երևույթ 199
5.7 Նախագծային աշխատանք 203

ԳԼՈՒԽ 6. 12-րդ դասարան 208
6.1 Ինդուկցիա 210
6.2 Դեդուկցիա 212
6.3 Պատճառահետևանքային կապի պարզում 214
6.4 Նախագծային աշխատանք 217

ՀԱՎԵԼՅԱԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 222
1. Հակակոռուպցիոն բառարան 224
2. ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների ցանկ 229
3. Առցանց ռեսուրսներ ուսուցիչների համար 238
4. Թեմատիկ կառույցների և պետական կառավարման հարթակների մասին տեղեկատվություն 239
5. Հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամների և մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոններ 243

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 248

Նախաբան

Սույն ձեռնարկը ստեղծվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից՝ նպատակ ունենալով ինտեգրել հակակոռուպցիոն կրթությունը հանրակրթական դպրոցի 7-12-րդ դասարաններում դասավանդվող «Հասարակագիտություն» առարկայում, ինչը հնարավորություն կտա հարստացնել դասագրքային նյութը և աշակերտներին իրազեկել կոռուպցիայի, դրա հասցրած վնասների և դրա դեմ պայքարի կարևորության, բարեվարքության սկզբունքներով առաջնորդվելու անհրաժեշտության մասին: Ձեռնարկը մշակվել է հաշվի առնելով հանրակրթական ուսումնական հաստատություններում գործող առարկայական չափորոշիչներն[1] ու ծրագրերը:

Ձեռնարկը կազմված է վեց գլխից, որոնցում ներկայացված են ինտեգրվող դասերը՝ ըստ դասարանների և թեմաների, ինչպես նաև «Հավելյալ ռեսուրսներ» բաժնից, որտեղ ներկայացված են ուսուցիչների և աշակերտների համար նախատեսված ռեսուրսները, այդ թվում՝ հասկացությունների բառարանը: Վեց գլուխներում յուրաքանչյուր դասարանի առարկայական ծրագրի և չափորոշչի պահանջներին համապատասխան ներկայացված են կոռուպցիայի և ինտեգրվող թեմաների միջև կապը ներկայացնող տեսական նյութեր, գործնական աշխատանքներ, ինչպես նաև ուսումնաօժանդակ նյութեր սովորողների և ուսուցիչների համար: Ձեռնարկում ներառված են նաև նախագծային աշխատանքներ, ինչը հնարավորություն կտա սովորողներին ավելի խորքային ուսումնասիրություններ իրականացնելու կոռուպցիային առնչվող թեմաներով, զարգացնելու ստեղծագործական, հետազոտական, վերլուծական և քննադատական մտածողությունը, խմբով աշխատելու կարողությունը:

Ձեռնարկում ներկայացված նյութերն ու առաջադրանքներն ուսուցիչները կարող են նաև օգտագործել «Դասղեկի ժամի» ընթացքում՝ կոռուպցիայի մասին խոսելու կամ թեմատիկ քննարկումներ կազմակերպելու համար: Ձեռնարկը կարող է հիմք հանդիսանալ նաև հակակոռուպցիոն ուղղվածությամբ դպրոցական խմբակների բովանդակության մշակման համար:

Մենք խրախուսում ենք «Հասարակագիտություն» առարկայում առկա կոռուպցիայի մասին թեմա/ներ/ի՝ ուսումնական տարվա վաղ փուլերում ուսումնասիրությունը, քան նախատեսված է դասագրքի թեմաների հաջորդականությամբ, քանի որ դա հնարավորություն կտա ավելի արդյունավետ ինտեգրելու հակակոռուպցիոն կրթությունն ուսումնասիրվող մյուս թեմաներում:

Ձեռնարկում տեղ գտած որոշ օրինակներ և տեսական նյութի հատվածներ ընթերցողները կարող են ասոցացնել տարբեր իշխանությունների ու քաղաքական գործիչների հետ, սակայն մենք խորհուրդ ենք տալիս քննարկման առարկա դարձնել տեղի ունեցած երևույթները՝ խուսափելով դրա քաղաքականացումից:

---

1 7-րդ և 10-րդ դասարանների թեմաները մշակվել են հաշվի առնելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի նոյեմբերի 24-ի «Հանրակրթական ուսումնական հաստատությունների 7-րդ և 10-րդ դասարանների «Հասարակագիտություն» առարկայի ծրագրերը հաստատելու մասին» N 62-Ն հրամանը:

Ինչո՞ւ է կարևոր հակակոռուպցիոն կրթությունը

Կրթությունը վճռորոշ դեր է խաղում հասարակության վարքագծի փոփոխության, նոր արժեքների ձևավորման և նոր սոցիալական նորմերի ներմուծման գործում: Այն մարդկանց հնարավորություն է տալիս մարտահրավեր նետել արմատացած համոզմունքներին, պայքարել խտրականության դեմ և սեփական համայնքներում խթանել ներառականությունն ու հանդուրժողականությունը: Համոզմունքները, գիտելիքները, վերաբերմունքը և կենսափորձը, որոնցով առաջնորդվում է մարդը, մղում են նրան ինչպես հասարակության համար ընդունելի և օրինակելի ակտիվության, այնպես էլ խիստ դատապարտելի արարքների: Դրանով իսկ պայմանավորված՝ սովորողներին հակակոռուպցիոն գիտելիքների փոխանցումը և կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժող վերաբերմունքի ձևավորումը կոռուպցիայի կանխարգելման արդյունավետ միջոցներից մեկն է ամբողջ աշխարհում:

Հակակոռուպցիոն կրթության նպատակն է ստեղծել արժեքներ և զարգացնել գիտելիքներ, հմտություններ ու մտածելակերպ, որոնք անհրաժեշտ են սովորողների՝ կոռուպցիայի դեմ քաղաքացիական դիրքորոշումը ձևավորելու համար: Արդյունքում քաղաքացիները տեղեկացված կլինեն կոռուպցիայի սպառնալիքների, հասցրած վնասների մասին,[2] կառաջնորդվեն բարեվարքության սկզբունքներով և կցուցաբերեն բարեվարք վարքագիծ:

Հակակոռուպցիոն կրթության միջոցով սովորողների իրազեկման մակարդակի բարձրացումը լուծում է մի քանի կարևոր խնդիրներ, որոնցից են՝

1. «կոռուպցիա» երևույթի, դրա տեսակների, պատճառների ու հետևանքների, բարեվարքության էության, դրա սկզբունքներով առաջնորդվելու կարևորության իմացություն.

2. կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժող վերաբերմունքի, բարեվարք վարքագծի դրսևորման խրախուսում և ձևավորում.

3. կոռուպցիայի դեմ պայքարի գործում կամավորության խրախուսում և այնպիսի հըմտությունների զարգացումը, ինչպիսիք են դպրոցի և համայնքի կյանքում մասնակցությունը, տեղեկություններ գտնելը, մշակելը, փոխանցելը, քննադատական մտածողությունը և խնդիրների լուծումը, նախաձեռնողականություն դրսևորելը, անկախ գործելը, սեփական արարքների համար պատասխանատվություն կրելը և այլն.

4. այնպիսի արժեքների և հատկանիշների սերմանում, ինչպիսիք են ժողովրդավարական արժեքների նկատմամբ հարգանքը, երկրում տեղի ունեցող գործընթացների նկատմամբ հետաքրքրությունը, շարունակական ինքնակատարելագործումը, գիտելիքների հարստացումը, ազնվությունը, սեփական ու այլոց արարքների և վարքագծի համար պատասխանատվությունը և այլն:[3]

---

2 Project Against Corruption in Albania, Education against corruption, Manual for teachers, Tirana, 2012, page 15 https://rm.coe.int/education-against-corruption-en/168078299e (դիտված՝ 31.10.2023 թ.)

3 Project Against Corruption in Albania, Education against corruption, Manual for teachers, Tirana, 2012, 15-16 pages, https://rm.coe.int/education-against-corruption-en/168078299e (դիտված՝ 14.9.2023 թ.)

Դպրոցը պետք է դիտարկել որպես կոռուպցիայի կանխարգելման կարևորագույն օղակներից մեկը, որի շնորհիվ սովորողները ձեռք կբերեն կոռուպցիայի դեմ պայքարի համար անհրաժեշտ գիտելիքներ: Այսօր բազմաթիվ երկրներում նկատվում է հակակոռուպցիոն թեմաները դպրոցական տարբեր առարկայական ծրագրերում ինտեգրելու միտում, իսկ արդեն ավագ դպրոցի ծրագրերում ներառվում են կոռուպցիային վերաբերող առանձին թեմաներ և գլուխներ: Կոռուպցիայի հասցրած վնասներն անձնականից մինչև համամարդկային մակարդակում, սեփական երկրից մինչև միջազգային համատեքստում տեսնելը, դրա հետևանքները հասարակությունների, պետությունների և մարդու ճակատագրի վրա ուսումնասիրելը սովորողների համար ակնհայտ է դարձնում սեփական վարքագիծը փոխելու և ուրիշների ոչ էթիկական գործողությունները չհանդուրժելու անհրաժեշտությունը: Այսօրվա դպրոցականը վաղը պետք է ոտք դնի ինքնուրույն կյանք և բախվի կոռուպցիոն ամենատարբեր իրավիճակների, որոնցում արագ կողմնորոշվելու և ճիշտ որոշումներ կայացնելու կարողությունը նրան հնարավորություն կտա կայացնել ճիշտ որոշումներ և դրսևորել օրինավոր քաղաքացու վարքագիծ:

Հայաստանում կոռուպցիայի տարածվածության մակարդակով և կոռուպցիոն ամենատարբեր դրսևորումների նկատմամբ հասարակության ոչ միանշանակ դատապարտող վերաբերմունքով պայմանավորված՝ հակակոռուպցիոն կրթության կազմակերպումը դառնում է օրվա հրամայականը: Հակակոռուպցիոն կրթությունը կօգնի պայքարել հասարակության լայն զանգվածների կողմից կոռուպցիոն դրսևորումները չճանաչելու և որպես կոռուպցիա չնույնականացնելու, սովորութային ուժով ամենատարբեր կոռուպցիոն գործարքներում մասնակցելու և ընդհանրապես կոռուպցիայի մասին սակավ գիտելիքներ ունենալու դեմ:

Հայաստանի Հանրապետության հանրակրթական համակարգի բարեփոխումների շրջանակներում սահմանվել են ութ ընդգրկուն և բարդ կարողունակություններ, որոնց պետք է տիրապետի դպրոցի շրջանավարտը:[4] Դրանցից մեկը քաղաքացիական կարողունակությունն է, որի հետ այս կամ այն չափով կապված են մնացած բոլորը: Քաղաքացիական կրթությունը կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, եթե սովորողները սովորեն կիրառել իրենց կարողունակությունները իրական խնդիրներ լուծելու համար, և դա այն փորձն է, որը թույլ կտա նրանց հետագայում անցնել ավելի մեծ ու հեռավոր խնդիրների լուծմանը:[5]

Փոփոխությունները սկսվում են կրթությունից և դպրոցականներին կոռուպցիայի դեմ պայքարի արժեքներով կրթելը, նրանց բարեվարք վարքագծի խրախուսումը կնպաստի կոռուպցիան չհանդուրժող հասարակության ձևավորմանը:

---

4 Գևորգ Տեր-Գաբրիելյան, Քաղաքացիական կրթության կարողունակությունները գնահատելու գործիքը մշակելու ճանապարհին, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2021 թ, էջ 10, https://epfarmenia.am/sites/default/files/Document/Civics_Competence_Arm.pdf (դիտված՝ 10.12.2023 թ.)

5 Գևորգ Տեր-Գաբրիելյան, Քաղաքացիական կրթության կարողունակությունները գնահատելու գործիքը մշակելու ճանապարհին, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2021 թ, էջ 33, https://epfarmenia.am/sites/default/files/Document/Civics_Competence_Arm.pdf (դիտված՝ 10.12.2023 թ.)

Կոռուպցիային առնչվող թեմաների դասավանդման առանձնահատկությունները

Ինչպես արժեքային ուսուցման շատ այլ օրինակներում, կոռուպցիայի մասին խոսելը, դասավանդելը, դրա միջոցով սովորողների մեջ կոռուպցիայի նկատմամբ բացասական վերաբերմունք ձևավորելը դյուրին աշխատանք կոչել չենք կարող: Ի տարբերություն մյուս թեմաների դասավանդման՝ կոռուպցիային առնչվող թեմաների դասավանդումն ունի մի շարք առանձնահատկություններ: Ներկայացնենք դրանցից ամենատարածվածները:

1. Սովորողների և նրանց մերձավորների առօրյա կյանքում հանդիպող իրավիճակներում կոռուպցիան օգնում է առանց ավելորդ ջանքերի լուծել որոշ խնդիրներ, որով պայմանավորված՝ կարող է ձևավորվել դրական վերաբերմունք կոռուպցիայի նկատմամբ:

2. Կոռուպցիայի մեջ ներգրավված անձինք հասարակության մեջ երբեմն ներկայացվում են որպես «հեղինակություններ», որոնք կարողանում են խուսափել օրենքներից և լուծել իրենց ու մերձավորների խնդիրները՝ նույնիսկ անլուծելի թվացողները: Այստեղ գործ ունենք արմատացած, ընդունված մոտեցումների, կարծրատիպերի հետ, որոնք «արդարացնում են» կոռուպցիոն երևույթները, իսկ կոռումպացված անձինք դիտարկվում են որպես ընդօրինակման մոդել մյուսների, այդ թվում՝ երիտասարդ սերնդի համար:

Այսպիսով, ունենալով հնարավոր դրական պատկերացումներ կոռուպցիայի և դրանում ներգրավված անձանց մասին, աչքի առաջ ունենալով բազմաթիվ օրինակներ, երբ կոռուպցիոն գործարքներն օգնել են առանց երկար ընթացակարգերի և իրենց համար ցանկալի արդյունքով լուծելու խնդիրները, սովորողները մուտք են գործում դպրոց, որտեղ կոռուպցիան ներկայացվում է որպես բացասական ու հանրության շահերին վնաս հասցնող երևույթ: Առաջանում է հակասություն դպրոցից դուրս ընդունված մոտեցումների, իրական կյանքում առկա իրողությունների, դրանց գնահատականների և դպրոցում ներկայացվող ու սերմանվող մոտեցումների միջև: Դրանով պայմանավորված՝ լուրջ ջանքեր են պահանջվում ուսուցչից սովորողների մեջ կոռուպցիայի նկատմամբ դրական վերաբերմունքը չեզոքացնելու, բացասական դիրքորոշում ձևավորելու և վարքագծի փոփոխություն ապահովելու համար:

Հոգեբանական տեսանկյունից կոռուպցիան ընկալվում է որպես մարդու ախտաբանական (պաթոլոգիական), սոցիալական նորմից շեղվող վարք: Սոցիալական ուսուցման տեսության, ուսուցման վարքաբանական, կոգնիտիվ տեսությունների ինտեգրումը դասապրոցեսում թույլ կտա սովորողների մեջ զարգացնել կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժող վերաբերմունք:[6] Օրինակ՝ սոցիալական ուսուցման տեսությունը պնդում է, որ մարդու վարքը ձեռք է բերվում ընդօրինակման և մոդելավորման միջոցով: Ըստ այս տեսության՝ մարդու վարքի վրա ազդում են ոչ միայն միջավայրը և անձնային գործոն-

6 Upneet Lalli, Praveen Kumari Singh, The Psychology of Corruption, page 12, https://mu.ac.in/wp-content/uploads/2023/08/198-214-The-Psychology-of-Corruption.pdf (դիտված՝ 2.11.2023 թ.)

ները, այլ հենց ինքը՝ մարդը, կարևոր դեր է խաղում շրջակա միջավայրի պայմանների ստեղծման գործում: Ուստի մարդը կարող է սովորել ոչ միայն սեփական փորձի, այլև այլ մարդկանց վարքը դիտելու և կրկնօրինակելու միջոցով:[7]

Ուսուցման գործընթացում մենք պետք է շեշտադրենք դրական փորձը, լավագույն և հաջողված օրինակները, դրանց քննարկումն ու գնահատումը սովորողների կողմից: Ելնելով դրանից՝ առաջին պլան է մղվում դպրոցի աշխատակազմի բարեվարք վարքագիծ ցուցաբերելու, սովորողների շրջանում հեղինակություն վայելող, ճանաչում ունեցող անձանց խրախուսելի վարքագիծը ներկայացնելու կարևորությունը, որը թույլ կտա սովորողներին որպես լավագույն օրինակ դիտարկել և կրկնել հասարակության համար ընդունելի և խրախուսելի վարքագիծը:

Կոռուպցիայի մեկնաբանման կոլեկտիվ գործողությունների տեսությունը փաստում է, որ կոռուպցիայի համար նպաստավոր իրավիճակներում մարդիկ հաճախ գործում են՝ հիմնվելով այն պատկերացումների վրա, թե ինչ կանեն մյուսները նման իրավիճակում: Երբ կոռուպցիան դառնում է սոցիալական նորմ, բոլորը սկսում են այն դիտարկել որպես իրենց նպատակներն իրականացնելու միջոց: Մարդիկ, նույնիսկ տեղյակ լինելով կոռուպցիայի բացասական հետևանքների մասին, մասնակցում են կոռուպցիոն գործարքների, քանի որ կարծում են, որ «իմաստ չունի լինել միակ ազնիվ մարդը կոռումպացված համակարգում»:[8] Արդյունքում՝ կոռուպցիայի մասին կարծրատիպերը սկսում են տարածվել նաև երեխաների շրջանում՝ հանգեցնելով կոռուպցիայի նկատմամբ համընդհանուր հանդուրժողականության ձևավորմանը:

Այս առումով առանձին ուսումնասիրման է արժանի Հայաստանի դպրոցականների շրջանում «կոռուպցիա» երևույթի նկատմամբ առկա կարծրատիպերը՝ դրանք թիրախավորելու և կոտրելու միջոցով հակակոռուպցիոն կրթության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի «Հակակոռուպցիոն կրթությունը «Հասարակագիտություն» առարկայում» ծրագրի շրջանակում 2023 թվականին Արմավիրի, Արարատի մարզերի և Երևանի «Հասարակագիտություն» առարկայի ուսուցիչների հետ[9] տեղի ունեցած քննարկումների ժամանակ ուսուցիչները ևս նշեցին, որ «կոռուպցիա» երևույթի ուսումնասիրման և դրա դեմ պայքարի մասին դասավանդման ժամանակ լուրջ խոչընդոտներ են Հայաստանում տարածված կարծրատիպերը և տարբեր սոցիալական խմբերի մարդկանց նկատմամբ դրսևորվող խտրական վերաբերմունքը: Ուսուցիչները փաստում էին, որ սովորողներն ունեն վախեր, կարծրատիպեր, որոնք վերաբերում են ազդարարմանը («գործ տալ»), հովանավորչությանը, ակտիվ և իր իրավունքների համար պայքարող քաղաքացու կերպարին, ընտրակաշառքին, օրենքը չհարգելուն, անպատժելիությանը, Հայաստանում

7 Mcleod S., Albert Bandura's Social Learning Theory, Simply Scholar, 2023, https://www.simplypsychology.org/bandura.html (դիտված՝ 1.8.2023 թ.)

8 UNODC Module Series on Anti-Corruption, Knowledge tools for academics and professionals, Module 4, page 14, https://grace.unodc.org/grace/uploads/documents/academics/Anti-Corruption_Module_4_Public_Sector_Corruption.pdf (դիտված՝ 2.11.2023 թ.)

9 ԹԻՀԿ, Ֆոկուս-խմբային քննարկումներ «Հասարակագիտություն» առարկայի ուսուցիչների հետ, 2023թ, https://www.transparency.am/hy/media/news/article/4904 (դիտված՝ 2.11.2023 թ.

արդարության բացակայությանը և մի շարք այլ երևույթներին ու գաղափարներին:[10] Նմանատիպ պատկերացումները, կարծրատիպերն ու համոզմունքներն էապես նվազեցնում են կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող թեմաների յուրացման, համարժեք վերաբերմունքի ձևավորման և վարքագծի փոփոխությանն ուղղված ջանքերի արդյունավետությունը: Հենց այդ պատճառով էլ սովորողների ուսումնառության ամբողջ ընթացքում անհրաժեշտ է աշխատել այդ կարծրատիպերը կոտրելու ուղղությամբ:

Առօրյա կյանքում տեսնելով կոռուպցիոն ճանապարհով հարստացած անձանց և նրանց տրված ոչ օրինական արտոնությունները՝ պատանիների և երիտասարդների մի մասն ապօրինի հարստացումը դիտարկում են որպես ընդունելի տարբերակ՝ ապահով կյանք ունենալու իրենց նպատակը կյանքի կոչելու համար: Նմանատիպ վարքագծի դրսևորումը կանխարգելելու համար անհրաժեշտ է նաև դատական համապատասխան ակտերի օրինակների ուսումնասիրմամբ ներկայացնել կոռուպցիոն վարքագծի բացասական հետևանքները կոռուպցիայի դիմած քաղաքացու համար, քննարկել կոռուպցիայի հասցրած վնասները սովորողների կյանքի վրա՝ սկսած սոցիալական ապահովվածությունից, կրթության ոլորտից մինչև երկրի անվտանգությունը, ներկայացնել իրական օրինակներ, որոնք ցույց են տալիս այդ ճոխությունների հակառակ կողմը՝ այն մարդկանց, որոնք իրենց մաշկի վրա են զգացել կոռուպցիայի հասցրած վնասները: Իրական փաստերի հիման վրա նկարահանված կարճամետրաժ ֆիլմերի, տեսանյութերի դիտումները և իրական պատմությունների ունկնդրումները հնարավորություն կտան ապրումակցելու այդ պատմությունների հերոսներին և գիտակցելու կոռումպացված անձանց գործողությունների եսասիրական բնույթն ու այն բացասական ազդեցությունը, որը կոռուպցիան ունենում է հասարակության և պետության վրա: Անհրաժեշտ է աշխատանք տանել նաև սովորողների դիրքորոշումների ձևավորման ուղղությամբ, աջակցել նրանց ձևավորել պատկերացումներ կյանքի մասին, նրանց հետ քննարկել մի շարք կարևոր հարցեր, օրինակ՝ ինչպես են սովորողները պատկերացնում ապահով կյանքը, ինչ կայուն միջոցներով և հաստատուն ճանապարհներով կարելի է հասնել դրան, ինչպես կարելի է ապահովագրել սեփական և իր մտերիմների բարեկեցիկ կյանքը, երբ առաջնորդվում ես բարեվարքության սկզբունքներով և ցուցաբերում ես օրինապահ վարքագիծ:

Կոռուպցիայի հանդեպ վերաբերմունքի և վարքագծի փոփոխության հասնելը միայն մեկ դասաժամի ընթացքում շատ բարդ է և ենթադրում է շարունակական և տևական աշխատանք, ուստի դրա նկատմամբ սեփական բացասական վերաբերմունքն ամեն պատեհ առիթով ներկայացնելը, ուսուցիչների բարեվարք վարքագիծը և դպրոցական ծրագրում ինտեգրված հակակոռուպցիոն կրթությունը հնարավորություն կտան ավելի խորքային ուսումնասիրություններ կատարելու և իմացական ու վարքային մակարդակում արձանագրելու ակնկալվող փոփոխությունները: Այդ նպատակով խիստ կարևոր է, որ մանկավարժական աշխատողներն իրենց ամենօրյա գործունեության ընթացքում հետևեն մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոններին (տե՛ս Հավելյալ ռեսուրսներ, բաժին 5), ինչպես նաև վերահսկեն և պահանջեն ուսումնական գործունեության մեջ ներգրավված մյուս մասնակիցներից ապահովել դրանց անմնացորդ կատարումը:

10 Արմավիրի, Արարատի մարզերում և Երևանում իրականացված «Հասարակագիտություն» առարկայի ուսուցիչների ֆոկուս խմբային քննարկումների ամփոփում, ԹԻՀԿ նյութեր, էջ 2, 2023 թ

Ինչպե՞ս օգտվել ձեռնարկից

Ձեռնարկի գլուխներում ըստ դասարանների առանձնացված են այն թեմաները, որոնց շրջանակում առաջարկվում է իրականացնել հակակոռուպցիոն կրթության ինտեգրումը: Ընտրված յուրաքանչյուր թեմայի համար ներկայացվում է՝

Չափորոշիչը, որտեղ տեղ են գտել չափորոշչային պահանջները, որոնց համապատասխան մշակվել են տեսական նյութն ու գործնական աշխատանքները:

Տեսական նյութ, որտեղ ներկայացվում է կոռուպցիայի և տվյալ թեմայի կապը, իսկ դրանցում ընդգրկված բազմաթիվ օրինակները հնարավորություն են տալիս տեսնելու և նկատելու այդ կապն իրական կյանքում:

Գործնական աշխատանք, որտեղ տեղ են գտել տվյալ թեմային և կոռուպցիային առնչվող այնպիսի առաջադրանքներ, որոնք հնարավորություն կտան զարգացնելու սովորողների հետազոտական աշխատանք կատարելու կարողությունը, քննադատական մտածողությունը և կնպաստեն բարեվարք վարքագիծը խրախուսող ու կոռուպցիան չհանդուրժող որակների ձևավորմանը: Ընտրված աշխատանքները մշակված են այնպես, որ թե՛ տևողության և թե՛ դասարանում իրականացման տեսանկյունից լինեն կիրառելի և արդյունավետ:

Օժանդակ նյութեր սովորողների համար, որտեղ ներկայացվում են սովորողների համար մատչելի և կարճ տևողություն ունեցող տեսանյութեր և այլ օժանդակ նյութեր, որոնք մանկավարժը կարող է օգտագործել կամ ցուցադրել դասի ընթացքում:

Օժանդակ նյութեր ուսուցիչների համար, որտեղ տեղ են գտել թեմայի հետ առընչվող, երկար տևողությամբ տեսանյութեր, գեղարվեստական ֆիլմեր և այլ օժանդակ նյութեր: Այդ նյութերը նախատեսված են ուսուցչի ինքնազարգացման համար և ուսուցչին հնարավորության կտան ավելի խորությամբ ծանոթանալու թեմային, տեսնելու իրական կյանքից վերցված ավելի շատ օրինակներ: Այս բաժնում ներառված գեղարվեստական ֆիլմերի համար ներկայացված են դրանց մասին պատմող կարճ տեսանյութերը (թրեյլերները):

Դասի պլանի նմուշ, որը մշակված է «Կոռուպցիա և իշխանության չարաշահում» (8-րդ դասարան) թեմայի դասավանդման համար՝ պայմանավորված թեմայի՝ ինտեգրում չենթադրելու և ամբողջությամբ կոռուպցիայի մասին լինելու հանգամանքով:

Նախագծային աշխատանք, որտեղ յուրաքանչյուր դասարանի համար ներկայացվում է տվյալ դասարանում ընդգրկված թեմայի/թեմաների և կոռուպցիայի կամ դրա դեմ պայքարի առնչությամբ նախագծային աշխատանք:

Ձեռնարկի «Հավելյալ ռեսուրսներ» բաժնում տեղ են գտել.

> **Հակակոռուպցիոն բառարանը**, որտեղ կարող եք գտնել ձեռնարկում տեղ գտած և կոռուպցիային առնչվող հասկացությունների մեծ մասը՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլի մեկնաբանությամբ:

> **ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների ցանկը**, որտեղ, համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի, ներկայացված են կոռուպցիոն հանցագործությունները և դրանց համար նախատեսված պատիժները:

> **Առցանց ռեսուրսներ ուսուցիչների համար**, որտեղ ներկայացվում են կոռուպցիայի դեմ պայքարի և հակակոռուպցիոն կրթության ոլորտում մասնագիտացված մարմինների կամ կազմակերպությունների կողմից ստեղծված ռեսուրսները:

> **Թեմատիկ կառույցների և պետական կառավարման հարթակների մասին տեղեկատվություն**, որտեղ ներկայացվում են կոռուպցիայի դեմ պայքարի գործում մասնագիտացված պետական և հասարակական կազմակերպությունների, Հայաստանում կիրառվող էլեկտրոնային կառավարման գործիքների մասին տեղեկատվություն:

> **Հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամների և մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոնները**, որոնցով պետք է առաջնորդվեն խորհրդի անդամներն ու մանկավարժական աշխատողներն իրենց ամենօրյա աշխատանքում:

Ձեռնարկում ներկայացված նյութին նախապես ծանոթանալով՝ *մանկավարժն ինքն է որոշում, թե տվյալ նյութն ինչ չափով կամ ինչպես ներկայացնել դասավանդման ընթացքում*, որպեսզի ապահովի հիմնական թեմայի արդյունավետ դասավանդումը և, միևնույն ժամանակ, կապը կոռուպցիայի դեմ պայքարի հետ:

Ձեռնարկում տեղ գտած օժանդակ նյութերն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է հեռախոսով սկանավորել դրանց հարևանությամբ գտնվող QR կոդերը, իսկ էլեկտրոնային տարբերակով օգտագործելիս անհրաժեշտ է սեղմել ստեղնաշարի CTRL կոճակը և համապատասխան QR կոդը:

Օգտագործված հապավումներ

ԱԺ	Ազգային ժողով
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ՁԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ՄԹ	Միացյալ Թագավորություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԹԻ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ
ԹԻՀԿ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
ԿԸՀ	Կոռուպցիայի ընկալման համաթիվ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՆԱՏՕ	Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին

ԳԼՈՒԽ

7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1.1 ՄԱՐԴ-ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1.2 ՄԱՐԴ-ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.3 ՄԱՐԴ-ԻՐԱՎՈՒՆՔ

1.4 ՄԱՐԴ-ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1.5 ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1.1 ՄԱՐԴ-ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՁԱՓՈՐՈՇԻՉ

Նպատակ և այլ պահանջներ[11]՝ Ներկայացնել մարդու և հասարակության փոխկապվածությունը, հասարակական մեծ և փոքր խմբերի ու շերտերի նմանություններն ու տարբերությունները:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Կոռուպցիան հասարակական հարաբերությունների համակարգի ամենահին երևույթներից է: Այն ակնհայտ չարիք է պետական կառավարման ողջ համակարգի համար, բնորոշ է բոլոր պետություններին և ժամանակներին: Հասարակական նորմերը, մշակութային առանձնահատկությունները12 միշտ չէ, որ գործում են հօգուտ հանրության. այսպիսի հայտնի օրինակներից մեկը կոռուպցիան է: Իսկ ինչպե՞ս է ստացվում, որ մարդկանց ապրելակերպը կամ հասարակական նորմերը կարող են վնաս հասցնել հասարակությանը: Հաճախ մտածելով մեր նեղ անձնական խնդիրների ու շահերի մասին՝ մենք անում ենք արարքներ կամ գնում գործարքների, որոնք թույլ են տալիս հեշտությամբ լուծել մեր խնդիրը, հասնել մեր ցանկալի արդյունքին՝ չնկատելով, որ այդկերպ վնաս ենք հասցնում մյուսներին:

Համայնքի մանկապարտեզը երկար տարիներ անբարեկարգ վիճակում գտնվելուց հետո վերջապես վերանորոգվել է: Վերանորոգումը և կահավորումն իրականացրած շինարարական կազմակերպությունը պատկանում է համայնքապետի եղբորը, որն այդ պատվերի շնորհիվ կլորիկ գումար է վաստակել: Շահագործման հանձնելուց երկու ամիս անց մանկապարտեզը նորից վերանորոգման կարիք ունի, քանի որ առաստաղից ջուր է կաթում, պատերը գունաթափվել և վնասվել են, իսկ գույքը՝ կոտրվել:

Հասարակական կյանքը կանոնակարգող օրենքների նկատմամբ մարդիկ կարող են ունենալ տարբեր դիրքորոշում. մի խմբի համար դրանք կարող են լինել պարտադիր պահպանման ենթակա ակտ, իսկ մյուս խումբը կարող է հաճախակի խախտել դրանք, արդյունքում՝ վնասելով ոչ միայն սեփական, այլև իրենց հարազատների և հասարակության այլ ներկայացուցիչների անվտանգությունն ու առողջությունը:

---

11 Թեմայի բովանդակություն, 3-րդ հարց՝ Մարդկանց ապրելակերպի, մշակույթի, հասարակական նորմերի և արժեքների բազմազանությունն ի՞նչ ազդեցություն է ունենում հասարակական խմբերի ձևավորման վրա:

12 Մշակութային տարբերություններն ակնհայտորեն կարևոր են կոռուպցիայի համար: Օրինակ՝ ընտանեկան ավելի ուժեղ արժեքներ ունեցող մշակույթներն ավելի շատ են հակված կոռուպցիայի, քան մյուսները: Այդպիսով՝ դա կարող է լինել կոռուպցիայի աճին նպաստող գործոն:
Klitgaard R., On culture and corruption, Blavatnik School of Government, University of Oxford, 2017, page 16, https://www.bsg.ox.ac.uk/sites/default/files/2018-05/BSG-WP-2017-020.pdf (դիտված՝ 24.07.2023 թ.)

Վարորդը, որի հայրը ճանապարհային ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյա էր, հաճախակի էր խախտում ճանապարհային երթևեկության կանոնները և երբեք չէր տուգանվում: Մարզային բոլոր ոստիկանները ճանաչում էին նրա մեքենան և գիտեին, որ եթե ցանկանան արձանագրել խախտումը, ապա տղան կզանգահարի հորը, իսկ վերջինս էլ կհրամայի չտուգանել որդուն: Վարորդի՝ արագության գերազանցման պատճառով տեղի ունեցած խոշոր ավտովթարում ծանր վիրավորում ստացան հանրային տրանսպորտով երթևեկող շուրջ 15 անձ, իսկ վարորդի կյանքը փրկել չհաջողվեց:

Իշխանության, հարստության, որոշակի դիրք ունենալու կամ հասարակության մեջ հայտնի լինելու և փառքի հասնելու ցանկությունը հատուկ են մարդուն: Այդ ամենին հասնելու համար մարդը պատրաստ է հսկայական ջանքեր գործադրել ու ռեսուրսներ ներդնել: Այդ ճանապարհին հանդիպող խոչընդոտները, խնդիրները, ձախողումները կամ պարզապես նպատակը կարճ ժամանակում կյանքի կոչելու ցանկությունը կարող են հանգեցնել հասարակության ու պետության համար անցանկալի հետևանքներ ունեցող անազնիվ, անօրինական, կոռուպցիոն գործարքների:

Երբ պահանջմունքները շատանում են, իսկ դրանք բավարարելու հնարավորություն չկա, մարդը կարող է դիմել նաև անթույլատրելի միջոցների, ինչպիսին է, օրինակ, կոռուպցիան: Եսասիրության արդյունքում նա իր անձնական շահը վեր է դասում հասարակության և պետության շահից և հասնում իր ուզածին՝ նույնիսկ մնացածին վնասելու գնով:[13] Դրա վառ օրինակներից է ռեսուրսների յուրացումը, երբ հասարակության համար նախատեսված ռեսուրսները զավթվում են անձանց կամ որոշակի խմբի կողմից, և հասարակության մյուս անդամները չեն կարողանում հասանելիություն ունենալ դրանց կամ ըստ պատշաճի օգտվել դրանցից:

Բարձր լեռնային փոքր համայնքում կար խմելու ջրի միայն մեկ աղբյուր: Համայնքապետը որոշեց օգտագործել իր կապերը և սեփականաշնորհել ու ցանկապատել հանրային սեփականություն համարվող այն հողակտորը, որտեղ գտնվում էր աղբյուրը: Դրանից հետո համայնքի բնակիչներն այլևս չէին կարողանում օգտվել աղբյուրի խմելու ջրից և ստիպված էին ջուրը գնել համայնքի միակ՝ համայնքապետին պատկանող խանութից: Այդկերպ համայնքապետը նաև ամրապնդեց իր դիրքը համայնքում և մեծացրեց բնակիչների կախվածությունն իր անձից:

Ընդունված է համարել, որ կոռուպցիան կարող է առաջանալ կարիքից կամ ագահությունից: Կարիքից դրդված մարդիկ դիմում են կոռուպցիայի, երբ չեն ստանում օրենքով իրենց հասանելիք ծառայությունը կամ միջոցը և ստիպված գնում են կոռուպցիոն գործարքի՝ դա ստանալու նպատակով: Ագահության կոռուպցիայի դեպքում մարդիկ դիմում են կոռուպցիայի, որպեսզի ստանա հատուկ և ապօրինի բնույթի ծառայություններ: Կարիքի կոռուպցիան շատ ավելի ուժեղ է համախմբում քաղաքացիներին հակակոռուպցիոն պայքարում, քանի որ նրանց ընկալմամբ իրենց համաքաղաքացիներն այդ դեպքում նույնպես կմիա-

13 Գրիգորյան Հ., Կոռուպցիա, մաս 2, https://www.boonus.am/lesson/21 (դիտված՝ 24.07.2023 թ.)

նան պայքարին հանուն բոլորի նկատմամբ արդար մոտեցման: Ի տարբերություն դրա, ագահության կոռուպցիան բերում է հասարակության չհամախմբմանը և այլ քաղաքացիների հակակոռուպցիոն ջանքերի հաշվին օգուտներ ստանալու հակմանը:

Հասարակության ներդաշնակ և բնականոն կյանքի ու զարգացման համար խիստ կարևորվում է մարդ-հասարակություն ամուր կապերի առկայությունը, որն արտացոլվում է մարդու՝ հասարակության նկատմամբ ցուցաբերած հարգանքով, սեփական գործունեությունն իրականացնելուց առաջ դրա հետևանքները հասարակության համար գիտակցելով և ընդհանրապես հասարակությանը վնասող վարքագիծը բացառելով:

Պաշտոնատար անձը, չընդունելով առաջարկված կաշառքը և հաշվի չառնելով անմիջական ղեկավարի ճնշումները, հրաժարվեց թույլտվություն տրամադրել ազդեցիկ գործարարի ներկրած կասկածելի պարարտանյութերի իրացմանը՝ դրանցում արգելված նյութերի առկայության պատճառով: Պաշտոնատար անձը գիտակցեց, որ եթե ենթարկվի անմիջական ղեկավարի ճնշումներին, ապա իր այդ քայլը կհանգեցնի բնակչության կողմից քիմիական վնասակար նյութեր պարունակող բանջարեղենի և մրգերի սպառմանը, որն էլ, իր հերթին, կնպաստի տարբեր հիվանդությունների ու թունավորումների աճին:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Ես և հասարակությունը

Տևողությունը՝ 10 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝

Սովորողները

- կվերլուծեն և կդասակարգեն տարբեր բնույթի ապրելակերպի ազդեցությունը մարդկանց վրա:
- կգիտակցեն հասարակության վրա կոռուպցիայի ունեցած բացասական ազդեցությունը:

Նկարագրություն

«Մ-աձև աղյուսակ» մեթոդի կիրառմամբ ցույց տալ մարդկանց ապրելակերպի դրական, բացասական և չեզոք ազդեցությունը հասարակության վրա: Անհրաժեշտ է գրատախտակին գծել եռասյուն աղյուսակ (տե՛ս ստորև ներկայացված գծապատկերը), որտեղ աշակերտները պետք է նշեն մարդկանց ապրելակերպի դրական, չեզոք և բացասական օրինակները՝ պատասխանները գրառելով աղյուսակի համապատասխան հատվածներում: Անհրաժեշտ է «բացասական ազդեցություն» հատվածում հարցերով ուղղորդել դեպի կոռուպցիան և դրա տեսակները՝ ըստ անհրաժեշտության ներկայացնելով նաև օրինակներ:

Դրական	Չեզոք	Բացասական
Բարեգործություն, բնական ռեսուրսների խնայողաբար օգտագործում, ...	Առողջ սնունդ, մարզանք, ...	Կոռուպցիա, խտրականություն, բռնություն, ...

2 Կարգավորելով խնդիրները

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կգիտակցեն հասարակության և անհատի վրա կոռուպցիայի, անհավասարության, անարդարության ունեցած բացասական ազդեցությունը:

Նկարագրություն

Սովորողներից կազմել 3-4 հոգանոց խմբեր և հանձնարարել, որ տանը վերհիշեն իրենց կարդացած գրական ստեղծագործություններից (հեքիաթ, պատմվածք, առակ և այլն), այնպիսիները, որոնցում նկարագրված է անհավասարություն, անարդարություն կամ կոռուպցիա: Անհրաժեշտ է գտնել ներկայացված անհավասարության, անարդարության կամ կոռուպցիոն դրսևորման պատճառը, հետևանքը, ներգրավված անձանց, որից հետո անհրաժեշտ է գրական ստեղծագործությունը խմբագրել այնպես, որ դրանում արձանագրված խնդրային իրավիճակը չլինի՝ մտածելով դեպքերի նոր զարգացում: Հաջորդ դասի ընթացքում խմբերը պետք է 2-3 րոպեի ընթացքում համառոտ ներկայացնել ստեղծագործությունը, արձանագրված խնդիրը, պատճառը, հետևանքը, ներգրավված անձանց և խմբագրված նոր տարբերակը: Խմբերի ներկայացումից հետո անհրաժեշտ է ամփոփել աշխատանքը՝ ներկայացնելով արձանագրված խնդիրների ազդեցությունը անհատի և հասարակության վրա:

Համանման ստեղծագործություններից են Ղազարոս Աղայանի «Անահիտ», Հովհաննես Թումանյանի «Ոսկու կարասը», «Տերն ու ծառան» հեքիաթները, Շիրվանզադեի «Հրդեհ նավթագործարանում» պատմվածքը, Հովհաննես Թումանյանի «Չարի վերջը» բալլադը, Վարդան Այգեկցու «Այրի կինն ու նրա որդին», «Առյուծը, գայլն ու աղվեսը» առակները և այլն:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Անձրևն էլ չի մաքրում հանցանքի հետքերը

Տևողությունը՝ 2 րոպե

Նկարագրություն՝ Անիմացիոն տեսանյութում ներկայացվում է դպրոցի վերանորոգման ընթացքում թույլ տրված կոռուպցիոն գործարքի ազդեցությունը հասարակության վրա:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 300 րոպե կոռուպցիայի մասին. հաղորդում 9

Տևողությունը՝ 25 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում ներկայացվում են Գյումրիում անօթևանության և սոցիալական ապահովության խնդիրների հետ կապված կոռուպցիոն գործարքները:

2 Հեղնար աղբյուր

Տևողությունը՝ 1 ժամ 28 րոպե

Նկարագրություն՝ Գեղարվեստական ֆիլմի 16:56 - 19:20 րոպեներին ներկայացվում է կամրջի բացման արարողությունը. կամուրջը պատրաստող և կամրջի ապահովության համար պատասխանատու վարպետի ընտանիքը պետք է նստեր նորակառույց կամրջի ներքևում, երբ առաջին սայլը անցնում է դրա վրայով:

1.2 ՄԱՐԴ-ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՁԱՓՈՐՈՇԻՉ

Նպատակ և այլ պահանջներ[14]՝ Ներկայացնել բարոյական նորմերի անհրաժեշտությունը, բացատրել բարոյագիտության առանցքային հասկացությունները: Զարգացնել բարոյական դատողություններ անելու կարողությունը՝ որոշակի իրավիճակներ վերլուծելու միջոցով:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Կոռուպցիան բարոյական նորմերի խախտում է: Այն ներառում է անազնիվ կամ ոչ բարոյական վարքագիծը, իշխանության չարաշահումը և անձնական շահի համար հանրային վստահության դավաճանումը: Կոռուպցիան, ընդհանուր առմամբ, շարունակում է համարվել բարոյական ոտնձգություն՝ հանրային հաստատությունների, սոցիալական համախմբվածության և ընդհանուր զարգացման վրա ունեցած բացասական ազդեցության պատճառով: Կարևոր է նշել, որ տարբեր ժամանակահատվածներում, տարբեր մշակույթների և անհատների համար բարոյական նորմերը կարող են տարբեր լինել:

19-րդ դարի հայ արձակագիր Պերճ Պռոշյանն իր «Հացի խնդիր» վեպում նկարագրում է տվյալ ժամանակների կոռուպցիոն բարքերը, իսկ վեպի հերոսներից Միկիտան Սաքոն առաջնորդվում է հետևյալ սկզբունքով՝ «Ինչ կանես արա, խաբի, քանդի, պլոկի, գռփի, սպանի, միայն թե թաք մի կտոր հաց ունենաս...»:

Ոչ բարոյականի և եսասիրության (էգոիզմի) դրսևորումները հասարակական կյանքում լայն տարածված են, սակայն դրանք միշտ չէ, որ նույնականացվում են մերժելի երևույթի հետ: Կոռուպցիան այդ օրինակներից մեկն է. այն դրսևորվում է սեփական անձի կամ խմբի ցանկություններին գերակայություն տալով՝ առանց այլոց կարիքները, նրանց սպառնացող վտանգներն ու վնասները հաշվի առնելու: Նմանատիպ իրավիճակներ մեր կյանքում հաճախ կարող ենք հանդիպել, բայց հետաքրքրականն այն է, որ այդպիսի իրավիճակներում անձնական շահով առաջնորդվելիս մեզանից շատերը չեն էլ նկատում իրենց ցուցաբերած ոչ բարոյական վարքագիծը:

Երբ մարզադպրոցի տնօրենի մանկության ընկերը նրան խնդրեց աշխատանքի տեղավորել իրեն, տնօրենը հիշեց մարզադպրոցում առկա տնտեսվարի թափուր հաստիքի մասին և, հաշվի չառնելով այն, որ ընկերը չունի փորձառություն, առաջարկեց դիմել դրա համար հայտարարված մրցույթին: Արդյունքում, մրցույթում

14 Վերջնարդյունք 3-րդ՝ Մեկնաբանի բարոյականության հիմնական հասկացությունները:
Վերջնարդյունք 4-րդ՝ Համեմատի և հակադրի էգոիզմն ու ալտրուիզմը:
Թեմայի բովանդակություն, 3-րդ հարց՝ Ինչպե՞ս է մարդու մտածելակերպն ազդում բարոյական հարցերի մասին որոշումներ կայացնելու վրա:
Թեմայի բովանդակություն, 4-րդ հարց՝ Ինչպե՞ս է հասարակությունն ազդում բարոյական նորմերի վրա:

հաղթող ճանաչվեց ոչ թե ամենապատրաստված և տվյալ պաշտոնին համապատասխանող թեկնածուն, այլ մարզադպրոցի տնօրենի ընկերը:

Բարոյական հարցերի մասին որոշում կայացնելիս մարդիկ հաճախ առաջնորդվում են այն կարծրատիպերով, սոցիալական նորմերով, որոնք առկա են հասարակության մեջ՝ չնկատելով, որ տվյալ իրավիճակում իրենք ևս ցուցաբերում են ոչ բարոյական վարքագիծ: Ականատես լինելով կոռուպցիոն գործարքի կամ երևույթների՝ մեզանից շատերը երկմտում են, խուսափում են բարձրաձայնելուց, ազդարարելուց՝ վախենալով, որ շրջապատի մարդիկ սխալ կմեկնաբանեն իրենց այդ արարքը: Արդյունքում, ոչ բարոյական, հաճախ ապօրինի վարքագիծը չի դատապարտվում, ավելին՝ շղթան շարունակվում է՝ ներգրավվելով նոր մասնակիցների:

Համայնքապետը համայնքի խաղահրապարակը վերանորոգելուց հետո ցանկապատում է այն և կարգադրում աշխատակցին, որ երեխաներից՝ խաղահրապարակում մեկ ժամ խաղալու համար գանձի 1.000 դրամ: Խաղահրապարակից անվճար կարող էին օգտվել միայն համայնքապետի ու նրա մերձավորների երեխաները: Համայնքի մյուս երեխաները շաբաթական միայն մեկ ժամ էին խաղում այնտեղ, իսկ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները առհասարակ զրկված էին այդ հնարավորությունից: Համայնքի բնակիչները, անհանգստանալով, թե մյուսներն ինչ կխոսեն իրենց մասին, իրավապահ մարմիններին չէին տեղեկացնում համայնքապետի անօրինությունների մասին՝ խուսափելով համայնքի ղեկավարի հետ հարաբերությունները փչացնելուց:

Ոչ բարոյական վարքագծի դրսևորումները հաճախ պայմանավորված են մարդու կարիքներով, պահանջմունքներով ու հնարավորություններով: Ավելի հեշտ է լինել բարի, առաքինի, բարեվարք մարդ, կյանքում առաջնորդվել ինչ-ինչ արժեքներով, երբ դրա համար կան համապատասխան պայմաններ: Մինչդեռ, երբ բախվում ենք որոշակի փորձությունների, բարոյական վարքագծի ցուցաբերումը զգալիորեն բարդանում է: Իշխանությունն այդպիսի փորձություն է: Երբ մարդուն տրվում է իշխանություն, նրա վրա դրվում է պատասխանատվություն: Նա ունենում է մեծ թվով պարտականություններ, բայց, միևնույն ժամանակ, ձեռք է բերում լիազորություններ ու հնարավորություններ հանրային ռեսուրսների տնօրինման, բաշխման, վերաբաշխման, որոշումների կայացման գործում: Իշխանությունն իր հետ բերում է ավելի բարձր սոցիալական դիրք, ֆինանսական կայունություն, ենթականեր, որոնք շատ հարցերում կախված են ղեկավարից: Սովորաբար, երբ մարդու հնարավորությունները մեծանում են, ավելանում են նաև նրա պահանջմունքները: Արդյունքում էլ ավելի մեծ հնարավորություններ են պետք դրանք բավարարելու համար: Երբ օրինական միջոցներով չի ստացվում հայթայթել համապատասխան միջոցներ, մարդը սկսում է փնտրել զարտուղի, հաճախ՝ ոչ օրինական ճանապարհներ: Եսասիրության արդյունքում նա իր անձնական, մասնավոր շահը կարող է վեր դասել հանրության, պետության շահից և հասնել ուզածին՝ մնացածին վնասելու, հասարակության շահերին չսպասարկելու գնով:[15]

15 Գրիգորյան Հ., Կոռուպցիա մաս 1, https://www.boonus.am/lesson/21 (դիտված՝ 24.07.2023 թ.)

Մարզիչն իր և երկու սաների համար արտերկրում անցկացվող մարզական հավաքներին մասնակցելու հրավեր ստացավ: Սկզբում նա մտածում էր, որ սաներից մեկը կլինի իր զարմիկը, որը վերջերս էր սկսել հաճախել մարզումներին, իսկ մյուսը՝ ամենաբարձր արդյունքներ ցուցաբերած սանը: Սակայն այն միտքը, որ բարձր առաջադիմություն ունեցող մյուս սաները կնեղսրտեն իր կայացրած որոշումից, հանգիստ չէր տալիս նրան: Ի վերջո, մարզիչը որոշեց կազմակերպել մրցաշար իր սաների համար, և մարզական հավաքների տանել նրանց, որոնք կզբաղեցնեին 1-ին և 2-րդ տեղերը: Այս կերպ նա արժանացավ գործընկերների և սաների հարգանքին:

Ակնհայտ է եսասիրական և այլասիրական (ալտրուիստական) մոտեցումների ազդեցությունը որոշում կայացնելու գործընթացի և կայացված որոշումից բխող վարքագծի վրա: Ներկայացված օրինակում այլասիրական մոտեցումն օգնեց մարզչին կայացնելու ճիշտ որոշում և դրսևորելու հանրօգուտ վարքագիծ: Կարևոր է հիշել, որ կոռուպցիոն գործարքները գերազանցապես ունեն եսասիրական բնույթ,[16] սակայն ցուցաբերված վարքագծի այլասիրական բնույթը ճշգրիտ որոշելու համար անհրաժեշտ է այն դիտարկել երկարաժամկետ կտրվածքով: Ակնհայտ թվացող այլասիրական վարքագծում կարող են թաքնված լինել կոռուպցիոն նպատակներ, որոնք գուցե բացահայտվեն ցուցաբերված վարքագծից երկար ժամանակ անց:

Եթե անհատը կամ կազմակերպությունը որոշակի նվիրատվություն է կատարում, ապա նրա շարժառիթը կարող է լինել ալտրուիստական: Երբ անհատը կամ կազմակերպությունն իրականացնում է բարեգործություն ինչ-որ բան ստանալու մտադրությամբ, ապա նման արարքը գնահատվում է որպես կոռուպցիոն վարքագիծ:[17]

Մարդու՝ բարոյականության սկզբունքներով առաջնորդվելը պետք է առաջնային լինի սոցիալական ամենատարբեր դերեր կատարելիս, երբ մենք հանդես ենք գալիս որպես քույր, աշակերտ, ուսուցիչ կամ պաշտոնյա: Երբ աշակերտները և ուսուցիչները ձեռք են բերում գիտելիք՝ ազնիվ և արդարացի միջոցներով, հարգում և վստահում են միմյանց, կրում են պատասխանատվություն իրենց գործողությունների և դրանց հետևանքների համար, կարելի է պնդել, որ նրանք առաջնորդվում են բարոյական և էթիկական սկզբունքներով: Գրագողությունը, անազնվությունը քննությունների ժամանակ, այդ թվում՝ սեփական անվան տակ ուրիշի կողմից պատրաստված/գրված աշխատանքի ներկայացումը, գրքից կամ դասընկերներից արտագրելը դուրս են բարոյական վարքագծի սահմաններից:[18]

---

16 Կոռուպցիայի հիմնական շարժիչ ուժն ագահությունն է, երբ անձը, խումբը կամ հաստատությունը ձգտում է արժեքավոր բան ապահովել՝ օգտագործելով անբարոյական և ոչ էթիկական միջոցներ: Կոռուպցիոն գործունեության մեջ գրեթե միշտ կա եսասիրության ասպեկտը:
Matorera D., Corruption: Drivers, Modes and Consequences, Corruption - New Insights, 2022, https://www.intechopen.com/online-first/84293 (դիտված՝ 24.07.2023 թ.)

17 Napal G., An assessment of the ethical dimensions of corruption, EJBO Electronic Journal of Business Ethics and Organization Studies, Vol. 11, No. 1 (2006), page 6 http://ejbo.jyu.fi/pdf/ejbo_vol11_no1_pages_5-9.pdf (դիտված՝ 24.07.2023 թ.)

18 Գործընկերություն հանուն լավ կառավարման, Բարձրագույն ուսումնական հաստատությունների տիպային էթիկայի կանոնագրքեր՝ ուսանողների, վարչական և ակադեմիական աշխատակազմի համար. առաջարկ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը, 2016, էջ 25 https://rm.coe.int/code-of-ethics-arm/168077621a (դիտված՝ 24.07.2023 թ.)

Աշակերտը, որը տարված էր միայն գերազանց գնահատականներ ստանալու մոլուցքով, չէր պատրաստվել անգլերենի քննությանը: Ցանկանալով բարձր գնահատական ստանալ՝ նա նստեց անգլերենից ամենաբարձր առաջադիմություն ունեցող աշակերտի կողքին և խոստացավ, որ եթե նա թույլ տա արտագրել, ապա նրան կնվիրի վերջինիս սիրելի ֆուտբոլային ակումբի մարզաշապիկը: Արդյունքում, աշակերտը, որը չէր նախապատրաստվել քննությանը, ստացավ «գերազանց» գնահատական, իսկ մյուս աշակերտները, որոնք նախորդ շաբաթն անցկացրել էին քննությանը նախապատրաստվելով, բավարարվեցին «լավ» գնահատականով: Այսպիսով՝ աշակերտն իրագործեց իր ցանկությունը, բայց խախտեց բարոյականության սկզբունքները:

Պաշտոնատար անձանց վարքագիծը ազնիվի, բարոյականի, չկոռումպացվածի տիրույթում պահելու նպատակով մշակվել են առանձին կանոններ, սկզբունքներ ու չափանիշներ, օրենքով կանոնակարգվում ռիսկային իրավիճակներում պաշտոնյաներից ակնկալվող վարքագիծը, որոնք նպատակ ունեն ամրապնդելու հանրային շահի գերակայությունը և դրա պաշտպանությունը պետական համակարգում:

Բարոյականության, բարեվարքության սկզբունքներով առաջնորդվող հասարակությունը կոռուպցիայի դեմ պայքարի կարևորագույն երաշխիքներից է, ուստի յուրաքանչյուրիս բարեվարք վարքագիծը կարող է իր ազդեցությունն ունենալ կոռուպցիայի տարածվածության նվազեցման գործում: Այդ գործում մեզ օգնության կգա «Իսկ ես կցանկանայի՞, որ մյուսները ոչինչ չանեին, երբ ես կամ ընտանիքիս անդամները տուժեինք կոռուպցիայից» հարցը, որը մեզ կօգնի ճիշտ որոշում կայացնել բարոյականության սկզբունքներով առաջնորդվելու և կոռուպցիային դիմելու կամ դրա մասին չազդարարելու երկընտրանքի իրավիճակներում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Ինչպե՞ս վարվել

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝

Սովորողները

- կտարբերակեն եսասիրական և այլասիրական, բարոյական և ոչ բարոյական վարքագիծը:
- կառաջարկեն կոռուպցիոն իրավիճակը հանգուցալուծելու տարբերակներ:

Նկարագրություն

Աշակերտներից կազմել չորս հոգանոց խմբեր: Նրանց ներկայացնել իրավիճակը և դրա հետ կապված հարցերը, որոնց նրանք պետք է պատասխանեն: Խմբերը քննարկման համար կունենան 7 րոպե ժամանակ, իսկ խմբային աշխատանքի արդյունքների ներկայացման համար՝ մինչև 2 րոպե ժամանակ:

Իրավիճակ

Հիվանդը դիմում է բժշկին, քանի որ սրտի շրջանում սուր ցավ է զգում և արյան ճնշումն էլ հաճախակի բարձրանում է: Հետազոտությունից հետո բժիշկն ասում է, որ հիվանդի սիրտն անհրաժեշտ է վիրահատել: Հիվանդը համաձայնում է վիրահատության, սակայն բժիշկը զգուշացնում է, որ եթե ցանկանում է օգտվել պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնությունից, ապա նրան կարող են վիրահատել հինգ ամսից, քանի որ վիրահատությանը սպասում է ևս 46 հիվանդ: Սակայն, եթե նա համաձայնի 500.000 դրամ առձեռն վճարել բժշկին, ապա վաղն ևեթ՝ առանց հերթի կվիրահատվի: Հիվանդը, ցավոք, բավարար ֆինանսական միջոցներ չունի: Եթե նա սպասի ևս հինգ ամիս, ապա նրա հիվանդությունը ոչ միայն կսրվի, այլև կարող է հանգեցնել մահվան:

Հարցեր

1. Իրավիճակի հերոսներից ո՞վ/ովքե՞ր են դրսևորում ոչ բարոյական վարքագիծ:
2. Ո՞ւմ վարքագիծն էր եսասիրական: Ինչո՞ւ:
3. Ինչո՞ւ է բժիշկը ցանկանում հավելյալ վճար:
4. Ինչպե՞ս կվարվեիք, եթե ձեր մերձավորները լինեին հիվանդի կարգավիճակում:
5. Ինչպիսի՞ն կլիներ իր գործին նվիրյալ բժշկի վարքագիծն այս իրավիճակում:
6. Ի՞նչ կարող է անել հիվանդը, որպեսզի վիրահատությունն ավելի վաղ կատարվի:

2 Մարզադպրոցի գաղտնիքները

Տևողությունը՝ 10 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝

Սովորողները

- Կտարբերակեն եսասիրական և այլասիրական, բարոյական և ոչ բարոյական վարքագիծը.
- Կճանաչեն կոռուպցիոն վարքագիծը:

Նկարագրություն

Սովորողներին ներկայացվում է ստորև բերված իրավիճակը, քննարկվում այն, որից հետո սովորողները դերախաղով ներկայացնում են հարցերի պատասխանները:

Իրավիճակ

Դուք՝ ընկերներով հաճախում եք մարզադպրոց՝ ֆուտբոլի պարապմունքների, սակայն պարապմունքները միշտ չէ, որ արդյունավետ են անցնում, քանի որ մարզագույքը շատ հին է: Վերջին ամսվա ընթացքում դուք երկու անգամ ստիպված եղաք կիսատ թողնել մարզումը. նախ գնդակը պատռվեց, հետո էլ՝ դարպասի ցանցը, իսկ մարզիչը պնդում է, որ մարզադպրոցը նոր գնդակ ու ցանց գնելու գումար չունի: Մի օր դուք պատահաբար ականատես եղաք, թե ինչպես է մարզադպրոցի հաշվապահը, ով ձեր հարևանն է, շուկայում մարզագույք վաճառում, որի վրա գրված է

մարզադպրոցի անունը: Ծուկայի այլ աշխատակիցներից հարցուփորձ անելով պարզեցիք, որ վերջին երկու տարիների ընթացքում հաշվապահը յուրաքանչյուր շաբաթ շուկայում վաճառում է մարզադպրոցի տարբերանշանով գրասենյակային և մարզական պիտույքները: Ամենայն հավանականությամբ, այդ յուրացումները քողարկելու համար նա կեղծում է պաշտոնական հաշվետվությունները: Մարզադպրոցում ոչ ոք չի կասկածում, որ մարզագույքը կարող է յուրացվել հաշվապահի կողմից: Ձեր հարևանն ունի ընտանիք և հիվանդ կին: Նրա աշխատավարձը շատ ցածր է, և նա դժվարությամբ է հոգում ընտանիքի ծախսերը:

Հարցեր

1. Ի՞նչ եք կարծում՝ ինչ պետք է անել այս իրավիճակում:
2. Ի՞նչ հետևանքներ կունենա հաշվապահի նման վարքագծի հանդուրժումը և կատարվածի մասին համապատասխան պաշտոնյաներին չտեղեկացնելը:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Ուրիշի տեղը

Տևողությունը՝ 2 րոպե

Նկարագրություն՝ Անիմացիոն տեսանյութում ներկայացվում է բուհի ընդունելության գործընթացում կոռուպցիոն դրսևորումների ազդեցությունը մասնագիտության ընտրության և կրթության վրա:

2 Դե արի սրանց բան բացատրի

Տևողությունը՝ 48 վայրկյան

Նկարագրություն՝ Անիմացիոն տեսանյութում ներկայացվում է, թե ինչպես են պաշտոնյաները անձնական շահը գերադասում հասարակական շահից:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 300 րոպե կոռուպցիայի մասին. հաղորդում 5

Տևողությունը՝ 25 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում ներկայացվում է, թե ինչ է շահերի բախումը, ինչպես է այն դրսևորվում, ինչպես է հնարավոր բացահայտել այն և ինչ գործիքներով կառավարել:

1.3 ՄԱՐԴ-ԻՐԱՎՈՒՆՔ

ՁԱՓՈՐՈՇԻՉ

Նպատակ և այլ պահանջներ[19]՝ Ներկայացնել մարդկանց համակեցության համար անհրաժեշտ և նրանց վարքագիծը կարգավորող իրավունքի կարևորությունը:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Կոռուպցիան կարող է ազդել մարդու իրավունքների վրա, ընդհանուր առմամբ՝ որպես դրանց իրացման խոչընդոտ և կոնկրետ դեպքերում՝ որպես մարդու իրավունքների խախտում:[20] Այն բացասաբար է անդրադառնում մարդու բոլոր իրավունքների՝ խոսքի ազատության, տեղաշարժվելու, աշխատելու, կրթվելու, ընտրելու, էկոլոգիապես մաքուր շրջակա միջավայրում ապրելու, ստեղծագործելու, մշակութային ժառանգության հետ հաղորդակցվելու, սեփականություն ունենալու և այլ իրավունքների վրա:

Բարձրաստիճան պաշտոնյան, օգտագործելով իր դիրքն ու անձնական կապերը՝ որպես սեփականություն ձեռք է բերում մի քանի տասնյակ հեկտար անտառածածկ տարածք, հատում է ծառերը և տեղում կառուցում մետաղաձուլարան: Դրա հետևանքով հետագա տարիներին հարակից համայնքների օդում, ջրում և հողում կուտակվում են վնասակար նյութեր՝ հանգեցնելով առողջ շրջակա միջավայրում ապրելու մարդու իրավունքի խախտմանը:

Մարդու իրավունքների իրացման վրա կոռուպցիայի ազդեցությունը կախված է դրա տարածվածության աստիճանից, ձևերից և մակարդակներից: Կոռուպցիան նպաստում է մարդու իրավունքների խախտմանը, քանի որ այն ստեղծում է կամ նպաստում է այնպիսի միջավայրի ստեղծմանը, որտեղ խախտումը կարող է տեղի ունենալ:[21] Այդպիսի միջավայրում առանձնակի կարևորվում են մարդկանց իրավունքների պաշտպանությանն ուղղված հանրային միասնական պայքարը:

Այն բանից հետո, երբ համայնքի բարձրաստիճան պաշտոնյաները յուրացրին համայնքապատկան մարզադպրոցի բյուջեի մի մասն ու գույքը, համայնքապետարանը սկսեց քննարկել մարզադպրոցը փակելու հարցը: Մարզադպրոցի սաները և ծնողները, որոնք դեմ էին մարզադպրոցը փակելուն, խաղաղ ցույց կազմակերպեցին՝

---

19 Թեմայի բովանդակություն, 4-րդ հարց՝ Ե՞րբ է առաջանում մարդկանց միջև հարաբերությունները իրավունքով կարգավորելու անհրաժեշտությունը: Որո՞նք են իրավունքի առաջացման պատճառները:
Վերջնարդյունք 2՝ Բացատրի «իրավունք» հասկացության իմաստը և դերը մարդու կյանքում

20 Mgbemere E. Re-submission of best practice that link anti-corruption measures with the realization and protection of human rights, Center for Grassroot Development and Crime Prevention, page 2 https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Issues/Corruption/BestPractices/CentreDevelopmentCrimePrevention.docx (դիտված՝ 24.07.2023 թ.)

21 Mgbemere E. Re-submission of best practice that link anti-corruption measures with the realization and protection of human rights, Center for Grassroot Development and Crime Prevention, page 2 https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Issues/Corruption/BestPractices/CentreDevelopmentCrimePrevention.docx

արտահայտելով իրենց դժգոհությունը: Չնայած սպառնալիքներին ու ճնշումներին, որոնք ուղղված էին կարծիքի ազատ արտահայտման իրավունքի սահմանափակմանը, երեխաները և ծնողները շարունակեցին իրենց պայքարը, որին միացան նաև համայնքի մյուս բնակիչները: Արդյունքում, խնդիրը ստացավ լայն հնչեղություն, կոռումպացված բարձրաստիճան պաշտոնյաները հայտնվեցին ոստիկանության ուշադրության կենտրոնում, իսկ մարզադպրոցը շարունակեց աշխատել:

Կոռուպցիան ոչ միայն խախտում է մարդու իրավունքները, այլև խաթարում է օրենքի գերակայությունն ու ժողովրդավարական պրակտիկան: Դատական համակարգում գործող կոռուպցիան սահմանափակում է արդար դատաքննության իրավունքը, ինչպես նաև պաշտպանվելու հնարավորությունը, ինչը կարող է նպաստել այլ իրավախախտումների և հանցագործությունների կատարմանը, ինչպիսիք են, օրինակ, խոշտանգումները անազատության վայրերում: Դատարանի կոռումպացվածության հետևանքով խախտվում է օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքը, մեղավորները չեն կրում պատիժներ, դատապարտվում են անմեղ մարդիկ, կորչում է քաղաքացիների վստահությունը դատարանի հանդեպ: Դա հանգեցնում է անարդարության տարածմանը, և քաղաքացին այլևս չի դիտարկում դատարանը որպես մի վայր, որտեղ կվերականգնվի իր խախտված իրավունքը:[22]

Անին աշխատում էր հայտնի գործարարներից մեկին պատկանող հագուստի արտադրամասում: Անիին ու իր գործընկերներին 5 ամիս շարունակ աշխատավարձ չէին վճարում: Աշխատակիցների բողոքին ի պատասխան՝ արտադրամասի վարիչն ասաց, որ կվճարեն այն ժամանակ, երբ իրենք կցանկանան, և ոչ ոք իրենց ոչինչ ասել չի կարող: Անին որոշեց պաշտպանել իր աշխատանքային իրավունքը և դիմեց դատարան: Դատարանը, սակայն, վճիռ կայացրեց հօգուտ գործարարի, որն այդպես էլ չվճարեց աշխատողների աշխատավարձը: Բոլորը հասկացան, որ գործարարը կաշառել էր դատավորին, իսկ Անին ոչ միայն չվերականգնեց իր խախտված իրավունքը, այլև կորցրեց աշխատանքն ու արդարության հանդեպ հավատը:

Կոռուպցիան մեծապես խոչընդոտում է հասարակության զարգացմանը, քանի որ արգելափակում է հսկայական ռեսուրսների օգտագործումը սոցիալ-տնտեսական այնպիսի իրավունքների խթանման համար, ինչպիսիք են բավարար կենսամակարդակի, կրթության կամ առողջապահության իրավունքը: Ավելին, կոռուպցիան սահմանափակում է քաղաքական մասնակցության իրավունքը, քայքայում է կառավարման որակը և խաթարում հանրային վստահությունը հաստատությունների նկատմամբ: Մարդու իրավունքների վրա կոռուպցիայի վնասակար ազդեցությունը հատկապես ծանր է խոցելի խմբերի համար:[23]

---

22 Գրիգորյան Հ., Կոռուպցիա, մաս 1 (դիտված՝ 24.07.2023 թ.) https://www.boonus.am/lesson/21

23 Zamfir I., Fighting corruption globally: The link with human rights, EPRS | European Parliamentary Research Service, 2021 (դիտված՝ 24.07.2023 թ.) https://www.europarl.europa.eu/RegData/etudes/ATAG/2021/690625/EPRS_ATA(2021)690625_EN.pdf

Կոռուպցիայի հսկայական բացասական ազդեցությունը մարդու իրավունքների վրա պետք է լուրջ ազդակ հանդիսանա կոռուպցիոն վարքագիծը չհանդուրժելու և այն մերժելու համար: Եթե առաջնորդվենք մարդու իրավունքների գերակայությամբ, ապա կոռուպցիան տեղ չի գտնի մեր վարքագծում, և եթե մենք մեր վարքագծից բացառենք կոռուպցիան, ապա անուղղակիորեն կպայքարենք մարդու իրավունքների պահպանման համար:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Անազնվությունը և մեր իրավունքները

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կկարողանան ներկայացնել և օրինակով ցույց տալ կոռուպցիայի ազդեցությունը մարդու իրավունքների վրա:

Նկարագրություն
Սովորողներին հանձնարարել տանը գրել մինչև մեկ էջ ծավալով պատմություն՝ «Անազնվությունը և մեր իրավունքները» խորագրով, որում անհրաժեշտ է նկարագրել անազնիվ, կոռուպցիոն կամ ոչ բարոյական իրավիճակ, որը հանգեցնում է մարդու իրավունքների խախտումների: Սովորողներին տեղեկացնել, որ խրախուսվում է այնպիսի աշխատանքների ներկայացումը, որոնք գրված են իրական պատմությունների հիման վրա և նկարագրում են այնպիսի գործարք, որը հանգեցնում է մեկից ավելի իրավունքների խախտման: Հաջորդ դասի ընթացքում սովորողներն ընթերցում են պատմությունները և ուսուցչի հետ միասին քննարկում դրանք:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Ուրիշին փոս փորողն ուրիշ փոսի մեջ

Տևողությունը՝ 2 րոպե

Նկարագրություն՝ Անիմացիոն տեսանյութում ներկայացվում է երեխաների պայքարն իրենց «խաղալու իրավունքի» համար:

2 Անվճարի վճարովին

Տևողությունը՝ 30 վայրկյան

Նկարագրություն՝ Անիմացիոն տեսանյութում ներկայացվում է անվճար բուժօգնությունից օգտվելու իրավունքի խախտման օրինակ:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Կոռուպցիան և մարդու իրավունքները

Տևողությունը՝ 16 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում ներկայացվում է կոռուպցիայի և մարդու իրավունքների միջև կապը:

2 Լևիաթան (ռուսերեն)

Տևողությունը՝ 2 ժամ 21 րոպե

Նկարագրություն՝ Գեղարվեստական ֆիլմում նկարագրվում է, թե ագահ և կոռուպցիոն վարքագիծ ցուցաբերող պաշտոնյան ինչպես է անօրինական ճանապարհներով տիրանում քաղաքացու սեփականությանը, և թե որքան բարդ է պայքարել կոռուպցիայի դեմ, երբ արդարադատության ամբողջ համակարգն է կոռումպացված:

1.4 ՄԱՐԴ-ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՁԱՓՈՐՈՇԻՉ

Նպատակ և այլ պահանջներ[24]՝ Բացատրել, թե ինչպես կարելի է համադրել իրենց և այլոց կարիքները, ցանկությունները և պահանջմունքները առկա ռեսուրսների հետ: Մեկնաբանել սակավության հիմնախնդիրը: Նկարագրել արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման գործընթացները, խնայողությունների դերը ներկա և ապագա կյանքում:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Կոռուպցիոն երևույթները տարածված են տնտեսական գործընթացներում, և արտադրության, բաշխման, փոխանակման ու սպառման շղթան էլ բացառություն չէ: Հավելյալ ծախսերի պատճառով ապրանքի ինքնարժեքի բարձր լինելը, արտադրանքի որակի վերահսկման չգործող մեխանիզմները, ռեսուրսների անարդյունավետ օգտագործումը այն բազմաթիվ խնդիրներից են, որոնք առաջացնում են արտադրական շղթայում առկա կոռուպցիոն դրսևորումները:

Գործարանի կողմից արտադրվում և շուկա է դուրս գալիս պլաստմասե սպասք, որն անպիտան է, վնասակար մարդկանց առողջության համար, իսկ շուկայական գինն էլ էապես ցածր է մյուս ընկերությունների նույն արտադրանքից, քանի որ անհրաժեշտ հումքն օգտագործվում է նորմայից անհամեմատ քիչ քանակությամբ: Ընկերության ղեկավարը յուրաքանչյուր ամիս կլորիկ գումար է փոխանցում շուկայի վերահսկողությամբ զբաղվող մարմնի պաշտոնյաներին, որով էլ պայմանավորված անխոչընդոտ վաճառում է արտադրանքը: Գործարարն, ապահովելու համար արտադրանքի բաշխումը, օգտագործում է իր ազդեցիկ կապերը, որի արդյունքում խոշոր խանութների սեփականատերներին հրահանգվում է ձեռք բերել անորակ սպասքը և տեղադրել խանութների ամենաերևացող ու բանուկ հատվածներում՝ ապահովելու դրանց մեծաքանակ վաճառքը: Խանութների այն հաճախորդներին, որոնք ցանկանում էին գնել այլ արտադրանքի սպասք, գանձապահները խորհուրդ էին տալիս ընտրել գործարարի արտադրանքը, որպես գլխավոր առավելություն նշելով մատչելի գինը: Արդյունքում՝ անորակ արտադրանքը անխոչընդոտ արտադրվում, բաշխվում, փոխանակվում և սպառվում էր ամբողջ երկրում՝ պատճառ դառնալով քաղաքացիների առողջական խնդիրների առաջացմանը և ֆինանսական ռեսուրսների կորստին:

Կոռուպցիա, հեղինակ՝ Մենեքսե Քամ, 2014 թ, աղբյուր՝ cartoonmovement.com

24 Վերջնարդյունք 1՝ Հետևություններ անի՝ ելնելով կարիքների, ցանկությունների անսահմանափակ և ռեսուրսների սահմանափակ լինելու իրողությունից:
Վերջնարդյունք 2՝ Նկարագրի արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման գործընթացները:

Կոռուպցիայի հետևանքներն ավելի ակնառու և կործանարար են դառնում, երբ այն գլուխ է բարձրացնում ռեսուրսների սակավության իրավիճակներում:

Բարձրաստիճան պաշտոնյան, որը մեծ ազդեցություն ունի մարզային իշխանության վրա, յուրաքանչյուր ամառ մարզին հատկացված ամբողջ ոռոգման ջուրն ուղղում է իր այգիների ոռոգմանը՝ մարզի մյուս բնակիչներին զրկելով իրենց այգիները ոռոգելու, որակյալ արտադրանք ստանալու և իրենց ընտանիքների հիմնական եկամուտն ապահովելու հնարավորությունից:

Կոռուպցիան իրենց և այլոց կարիքները, ցանկությունները և պահանջմունքներն առկա ռեսուրսների հետ չհամադրելու ակնառու օրինակներից է: Կոռուպցիոն վարքագծի հիմնական պատճառներից մեկը սեփական անձը, խնդիրը հասարակությունից և դրանում առկա կանոններից վեր դասելն է:

Համայնքի նախկին ղեկավարը, օգտագործելով իր կապերը, կարողացել էր համայնքի տարածքում հողամաս ձեռք բերել և ստանալ պղնձաձուլարան կառուցելու թույլտվություն՝ չնայած այն հանգամանքին, որ նախագիծը չէր բավարարում բնապահպանական նորմերին և վտանգավոր էր համայնքի բնակիչների համար: Ձուլարանի արտանետումների հետևանքով համայնքի բնակիչների շրջանում հիվանդացության դեպքերի քանակը կտրուկ աճեց, իսկ սոցիալական վիճակը՝ վատացավ, քանի որ իրենց աշխատած ողջ գումարը նրանք ծախսում էին հիվանդանոցային բուժման և դեղորայք գնելու համար: Նախկին համայնքապետն էլ, բնակվելով արտերկրում, վայելում էր ձուլարանից ստացված հսկայական եկամուտները:

Կոռուպցիա, հեղինակ՝ Ռահմա, 2022 թ, աղբյուր՝ cartoonmovement.com

Կոռուպցիայի հետևանքով քաղաքացիները ստանում են ավելի քիչ, քան կարող էին ստանալ տնտեսության մեջ ներդրված ռեսուրսներից: Հանրային ռեսուրսները, ինչպիսիք են բնական ռեսուրսները, հանրային սեփականություն հանդիսացող գույքը, ինչպես նաև հանրային ֆինանսները, հաճախ վատ են կառավարվում օրենքներում առկա բացերի, օրենքների պահանջները չկատարելու կամ կոռուպցիոն դրսևորումների հետևանքով:[25] Դա իր հերթին կարող է հանգեցնել ռեսուրսների անհավասար բաշխման, պետական բյուջեի միջոցների ոչ նպատակային օգտագործման, հասարակության աղքատ և հարուստ խավերի միջև բևեռացման խորացման:

Մեծահարուստը, կոռուպցիոն ճանապարհներով, շուկայականից անհամեմատ ցածր գնով ձեռք է բերում համայնքապատկան խոշոր ձեռնարկությունը, որն ուներ ավելի քան 500 աշխատակից և համայնքի ամենախոշոր հարկատուն էր: Մեկ տարի անց նա որոշում է տեղափոխվել արտերկիր, վաճառում է գործարանի գույքը,

25 ԹԻՀԿ, www.moj.am/storage/uploads/T1A_2019.pdf (դիտված՝ 24.07.2023 թ.)

ազատում է բոլոր աշխատակիցներին՝ նրանց և համայնքը կանգնեցնելով սոցիալական ծանր իրավիճակի առջև: Արդյունքում՝ մեծահարուստի ֆինանսական միջոցներն անհամեմատ ավելացան, մինչդեռ շուրջ 500 մարդ դարձավ գործազուրկ, իսկ համայնքը զրկվեց իր հիմնական եկամուտի աղբյուրից:

Կոռուպցիայի դեմ պայքարելու և զարգացած տնտեսություն ունենալու համար խիստ կարևորվում են էթիկական վարքագծի խթանումը և բարեվարք մշակույթի զարգացումը հասարակության բոլոր մակարդակներում: Ուստի քաղաքացիների՝ կոռուպցիայի դեմ պայքարի կարևորության իմացությունը և դրա նկատմամբ անհանդուրժող վերաբերմունքը կնպաստեն այնպիսի տնտեսության ձևավորմանը, որտեղ կոռուպցիան տեղ չունի:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Ծահերի սարդոստայնում

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կկարողանան ներկայացնել արտադրության, բաշխման, փոխանակման կամ սպառման շղթայում առկա կոռուպցիոն խնդիրները:

Նկարագրություն՝ Սովորողներին հանձնարարել տնային աշխատանք՝ մտածել և նկարագրել, թե արտադրության, բաշխման, փոխանակման կամ սպառման գործընթացներում ինչպիսի խնդիրներ կարող են առաջանալ, եթե այդ գործընթացում որոշումները կայացվեն ոչ թե առաջնորդվելով արդարության սկզբունքով, այլ հոգուտ իրենց մերձավորների կամ հանուն գումարի ու նվերի: Հաջորդ դասի ընթացքում սովորողները ներկայացնում են խնդիրները և քննարկում դրանք ուսուցչի և համադասարանցիների հետ:

2 Ջրային ճգնաժամ. բանավեճ

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝
Սովորողները
- կգիտակցեն կոռուպցիայի ազդեցությունը ռեսուրսների անհավասար բաշխման և սեփական ցանկություններն ամեն գնով իրականացնելու գործընթացում.
- կկարևորեն կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժող վերաբերմունք ունենալը:

Նկարագրություն
Կազմակերպել «Սակավ ռեսուրսները, մեր անսահման ցանկություններն ու կոռուպցիան» խորագրով բանավեճ: Այդ նպատակով դասարանի աշակերտներից կազմել 5-7 հոգանոց երկու խումբ, որոնք ստորև ներկայացված իրավիճակին ծանոթանա-

լուց հետո կպաշտպանեն կոռուպցիայի մերժման և հավասարաչափ ջրից օգտվելու գաղափարը (1-ին խումբ) կամ կկարևորեն ջրի խնայողաբար օգտագործումը և կդիտարկեն կոռուպցիան որպես սահմանափակ ռեսուրսների պահպանմանն ուղղված միջոց (2-րդ խումբ):

Իրավիճակին ծանոթանալու և բանավեճին նախապատրաստվելու համար խմբերը կունենան 5 րոպե ժամանակ: Բանավեճը կտևի 7 րոպե, որի ընթացքում դասարանի մյուս աշակերտները կգնահատեն բանավիճող կողմերի առաջ քաշած մտքերի փաստարկվածությունը և ճշմարտացիությունը: Բանավեճից հետո 3 րոպեի ընթացքում անհրաժեշտ է լսել և ամփոփել աշակերտների գնահատականները, որից հետո իրականացնել ամփոփում՝ նշելով կոռուպցիայի բացասական հետևանքները և դրա նկատմամբ անհանդուրժող վերաբերմունք ունենալու կարևորությունը:

Իրավիճակ
Փոքրիկ գյուղի բնակիչների համար ջրի հիմնական աղբյուրը համայնքի հարևանությամբ անցնող գետակն էր: Բնակչության աճի հետ մեկտեղ ջրի պահանջարկը մեծացավ, որով պայմանավորված համայնքապետը, որը վերահսկում էր ջրի բաշխումը, որոշեց, որ որպեսզի համայնքի բնակիչները սկսեն խնայողաբար օգտագործել այն, պետք է վճարեն: Նրա անմիջական ջանքերով համայնքի ավագանին կայացրեց որոշում, ըստ որի հավելյալ ջուր ստանալը դառնում էր վճարովի համայնքի բնակիչների համար: Բացի այդ համայնքապետին տրվեց իրավունք՝ որոշելու, թե որ բնակիչները կարող են օգտվել հավելյալ ջրից՝ առանց համապատասխան վճարման: Արդյունքում, սոցիալապես անապահով ընտանիքները ստիպված էին բավարարվել անվճար տրվող ջրով, իսկ ապահով ընտանիքները հիմնականում նախընտրում էին գումար կամ թանկարժեք նվերներ տալ գյուղապետին՝ առաջնահերթ ջրամատակարարում ստացողների ցուցակում հայտնվելու համար, քանի որ այդպես ավելի մատչելի էր, քան սահմանված վճարումը:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Չորս աստիճան դեպի իրավունք

Տևողությունը՝ 2 րոպե

Նկարագրություն՝ Անիմացիոն տեսանյութում ներկայացվում է աշակերտների և ուսուցչի կողմից իրենց կարիքներն ու ցանկությունները համադրելու օրինակ:

1.5 ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմաներ՝ Մարդ-հասարակություն, մարդ-բարոյականություն, մարդ-իրավունք

Իրականացման ժամկետը՝ 2 ամիս

Նախագծի նպատակը՝ Զարգացնել սովորողների ստեղծագործական մտածողությունը, վերլուծական հմտությունները ու ձևավորել բացասական վերաբերմունք ոչ բարեվարք, օրինախախտ վարքագծի նկատմամբ:

Հետազոտության հարցը՝ Ի՞նչ ազդեցություն ունի համայնքը քաղաքացիների կյանքում:

Խնդիրը՝ Նախագծել և ներկայացնել աշխատանք, որտեղ ներկայացված կլինի լավագույն համայնքի մոդելը:

Վերջնարդյունքը՝

Սովորողները՝

- կկարևորեն համայնքի ղեկավարման, հասարակության վարքագծի և համայնքում գործող օրենքների կարևորությունը համայնքի կյանքում.
- կորոշեն հասարակության վարքագծային և արժեքային սկզբունքները, որոնք կարևոր են լավագույն համայնքն ունենալու համար.
- կմշակեն տեսանյութերի գաղափարներ, որոնք բնորոշ են աշակերտների կողմից մշակված և դրա հակադիր համայնքների մոդելներին.
- կնախագծեն և կկազմեն ներկայացված պահանջներին համապատասխան աշխատանք:

Նախագծի համառոտ նկարագրություն

Աշակերտներից կազմվում են 3-4 հոգանոց խմբերի և հանձնարարվում է մշակել իրենց պատկերացրած լավագույն համայնքի մոդելը, նկարագրելով, թե

1. ինչպե՞ս է իրականացվում համայնքի ղեկավարումը,
2. ինչպիսի՞ հասարակություն է այնտեղ ապրում, վարքագծային և արժեքային ի՞նչ սկզբունքների են նրանք հետևում,
3. ինչպե՞ս է իրականացվում օրենքների և իրավունքների պաշտպանությունը:

Այդ ամենը հաշվի առնելով անհրաժեշտ է նկարահանել 4 խաղարկային տեսանյութ, որից 2-ում պետք է ցուցադրվի, թե իրենց ստեղծելիք լավագույն համայնքում ինչպես է կյանքը կազմակերպված, ինչպիսի իրավիճակներ են տեղի ունենում, իսկ մյուս 2-ում, ի հակադրություն լավագույն համայնքի, ինչպես կարող է կյանքը կազմակերպվել:

Նախագծի պարտադիր բաղադրիչների նկարագրություն.

- **լավագույն համայնքի մոդել՝** սովորողները մշակում են մոդելը, նշելով, թե.
  - ինչպե՞ս է իրականացվում համայնքի ղեկավարումը,

- ինչպիսի՞ հասարակություն է այնտեղ ապրում, վարքագծային և արժեքային ի՞նչ սկզբունքների են նրանք հետևում,
- ինչպե՞ս է իրականացվում օրենքների և իրավունքների պաշտպանությունը:

- **խաղարկային տեսանյութեր՝** մշակվում և տեսանկարահանվում են 4 իրավիճակներ, որոնցից 2-ը տեղի կունենան լավագույն համայնքում, իսկ մյուս 2-ը՝ այնպիսի համայնքում, որը լավագույն համայնքի հակապատկերն է:

Նախագծի ընթացքը

Ուսուցչի գործողություններ	Աշակերտների գործողություններ
1| Նախապատրաստական փուլ	
• Հաշվի առնելով աշակերտների հետաքրքրությունները, կարողություններն ու հմտությունները՝ ձևավորել տարամակարդակ աշխատանքային խմբեր (յուրաքանչյուր խմբում 3-4 աշակերտ). • Ներկայացնել նախագծի համար պարտադիր համարվող բաղադրիչները. • Աջակցել խմբի անդամների աշխատանքային դերերի բաշխման գործընթացին:	• Աշխատանքային խմբերում կատարել աշխատանքի բաշխում. աշակերտները պետք է որոշեն իրենց դերերը, ընտրեն խմբի պատասխանատուին: • Որոշել հանդիպումների հաճախականությունը և ձևաչափը: • Նշումներ կատարել նախագծի պարտադիր բաղադրիչների մասին:
2| Պլանավորման փուլ	
• Ներկայացնել աշխատանքի գնահատման չափանիշները	• Որոշել խմբերի անունները. • Պլանավորել կատարվելիք աշխատանքները և սահմանել վերջնարդյունքները, • Որոշել, թե պարտադիր բաղադրիչներից բացի կան արդյոք այլ բաղադրիչներ, որը խումբը ցանկանում է ներառել նախագծում:
3| Իրականացման փուլ	
• Կազմակերպել/հետևել խմբային քննարկումների իրականացման ընթացքին. • Քննարկել միջանկյալ **հարցեր**, որոնք առաջացել են հետազոտական աշխատանք իրականացնելիս. • Քննարկել համայնքի ղեկավարման տարբեր մոդելներ, դրանց առավելություններն ու թերությունները. • Աջակցել աշակերտներին համայնքի մոդելի մշակման, նկարահանվելիք տեսանյութերի գաղափարների մշակման աշխատանքներում, ըստ անհրաժեշտության ուղղորդել նրանց աշխատանքը:	• Ուսումնասիրել համայնքների ղեկավարման ձևերը, քաղաքացիների վարքագծային կանոնները, արժեքները, հիմնական իրավունքներն ու օրենքները, որոնք նրանք ունենում են: Դրանցից առանձնացնել նրանք, որոնք կարող են ընդգրկել իրենց լավագույն համայնքի մոդելում: • Ամբողջացնել համայնքի մոդելը՝ յուրաքանչյուր բաղադրիչը ներկայացնելով համընդգրկուն ձևով: • Մշակել 4 իրավիճակների սցենարներ, որոնց հիման վրա կիրականացվի տեսանկարահանումները: Սցենարներից 2-ը պետք է նկարագրեն խաղարկային իրավիճակ, որը տեղի է ունենում աշակերտների կողմից մշակված լավագույն համայնքում, իսկ մյուս 2-ը՝ նկարագրված արժեքներով և սկզբունքներով չառաջնորդվող համայնքում: • Իրականացնել 4 տեսանյութերի տեսանկարահանումները: Ըստ անհրաժեշտության իրականացնել դրա մշակման, խմբագրման աշխատանքներ:

4| Արդյունքների ամփոփման փուլ	
• Աշակերտների հետ կազմել աշակերտների նախագծի ներկայացման պլանը: • Կազմակերպել նախագծի պաշտպանություն (մեկ կամ երկու դասաժամ): • Աջակցել պաստառի մշակման աշխատանքներին: • Կազմակերպել պաստառի ներկայացման փորձ և տրամադրել խորհրդատվություն՝ շտկման ենթական **հարցեր**ի վերաբերյալ:	• Ամփոփել կատարված աշխատանքը, մշակել լավագույն համայնքի մոդելի ներկայացման ձևաչափը և պատրաստվել դրա ներկայացմանը: • Նախապատրաստվել նախագծի ամբողջական ներկայացմանը:
5| Ներկայացման և գնահատման փուլ	
• Բարձր դասարանի աշակերտների և ուսուցիչների ներգրավվածությամբ կազմել նախագծերը գնահատող խումբ: • Գնահատող խմբին տրամադրել գնահատման ձևաթուղթը և մեկնաբանել դրա լրացման գործընթացը: • Աջակցել խմբային գնահատականների ձևավորմանը և դրանց հիման վրա գնահատել յուրաքանչյուր աշակերտի (օգտագործել անհատական գնահատման ձևաթերթը): Տրամադրել հետադարձ կապ բարելավման ենթակա հարցերի վերաբերյալ: • Կազմել իրականացված աշխատանքի վերլուծություն, առանձնացնել բարելավման ենթակա աշխատանքները:	• Ներկայացնել լավագույն համայնքի մոդելը և 4 տեսանյութերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ

Դասարան՝			
Խմբի անվանումը՝			
Խմբի անդամները՝			
Գնահատման չափանիշներ	**Գնահատման միավորային սանդղակ**	**Գնահատական**	**Հավելյալ նշումներ**
Կատարված աշխատանքի համապատասխանությունը նպատակին	0՝ չի համապատասխանում		
	1՝ մասամբ է համապատասխանում		
	2՝ հիմնականում համապատասխանում է		
	3՝ լիովին համապատասխանում է		
Համայնքի մոդելի և տեսանյութերի համապատասխանությունը հիմնական բաղադրիչներին	0՝ չի համապատասխանում		
	1՝ մասամբ է համապատասխանում		
	2՝ հիմնականում համապատասխանում է		
	3՝ լիովին համապատասխանում է		
Կատարված աշխատանքի ներկայացման հմտությունները և պաշտպանությունը	0.5՝ բավարար		
	1՝ հիմնականում լավ		
	1.5՝ լավ		
	2՝ գերազանց		
Խմբային աշխատանքը, աշակերտների համագործակցության արդյունավետության մակարդակը	0.5՝ բավարար		
	1՝ հիմնականում լավ		
	1.5՝ լավ		
	2՝ գերազանց		
Ընդամենը՝			

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ

Գնահատումն իրականացնում է ուսուցիչը

Դասարան՝

Աշակերտի անուն ազգանուն՝

Գնահատման չափանիշներ	Գնահատման միավորային սանդղակ	Գնահատական	Հավելյալ նշումներ
Աշակերտի բովանդակային ակտիվությունը նախագծային աշխատանքն իրականացնելիս	0՝ ակտիվ չէր		
	1՝ երբեմն ակտիվ էր		
	2՝ հաճախակի ակտիվ էր		
	2.5՝ շատ ակտիվ էր		
Աշակերտի ինքնուրույնությունը և նախաձեռնողականությունը նախագծային աշխատանքն իրականացնելիս	0՝ բացակայում էր		
	1՝ դրսևորվել է հազվադեպ		
	2՝ հիմնականում առկա էր		
	2.5՝ եղել է ինքնուրույն և ցուցաբերել մի շարք նախաձեռնություններ		
Խմբային աշխատանքի միավոր	Առավելագույնը՝ 5 միավոր (կազմում է խմբային աշխատանքի միավորի 50 %-ը)		

Ընդամենը՝

2 매니저

8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

2.1 Ի ՆՉ Է ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ: ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ

2.2 ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

2.3 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2.4 ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

2.5 ԿՈՌՈՒՊՑԻԱ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՁԱՐԱՇԱՀՈՒՄ

2.6 ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2.1 Ի՞ՆՉ Է ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ:
ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ

ՁԱՓՈՐՈՇԻՉ

Ա մակարդակ՝ Տարբերի արդարության բարոյական և իրավական կողմերը: Ներկայացնի տարբեր բնագավառներում արդարության արտահայտման ձևերը և վերլուծի դրանք:

Բ մակարդակ՝ Հիմնավորի արդարության կարևորությունը ժողովրդավարական հասարակության մեջ: Ունենա հմտություններ կյանքի տարբեր իրավիճակներում արդարությունը պաշտպանելու և արժանապատվորեն հանդես գալու համար:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Արդարության գաղափարի հիմքում ընկած է արդարացի և անաչառ լինելը, իսկ կոռուպցիայի հիմքում՝ անազնվությունը, անարդարացիությունը և անհավասարությունը: Կոռուպցիոն իրավիճակներում խախտվում է արդարության գնահատման չափանիշների՝ կարիքի, ներդրման, արժանիքի, ջանքերի առաջնահերթ դիրքը, և առաջին պլան է մղվում անձնական օգուտը՝ դուրս գալով հանրային շահի սահմաններից:

Բուհերի որոշ սովորողներ իրենց բարձրաստիճան ազգականների միջամտության շնորհիվ ստանում են բարձր գնահատականներ կամ ավարտական վկայականներ (դիպլոմ)՝ այդկերպ շեղվելով արդար գործելու, արդարացի լինելու ուղուց և առաջին պլան մղելով անձնական շահը:

Տեղին կլինի հիշել «Ընկերներիս համար՝ ամեն ինչ, թշնամիներիս համար՝ օրենքը»[26] հայտնի արտահայտությունը, որը պատկերավոր ներկայացնում է կոռուպցիայի և արդարության հակադիր լինելու գաղափարը:

ԹԻՀԿ, 2023 թ, աղբյուր՝ transparency.am

Կարևոր է հիշել, որ հասարակության յուրաքանչյուր անդամ ձգտում է արդարության, ուստի իր կամ հարազատների նկատմամբ կատարված անարդարությունները մեծ դժգոհություն են առաջացնում նրա մոտ ու մղում արդարության վերականգման համար պայքարի: Սակայն մասնավոր օգուտ ստանալու նպատակով կոռուպցիոն վարքագծի դրսևորումն այդ նույն անձի կողմից հաճախ չի գիտակցվում որպես անազնիվ ու այլոց համար անարդարություն առաջացնող արարք և չի կանխում կոռուպցիոն գործարքը:

26 Օսկար Ռ. Բենավիդես, Պերուի նախագահ, 1933-1940 թթ.
Marantzidis Nikos, For my friends, everything; for my enemies, the law, 2021, https://www.ekathimerini.com/opinion/1156932/for-my-friends-everything-for-my-enemies-the-law/ (դիտված՝ 18.03.2024 թ.)

Պաշտոնի նշանակման համար նախատեսված քննությունից հետո պաշտոնին նշանակվում է քննության այն մասնակիցը, որը կաշառել էր մրցութային հանձնաժողովին և որի միավորները միջինից ցածր էին: Գերազանց գնահատական ստացած մասնակցի համար դա մեծագույն անարդարություններից էր. նա դեռ երկար ժամանակ չէր կարողանում հաշտվել տեղի ունեցածի հետ: Մեկ տարի հետո նա դիմում է այդ նույն կազմակերպություն՝ մեկ այլ հաստիքում աշխատելու համար, կաշառում մրցութային հանձնաժողովին և ստանձնում իր համար բաղձալի պաշտոնը՝ ամենևին չմտածելով այն անարդարության մասին, որը ստեղծվեց իր կոռուպցիոն վարքագծի պատճառով:

Կոռուպցիոն դրսևորումները կանխարգելելու և դրանցում տարբեր դերակատարների ներգրավվածությունը դատապարտելու համար գործում են բազմաթիվ օրենքներ, մշակվում են ներքին կարգապահական և վարքագծի կանոններ, որոնք պահանջում են, որ հասարակության յուրաքանչյուր անդամ իր բոլոր հարաբերություններում առաջնորդվի համապատասխան նորմերով:[27] Սակայն հնարավոր չէ կանոններով ու օրենքներով կարգավորել կոռուպցիոն բոլոր դրսևորումներն ու ռիսկերը, և հենց բարոյական, այդ թվում՝ արդարության ձգտող նորմերն են, որ օգնում են կանխարգելելու կոռուպցիան:

Աշոտն ու Արամը գրադարանում պատվիրել էին նույն գիրքը, որն անհրաժեշտ էր նրանց հանձնարարված գործնական աշխատանքը կատարելու համար: Չնայած Աշոտը մեկ օր ավելի վաղ էր պատվիրել գիրքը, այն ստացավ Արամը, քանի որ գրադարանավարուհին նրա հորաքույրն էր: Գրադարանի մյուս աշխատակիցների համար տեղի ունեցածն անարդարացի էր և ակնհայտ էր, որ իրենց գործընկերն առաջնորդվել է անձնական շահով, ուստի նրանց պնդմամբ գիրքը վերցվեց Արամից և փոխանցվեց առաջինը դիմած աշակերտին՝ Աշոտին:

Կոռուպցիայի դեմ պայքարի և արդարության ապահովման համար կարևոր է ունենալ պահանջատեր և բարեվարք քաղաքացիներ, որոնք կմասնակցեն իրենց վերաբերող որոշումների կայացմանը ու առանց երկմտելու կմերժեն կոռուպցիան: Այդ կերպ քաղաքացիները կենթարկվեն օրենքներին, քանի որ կհարգեն օրենքը և կիմանան, որ օրենքները խախտելով անհարգալից վերաբերմունք կդրսևորեն բոլոր օրինապահ քաղաքացիների նկատմամբ: Կոռուպցիայի դեմ պայքարի և արդարության խթանման համատեղ հանձնառությամբ մենք կարող ենք կառուցել արդար հասարակություն բոլորի համար:

27 Հարությունյան Հ., Ի՞նչ է իրավունքը. բարդության հինգ աստիճան, Մեդիա կենտրոն, 2023 https://www.youtube.com/watch?v=0h6dgOFkUEY (դիտված՝ 24.07.2023 թ.)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Ինչո՞ւ են կարևոր օրենքները

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝

Սովորողները

- կգիտակցեն և կհիմնավորեն օրենքներին ենթարկվելու կարևորությունը.
- կկարևորեն կոռուպցիան դատապարտող օրենքների դերը հասարակական կյանքը կանոնակարգելու գործում:

Նկարագրություն

Սովորողներից կազմել 3-4 հոգանոց խմբեր՝ հանձնարարելով պատկերացնել, որ իրենք ժամանակավորապես տեղափոխվում են ապրելու մի երկրում, որտեղ կոռուպցիան դատապարտող օրենքներ չկան: Անհրաժեշտ է խմբերում քննարկել և գրի առնել կարծիքները, թե՝

- ինչո՞ւ է կարևոր հետևել օրենքներին, եթե նույնիսկ շրջապատում մեզ պատժող չկա, երբ մենք դրանք խախտում ենք.
- ի՞նչն է մեր շրջապատում անարդար մեզ համար: Ինչո՞ւ և ինչպե՞ս փոխենք այն:

Խմբային քննարկման համար տրամադրվում է 7 րոպե, իսկ խմբային աշխատանքի արդյունքները ներկայացնելու համար՝ մինչև 2 րոպե ժամանակ:

Եթե խմբերը չեն կարողացել պատասխանել հարցերին, ապա անհրաժեշտ է բացատրել օրենքներին ենթարկվելու կարևորությունը՝ անդրադառնալով նաև հետևյալ գաղափարներին.

- մենք պետք է ենթարկվենք օրենքներին ոչ թե պատժվելուց վախենալու, այլ այն պատճառով, որ հասարակության համար կոռուպցիոն վարքագիծն անընդունելի է և վնասակար.
- մենք պետք է ենթարկվենք օրենքներին, քանի որ հարգում ենք օրենքը և գիտենք, որ օրենքները խախտելով մենք անհարգալից վերաբերմունք ենք դրսևորում բոլոր օրինապահ քաղաքացիների նկատմամբ.
- մենք պետք է միշտ ենթարկվենք օրենքներին, քանի որ եթե դա չանենք, մենք կխաթարենք օրենքի գերակայությունը.
- օրենքները հաճախ ընդունվում են՝ անվտանգության նկատառումներից ելնելով.
- այն, որ մեկ ուրիշը խախտում է օրենքը, իրավունք չի տալիս մեզ նույնպես խախտելու այն, ինչպես հաճախ անում ենք սովորույթի ուժով:[28]

28 OECD, Education for Integrity Teaching on Anti-Corruption, Values and the Rule of Law, page 79, https://www.oecd.org/governance/ethics/education-for-integrity-web.pdf

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Տեղեկանքների լաբիրինթոսում

Տևողությունը՝ 1 րոպե

Նկարագրություն՝ Անիմացիոն տեսանյութում ներկայացվում է, թե ինչպես են բյուրոկրատական քաշքշուքները և արհեստական խոչընդոտները հանգեցնում կոռուպցիայի և անարդարության:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Կոռումպացվածը (անգլերեն)

Տևողությունը՝ 1 ժամ 43 րոպե

Նկարագրություն՝ Գեղարվեստական ֆիլմում նկարագրվում է կոռուպցիայի հնարավոր ազդեցությունը մարդու կյանքի վրա և կոռուպցիոն կայսրությունների աշխատանքն ու համագործակցությունը տարբեր պաշտոնյաների ու գերատեսչությունների հետ:

2.2 ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

ՁԱՓՈՐՈՇԻՉ

Ա մակարդակ՝ Ներկայացնի հավասարության դրսևորումները (սոցիալական հավասարություն, իրավահավասարություն և այլն) և խմբավորի դրանք:

Բ մակարդակ՝ Բացահայտի սոցիալական հավասարության ու իրավահավասարության դրսևորումները հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Կոռուպցիան ոտնահարում է հավասարությանն առնչվող կանոնները և որոշ մարդկանց ու խմբերի տալիս առավելություններ, որոնք մյուսները չունեն: Կոռուպցիան ռեսուրսները տեղափոխում է բնակչության լայն շերտերից դեպի էլիտաներ և, ընդհանուր առմամբ, սոցիալապես անապահով խավից դեպի ապահով խավ՝ խաթարելով սոցիալական հավասարությունը: Կարող ենք ասել, որ սա քաղաքացիների համար գործում է որպես լրացուցիչ «հարկ», որն ուղղվում է էլիտաներին՝ ավելի քիչ գումար թողնելով պետական ծախսերի համար:[29]

Անհավասարությունը կարող է թե՛ ուղղակիորեն առաջ բերել կոռուպցիա, թե՛ ստեղծել կոռուպցիայի առաջացման համար նպաստավոր միջավայր և թե՛ լինել կոռուպցիայի հետևանք: Այն նման է արատավոր շղթայի, որտեղ անհավասարությունն առաջացնում է ցածր վստահություն պետական մարմինների հանդեպ, որն էլ իր հերթին հանգեցնում է կոռուպցիայի՝ առաջ բերելով էլ ավելի մեծ անհավասարություն, վստահության ցածր մակարդակ և կոռուպցիոն գործարքների թվի աճ:[30]



29 Uslaner M. E., Corruption and inequality, CESifo DICE Report, page 20, 2011 https://www.ifo.de/DocDL/dicereport211-forum4.pdf, (դիտված՝ 24.07.2023 թ.)

30 Uslaner M. E., Corruption and inequality, CESifo DICE Report, 2011 https://www.ifo.de/DocDL/dicereport211-forum4.pdf, (դիտված՝ 24.07.2023 թ.)

Դատարանի կոռումպացվածության հետևանքով խախտվում է օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքը, մեղավորները չեն կրում պատիժներ, դատապարտվում են անմեղ մարդիկ, կորչում է քաղաքացիների վստահությունը դատարանի հանդեպ[31], որի արդյունքում էլ քաղաքացիներն ի հայտ եկած խնդիրները հակված են լուծել այլ, այդ թվում կոռուպցիոն ճանապարհներով, այլ ոչ թե դատարաններին դիմելով:

Ներկայացված ցիկլի շարունակական կրկնությունը կարող է հանգեցնել կոռումպացված խմբերից մարդկանց կախվածության, քանի որ պետական մարմինների նկատմամբ աճող անվստահությունը և կոռուպցիոն աշխատող մեխանիզմների մասին գործնական օրինակները ստեղծում են պատկերացումներ այդ խմբերի հզորության և խնդիրներն արագ լուծելու կարողության մասին:

Կոռուպցիան հանգեցնում է նաև հանրային ռեսուրսների անհամաչափ բաշխման, որի արդյունքում ռեսուրներին հասանելիություն և դրանց նկատմամբ իշխանություն ունեցող խմբերը հասարակության մեջ զբաղեցնում են իշխող դիրք:

Քաղաքական մեծ ազդեցություն ունեցող պաշտոնյաներից մեկին դուր չեկավ, որ իր տան հարևանությամբ անցնող փողոցով մեքենաներ են երթևեկում: Նա, օգտագործելով իր ազդեցությունը համայնքապետի վրա և կաշառելով համայնքի ոստիկանապետին, հասավ նրան, որ փողոցը հայտարարվեց ոչ երթևեկելի: Փողոցի հարևանությամբ միշտ կանգնում էին ոստիկաններ, որոնք փողոցում երթևեկելու համար չէին տուգանում միայն պաշտոնյային: Արդյունքում՝ հանրային ռեսուրսն օգտագործվում էր անհավասարաչափ՝ խախտելով հանրության՝ այդ ռեսուրսից հավասարապես օգտվելու իրավունքը:

Ամենատարբեր ոլորտներում անհավասար հնարավորություններ նկարագրող իրավիճակներ, ցավոք, մեր կյանքում հաճախ կարող ենք հանդիպել: Օրինակ՝ սոցիալապես ապահով խավի ներկայացուցիչները հիմնականում պաշտպանված են հանրային ծառայությունների խափանումներից (օրինակ՝ հիվանդանոցներում պետպատվերի շրջանակում բուժման համար հատկացված միջոցները սպառվել են) և, որպես կանոն, ստիպված չեն ապավինել բացառապես պետական ծառայություններին: Անապահով խավի ներկայացուցիչները հիմնականում չեն կարող կաշառք տալ և նույնիսկ օգտվել այլընտրանքային վճարովի ծառայություններից, քանի որ չունեն բավարար ֆինանսական միջոցներ: Արդյունքում, սոցիալական տարբեր խմբերի միջև անհավասարությունն ավելի է խորանում՝ հանգեցնելով այդ խմբերի բևեռացմանը:

Համավարակի ժամանակ, երբ ծանր հիվանդներն օրեր շարունակ սպասում էին հիվանդանոցային ծառայություններից օգտվելու իրենց հերթին, ապօրինի հարստացած գործարարը կաշառում է հիվանդանոցի տնօրենին՝ հիվանդանոցում իր ընտանիքի համար «ամրագրելով» մեկ հիվանդասենյակ՝ չորս մահճակալով, որից

31 Գրիգորյան Հ., Կոռուպցիա մաս 1, https://www.boonus.am/lesson/21 (դիտված՝ 24.07.2023 թ.)

կարող էին օգտվել միայն գործարարը և իր ընտանիքի անդամները: Արդյունքում՝ առողջական ծանր վիճակում գտնվող սոցիալապես անապահով խավի ներկայացուցիչները պետք է սպասեին հիվանդանոցային բուժօգնությանը, այն պարագայում, երբ հիվանդանոցում կային ազատ մահճակալներ և նրանց բուժօգնությունը հնարավոր էր կազմակերպել:

Կոռուպցիոն դրսևորումներից մեկն էլ պաշտոնական դիրքի չարաշահումն է, որի ժամանակ անհավասար պայմաններ են ստեղծվում պաշտոն զբաղեցնող անձի կողմից արտոնություն ստացողի և մյուս քաղաքացիների միջև: Օգտագործելով աշխատանքային գործունեության կատարման համար իրեն տրված իշխանությունը՝ պաշտոնատար անձը որոշումներ է կայացնում հօգուտ իրեն, իր մերձավորի, վերադասի, իրեն լավություն անող կամ կաշառք տվող անձանց: Արդյունքում՝ մեկ այլ քաղաքացի, որ օրինիբուն աշխատում է և բարեխղճորեն կատարում պետության առջև ունեցած իր հարկային պարտավորությունները կարող է դառնալ անհավասար պայմանների զոհ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության մի շարք աշխատակիցներ ծառայության պետի գլխավորությամբ 2005-2010 թվականներին պետական բյուջեից յուրացրել էին 260.956.681 ՀՀ դրամ:[32] Միևնույն ժամանակ, 2010 թվականի տվյալներով Հայաստանի բնակչության 35.8 %-ը համարվում էր աղքատ:[33,34] Արդյունքում, ամբողջ կյանքի ընթացքում հարկային պարտականությունները բարեխղճորեն կատարած քաղաքացիները տվյալ կոռուպցիոն սխեմայի հետևանքով զրկվել էին իրենց համար նախատեսված միջոցներից:

Քանի դեռ քաղաքական ու տնտեսական համակարգերը ծառայում են կոռումպացված դերակատարներին, հարստությունը վերաբաշխվում է հօգուտ նրանց, ովքեր ամենաքիչն ունեն դրա կարիքը: Կոռուպցիայի պայմաններում կրթության, առողջապահության, աղքատության դեմ պայքարի և ընտրությունների ֆինանսավորումը պաշտոնյաների համար կարող է դառնալ անձնական հարստացման աղբյուր, ինչի արդյունքում էլ տուժում են երկրի սոցիալական ծրագրերը:[35]

Անհանդուրժողականություն դրսևորելով կոռուպցիայի դեմ՝ մենք պայքարում ենք նաև անհավասարության ու անարդարության դեմ, ուստի կոռուպցիոն դեպքերի մասին ազդարարումը և մեր սեփական բարեվարք կենսակերպը կարող են լինել այն կարևոր քայլերը, որոնք անհրաժեշտ են մեր միջավայրում հավասարության վերականգման համար:

---

32 DataLex, Դատական տեղեկատվական համակարգ, Գործի համար: ԵԿԴ/0011/01/13, 2013, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=14355223812294473 (դիտված՝ 24.07.2023 թ.)

33 ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստան. աղքատության սուբյեկտիվ գնահատականը 2010 թ.-ին, https://armstat.am/file/article/poverty_2011a_5.pdf (դիտված՝ 24.07.2023 թ.)

34 Հարությունյան Ս., «Պաշտոնական տվյալներով Հայաստանում աղքատությունը 2 տոկոսով նվազել է», 2015, https://www.azatutyun.am/a/27381947.html (դիտված՝ 24.07.2023 թ.)

35 UNODC Module Series on Anti-Corruption, Knowledge tools for academics and professionals, Module 1What is corruption and why should we care? United nations office on drugs and crime, Vienna https://www.unodc.org/e4j/zh/anti-corruption/module-1/key-issues/effects-of-corruption.html (դիտված՝ 24.07.2023 թ.)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Կոռուպցիայից հավասարություն

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝
Սովորողները
- Կտեսնեն անհավասարության և կոռուպցիայի միջև կապը.
- Կկարողանան օրինակների միջոցով ներկայացնել, թե ինչպես է կոռուպցիան հանգեցնում անհավասարության, ու կգտնեն հավասարության վերականգման եղանակներ:

Նկարագրություն
Սովորողներից կազմել 4-5 հոգանոց խմբեր և յուրաքանչյուր խմբին հանձնարարել 5 րոպեի ընթացքում մտածել և գրել առնվազն 1 օրինակ, որի դեպքում կոռուպցիան հանգեցնում է անհավասարության, գտնել դրա պատճառները և առաջարկել հավասարությունը վերականգնելու եղանակներ: Խմբերին անհրաժեշտ է նախապես տրամադրել ստորև ներկայացված աղյուսակը, որում կգրառեն իրենց աշխատանքը: Յուրաքանչյուր խումբ մինչև 2 րոպեի ընթացքում ներկայացնում է իր կատարած աշխատանքը, իսկ առաջադրանքի վերջում իրականացվում է ամփոփում՝ ընդգծելով կոռուպցիայի բացասական ազդեցությունը անհավասարության առաջացման վրա:

Իրավիճակ	Անհավասարության պատճառներ	Հավասարության վերականգնման եղանակներ

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Ջուրը բոլորինն է հավասար

Տևողությունը՝ 1.5 րոպե

Նկարագրություն՝ Անիմացիոն տեսանյութում ներկայացվում է աշակերտների պայքարը համայնքային ռեսուրսների հավասար օգտագործման համար:

2 Երբ պաշտոնյան որդուն ազատում է զինծառայությունից

Տևողությունը՝ 3 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում ներկայացվում է պաշտոնեական լիազորությունների չարաշահման դեպքը և բնույթը, քննարկվում են օրինակներ, որոնք հանգեցնում են անհավասարության:

2.3 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՁԱՓՈՐՈՇԻՉ

Ա մակարդակ՝ Իմանա, թե ինչ է պատասխանատվությունը, և ինչու է այն անհրաժեշտ: Տարբերի պատասխանատվություն ստանձնելու առավելություններն ու դժվարությունները: Ներկայացնի իրավունքի, պատասխանատվության և հանդուրժողականության կապը:

Բ մակարդակ՝ Ձևավորի և դրսևորի պատասխանատվության զգացում սեփական գործողությունների հանդեպ: Մեկնաբանի իր որոշումների կայացման նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի անհրաժեշտությունը:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Կոռուպցիայի դեմ պայքարի գործում առանձնահատուկ և խիստ կարևոր դեր ունի պատասխանատվության գաղափարը: Իրենց արարքների և պետության նկատմամբ պատասխանատվության զգացում ունեցող մարդիկ, որպես կանոն, մասնակից չեն դառնում կոռուպցիոն գործարքներին՝ գիտակցելով դրա ավերիչ հետևանքները հասարակության համար: Անհատները, որոնք այս կամ այն կերպով ներգրավված են կոռուպցիոն գործարքների մեջ, հայտարարում են, որ կոռուպցիայի դեմ պայքարն իրենց պարտականությունը չէ: Պատասխանատվությունը մերժելու փորձի հիմնական պատճառներն են՝ «Ես չգիտեի, որ դա կոռուպցիա է», «Ես դա ինձ համար չեմ արել, ես դա արել եմ իմ կազմակերպության համար», «Ես չգիտեմ, թե ինչպես արձագանքել կոռուպցիային» և այլն:[36]

Պատասխանատվությունը կարող է լինել հանրության ու պետության առջև և մասնավոր՝ սահմանափակ խմբի առջև: Հանրային պատասխանատվությունը կարող է մղել կոռուպցիայի դեմ պայքարի, մինչդեռ մյուս տեսակը՝ որի աղբյուրներն են, օրինակ՝ խոստումը, նշանակումը, հանձնարարականը, սովորույթները, կարող են դառնալ կոռուպցիոն տարբեր գործարքներում ներգրավվելու պատճառ: Այստեղ առաջանում է բախում ստանձնած հանրային պաշտոնի, հանրային ծառայության արժեքների, պաշտոնական պարտականություններ, երկրում գործող օրենքների և տված մասնավոր խոստումների ու պարտավորությունների միջև: Նման իրավիճակում ճիշտ վարքագիծը կլինի օրենքով և հանրային շահով առաջնորդվելը:

Զինկոմիսարիատի ղեկավարը, որը խոստացել էր եղբորը, որ նրա որդին չի ծառայի սահմանապահ զորամասում, հանձնարարում է իր ենթականերին եղբոր որդուն

36 UNODC, Knowledge tools for academics and professionals, Module 5, Private sector corruption, Vienna https://grace.unodc.org/grace/uploads/documents/academics/Anti-Corruption_Module_5_Private_Sector_Corruption.pdf (դիտված՝ 24.07.2023 թ.)

զորակոչել ոչ սահմանամերձ և Երևանի հարևանությամբ գտնվող որևէ զորամաս: Տվյալ պաշտոնյան իրեն պատասխանատու է զգում տված խոստման, իսկ նրա ենթակաները՝ տրված հանձնարարության կատարման համար, այն դեպքում, երբ դրանք ապօրինի են, քրեորեն պատժելի և խախտված օրենքների համար կարող են հանգեցնել քրեական պատասխանատվության:

Կոռուպցիայի դեմ պայքարի գործում կարևորվում է ինչպես մասնավոր/անձնական, այնպես էլ հանրային/սոցիալական պատասխանատվությունը: Սոցիալական պատասխանատվության համաձայն՝ անհատը պատասխանատու է իր քաղաքացիական պարտքը կատարելու համար, իսկ նրա ծավալած գործունեությունը և կատարած գործողությունները պետք է օգուտ տան ամբողջ հասարակությանը: Եթե գործողությունը կամ որոշումը վնասում է հասարակությանը կամ շրջակա միջավայրին, ապա այն կհամարվի սոցիալապես անպատասխանատու:[37] Այսպիսով, կարելի է ասել, որ կոռուպցիան սոցիալապես անպատասխանատու վարքագծի օրինակ է: Եվ հակառակը՝ կոռուպցիայի դեմ պայքարը սոցիալապես պատասխանատու վարքագծի գովելի դրսևորում է:

Շրջապատված, հեղինակ՝ Դարիո Բանեգաս, 2015 թ, աղբյուր՝ cartoonmovement.com

Հանդուրժողականությունը մարդկանց, նրանց գաղափարների, մոտեցումների, հայացքների ճանաչումն ու ընդունումն է և դրանց նկատմամբ հարգանքը. այն դասվում է մարդկային կարևոր արժանիքների շարքին: Սակայն որքան էլ որ կարևորվի ու բարձր գնահատվի հանդուրժողականության դերը մարդկանց կյանքում, անհրաժեշտ է կարողանալ ճանաչել այն իրավիճակները, որտեղ հենց անհանդուրժող վերաբերմունքը կարող է հասարակությանը մեծ օգուտ տալ: Այդպիսին է հասարակությանը վնասող վարքագծի, օրինակ՝ կոռուպցիոն վարքագծի նկատմամբ ցուցաբերվող անհանդուրժող վերաբերմունքը, երբ կոռուպցիան համարվում է մերժելի երևույթ, և քայլեր են ձեռնարկվում դրա կանխարգելման և դրա դեմ պայքարի ուղղությամբ: Կոռուպցիայի պես մերժելի երևույթների նկատմամբ անհանդուրժող վերաբերմունքն արդարության և հավասարության հաղթանակի համար անհրաժեշտություն է:

Անհանդուրժող պետք է լինել, օրինակ, համայնքապետարանին պատկանող տրանսպորտային միջոցներն իր, ընտանիքի անդամների և մերձավորների կարիքները բավարարելու համար օգտագործող համայնքապետի, համապատասխան կարողություն և որակավորում չունեցող, սակայն իր կուսակցությանն անդամակցող անձին պաշտոնի նշանակող պաշտոնյայի վարքագծի նկատմամբ:

Կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարը ենթադրում է ոչ միայն համապատասխան քաղաքականության մշակում ու իրականացում, կոռուպցիոն հանցագործություններում

37 Pachamama Alliance, Social Responsibility and Ethics, 2023 https://shorturl.at/sayJz (դիտված՝ 24.07.2023 թ.)

ներգրավված անձանց բացահայտում ու դատապարտում, այլև՝ այդ գործընթացներին քաղաքացիների մասնակցություն և աջակցություն, որն առնվազն պետք է դրսևորվի ապօրինությունների նկատմամբ անհանդուրժող վերաբերմունքով և դրանց վերհանմանն ուղղված կոնկրետ քայլերով: Ազդարարումը կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ ու անհրաժեշտ միջոց է ոչ միայն այն պատճառով, որ բացահայտում է հանրային և մասնավոր հատվածում հանցագործ դրսևորումները և ներգրավում քաղաքացիներին կոռուպցիայի դեմ պայքարում, այլև այն պատճառով, որ նվազեցնում է կոռուպցիոն ռիսկերը՝ ստիպելով հանցագործություն ծրագրող անձանց զգուշանալ կոռուպցիոն գործարքների մեջ ներգրավվելուց:[38]

Շինարարական կազմակերպությունը կառուցում է բնակելի շենքեր, որոնք չեն համապատասխանում շինանվտանգության չափանիշներին, բայց քանի որ կազմակերպության ղեկավարի ազգականը բարձրաստիճան պաշտոնյա է, որը նվեր է ստացել բնակարան այդ շենքում, նրանց թույլատրվում է շարունակել իրենց ապօրինի աշխատանքները: Կազմակերպության շինարարներից մեկը, նկատելով տեղի ունեցող խախտումները, փոքրիկ հետաքննություն է իրականացնում և տեղեկանում կոռուպցիոն գործարքի մասին: Անհրաժեշտ ապացույցները հավաքելուց հետո նա գաղտնի ազդարարում է՝ այդկերպ փրկելով հազարավոր մարդկանց կյանքեր:

Կոռուպցիոն դրսևորումների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքը հանգեցնում է նրան, որ կոռուպցիան ժամանակի ընթացքում դառնում է սովորական, մեր կողմից ոչ մերժելի երևույթ, իսկ կոռուպցիոն վարքագիծը շարունակ կրկնվում է՝ աստիճանաբար վերածվելով հասարակության համար ընդունելի, չնկատվող մի երևույթի: Ընդ որում, կոռուպցիոն գործարքներին մասնակցությունը և դրանց նկատմամբ հանդուրժող վերաբերմունքը կարող են բացասական հետևանքների հանգեցնել ոչ միայն ուրիշների, այլ նաև հենց այդ գործարքներում ներգրավված անձանց համար:

Ճանապարհային ոստիկանի անմիջական ղեկավարը նրանից պահանջում էր ամեն ամիս իրեն վճարել 400.000 դրամ, հակառակ դեպքում՝ ոստիկանին կազատեին աշխատանքից: Հանդուրժելով ղեկավարի անօրինական վարքը՝ ոստիկանը չբարձրաձայնեց խնդրի մասին և, որպեսզի գումարը կարողանա վճարել ղեկավարին, սկսեց օրինախախտ վարորդներից կաշառք պահանջել և չարձանագրել խախտումները: Վերջերս նա ծանր մարմնական վնասվածքներ ստացավ ճանապարհատրանսպորտային խոշոր պատահարի ժամանակ, որի մեղավորը նախկինում խախտում կատարած, սակայն իր կողմից գումար վերցնելու դիմաց չպատժված վարորդն էր:

Նույն տրամաբանությամբ, ցանկացած այլ ոլորտում տեղի ունեցող կոռուպցիոն գործարքներն ի վերջո վնասում են թե՛ տվյալ անձին, թե՛ հասարակության մյուս անդամներին, չէ՞ որ այդ հասարակական համակարգում ամեն ինչ փոխկապակցված է շղթայական թելերով:

38 ԹԻՀԿ, Հարությունյան Խ., Ազդարարի ուղեցույց, Երևան, 2019, https://transparency.am/hy/publication/pdf/149/1226, (դիտված՝ 24.07.2023 թ.)

Այսպիսով, անհանդուրժող վարքագիծ պետք է դրսևորել կոռուպցիոն գործարքների, մարդու իրավունքների ոտնահարումների և այլ մերժելի երևույթների նկատմամբ, ընդ որում՝ անհանդուրժողականությունը պետք է դրսևորվի ոչ միայն ինքներս մեր մեջ այն մերժելով, այլև որոշակի գործողությունների դիմելով՝ խնդիրը տարբեր հարթակներում բարձրաձայնելով (ազդարարելով), ոստիկանություն դիմելով և այլն, որի արդյունքում կստեղծվի ավելի արդար, հավասար, կանխատեսելի և բարեկեցիկ միջավայր:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Ո՞վ է պատասխանատու

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝

Սովորողները

- Կորոշեն հանրային նշանակության գործարքներում կոռուպցիայի դեմ պայքարի պատասխանատուներին և յուրաքանչյուրի պատասխանատվության չափը.
- Կգիտակցեն իրենց դերը կոռուպցիայի դեմ պայքարի գործում և կկարողանան գտնել կոռուպցիոն իրավիճակից դուրս գալու ելքեր:

Նկարագրություն

Գրատախտակին գծել ստորև ներկայացվող աղյուսակը և սովորողներին ներկայացնել պատմությունը: Պատմությունը ներկայացնելուց հետո կազմակերպել քննարկում՝ պարզելու համար, թե ովքեր են ներկայացված իրավիճակի պատասխանատուները յուրաքանչյուր հարցի մասով, գրել պատասխաններն աղյուսակի համապատասխան մասում և պարզաբանել սովորողների բարձրաձայնած խնդիրները: Աղյուսակը լրացնելուց հետո սովորողներին հարցնել, թե ինչ քայլեր կարելի է ձեռնարկել ստեղծված իրավիճակը հօգուտ երեխաների լուծելու համար:

Սովորողներից ստացված պատասխանները կլինեն տարբեր, սակայն անհրաժեշտ է նշել, որ նրանք, ովքեր անմիջականորեն ներգրավված չեն, կարող են իրենց վրա վերցնել մեղքի առնվազն մի մասը, եթե չհակառակվեն կոռուպցիոն գործողություններին և չազդարարեն կոռուպցիոն խախտումների մասին: Եթե նրանք, ովքեր մեղավոր են կոռուպցիայի մեջ, վստահ լինեն, որ հասարակության լայն շրջանակները չեն արտահայտվելու իրենց դեմ, ապա կշարունակեն խախտել կանոններն ու օրենքները: Նրանք կզգան, որ օրենքից վեր են և, քանի որ կոռուպցիան գրեթե միշտ պահանջում է գաղտնիություն, գաղտնիության քողի տակ կշարունակեն իրենց՝ հասարակության համար վնասակար գործունեությունը:

Պատմություն

Համայնքապետարանը հայտարարեց, որ համայնքի խաղահրապարակը, տարիներ

շարունակ անբարեկարգ վիճակում գտնվելուց հետո, պետք է վերանորոգվի, և որ վերանորոգման աշխատանքները պետք է իրականացնի համայնքապետին պատկանող կազմակերպությունը: Վերանորոգումից երեք ամիս անց վերանորոգված խաղահրապարակի ներկված հատվածները գունաթափվեցին, գույքը սկսեց կոտրվել, որի պատճառով էլ երեխաները բազմաթիվ վնասվածքներ ստացան: Խաղահրապարակը գտնվում էր երաշխիքային սպասարկման ժամանակահատվածում, ուստի համայնքի բնակիչները մի քանի անգամ դիմեցին համայնքապետարան՝ վնասված գույքը փոխելու պահանջով: Համայնքապետը հրաժարվեց կատարել երաշխիքային սպասարկումը, իսկ երեխաներն էլ այլևս չկարողացան խաղալ խաղահրապարակում, քանի որ այն վտանգավոր էր նրանց համար:

N	Մարդկանց խմբեր	Հիմնականում պատասխանատու է	Մասամբ պատասխանատու է	Պատասխանատու չէ
1	Համայնքապետ			
2	Համայնքի ավագանի			
3	Երեխաներ			
4	Երեխաների ծնողներ			
5	Համայնքի թոշակառուներ			
6	Վերանորոգումն իրականացնող կազմակերպության աշխատակիցներ			
7	Հարևան համայնքի բնակիչներ			
8	Վերանորոգման համար հայտարարված մրցույթի արդյունքները գնահատող խմբի անդամներ			
9	Վերանորոգման համար հայտարարված մրցույթին դիմած, բայց չհաղթած կազմակերպություններ			

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Հիպոկրատի երդումը կամ գումարի շորթումը

Տևողությունը՝ 2 րոպե

Նկարագրություն՝ Անիմացիոն տեսանյութում ներկայացվում է քաղաքացիական պատասխանատվությամբ օժտված աշակերտի պայքարը կոռուպցիոն շղթայի դեմ:

2 Ո՞վ է ազդարարը

Տևողությունը՝ 1 րոպե 30 վայրկյան

Նկարագրություն՝ Անիմացիոն տեսանյութում ներկայացվում է, թե ով է ազդարարը և որ դեպքերում կարող է ազդարարել:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Մեխանիզմ (անգլերեն)

Տևողությունը՝ 16 էպիզոդ, յուրաքանչյուրը՝ 45 րոպե

Նկարագրություն՝ Հեռուստաշոուում նկարագրվում է ոստիկանության կողմից իրականացվող կոռուպցիոն հանցագործության հետաքննությունը, դրա առանձնահատկություններն ու դժվարությունները:

2 Ազդարարը

Տևողությունը՝ 1 ժամ 50 րոպե

Նկարագրություն՝ Գեղարվեստական ֆիլմում ներկայացվում է, թե ինչպես է ՄԱԿ-ի աշխատակիցը բացահայտում կանանց ընդհատակյա առևտրի մասին, որին մասնակցում և թաքցնում էին նաև ՄԱԿ-ի դիվանագիտական ներկայացուցիչները:

2.4 ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՁԱՓՈՐՈՇԻՉ

Ա մակարդակ՝ Ներկայացնի ժողովրդավարության հիմնարար արժեքները, սկզբունքները և ժողովրդավարական գործելակերպը:
Բ մակարդակ՝ Վերլուծի ժողովրդավարության առավելությունները և դժվարությունները:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Ժողովրդավարության հիմքում իշխանությունը ժողովրդին պատկանելու գաղափարն է: Երբ կոռուպցիան ներխուժում է ժողովրդավարական համակարգ, անխուսափելիորեն խարխլում է ինստիտուտները, շեղում է կառավարման սկզբունքները հանրային շահից դեպի փոքր խմբերի մասնավոր շահերի բավարարումը, նվազեցնում թափանցիկությունը, հանգեցնում հաշվետվողականության վերացմանը, ոչնչացնում հասարակության վստահությունը պետական կառույցների նկատմամբ: Այդ գործելակերպը կարող է մանիպուլացնել ժողովրդավարական ինստիտուտները, օրենքներն ու քաղաքականությունը այնպես, որ արտաքուստ թվա, թե արդյունքները ձեռք են բերվել «նորմալ» կանոնների, ընթացակարգերի և գործընթացների միջոցով:[39] Կոռուպցիայի ծավալումն ու ամրապնդումն ի վերջո կարող է նպաստել ավտորիտարիզմի[40] աճին:[41]

Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև՝ Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով,[42] սակայն թափանցելով դրանց մեջ՝ կոռուպցիան աստիճանաբար իշխանությունը վերցնում է ժողովրդից՝ պահպանելով ժողովրդին դրա պատկանելու պատրանքը:

Ընտրությունների ժամանակ ընտրակաշառքներ վերցնելով կամ իրենց մերձավոր բարեկամների շահերը սպասարկելով՝ որոշ ընտրողներ նախընտրում են իրենց քվեն տալ այն թեկնածուին, որն իրենց շրջապատից է, որից իրենք կամ իրենց մեր-

39 Gumede W., Policy briefs 33: impact of corruption on democracy and development, Democracy works foundation - Providing tools to build resilient democracies., providing tools to build resilient democracies., 2019 https://www.democracyworks.org.za/policy-brief-33-impact-of-corruption-on-democracy-and-development/ (դիտված՝ 25.07.2023 թ.)

40 Ավտորիտարիզմը քաղաքական համակարգ է, որը բնութագրվում է քաղաքական բազմակարծության մերժմամբ, քաղաքական ստատուս քվոյի պահպանման համար ուժեղ կենտրոնական իշխանության կիրառմամբ և օրենքի գերակայության նվազեցմամբ: Ավտորիտար երկրներից են Ադրբեջանը, Բելառուսը, Թուրքմենստանը, և այլն:
Freedom House, Countries and Territories, Democracy score, 2024, https://freedomhouse.org/countries/nations-transit/scores (դիտված՝ 4.4.2024 թ.)

41 TI, Addressing corruption as a driver of democratic decline: positions towards summit for democracy, 2021 https://www.transparency.org/en/publications/summit-for-democracy-2021-addressing-corruption-democratic-decline (դիտված՝ 24.07.2023 թ.)

42 ՀՀ Սահմանադրություն, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, Հոդ. 1118, հոդված 2 https://www.arlis.am/documentview.aspx?docid=143723, (դիտված՝ 25.07.2023 թ.)

ձավորներն ակնկալում են այս կամ այն արտոնությունը կամ որին ընտրելու համար վերցրել են ընտրակաշառք՝ այդկերպ առաջին տեղում դնելով սեփական կամ փոքր խմբի կարճաժամկետ ու նեղ շահը՝ և անտեսելով հասարակության ու պետության շահը: Արդյունքում, ընտրված թեկնածուն կսպասարկի ոչ թե ժողովրդի, այլ իրեն հովանավորող անձանց և մերձավոր բարեկամների շահերը:

Կոռուպցիան շրջանցում է օրենքներն ու կանոնակարգերը, ինչի արդյունքում կոռուպցիոն գործարքներին չմասնակցող քաղաքացիները չեն կարողանում ստանալ օրենքով իրենց հասանելի ծառայությունները (օրինակ՝ ծառայություններ, որոնք պետք է լինեն հանրամատչելի, մատուցվում են կաշառքի միջոցով): Այդ իսկ պատճառով քաղաքացիների դերն ավելի շատ կարևորվում է սոցիալական հաշվետվողականության տեսանկյունից, երբ քաղաքացիները չեն հանդուրժում կոռուպցիան՝ այն վերահսկողության տակ պահելով, քննադատաբար գնահատելով պաշտոնյաների վարքագիծն ու որոշումները, ազդարարելով կոռուպցիոն հանցագործությունների մասին և համապատասխան մարմիններից պահանջելով անհրաժեշտ քայլեր:[43] Հաշվետվողականությունը հիմնված է այն սկզբունքի վրա, որ յուրաքանչյուր անձ կամ խումբ պատասխանատու է իր գործողությունների համար, հատկապես, երբ այդ գործողություններն ազդում են հանրային շահերի վրա:[44]

Բարձրաստիճան պաշտոնյան հրաժարվում էր լրատվամիջոցներին տեղեկություն տրամադրել այն մասին, թե ինչու է ոչ աշխատանքային օրերին իր ծառայողական մեքենան կայանված ակումբի դիմաց: Հետաքննող լրագրողների կատարած ուսումնասիրությամբ պարզ դարձավ, որ պաշտոնյայի ոչ հաշվետու վարքի պատճառը ծառայողական մեքենայի՝ ոչ նպատակային օգտագործելն է, այն պարագայում, երբ մեքենայի վառելիքի և սպասարկման համար վճարումները կատարվում էին պետական բյուջեից՝ քաղաքացիների կողմից վճարված հարկերից:

Ժողովրդավարության կայացման գործում կարևորվում է նաև պաշտոնյաների և պետական գերատեսչությունների աշխատանքի թափանցիկությունը: Թափանցիկության գաղափարով առաջնորդվող կառավարությունը հրապարակային և հասանելի է դարձնում տեղեկություններն այն մասին, թե ինչ է արվում, ինչպես և ինչու են գործողությունները տեղի ունենում, ովքեր են ներգրավված և ինչ չափանիշներով են որոշումներ կայացվում:

Զարգացող և նորաստեղծ ժողովրդավարական երկրներում, երբ վարչակազմն ու քաղաքական ինստիտուտները դեռևս թույլ են, իսկ հանրային ծառայողների աշխատավարձի չափը՝ փոքր, պաշտոնյաները ցանկանում են «ավելացնել» իրենց եկամուտները կոռուպցիոն գործարքներով:

---

43 UNODC Module Series on Anti-Corruption, Knowledge tools for academics and professionals, Module 10 Citizen participation in anti-corruption efforts, Vienna https://www.unodc.org/e4j/en/anti-corruption/module-10/key-issues/the-role-of-citizens-in-fighting-corruption.html (դիտված՝ 25.07.2023 թ.)

44 UNODC Module Series on Anti-Corruption, Knowledge tools for academics and professionals, Module 2 Corruption and good governance, Vienna, https://grace.unodc.org/grace/uploads/documents/academics/Anti-Corruption_Module_2_Corruption_and_Good_Governance.pdf (դիտված՝ 25.07.2023 թ.)

Բռնապետական կառավարման ձև ունեցող երկրներում վարչական ու քաղաքական ինստիտուտները ոչ այլ ինչ են, քան բռնակալի կոռումպացված գործելակերպի «շարունակություն»:[45] Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կայացած ժողովրդավարությունները, ավտորիտար ռեժիմների կամ երիտասարդ ժողովրդավարությունների հետ համեմատած, ունեն կոռուպցիայի ավելի ցածր մակարդակ, քանի որ ստեղծել են կոռուպցիայի տարածման համար խոչընդոտներ: Նույնիսկ եթե ժողովրդավարությունը դիտարկվում է որպես կոռուպցիայի դեմ պայքարի նախընտրելի համակարգ, չպետք է մոռանալ, որ դա ոչ թե ժողովրդավարության հասկացությունն է, այլ կոնկրետ քաղաքական ինստիտուտները, դերակատարները և գործընթացները, որոնք հակակոռուպցիոն ազդեցություն ունեն՝ ծառայելով որպես զսպող և հավասարակշռող միջոցներ[46][47]: Կոռուպցիայի ընկալման համաթվի (միավորային սանդղակը կազմված է 0-ից (բացարձակապես կոռումպացված) 100 (բացարձակապես մաքուր) ցուցանիշներով) և համաշխարհային ժողովրդավարության տվյալների հետ խաչաձև վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ կա որոշակի կապ ժողովրդավարության և կոռուպցիայի ցածր մակարդակի միջև: 2023 թվականի ցուցանիշներով լիովին ժողովրդավար երկրների՝ Կոռուպցիայի ընկալման համաթվի միջին միավորը 73 է, թերի ժողովրդավարական երկրներինը՝ 48, իսկ ոչ ժողովրդավար վարչակարգերն ամենավատ արդյունքներն ունեն՝ 32 միավոր:[48]

Ավտորիտար համակարգերը բնութագրվում են փոքր էլիտայի ձեռքում քիչ սահմանափակումներով կամ առանց սահմանափակումների իշխանության կենտրոնացմամբ, որով պայմանավորված՝ այդ ռեժիմներում գերակշռում է կոռուպցիայի բարձր մակարդակը: Ի հակադրություն դրա՝ ժողովրդավարական համակարգերը բնութագրվում են ցրված իշխանությամբ, որտեղ գործադիր իշխանությունը հավասարակշռվում է ընտրված խորհրդարանի և անկախ դատական համակարգի կողմից, և որտեղ մրցակցային ընտրությունները թույլ են տալիս քաղաքացիներին այլընտրանք ունենալ՝[49] հնարավոր դարձնելով ընտրությունների միջոցով իշխանության փոփոխությունը: Խորհրդարանական կառավարման ձևում խորհրդարանը, որպես ժողովրդի կողմից առաջնային քվե ստացած մարմին, կազմավորում է կառավարություն և վերահսկողություն իրականացնում դրա նկատմամբ: Խորհրդարանական վերահսկողության նպատակը կառավարության գործունեության թափանցիկության և պատասխանատվության բարձրացումն է: Խորհրդարանական վերահսկողության գործառույթի իրականացման արդյունքում պարզ է դառնում, թե որքանով է կառավարության վարած քաղաքականությունը համա-

45 ԹԻՀԿ, Ինչ է կոռուպցիան, Ռեսուրսներ, https://transparency.am/hy/what-is-corruption (դիտված՝ 25.07.2023 թ.)

46 UNODC Module Series on Anti-Corruption, Knowledge tools for academics and professionals, Module 3, Corruption and comparative politics, Vienna https://www.unodc.org/e4j/en/anti-corruption/module-3/key-issues/corruption-and-democracy.html (դիտված՝ 25.07.2023 թ.)

47 Saha S., Campbell N., Studies of the Effect of Democracy on Corruption, Department of Applied and International Economics Massey University, Palmerston North New Zealand, Prepared for the 36th Australian Conference of Economists 'Economics of Corruption Session' Tasmania, Australia, 2007, https://esacentral.org.au/images/Saha.pdf (դիտված՝ 25.07.2023 թ.)

48 TIAC, CPI 2023: Highlights and insights, 2024 https://www.transparency.org/en/news/cpi-2023-highlights-insights-corruption-injustice (դիտված՝ 02.02.2024թ.)

49 Saha S., Democracy and Corruption: An Empirical Analysis in a Cross-Country Framework*, Department of Economics and Finance Massey University Palmerston North, New Zealand, https://www.nzae.org.nz/wp-content/uploads/2011/08/nr1215384016.pdf (դիտված՝ 25.07.2023 թ.)

պատասխանում հանրության սպասելիքներին, և արդյոք կառավարության իրականացրած ծրագրերը հասնում են հասցեատերերին:[50]

Ժողովրդավարական կառավարմանը հատուկ են նաև ազատ, անկախ և բազմակարծիք լրատվամիջոցների առկայությունը:[51] ԶԼՄ-ները և, մասնավորապես, լրագրողական հետաքննությունները վճռորոշ դեր են խաղում կոռուպցիայի նկատմամբ հանրային ուշադրությունը գրավելու և անպատժելիության դեմ պայքարի գործում:[52] Օգտագործելով լրատվամիջոցների բացահայտումները՝ քաղաքացիական հասարակությունը և ակտիվիստները կարող են իրավապահ մարմիններին մղել գործողությունների, իսկ փաստաբանները կարող են պնդել, որ անհրաժեշտ է բարեփոխել քաղաքականությունը: Միևնույն ժամանակ, քաղաքական գործիչները կարող են մատնանշել լրատվամիջոցների հետաքննությունները և տվյալների հրապարակումները՝ օրենսդրության ընդունման և բարեփոխումների խթանման հարցում աջակցություն ստանալու համար: Պետության գործադիր, օրենսդիր, դատական ճյուղերի և ԶԼՄ-ների համագործակցությունը հնարավորություն կտա արդյունավետ ջանքեր գործադրել ժողովրդավարության ամրապնդման համար՝ պայքարելով կոռուպցիայի և ավտորիտարիզմի դեմ:[53]

Ժողովրդավարական երկրներում կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի համատեքստում հատկապես կարևորվում են որոշումների ընդունման գործընթացում հանրային մասնակցությունը, կառավարչական մարմինների աշխատանքի թափանցիկությունը և հաշվետվողականությունը: Առանցքային նշանակություն ունի քաղաքացիների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում, որն իրականացվում է նախ և առաջ ընտրություններին քաղաքացիների ակտիվ մասնակցության, հետագայում նաև օրենքների մշակման, ռեսուրսների կառավարման, ծառայությունների որակի բարելավման առաջարկությունների ներկայացման և այլ գործընթացներում ներգրավման միջոցով:[54]

---

50 Սարգսյան Ն., Ավետիսյան Հ., Օդաբաշյան Հ. Խորհրդարանական վերահսկողություն. գործիքակազմն ու մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում .- Եր.: «Լույս» հիմնադրամ, 2020. https://www.luys.am/img/artpic/small/856a815aeb1803c6615aխորհրդարանականվերահսկողություն_Final.pdf (դիտված՝ 25.07.2023 թ.)

51 Michael A. Weber, Global Trends in Democracy and Authoritarianism: Challenges to Press Freedom, 2024, https://crsreports.congress.gov/product/pdf/IF/IF12137 (դիտված՝ 24.02.2024 թ.)

52 UNODC, University Module Series: Anti-Corruption, Citizen participation in Anti-Corruption Efforts, Module 10, https://www.unodc.org/e4j/en/anti-corruption/module-10/key-issues/the-role-of-the-media-in-fighting-corruption.html, (դիտված՝ 24.02.2024 թ.)

53 Hrvolova M., Katz J., Alexander J., The Anti-Corruption Role of Free Media and Investigative Journalism, 2021, https://www.gmfus.org/news/anti-corruption-role-free-media-and-investigative-journalism, (դիտված՝ 24.02.2024 թ.)

54 UNODC Module Series on Anti-Corruption, Knowledge tools for academics and professionals, Module 10 citizen participation in anti-corruption efforts, Vienna https://www.unodc.org/e4j/en/anti-corruption/module-10/key-issues/the-role-of-citizens-in-fighting-corruption.html (դիտված՝ 25.07.2023 թ.)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Կերտի՛ր քո առաջնորդին

Տևողությունը՝ 10-15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կնկարագրեն ժողովրդավարական երկրի առաջնորդներին հատուկ որակները:

Նկարագրություն

Աշակերտներից կազմել խմբեր և դրանց մի մասին հանձնարարել 5 րոպեի ընթացքում մշակել իրենց պատկերացմամբ ամենաօրինակելի ժողովրդավարական երկրի առաջնորդի, իսկ մյուս խմբերին՝ ամենաավտորիտար երկրի առաջնորդի կերպարը՝ գրի առնելով նրա անձնային և մասնագիտական որակները: Խմբերով աշխատանքից հետո՝ 5-7 րոպեի ընթացքում, բոլոր խմբերը դասարանին ներկայացնում են իրենց առաջարկած որակները, սովորողները քննարկում և գրատախտակին գրի են առնում այն որակները, որոնք բոլորի կարծիքով հատուկ են տվյալ տեսակի առաջնորդին: Այնուհետև սովորողներին հատկացվում է ևս 1 րոպե՝ մտածելու և նոր որակներ առաջարկելու համար, որից հետո նրանք ստանում են ժողովրդավարական և ավտորիտար երկրի առաջնորդների «կատարյալ» կերպարներ: Առաջադրանքի ամփոփման փուլում սովորողների ուշադրությունը հրավիրեք պաշտոնյաների՝ կոռուպցիան մերժող, թափանցիկ և հաշվետվողական վարքագիծ ունենալու անհրաժեշտության վրա:

2 Դպրոցից մինչև պետություն

Տևողությունը՝ 10-15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կկարողանան առանձնացնել ժողովրդավարության առավելություններն ու մարտահրավերները կոռուպցիայի դեմ պայքարի գործում:

Նկարագրություն

Անհրաժեշտ է ընթերցել ստորև ներկայացվող իրավիճակը և գրատախտակին գծել T-աձև աղյուսակ, որի աջ մասում գրվում են «առավելություններ», իսկ ձախ մասում՝ «մարտահրավերներ» բառերը: Իրավիճակը ընթերցելուց հետո անհրաժեշտ է այն քննարկել և սովորողներին հարցնել, թե որոնք են կոռուպցիայի դեմ պայքարի գործում ժողովրդավարության առավելություններն ու մարտահրավերները՝ մտածելու համար հատկացնելով 3 րոպե ժամանակ: Այնուհետև լսել սովորողների տարբերակները, քննարկել նրանց առաջարկած տարբերակները՝ զուգահեռներ տանելով իրավիճակում տեղի ունեցող գործողությունների հետ, և գրի առնել ընդունելի առաջարկները աղյուսակում: Անհրաժեշտ է նաև քննարկում ծավալել՝ պրոյեկտելով վեր-

հանված առավելություններն ու մարտահրավերները պետական մակարդակում՝ ժողովրդավար կառավարման տեսանկյունից: Սովորողների տարբերակները լսելուց հետո, ըստ անհրաժեշտության, կատարել լրացումներ և ամփոփել առաջադրանքը:

Իրավիճակ

Դպրոցներից մեկի մի խումբ աշակերտներ որոշեցին դառնալ դպրոցի աշակերտական խորհրդի անդամներ: Մինչ աշակերտական խորհրդի անդամների ընտրությունները, բոլոր թեկնածուները ակտիվ քարոզչություն էին իրականացնում՝ տալով իրենց և դպրոցի աշխատանքի թափանցիկության և արդարության մասին խոստումներ: Երբ ընտրություններն ավարտվեցին, Դավիթն ընտրվեց խորհրդի նախագահ՝ խոստանալով պայքարել կոռուպցիոն դրսևորումների դեմ:

Դավիթը նախաձեռնեց մի շարք բարեփոխումներ՝ հնարավորություն տալով աշակերտներին ազատորեն բարձրաձայնելու իրենց մտահոգություններն ու առաջարկությունները: Նրանք նաև հաջողությամբ համագործակցեցին համայնքապետարանի և դպրոցի հետ՝ աշակերտական խորհրդի և այդ կառույցների միջև թափանցիկություն և հաշվետվողականություն ապահովելու նպատակով:

Սակայն ամեն ինչ այնքան հարթ չէր ընթանում, ինչպես պատկերացնում էին ընտրությանը մասնակցած աշակերտները: Որոշ աշակերտներ օգտագործում էին խորհրդի ներսում իրենց դիրքն անձնական շահի համար: Խորհրդի մի քանի անդամներ յուրացրին աշակերտական խորհրդի ծրագրերի համար հատկացված բյուջեի մի մասը, և քանի որ լուրեր տարածվեցին այդ մասին, «Աշակերտի ուժը» համադպրոցական թերթը հետաքննություն անցկացրեց և բացահայտեց խորհրդի տվյալ անդամների բոլոր ապօրինությունները:

Ուսումնական տարվա ավարտին աշակերտների ջանքերով աշակերտական խորհրդի կոռումպացված անդամները հեռացվեցին խորհրդի կազմից, իսկ դպրոցի տնօրենությունը գիտակցեց ավելի խիստ կանոնակարգերի և վերահսկողության անհրաժեշտությունը: Այս փորձն աշակերտներին ստիպեց հասկանալ, որ ժողովրդավարությունը կարող է հզոր գործիք լինել կոռուպցիայի դեմ պայքարի համար, բայց միայն այն դեպքում, եթե դրան աջակցեն զգոն, բանիմաց և ներգրավված քաղաքացիները:

Աղյուսակ

Առավելություններ	Մարտահրավերներ
Արդար ընտրություններ	*Դանդաղ որոշումների կայացում*
Թափանցիկ և հաշվետու կառավարում....	*Երկար ընթացակարգեր...*

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Ի՞նչ է ժողովրդավարությունը. բարդության հինգ աստիճան

Տևողությունը՝ 15 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում ներկայացվում է, թե ինչ է ժողովրդավարությունը, որքանով է այն կարևոր պետության զարգացման, անվտանգության համար և թե ինչ գործիքներ է այն տալիս՝ զսպելու իշխանական մեծամասնության ավտորիտար նկրտումները:

2.5 ԿՈՌՈՒՊՑԻԱ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ

ՁԱՓՈՐՈՇԻՉ

Ա մակարդակ՝ Իմանա «կոռուպցիա» հասկացությունը: Ներկայացնի կոռուպցիայի պատճառները և ձևերը: Հիմնավորի իշխանության մարմինների գործունեության թափանցիկության ապահովման և դրա նկատմամբ վերահսկողության անհրաժեշտությունը:

Բ մակարդակ՝ Հասարակական կյանքի տարբեր ոլորտներում կոռուպցիայի դեպքեր նկարագրի և հիմնավորի դրանց բացասական ազդեցությունը տվյալ ոլորտի զարգացման վրա:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Պետական և համայնքային պաշտոն զբաղեցնող բոլոր անձինք և հանրային ծառայողները պարտավոր են անշեղորեն պահպանել պետության սահմանադրության, օրենքների և իրավական այլ ակտերի պահանջները, հստակ ու ճշգրիտ կատարել իրենց ծառայողական պարտականությունները: Սակայն լինում են դեպքեր, երբ նրանք ոչ միայն չեն կատարում իրենց պարտականությունները, այլև վնասում են բազմաթիվ անձանց, խախտում նրանց իրավունքները: Պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հիմնական պատճառներից մեկը կոռուպցիան է:

«Կոռուպցիա» տերմինը ծագել է լատիներեն corruptus և corrumpere բառերից, որոնք նշանակում են փչացում, այլասերում, վարակում, ապականում, աղճատում, աղավաղում, կաշառում:

Կոռուպցիան այնքան հին է, որքան մարդկությունը: Կա տեսակետ, որ ամեն ինչ սկսվել է առաջնորդներին, թագավորներին, իշխաններին ընծաներ մատուցելու սովորությունից: Մարդիկ դա անում էին, որպեսզի թագավորն ավելի բարեհաճ գտնվեր իրենց ու իրենց խնդրանքի հանդեպ: Սակայն հետագայում, երբ կառավարման համակարգը փոքր-ինչ բարդացավ, թագավորներին սկսեցին օգնել մեծ թվով խորհրդականներ, որոնք, օգտվելով նվերներ տալու սովորությունից, սկսեցին արդեն պահանջել ընծաներ, որպեսզի բավարարեն մարդկանց խնդրանքները կամ բարեխոսեն նրանց համար թագավորի մոտ: Առավել լուրջ խնդիր առաջացավ, երբ նույն սկզբունքով սկսեցին աշխատել դատավորները, որոնք պետք է երաշխավորեին արդարադատությունը: Այսպիսով՝ անհրաժեշտություն առաջացավ կաշառք պահանջելու, իշխանությունը չարաշահելու համար սահմանել պատիժներ: Այդպիսի պատիժներ կային դեռևս եգիպտական փարավոնների ու Բաբելոնի թագավոր Համմուրաբիի օրենքներում: Կոռուպցիայի դեմ ուղղված խրատ-

ներ կային նույնիսկ Աստվածաշնչում ու Ղուրանում:[55] Օրինակ՝ Աստվածաշնչում ասվում է. «Կաշառք չառնես, որովհետև կաշառքը կուրացնում է աչքաբացներին և շուռ է տալիս արդարների բանը»:[56] Ղուրանում ասվում է. «Մի՛ վատնեք ձեր հարստությունը: Մի՛ օգտագործեք այն որպես կաշառք կառավարիչներին և դատավորներին այն մտադրությամբ, որ նրանք կօգնեն ձեզ ապօրինի և գիտակցաբար յուրացնել ուրիշի ունեցվածքը»:[57]

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» (ԹԻ) միջազգային հակակոռուպցիոն կազմակերպության սահմանման համաձայն՝ կոռուպցիան վստահված իշխանության չարաշահումն է անձնական շահ ստանալու նպատակով: Կոռուպցիան փաստացի հանրության լայն զանգվածներից կատարվող գողություն է, որի արդյունքում ռիսկի տակ են դրվում պետության սոցիալական, տնտեսական, և քաղաքական բարեփոխումները և սասանվում են պետականության հիմքերը: Տեղին կլիներ հիշել նաև կոռուպցիայի բանաձևը, ըստ որի՝

այսինքն՝ «կոռուպցիան» հավասար է «մենաշնորհին» գումարած «հայեցողություն» հանած «հաշվետվականություն»: Եթե տվյալ համակարգը տալիս է պաշտոնական մենաշնորհ ռեսուրսի կամ ծառայության նկատմամբ, հայեցողություն՝ որոշելու, թե ինչպես այն կառավարել, և չի նախատեսում հաշվետվողականության գործող մեխանիզմներ, ապա համակարգը հակված կլինի կոռուպցիայի:[58]

Գոյություն ունեն կոռուպցիայի տարբեր, երբեմն՝ համընկնող դասակարգումներ:

Տարբերակվում է մեծ (խոշոր) և մանր կոռուպցիան: Մանր կոռուպցիան իր չափերով փոքր է, ունի գործառնական նշանակություն և առավելապես տարածված է հանրային ծառայություններ մատուցող այնպիսի հաստատություններում, ինչպիսիք են առողջապահական, (հիվանդանոցներ), կրթական (բուհեր, դպրոցներ, մանկապարտեզներ) հաստատությունները, հարկային, մաքսային ծառայությունները, անշարժ գույքի գրանցման, ոստիկանության անձնագրային ու քաղաքացիության հարցերով բաժինների կողմից մատուցվող ծառայությունները կամ այլ պետական ու ՏԻՄ մարմինները: Քաղաքացու հետ ամենօրյա շփումների պայմաններում հանրային պաշտոնատար անձանց ու ծառայողների կողմից մանր կոռուպցիայի դրսևորումները հաճախ անվանում են նաև «ներքևների կոռուպցիա», քանի որ կոռուպցիոն նման գործարքները իրականացվում են հանրային հաստատությունների ու կազմակերպությունների միջին և ստորին օղակի պաշտոնատար անձանց կողմից:

Մեծ (խոշոր) կոռուպցիան առավելապես բնորոշ է բարձրաստիճան պաշտոններ զբաղեցնող անձանց, որոնց վերապահված իշխանական լիազորությունների իրականաց-

55 Գրիգորյան Հ., Կոռուպցիա մաս 1, https://www.boonus.am/lesson/21 (դիտված՝ 25.07.2023 թ.)

56 Աստվածաշունչ, Ելից 23:8

57 Ղուրան, Սուրա Ալ-Բակարա, 02:188

58 Klitgaard Robert , A Holistic Approach to the Fight against Corruption, 2008, page 3, https://scholar.cgu.edu/robert-klitgaard/wp-content/uploads/sites/22/2017/02/Holistic_Approach_1-08.pdf (դիտված՝ 15.12.2023 թ.)

ման ժամանակ օգտագործելով պաշտոնական դիրքը՝ առավելություններ են ստանում անձամբ կամ ապահովում են արտոնություններ այս կամ այն տնտեսվարողների համար, որոնց հետ ունեն փոխկապակցվածություն: Մեծ կոռուպցիան, բնութագրվում է կոռուպցիոն գործարքների մեծ չափերով, ունի տնտեսական կամ ֆինանսական խոշոր գործարքների բնույթ և բնորոշ է պետական և համայնքային գնումների, պետությունմասնավոր հատված համագործակցությամբ համատեղ ծրագրերի իրականացման, պետական առանձին գործառույթները մասնավորին վերապահելու և մի շարք այլ գործընթացներին: Մեծ կոռուպցիայի դեպքում մասնավոր շահի հետապնդումը կատարվում է ի հաշիվ հանրային ծախսերի, որը լայնամասշտաբ վնաս է հասցնում հասարակությանն ու անհատներին: Մեծ (խոշոր) կոռուպցիոն դրսևորումները հաճախ անվանում են նաև «վերևների կոռուպցիա»:

Առանձնացվում են նաև կոռուպցիայի քաղաքական և վարչական տեսակները: Վարչական կոռուպցիան պետական պաշտոնյաների կողմից պետական կամ ոչ պետական դերակատարներին առավելությունների տրամադրումն է՝ դիտավորությամբ կեղծելով գործող օրենքների, կանոնների և կանոնակարգերի սահմանված կիրարկումը:

Օրենքը նախատեսում է, որ բնակության վայրի մասին տեղեկանքի տրամադրումն անվճար է, սակայն համայնքապետարանի աշխատակիցը քաղաքացուց գումար է պահանջում այն տրամադրելու համար: Բացի այդ հնարավոր է տեղեկանքի՝ սեղմ ժամկետում տրամադրման գործընթացում համայնքապետարանի աշխատակիցն իր հայեցողությունն օգտագործի և պահանջի ոչ օրինական վճարումներ՝ այն ավելի սեղմ ժամանակում տրամադրելու համար:

Քաղաքական կոռուպցիան քաղաքական ու քաղաքականության վերաբերյալ որոշումներ կայացնողների կողմից ռեսուրսների և ֆինանսավորման բաշխման գործընթացում քաղաքականությունների, ինստիտուտների և կանոնակարգերի մանիպուլյացիան է՝ իրենց իշխանությունը, հարստությունը և կարգավիճակը պահպանելու համար չարաշահելով իրենց դիրքը:[59]

Պետական բյուջեից միջոցներ են տրամադրվում ինչ-որ մարզաձևի զարգացման համար, սակայն իրականում այդ միջոցների հաշվին զարգանում է միայն այդ մարզաձևի ֆեդերացիայի՝ իշխող կուսակցության անդամ հանդիսացող նախագահի անձնական բիզնեսը:

Կա անմիջական և միջնորդավորված կոռուպցիա: Անմիջականի դեպքում գործող անձինք են իշխանությունը չարաշահողը և դրանից օգուտներ քաղողը: Միջնորդավորվածի դեպքում կա նաև միջնորդ, որն աջակցում է կոռուպցիոն գործարքի կայացմանը, օրինակ՝ կաշառքը փոխանցելու, ապօրինի հանձնարարությունը կատարելու եղանակով:

59 Hülya Ünlü, Merve Karacaer Ulusoy, What is Administrative Corruption, Handbook of Research on Theory and Practice of Financial Crimes, 2021, https://www.igi-global.com/dictionary/innovation-and-corruption-in-turkey/97827 (դիտված՝ 25.07.2023 թ.)

Կարելի է առանձնացնել կոռուպցիայի հետևյալ հիմնական դրսևորումները.

ԹԻՀԿ, 2023 թ, աղբյուր՝ transparency.am

1. Կաշառակերություն (կաշառք տալը, ստանալը, կաշառքի միջնորդությունը): Պաշտոնատար անձը որևէ անձից անձամբ կամ միջնորդի միջոցով ստանում, պահանջում կամ ընդունում է դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթուղթ կամ որևէ այլ առավելություն ստանալու առաջարկը, իսկ դրա դիմաց իր լիազորությունների շրջանակում կատարում կամ չի կատարում որևէ գործողություն կամ էլ օգտագործում է իր պաշտոնեական դիրքը՝ այդպիսի գործողություն կատարելը կամ չկատարելն ապահովելու համար:

Պարեկային ծառայողը կանգնեցնում է օրինախախտ քաղաքացու մեքենան և տեղեկացնում, որ կատարած խախտման համար պետք է վճարի 30.000 դրամ տուգանք, սակայն եթե ցանկանում է, կարող է իրեն առձեռն տրամադրել 5.000 դրամ և առանց համապատասխան ակտի ու պետական վճարման գնալ:

Կոռուպցիա է համարվում ոչ միայն կաշառք պահանջելն ու վերցնելը, այլև կաշառք տալը: Եթե մեր աշխատանքի առաջխաղացման, աշխատանքի ընդունվելու կամ շրջանավարտին բուհ ընդունելու համար գումար ենք առաջարկում կամ փոխանցում կամ խոստանում պաշտոնատար անձանց, մենք ոչ պակաս հանցավոր ենք, քան նրանք, ովքեր վերցնում են այդ գումարը:[60]

2. Շորթում: Շորթողը հարկադրանքի և/կամ սպառնալիքների միջոցով ներկայացնում է իրեն կամ իր նշած անձին ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանձնելու կամ գույքային բնույթի այլ գործողություններ կատարելու պահանջ:

Բարձրաստիճան ոստիկանը պահանջում է քաղաքացուց գաղտնիքները չբացահայտելու դիմաց իրեն նվիրատվության հիմքով փոխանցել անշարժ գույքը:

3. Հովանավորչություն: Ոչ պատշաճ կամ կոռումպացված նախապատվությունը կամ առավելությունը մեկ անձի կամ անձանց նկատմամբ՝ առանց հաշվի առնելու արժանիքները:

Դպրոցի աշակերտական խորհրդի նախագահ է ընտրվում առաջնորդության որակներ չունեցող և սովորողների վստահությունը չվայելող սովորողը, քանի որ նրա հայրը դպրոցի կառավարման խորհրդի անդամ է:

4. Նեպոտիզմ: Հովանավորչության ձև է՝ հիմնված ծանոթությունների և ընտանեկան կապերի վրա, երբ պաշտոնատար անձը օգտագործում է իր լիազորություններն ու իշխանությունը՝ իր ընտանիքի անդամին, բարեկամին կամ ընկերոջն աշխատանքով

60 Գրիգորյան Հ., Կոռուպցիա, մաս 1, https://www.boonus.am/lesson/21 (դիտված՝ 25.07.2023 թ.)

ապահովելու կամ ծառայություն մատուցելու համար՝ անկախ նրա ունեցած որակներից ու արժանիքներից:

Նորավարտ բժիշկը նշանակվում է համայնքային ամբուլատոր ծառայության ղեկավար, քանի որ նրա հորեղբայրը պաշտոնատար անձ է առողջապահության նախարարությունում:

5. Յուրացում: Անձնական հարստացման կամ այլ նպատակներով պաշտոն զբաղեցնող անձը ոչ օրինական հիմքերով յուրացնում, օգտագործում կամ փոխանցում է իրեն վստահված միջոցները:

Տնօրենը յուրացնում է գործարանի բյուջեից 35.000 ԱՄՆ դոլար՝ իր առանձնատունը վերանորոգելու համար:

6. Դրամական միջոցների և այլ գույքի ոչ նպատակային օգտագործում: Պաշտոնատար անձն իր ժամանակավոր տիրապետման և օգտագործման տակ գտնվող գույքը կամ միջոցները դիտավորյալ և/կամ անօրինական գործողություններով օգտագործում է ոչ նպատակային:

Մշակույթի տան տնօրենը ոչ աշխատանքային ժամերին մշակույթի տան դահլիճը տրամադրում է իր մերձավորներին՝ հանդիսություններ նշելու համար:

7. Կլիենտիզմ: Անհավասար կողմերի միջև ռեսուրսների և ծառայությունների փոխանակման համակարգ՝ հիմնված ավելի հարուստ և/կամ ավելի ազդեցիկ «շեֆի» և ավելի աղքատ ու ավելի թույլ ենթակայի («հաճախորդի») միջև շահագործողական բնույթի հարաբերությունների վրա:

Համայնքապետը բնակչի խնդրանքով գիշերային լուսավորում է անցկացնում փողոցում, իսկ դրա դիմաց այդ բնակիչը խոստանում է գալիք ընտրություններում քվեարկել այդ համայնքապետի օգտին:

8. Պետության զավթում: Իրավիճակ, երբ երկրի ներսում կամ դրսում գործող ազդեցիկ անհատները, հաստատությունները, ընկերությունները կամ խմբերը, որոնք տիրապետում են ռեսուրսների, ելնելով իրենց անձնական շահերից, օգտագործում են կոռուպցիան՝ ազդելու պետության քաղաքականության, իրավական միջավայրի և տնտեսության վրա:

Հանցավոր խմբավորման անդամները, օգտագործելով իրենց ուժն ու ազդեցությունը, վերահսկում են երկրի կառավարության աշխատանքը՝ ուղղորդելով այն դեպի իրենց անձնական շահերի բավարարումը:

9. Փողերի լվացում: Ապօրինի ճանապարհով ձեռք բերված եկամուտների օրինականացումն է, որը կատարվում է օրինական տնտեսական գործունեության միջոցով՝ թաքցնելով այդ եկամուտների իրական ծագումը, պատկանելությունը և նպատակը:

Գործարարն անօրինական ճանապարհով ձեռք բերված 100.000 ԱՄՆ դոլարն օրինականացրեց իրեն պատկանող 10.000 ԱՄՆ դոլար արժողությամբ գույքը 110.000 ԱՄՆ դոլարով վաճառելու միջոցով:

10. Խարդախություն: Անօրինական կամ անարդարացի առավելություն (ֆինանսական, քաղաքական կամ այլ) ձեռք բերելու նպատակով որևէ մեկին դիտավորյալ խաբելը:

Նախարարությունը հայտարարում է նոր համակարգիչների գնման մրցույթ: Արդյունքում գնվում են օգտագործված, ոչ արդիական համակարգիչներ, որոնց համար նախարարությունը վճարում է նոր համակարգիչների ձեռքբերման համար անհրաժեշտ գումարին համարժեք գումար:

11. Պաշտոնական լիազորությունների չարաշահում: Պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները շահադիտական նպատակներով չկատարելը, որը հասցրել է էական վնաս:

Սպան, սեփական հողատարածքում շինարարություն կատարելու նպատակով, իր ենթակայությամբ գտնվող 4 պայմանագրային զինծառայողներին 15 օր շարունակ անօրինական կերպով ազատել է ծառայողական պարտականությունների կատարումից և նրանց ներգրավել շինարարական աշխատանքներում: Զինծառայողները փաստացի չեն ներկայացել ծառայության և չեն կատարել իրենց ծառայողական պարտականությունները, սակայն չեն ընդգրկվել անհարգելի պատճառներով ծառայության չներկայացած անձանց ցուցակներում և վարձատրվել են պետության կողմից: Արդյունքում՝ էական վնաս է պատճառվել պետության շահերին:[61]

Վերոնշյալ կոռուպցիոն դրսևորումների համար անձը կարող է ենթարկվել քրեական, քաղաքացիաիրավական և վարչական պատասխանատվության:

Կոռուպցիայի չափման մեթոդները

Իսկ ինչպե՞ս չափել կոռուպցիան, ինչպե՞ս համեմատել տարբեր երկրների կոռումպացվածության մակարդակը: Դրանով զբաղվում են ինչպես տարբեր երկրների մասնագիտացված կառույցներ և ակադեմիական հաստատություններ, այնպես էլ միջազգային տարբեր հեղինակավոր կազմակերպություններ:[62] Առավել հայտնի է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» միջազգային կազմակերպության կողմից 1995 թվականից ի վեր հրապարակվող «Կոռուպցիայի ընկալման համաթիվ» ամենամյա զեկույցների շարքը: Կոռուպցիայի ընկալման համաթիվը ստացվում է մի շարք հեղինակավոր կազմակերպությունների կողմից անցկացված հարցումների և գնահատումների՝ կոռուպցիային առնչվող

61 DataLex, Դատական տեղեկատվական համակարգ, Գործի համար ԼԴ/0009/01/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=30962247438263469 (դիտված՝ 14.09.2023 թ.)

62 Լույս հիմնադրամ, Միջազգային կառույցների կողմից հրապարակված ցուցանիշների ուսումնասիրություն, ՀՀ Կոռուպցիայի Ընկալման Ինդեքս – 2022, Հաշվետվություն «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» միջազգային կազմակերպության կողմից հրապարակված զեկույցի (2022թ.) հիման վրա, 2023, www.luys.am/img/artpic/small/4d60cf667a877ba68a1004-Կոռուպցիայիընկալմանինդեքս-2022.pdf (դիտված՝ 25.07.2023 թ.)

տվյալների համադրությամբ: 2023 թվականի համաթիվը գնահատել է աշխարհի 180 երկրները և տարածքները՝ ելնելով հանրային ոլորտում կոռուպցիայի ընկալումից և օգտագործելով տվյալներ 13 արտաքին աղբյուրներից, որոնց թվում են Համաշխարհային բանկը, Համաշխարհային տնտեսական ֆորումը, ռիսկեր գնահատող և խորհրդատվական մասնավոր ընկերություններ, հետազոտական կենտրոններ և այլն: Գնահատականներն արտացոլում են փորձագետների և գործարարների ընկալումները:

Երկրների կոռուպցիայի ընկալման համաթվին կարող եք ծանոթանալ՝ այցելելով Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի պաշտոնական կայք՝ transparency.am:

ԿԸՀ 2023 թ. դասակարգումն ընդգրկում է 180 պետություն և տարածք՝ ըստ հանրային ոլորտում 0-ից (բացարձակապես կոռումպացված) 100 (բացարձակապես մաքուր) սանդղակով չափված կոռուպցիայի մակարդակների դրանց ընկալման: Որքան բարձր է ինդեքսի ընդունած արժեքը, այնքան բարենպաստ է իրավիճակը կոռուպցիայի ընկալման շրջանակում:



Կոռուպցիայի ընկալման համաթվի 2012-23 թվականների Հայաստանի ցուցանիշները

Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի ԿԸՀ միջին արժեքը 2023 թ.-ին կազմել է 35 միավոր՝ այն պարագայում, որ Եվրոպայի ԿԸՀ միջին արժեքը կազմել է 64 միավոր: **Վրաստանը** (53 միավոր), **Հայաստանը** (47 միավոր) և **Մոնտենեգրո** (46 միավոր) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիա տարածաշրջանի առաջատարներն են և տարածաշրջանի միակ երկրները, որոնց համաթվերի արժեքները բարձր են համաշխարհային միջինից, որը հավասար է 43-ի:

Բնակիչների շրջանում կոռուպցիայի վերաբերյալ ընկալումների և վարքագծի դրսևորումների մասին տեղեկություններ ստանալու նպատակով կարևորվում է նաև կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունը, որը կարող է իրականացվել գլոբալ մակարդակով, օրինակ՝ ԹԻ Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրը,[63] և ազգային մակարդակով:

63 ԹԻՀԿ, 2016 թ Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր, https://transparency.am/hy/gcb, (դիտված՝ 18.03.2024 թ.)



Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ վերջին հարցումն իրականացվել է 2021 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, որում ներառվել է շուրջ 1.520 հարցվող: Ուսումնասիրության ուշադրության կենտրոնում էին կոռուպցիայի հասարակական ընկալումը ՀՀ-ում, կոռուպցիոն իրավիճակներում անհատական վարքագիծը և փորձառությունը, հակակոռուպցիոն գործունեության և դրա մեխանիզմների վերաբերյալ ընդհանուր տեղեկացվածությունը, հակակոռուպցիոն անհատական վարքագիծն ու գործողությունները:[64] Հարցման արդյունքներով՝ ՀՀ բնակչության մեծ մասը կարծում է, որ Հայաստանում կոռուպցիան հնարավոր չէ նվազեցնել կամ հնարավոր է նվազեցնել միայն մասամբ: Առավել տարածված կոռուպցիոն դրսևորումներ են համարվել հովանավորչությունը, բիզնեսի և պետական պաշտոնի համատեղումը և կաշառակերությունը: Հանրության կողմից ոչ թափանցիկ են ընկալվում առաջին հերթին կուսակցությունների կամ դաշինքների և ԶԼՄ-երի ֆինանսավորման աղբյուրները: Տարածված է այն ընկալումը, որ առկա է օլիգարխների շահերի փոխկախվածություն կուսակցությունների և բարձրաստիճան պաշտոնյաների շահերի հետ: Քաղաքացիների մեծամասնությունը՝ որոշ բացառություններով, ճիշտ տարբերակում է կոռուպցիոն դրսևորումները ոչ կոռուպցիոն

64 Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ, Հայաստանի բարեվարքության ծրագիր. կոռուպցիայի հանրային ընկալումը, էջ 5, 2022 թ. https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Arm_v2.pdf (դիտված՝ 13.12.2023 թ.)

դրսևորումներից: Այդուհանդերձ, որոշ կոռուպցիոն դրսևորումներ չեն ընկալվում որպես այդպիսիք: Օրինակ, պետական պաշտոն զբաղեցնելուն զուգահեռ գործարարությամբ զբաղվելը, ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների օրը շահադիտական նպատակով հանձնաժողովի անդամներին սննդով ապահովելը, պետական պաշտոնատար անձի կողմից ծառայողական ավտոմեքենայի անձնական նպատակներով օգտագործումը հարցվողների մի մեծ մասը չեն համարում կոռուպցիոն դրսևորում:

Կոռուպցիայի տարածմանը նպաստող առավել հաճախ նշվող գործոններ են հանրության կողմից օրենքներին չհետևելը, օրենքների անկատարությունը և տնտեսական ծանր վիճակը կամ աղքատությունը, իսկ կոռուպցիոն գործելակերպի հիմնական շարժառիթները՝ խնդիրն օրինական տարբերակով լուծելու անհնարինությունը, օրենքով սահմանված ավելի խոշոր վճարումներից խուսափելը և պատժից կամ տուգանքից խուսափելը:[65]

Կոռուպցիայի առաջացման պատճառները

Կոռուպցիայի առաջացումն ունի մի շարք պատճառներ, որոնցից հարկ է առանձնացնել քաղաքականը, մարդաբանականը, սոցիալականը, տնտեսականը և պատմամշակութայինը:

1. Քաղաքականը պետական կառավարման համակարգում կոռուպցիայի առաջացման ամենատարածված պատճառներից է, երբ պետական և քաղաքական տարաբնույթ գործընթացներում առաջնային դեր են ստանձնում անձնական հարցերի լուծումը, կուսակցությունների և քաղաքական քարոզարշավների ապօրինի ֆինանսավորումը, օրենքներում ու ենթաօրենսդրական ակտերում միտումնավոր սողանցքներ թողնելը, բիզնեսի շահերի քաղաքականության հետ սերտաճումը և դրանց սպասարկումը և այլն:

2. Մարդաբանական պատճառի դեպքում կոռուպցիոն վարքագիծն առաջանում է հասարակության բարոյահոգեբանական հիմքերի խաթարման հետևանքով: Խոսքն այն դեպքերի մասին է, երբ մարդկանց սոցիալական, հոգեբանական և իրավական ընկալումներում կոռուպցիոն այս կամ այն վարքագիծը համարվում է նորմալ ու թույլատրելի, ավելին՝ նրանք չեն պատկերացնում դրա բացակայությունը ներհասարակական հարաբերություններում: Այդ տրամադրություններն ամրապնդվում և տեղափոխվում են պետական կառավարման ոլորտ, և պաշտոնյաներն իրենց ծառայողական դիրքն օգտագործում են հարստանալու համար:

3. Սոցիալական պատճառի դեպքում սոցիալական ապահովության ցածր մակարդակ ունեցող անձը երբեմն փորձում է ցանկացած, այդ թվում՝ հակաօրինական ճանապարհով բավարարել իր և/կամ իր ընտանիքի անդամների նվազագույն պահանջմունքները, ինչը կարող է պայմանավորված լինել ցածր աշխատավարձերով, անբա-

65 Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ, Հայաստանի բարեվարքության ծրագիր. կոռուպցիայի հանրային ընկալումը, էջ 6, 2022 թ. https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Arm_v2.pdf (դիտված՝ 13.12.2023 թ.)

վարար սոցիալական երաշխիքներով և սոցիալական խոցելիությամբ:

4. Տնտեսական պատճառի դեպքում երկրի տնտեսության վատ վիճակը և զարգացման աստիճանը, գործազրկության բարձր մակարդակը, պետական բյուջեի միջոցների սակավությունը, ֆինանսական օլիգարխիայի միջամտությունն ազդում են կոռուպցիայի մակարդակի վրա:

5. Պատմամշակութային պատճառի դեպքում ժողովրդի պատմաքաղաքական զարգացման պայմանների ազդեցության ուժով ձևավորված մտածելակերպը (մենթալիտետը), հոգեբանությունը և ավանդույթները կարող են նպաստել կոռուպցիայի առաջացմանն ու տարածմանը:

Դարեր շարունակ ապրելով այլ պետությունների կազմում և հաճախ զրկված լինելով մի շարք կենսական իրավունքներից՝ հայ հասարակությունը կոռուպցիան սկսեց համարել նպատակին հասնելու հիմնական միջոցը՝ աստիճանաբար վերածելով այն սոցիալական նորմի: Կոռուպցիոն գործարքների տարածվածությունը շարունակվեց նաև հանրապետության հիմնադրումից հետո: Այդ առումով հատկապես վճռորոշ եղավ Հայաստանի խորհրդայնացումը, երբ Հայաստանը մաս դարձավ ավտորիտար համակարգի, որտեղ բյուրոկրատիան և որոշումների կայացման գործընթացներում թափանցիկության ու հաշվետվողականության բացակայությունը ստեղծում էին կոռուպցիայի ծաղկման ու արմատավորման լայն հնարավորություններ: Խորհրդային ռեժիմի յոթ տասնամյակներն արմատավորեցին այն գաղափարը, որ կոռուպցիան խնդիրների լուծման ընդունելի, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ նախընտրելի կամ միակ միջոցն է:

Վերը թվարկված պատճառները կարող են հանդես գալ ինչպես առանձին, այնպես էլ համակցված, հետևաբար՝ կոռուպցիայի դեմ պայքարի բոլոր միջոցները պետք է ոչ միայն ամրագրվեն օրենսդրությամբ, այլև լինեն պետական քաղաքականության առաջնահերթություն պետական կառավարման բոլոր մակարդակներում:

Պայքար կոռուպցիայի դեմ

Կոռուպցիայի դեմ պայքարելու անհրաժեշտության մասին գլոբալ մակարդակում սկսեցին մտածել 20-րդ դարի վերջին տասնամյակում, երբ աշխարհի տարբեր երկրներում նկատվեց, թե ինչպես են դրա արդյունքում ձախողվում տնտեսական, սոցիալական, քաղաքական բարեփոխումները, միջազգային աջակցության ծրագրերը: Սկսեցին ընդունվել տարածաշրջանային միջազգային համաձայնագրեր, ինչպես օրինակ՝ Ամերիկյան երկրների կազմակերպության 1996 թ. մարտին ընդունած Կոռուպցիայի դեմ միջամերիկյան կոնվենցիան (ուժի մեջ՝ 1997 թ. մարտից), Եվրոպայի խորհրդի 1999 թվականին ընդունած՝ Կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքացիական իրավունքի մասին (ուժի մեջ՝ 2005 թ. մայիսից) և Կոռուպցիայի դեմ պայքարի քրեական իրավունքի մասին (ուժի մեջ՝ 2006 թ. մայիսից) կոնվենցիաները, Աֆրիկյան միության 2003 թ. հուլիսին ընդունած Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի կոնվենցիան (ուժի մեջ՝ 2006 թ. օգոստոսից): Ձևավորվեցին միջազգային հարթակներ, օրինակ՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցը (1998), Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշր-

ջանի հակակոռուպցիան նախաձեռնությունը (1999): 1999 թ. մայիսի 1-ին Եվրոպայի խորհրդի անդամ 17 երկրներ ստեղծեցին Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբը (ԳՐԵԿՈ)՝ մշտադիտարկելու անդամ պետությունների հակակոռուպցիոն օրենսդրության և պրակտիկայի համապատասխանությունը կազմակերպության հակակոռուպցիոն չափանիշներին: Համաշխարհային մակարդակում՝ 2003 թվականի հոկտեմբերի 31-ին, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան իր 58/4 բանաձևով ընդունեց Կոռուպցիայի դեմ կոնվենցիան (ուժի մեջ՝ 2007 թ. ապրիլից) և դեկտեմբերի 9-ը հռչակեց որպես Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օր:

Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային իրավակարգավորումներում և պրակտիկայում առանցքային են համարվում կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված միջոցառումները, պատշաճ իրավակիրառ պրակտիկան՝ կոռուպցիան բացահայտելու և դրա պատժելիությունն ապահովելու առումով, ինչպես նաև հակակոռուպցիոն կրթությունը և հանրության ներգրավումը կոռուպցիայի դեմ պայքարում:



ԹԻՀԿ, 2021 թ, աղբյուր՝ transparency.am

Կանխարգելում

Կոռուպցիայի կանխարգելումը ներառում է կոռուպցիոն ռիսկերի բացահայտումը և գնահատումը, հակակոռուպցիոն ծրագրերի մշակումը և իրականացումը, պաշտոնատար և հանրային ծառայություն իրականացնող անձանց (integrity) էթիկայի նորմերի և վարքագծի կանոնների սահմանումը, աշխատանքի ընդունելիս և պաշտոնեական առաջխաղացման դեպում բարեվարքության ստուգումը, շահերի բախման իրավիճակներում որոշումների ընդունման և գործողությունների կատարման արգելումը և այլն: Ի լրումն, հայաստանյան օրենսդրության որոշ մեխանիզմները և դրանց կարգավորումները ներկայացված են ստորև.

1. **Պետական և համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց համար սոցիալական երաշխիքների լայն շրջանակի առկայությունը:** Այդ անձինք պետք է ապահովված լինեն համարժեք, աշխատաշուկայում մրցակցային, արժանավայել աշխատավարձերով:[66] Բացի դրանից՝ պետք է ճիշտ ու արդարացի կիրառվի պարգևավճարների և լրավճարների համակարգը, ինչպես նաև կատարելագործվեն արդեն գոյություն ունեցող սոցիալական երաշխիքները, և սահմանվեն նորերը:

66 A. Lopez-Claros, 6 Strategies to Fight Corruption, Global Governance Forum, 2014 https://globalgovernanceforum.org/6-strategies-to-fight-corruption/ (դիտված՝ 2.11.2023 թ.)

Սոցիալական ապահովվածության ոլորտում պետական և համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց համար կարևորագույն սոցիալական երաշխիք է ՀՀ Կառավարության հաստատած սոցիալական ապահովության փաթեթը, որը ՀՀ պետական մարմիններում և կրթության, մշակույթի, գիտության ու սոցիալական պաշտպանության ոլորտների պետական ոչ առևտրային կազմակերպություններում աշխատողների և/կամ նրանց ընտանիքների անդամների առողջական, կրթական և այլ խնդիրների ապահովման միջոցառումների շրջանակ է:

2. **Պետական և համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց ու նրանց ընտանիքի անդամների (փոխկապակցված անձինք) կողմից գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր ներկայացնելը:** Պետական և համայնքային պաշտոն զբաղեցնող անձինք հայտարարագիր ներկայացնում են պաշտոնը ստանձնելիս, յուրաքանչյուր տարի և պաշտոնից ազատվելիս:

Հայաստանում պաշտոնատար անձինք ներկայացնում են մեկ միասնական հայտարարագիր՝ բաղկացած 4 ուղղությունից՝ գույք, եկամուտ, ծախսեր, շահեր: Գույքը հայտարարագրելիս հայտարարագրման ենթակա են պաշտոն զբաղեցնող անձի ու նրա ընտանիքի անդամներին սեփականության իրավունքով պատկանող գույքը (հողամաս, շենք, ավտոմեքենա, արժեթղթեր և այլն), փաստացի տնօրինվող գույքը, կրիպտոարժույթները և այլն, իսկ եկամուտների մասով՝ ավանդներից ու փոխառություններից ստացված եկամուտները և այլն: Ծախսերի մասով՝ տվյալ ժամանակահատվածում իրականացված խոշոր ծախսերը, իսկ շահերի հայտարարագրումն իրականացվում է, որպեսզի պարզ դառնա, թե կա արդյոք պետական և մասնավոր շահերի հնարավոր հակասություն (շահերի բախում):[67]

3. **Նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ օրենսդրության պահպանումը և հստակ կիրառումը:** ՀՀ օրենսդրությամբ սահմանված է, որ պաշտոնատար անձը չպետք է ընդունի նվեր, որը պայմանավորված է իր պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ, կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն տա: Որպես բացառություն՝ պաշտոնական պարտականություններով պայմանավորված թույլատրվում է՝
   - պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող նվերները կամ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունը.
   - ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը.
   - կրթաթոշակը, դրամաշնորհը կամ նպաստը՝ տրված հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով և նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի արդյունքով.
   - օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվերները:[68]

---

67 IFES, Ներգրավված քաղաքացի, Համալսարանական դասընթացի դասագիրք, 3.8 «Ի՞նչ է կոռուպցիան», 2022 թ, https://www.engagedcitizen.am/static/media/Citizen3.ccc07f89e1b48a9e6c36.pdf (դիտված՝ 25.07.2023 թ.)

68 ՀՀ օրենքը «Հանրային ծառայության մասին», ՀՕ-206-Ն, 09.04.2018, հոդված 29, մաս 4 https://www.arlis.am/documentview.aspx?docid=175828 (դիտված՝ 25.07.2023 թ.)

Եթե այդ նվերի արժեքը գերազանցում է 60.000 դրամը, ապա այն համարվում է պետական կամ համայնքային սեփականություն:[69]

4. **Ազդարարման համակարգի կիրառումը կոռուպցիոն բնույթի դեպքերով:** Այս համակարգի հիմնական նպատակներից են կոռուպցիոն բնույթի դեպքերի բացահայտումը, շահերի բախման, էթիկայի կանոնների հետ կապված խախտումները, հանրային շահերին ուղղված այլ վնասները, կոռուպցիան նվազեցնելը և կանխարգելելը, ինչպես նաև կոռուպցիայի նկատմամբ հասարակական անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանը նպաստելը:

Ազդարարման համակարգը հնարավորություն է տալիս քաղաքացիներին և կազմակերպություններին գրավոր կամ բանավոր կարգով հաղորդում ներկայացնել (տեղեկությունները փոխանցել) իրավասու մարմնին պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական և հանրային նշանակության կազմակերպություններում կոռուպցիոն բնույթի դեպքի, շահերի բախման, էթիկայի կանոնների, պաշտոնատար անձի անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների, հայտարարագրման հետ կապված խախտման կամ էլ հանրային շահերին ուղղված այլ վնասի, դրանց սպառնալիքի առկայության դեպքում:

5. **Շահերի բախման իրավիճակի վերաբերյալ օրենսդրության պահանջների պահպանում և հստակ կիրառում:** Շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձն իր լիազորություններն իրականացնելիս կատարում է գործողություն կամ ընդունում որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել: Շահերի բախման իրավիճակում գործելը կարող է հանգեցնել կոռուպցիայի, որով էլ պայմանավորված՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված է, որ պաշտոն զբաղեցնող անձը պետք է խուսափի շահերի բախման հանգեցնող գործողություններից, ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելուց կամ որոշում ընդունելուց:[70]

Վերոնշյալ մեխանիզմները կարող են արդյունավետ լինել միայն եթե դրանք ուղեկցվեն պատշաճ իրավակիրառ պրակտիկայով և օրենքով սահմանված պահանջների չկատարման դեպքում հետևողականորեն կիրառվեն պատասխանատվության միջոցներ:

Հակազդում

1. **Կոռուպցիոն վարքագծի համար պատասխանատվության համարժեք միջոցների սահմանումը և կոռուպցիոն արարքների ու հանցագործությունների կատարման դեպքում օբյեկտիվ ու արդյունավետ քննության ապահովումը:** Ցանկացած կոռուպցիոն արարք կամ հանցագործություն կատարելու դեպքում խստորեն պետք է կիրառվեն պաշտոնատար անձանց կարգապահական կամ վարչական պատասխանատվության

69 ՀՀ օրենքը «Հանրային ծառայության մասին», ՀՕ-206-Ն, 09.04.2018, հոդված 29, մաս 6 https://www.arlis.am/documentview.aspx?docid=175828 (դիտված՝ 25.07.2023 թ.)

70 ՀՀ օրենքը «Հանրային ծառայության մասին», ՀՕ-206-Ն, 09.04.2018, հոդված 33 https://www.arlis.am/documentview.aspx?docid=175828 (դիտված՝ 04.04.2024 թ.)

ենթարկելու բոլոր կառուցակարգերը, ինչպես նաև կոռուպցիոն արարքների քննությունն իրականացնող մարմինների կողմից օրենքով սահմանված բոլոր մեխանիզմները՝ հիմնված օբյեկտիվ, անաչառ և մասնագիտական մոտեցումների վրա:

2. Ապօրինի հարստացման քրեականացումը: Սա վերջին տարիների օրենսդրական կարևորագույն բարեփոխումների արդյունք է: Ապօրինի հարստանալը պատժվում է ազատազրկմամբ՝ 3-6 տարի ժամկետով՝ զրկելով (առավելագույնը 3 տարով) որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից՝ գույքի բռնագրավմամբ:[71]

Հակակոռուպցիոն կրթություն և իրազեկում

Հասարակության լայն շրջանակների համար կազմակերպված հակակոռուպցիոն կրթությունը և իրազեկման ծրագրերը հասարակությանը կոռուպցիայի դեմ պայքարի կարևորության մասին գիտելիքների փոխանցման և վարքագծային փոփոխության հասնելու միջոց են: Հակակոռուպցիոն կրթությունը պետք է մեկնարկել նախադպրոցական տարիքից, ամրապնդել դպրոցում և բուհում, ինչպես նաև շարունակել ցկյանս՝ ձևավորելու համար արդարամիտ, իրազեկ և օրինապահ քաղաքացիներ: Հակակոռուպցիոն կրթության շրջանակում կարևորվում է նաև մասնագետների և պաշտոնատար անձանց վերապատրաստումները՝ կոռուպցիան ճանաչելու, մերժելու և դրա նկատմամբ անհանդուրժողականություն ձևավորելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմինները

Կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտացված և քաղաքականապես չեզոք ինստիտուտների: Հայաստանում հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ ճարտարապետությունը ներառում է հետևյալը.

1. **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝** պատասխանատու է կոռուպցիայի կանխարգելման և կրթական որոշ գործողությունների համար.
2. **Հակակոռուպցիոն կոմիտե՝** պատասխանատու է կոռուպցիոն գործերի քննության ու բացահայտման համար.
3. **Գլխավոր դատախազություն՝** որտեղ երկու մասնագիտացած վարչությունների կողմից իրականացնում է

   3.1 ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում կոռուպցիոն հանցագործությունների դեպքերով նախաձեռնված քրեական մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողություն.

   3.2 ապօրինի ծագում ունեցող գույքի բացահայտման և բռնագանձման ուղղությամբ գործողություններ.
4. **Հակակոռուպցիոն դատարան՝** որն իրականացնում է գլխավոր դատախազության կողմից ներկայացված կոռուպցիոն գործերի դատաքննությունը և կայացնում որոշումներ:

---

71 IFES, Ներգրավված քաղաքացի, Համալսարանական դասընթացի դասագիրք, 3.8 «Ի՞նչ է կոռուպցիան», 2022 թ, https://www.engagedcitizen.am/static/media/Citizen3.ccc07f89e1b48a9e6c36.pdf (դիտված՝ 25.07.2023 թ.)

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ վարչապետին կից Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ

Քննարկում է հակակոռուպցիոն քաղաքականության՝
- ռազմավարություններ, ոլորտային ծրագրեր, իրավական ակտերի նախագծեր
- ծրագրերի իրականացման, կատարողականի և մոնիթորինգի ու գնահատման հաշվետվություններ
- ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններ
- քաղաքացիական հասարակության, գործարար ոլորտի կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքներ

ՀՀ արդարադատության նախարարություն (Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչություն)

- Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրերի մշակում և մոնիթորինգ
- Հակակոռուպցիոն ծրագրերի, միջազգային պարտավորությունների մոնիթորինգ
- Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի քարտուղարության աշխատանքներ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

էթիկայի հանձնաժողովներ

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց

- Աժ պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողով
- Դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով
- ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողով
- Քննիչների կարգապահական հանձնաժողով

Հանրային ծառայողների

- Քաղաքացիական ծառայություն
- Դիվանագիտական ծառայություն
- Մաքսային ծառայություն
- Հարկային ծառայություն
- Փրկարար ծառայություն
- Քրեակատարողական ծառայություն
- Հարկադիր ծառայություն
- Դատական կարգադրիչների ծառայություն
- Համայնքային ծառայություն

***

- Զինվորական ծառայողների (բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչի միջոցով իրականացվող շարքային կազմի) կարգապահական հանձնաժողով
- Ազգային անվտանգության մարմիններում ծառայողների կարգապահական հանձնաժողով
- Ոստիկանության ծառայողների կարգապահական հանձնաժողով

- Հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումների քննություն
- Հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկությունների ներկայացում իրավասու մարմիին կամ պաշտոնատար անձին

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

- Վարքագծի տիպային կանոնների մշակում և պահպանման միասնականության ապահովում
- Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների կիրառման միասնականության ապահովում
- Անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, շահերի բախման դեպքերի վիճակագրության վարում
- Անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկությունների ներկայացում իրավասու մարմիններին
- Պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց բարեվարքության ուսումնասիրություններ
- Հակակոռուպցիոն կրթական և հանրային իրազեկման ծրագրերի մշակում և իրականացում
- Կուսակցությունների ֆինանսական միջոցների, գույքի վերաբերյալ հաշվետվության ստուգում, հրապարակում, աուդիտի կազմակերպում
- Նախընտրական և քարոզչության ֆինանսավորման հիմնադրամներ կատարվող նվիրատվությունների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողության իրականացում *(ուժի մեջ է 2023 թվականի հունվարի 1-ից)*
- Հայտարարագրման գործընթացի կանոնակարգում
- Ապօրինի հարստացման առերևույթ կոռուպցիոն ռիսկերի բացահայտում
- Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող քաղաքականության մշակմանը մասնակցություն

Ազդարարման հարցերով պատասխանատու

- Կոռուպցիոն բնույթի, բարեվարքության կանոնների, շահերի բախման, հայտարարագրման հետ կապված խախտումների, հանրային շահերին ուղղված սպառնալիքի վերաբերյալ հաղորդումների հաշվառում և ընդունում
- Ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառում և վերահսկեագրում
- Ազդարարի պաշտպանության միջոցների իրականացում

Բարեվարքության հարցերով կազմակերպիչ

Բարեվարքության՝
- մասնագիտական խորհրդատվություն
- վերապատրաստման կարիքներ և ծրագրեր
- ուսումնասիրություններ
- հակակոռուպցիոն պլանների նախագծեր
- դեպքերի վիճակագրություն

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Հակակոռուպցիոն կոմիտե

- Ենթադրյալ կոռուպցիոն հանցագործությունների մինչդատական քրեական վարույթ
- Օպերատիվ – հետախուզական գործունեություն

ՀՀ գլխավոր դատախազություն

Կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչություն

- Կոռուպցիոն հանցագործությունների միասնական էլեկտրոնային հարթակի վարում
- Քրեական հետապնդում
- Մինչդատական քրեական վարույթի օրինականության հսկողություն
- Դատարանում մեղադրանքի պաշտպանում
- Դատարանների վճիռների և որոշումների բողոքարկում
- Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության հսկողություն

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն

Ապօրինի ծագում ունեցող գույքի՝
- բռնագանձման վարույթ
- ուսումնասիրությունների իրականացում
- եզրակացության կազմում

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆ

- Կոռուպցիոն հանցագործությունների քննություն և պատժի սահմանում
- Պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանություն և պատժի սահմանում
- Ապօրինի գույքի բռնագանձման գործերի քննություն և պատժի սահմանում

ԹԻ ՀԿ, 2021 թ., աղբյուր transparency.am

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Դասի տեսակը՝ Համակցված

Դասի նպատակը՝ Սովորողները կճանաչեն կոռուպցիան և կձևավորեն բացասական, անհանդուրժող վերաբերմունք դրա նկատմամբ:

Դասի խնդիրները՝
- Սահմանել կոռուպցիան.
- Ներկայացնել կոռուպցիայի տեսակները/դրսևորումները և պատճառները.
- Պրակտիկ օրինակներով ցույց տալ կոռուպցիայի հասցրած վնասները:

Չափորոշչից բխող վերջնարդյունք՝
- Իմանա «կոռուպցիա» հասկացությունը.
- Ներկայացնի կոռուպցիայի պատճառները և ձևերը.
- Հիմնավորի իշխանության մարմինների գործունեության թափանցիկության ապահովման և դրա նկատմամբ վերահսկողության անհրաժեշտությունը:

Դասի փուլերը, ընտրված մեթոդները և տևողությունը՝
- Սկիզբ և նախորդ դասի ամփոփում (8 րոպե)
- Խթանում (5 րոպե)
- Իմաստի ընկալում (23 րոպե)
- Կշռադատում (9 րոպե)

Անհրաժեշտ նյութեր և պարագաներ՝ համակարգիչ, պրոյեկտոր (առկայության դեպքում), թղթեր, առանձին թղթերի վրա տպագրված կամ գրված կոռուպցիայի հետևանքները, տպագրված խաչբառեր կամ խաչբառի QR կոդ:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Սկիզբ և նախորդ դասի ամփոփում

Քայլ 1. Կազմակերպչական մաս (2 րոպե)
Քայլ 2. Նախորդ դասի ամփոփում, տնային հանձնարարությունների քննարկում (6 րոպե)

Խթանում

Քայլ 3. Մտագրոհ «Ի՞նչ ենք հասկանում կոռուպցիա ասելով» հարցի շրջանակում (5 րոպե)

Գրատախտակի կենտրոնում գրել «կոռուպցիա» բառը և խնդրել սովորողներին, որ մեկ բառով կամ բառակապակցությամբ ասեն, թե ինչ են հասկանում կոռուպցիա ասելով: Սովորողների նշած բոլոր տարբերակները գրի են առնվում գրա-

տախտակին, որից հետո ուսուցիչը կատարում է համառոտ ամփոփում և նախնական պատկերացում տալիս կոռուպցիայի մասին

Իմաստի ընկալում

Քայլ 4. Ուսուցիչը ներկայացնում է «կոռուպցիա» հասկացությունը, դրա տեսակները/դրսևորումները, պատճառները և հասցրած բացասական հետևանքները (6 րոպե)

Քայլ 5. Կոռուպցիայի մասին տեսանյութի դիտում (4 րոպե)

Ցուցադրել «Կոռուպցիա՝ մեր ընդհանուր խնդիրը» 1 րոպեանոց տեսանյութը (տե՛ս Օժանդակ նյութեր սովորողների համար բաժնում) և քննարկել այն սովորողների հետ՝ օգտագործելով հետևյալ հարցերը.

- կոռուպցիայի ո՞ր տեսակը/տեսակներն էին ներկայացված տեսանյութում.
- ո՞ւմ վնասեց կոռուպցիան (շեշտադրել, որ կոռուպցիան վնասեց ոչ միայն անմիջական մեղավորներին, այլև բոլորովին անմեղ մարդկանց, օրինակ՝ վթարի մասնակից մյուս մեքենայի ուղևորներին՝ այդպիսով ընդգծելով հասարակական ու պետական մակարդակում կոռուպցիայի հասցրած վնասները).
- ովքե՞ր են կատարվածի հիմնական մեղավորները (շեշտադրել ոչ միայն կաշառք տվողի, այլև վերցնողի մեղավորությունը՝ ընդգծելով կոռուպցիայի համակարգային բնույթը):

Քայլ 6. Խմբային աշխատանք (13 րոպե)

Աշակերտներից կազմել 4-5 հոգանոց խմբեր և իրականացնել «Պատմության սկիզբը» առաջադրանքը (տե՛ս առաջադրանքներ բաժնում):

Կշռադատում

Քայլ 7. Կոռուպցիայի մասին խաչբառի լրացում (7 րոպե)

Սովորողներից կազմել զույգեր, բաժանել տպագրված խաչբառը կամ էլեկտրոնային խաչբառի QR կոդը (Տե՛ս առաջադրանքներ բաժնում) և հատկացնել 5 րոպե այն լրացնելու համար: Խաչբառի լրացումից հետո քննարկել այն և հնչեցնել ճիշտ պատասխանները:

Քայլ 8. Դասի ամփոփում, գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում (2 րոպե):

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Խաչբառ

Տևողությունը՝ 10 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կկարողանան ըստ նկարագրության անվանել կոռուպցիոն դրսևորումները և կոռուպցիային առնչվող իրավախախտումները:

Նկարագրություն

Սովորողներին անհատական կամ խմբային ձևաչափով տրամադրել խաչբառը (էլեկտրոնային կամ թղթային): Այն լրացնելուց հետո քննարկել արդյունքները և նշել ճիշտ պատասխանները: Խաչբառը ճիշտ լրացնելու դեպքում ընդգծված վանդակներում ուղղահայաց կարգով կստացվի բառ:



Հորիզոնական

1. Պաշտոնյայի կողմից շահադիտական նպատակներով փաստաթղթերում իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների մտածված գրառում:
2. Պաշտոնատար անձի կողմից կաշառք տվողի թերացումները, ապօրինությունները բացահայտելու ուղղությամբ համապատասխան միջոցների չիրականացում:
3. Արտոնության ընդունում՝ դրդելու անօրինական, ոչ էթիկական գործողությունների:
4. Հարկադրանքի, սպառնալիքների միջոցով գումարի, գույքի նկատմամբ իրավունքը հանձնելու պահանջ՝ որոշակի գործողության կամ անգործության համար:
5. Ազգակիցների շահերի պաշտպանություն, որը կարող է դրսևորվել անհարկի խրախուսմամբ, պաշտոնի բարձրացմամբ:

6. Պաշտոնատար անձի կողմից իր դիրքը չարաշահելու միջոցով կատարված հափշշտակությունը:
7. Հովանավորի և այլ անձի կողմից փոխշահավետ պարտավորությունների և կապերի վրա հիմնված հարաբերությունների համակարգ:
8. Շահադիտական նպատակներով պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործումը կամ ծառայողական պարտականությունների չկատարումը, որը հասցրել է էական վնաս: Պաշտոնական դիրքի ....:

Պատասխան՝

Հորիզոնական՝ 1. կեղծիք, 2. թողտվություն, 3. կաշառք, 4. շորթում, 5. նեպոտիզմ, 6. յուրացում, 7. կլիենտիզմ, 8. չարաշահում

Ուղղահայաց՝ 1. Կոռուպցիա

Խաչբառն էլեկտրոնային եղանակով հնարավոր է լրացնել անցնելով հետևյալ հղումով.

2 Պատմության սկիզբը

Տևողություն՝ 10-15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կկարողանան նկարագրել և պատկերացնել կոռուպցիայի բացասական հետևանքները:

Նկարագրություն

Աշակերտներից կազմել 4-5 հոգանոց խմբեր, յուրաքանչյուր խմբին տրամադրել դասագրքում (Հասարակագիտություն 8, Ա. Գյուլբուդաղյան և ուրիշներ, էջ 129) կամ ստորև ներկայացված կոռուպցիայի 6 հետևանքներից մեկը (տրամադրվող հետևանքները չպետք է կրկնվեն) և հանձնարարել 5 րոպեի ընթացքում մշակել համառոտ պատմություն, որը կհանգեցնի այդ անցանկալի հետևանքին: Պատմությունները մշակելուց հետո յուրաքանչյուր խումբ մինչև 1 րոպեի ընթացքում ներկայացնում է իր մշակած պատմությունը և դրա հետևանքները: Ուսուցիչն ամփոփում է պատմությունները և ևս մեկ անգամ նշում կոռուպցիայի հասցրած վնասները:

Կոռուպցիայի հետևանքներից են.

1. Հնարավորություն է տալիս հարկերից խուսափելու սոցիալապես ապահով խմբերին՝ հիմնական հարկային բեռը գցելով հասարակության անապահով խմբերի վրա.
2. Խարխլում է հանրային գիտակցությունը, առաջացնում դժգոհություն, մեծացնում հանրային լարվածությունը.
3. Սպանում է ժողովրդավարությունը և օրինականությունը.

4. Թուլացնում է իշխանության նկատմամբ հավատը և նվազեցնում մարդկանց բարոյական գիտակցության մակարդակը.
5. Նվազեցնում է քաղաքացիների մասնակցությունը հասարակական գործընթացներին և հետաքրքրությունը պետական իշխանության մարմինների աշխատանքի հանդեպ.
6. Հանգեցնում է կազմակերպված հանցագործությունների աճին:

3 Արդյո՞ք սա կոռուպցիա է

Տևողություն՝ 10 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կկարողանան տարբերել կոռուպցիոն իրավիճակները, կորոշեն կոռուպցիայի տեսակները, պատճառները և հետևանքները:

Նկարագրություն

Սովորողներից կազմել զույգեր և յուրաքանչյուր զույգին տրամադրելով ստորև ներկայացվող կոռուպցիոն իրավիճակները՝ հանձնարարել 5 րոպեի ընթացքում որոշել՝ արդյոք նկարագրվածը կոռուպցիոն իրավիճակ է, թե ոչ: Եթե նկարագրվածը կոռուպցիոն իրավիճակ է, ապա անհրաժեշտ է պարզել տեսակը և նշել հետևանքները: Զույգերով աշխատանքից հետո քննարկել նկարագրված իրավիճակները և կատարել ամփոփում:

Խախտումներ

1. Նարեկը, ով գերազանցությամբ ավարտել էր համալսարանը ու նախարարի մտերիմ ընկերն է, պաշտոնի առաջխաղացման է ներկայացվում ավելի արագ, քան իր գործընկերները:
2. Գործարանների սեփականատերը նաև պատգամավոր է, որը Ազգային ժողովում մշակում և կողմ է քվեարկում այնպիսի օրենքներին, որոնք հիմնականում ձեռնտու կլինեն իր կազմակերպությանը:
3. Հիվանդանոցում հիվանդը նվերներ է տալիս կամ վճարում է բժշկին՝ ուշադիր վերաբերմունքի և առանց հերթի սպասարկման համար: Բժիշկը դա չի պահանջում, բայց չի էլ հրաժարվում գումարից և նվերներից:
4. Ոստիկանության անձնագրային բաժնի պետը, ստանալով որոշակի գումար բնակչից, ապահովում է բաժնի ծառայություններից առանց հերթի օգտվելը և արագացված կարգով անձնագրի ստացումը:
5. Ուսումնական կազմակերպության ղեկավարն ընկերության տրանսպորտային միջոցն օգտագործում է ինչպես աշխատանքային, այնպես էլ անձնական նպատակներով, այդ թվում՝ ընտանիքի կարիքների համար:
6. Պետական հիմնարկը ստանում է նոր համակարգիչներ, սակայն հիմնարկի ղեկավարը դրանց միայն մի մասն է տալիս աշխատակիցներին, իսկ մյուս մասը վաճառում է ու վաճառքից ստացած գումարը յուրացնում:

7. Աշխատանքի ընդունման մրցույթին մասնակցում են 10 հոգի: Նրանցից մեկը, ընդունող հանձնաժողովին կաշառելով, նախապես ստանում է մրցույթի հարցաշարերը և հաղթում:

4 Խոշոր, թե՞ մանր կոռուպցիա

Տևողություն՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կկարողանան տարբերակել խոշոր և մանր կոռուպցիան:

Նկարագրություն

Սովորողներին հանձնարարել տնային աշխատանք, որ համացանցում գտնեն կոռուպցիոն դրսևորումների մասին հրապարակումներ (երկուսից ոչ պակաս): Փնտրելու համար կարելի է օգտագործել իրավապահ մարմինների և լրատվամիջոցների կայքերը, դատավճիռների շտեմարանները, այլ ռեսուրսներ: Յուրաքանչյուր դեպքի համար անհրաժեշտ է պարզել՝ արդյոք գտած խախտումը մեծ, թե մանր կոռուպցիայի օրինակ է և հիմնավորել պատասխանը:

5 Կոռուպցիան մեր կյանքում

Տևողություն՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կկարողանան կատարել ուսումնասիրություն Հայաստանում տարբեր ոլորտներում կոռուպցիոն ժամանակակից դրսևորումների վերաբերյալ և կատարել եզրակացություն:

Նկարագրություն

Սովորողներից կազմել 3-4 հոգանոց խմբեր և հանձնարարել տնային աշխատանք, ըստ որի յուրաքանչյուր խումբ պետք է ուսումնասիրի և նկարագրի մեր կյանքի տարբեր ոլորտներում առկա կոռուպցիոն դրսևորումներից որևէ մեկը: Հաջորդ դասի ընթացքում խմբերն իրենց կատարած աշխատանքը կներկայացնեն դասարանին և մյուս խմբերի հետ կքննարկեն իրենց ընտրած ոլորտում կոռուպցիայի տարածվածության հիմնական պատճառները և հետևանքները:[72]

72 ԹԻՀԿ, Ա. Հակոբյան, Ա. Խուդավերդյան, Վ. Հոկտանյան, Գ. Հովհաննիսյան, Խ. Բեգիրջյան, Թ. Խեչոյան «Հակակոռուպցիոն ակադեմիա» դասընթացի գործնական առաջադրանքների ժողովածու .– Եր.: Հեղ. հրատ., 2022.– էջ 11, https://www.transparency.am/hy/publication/pdf/304/10018 (դիտված՝ 25.07.2023 թ.)

6 Կոռուպցիայի բանաձևը

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կփորձեն ինքնուրույն ներկայացնել կոռուպցիան բանաձևի տեսքով

Նկարագրություն
Սովորողներից կազմել 4-5 հոգանոց խմբեր և հանձնարարել կոռուպցիան ներկայացնել բանաձևի տեսքով: Խմբերը աշխատանքի համար կունենան 7 րոպե, իսկ աշխատանքի արդյունքները ներկայացնելու համար 1 րոպե ժամանակ, որից հետո մանկավարժը կամփոփի աշխատանքը և կներկայացնի կոռուպցիայի բանաձևը՝ «կոռուպցիան» հավասար է «մենաշնորհին» գումարած «հայեցողություն» հանած «հաշվետվականություն»:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Կոռուպցիա

Տևողությունը՝ 5 րոպե

Նկարագրություն՝ Անիմացիոն տեսանյութում ներկայացվում է, թե ինչպես է գործում համակարգային կոռուպցիան, և ինչպիսին է դրա ազդեցությունը հասարակության համար:

2 Կոռուպցիա՝ մեր ընդհանուր խնդիրը

Տևողությունը՝ 1 րոպե

Նկարագրություն՝ Հոլովակում ներկայացվում է, թե անձնական մակարդակում ինչ կործանարար հետևանքներ կարող է ունենալ կոռուպցիան:

3 Ժամանակն է սթափվել

Տևողությունը՝ 1 րոպե

Նկարագրություն՝ Հոլովակում ներկայացվում է, թե ինչու պետք է հասարակությունը պայքարի կոռուպցիայի դեմ:

4 Ի՞նչ է կաշառքը

Տևողությունը՝ 3 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում հայաստանյան օրինակի մեկնաբանմամբ ներկայացվում է, թե ինչ է կաշառքը և անդրադարձ է կատարվում կոռուպցիայի դեմ պայքարի եղանակներին ու անհրաժեշտությանը:

5 Բուն TV, Դաս 20. Կոռուպցիա (մաս 1)

Տևողությունը՝ 14 րոպե

Նկարագրություն՝ Տեսադասում ներկայացված է, թե ինչ է կոռուպցիան, որոնք են դրա ծագման պատճառները և հիմնական տեսակները:

6 Բուն TV, Դաս 21. Կոռուպցիա (մաս 2)

Տևողությունը՝ 14 րոպե

Նկարագրություն՝ Տեսադասում ներկայացված են կոռուպցիայի բացասական հետևանքները հասարակության և պետության համար, կոռուպցիայի դեմ պայքարի միջոցները:

7 Շահերի բախում

Տևողությունը՝ 2 րոպե 40 վայրկյան

Նկարագրություն՝ Անիմացիոն տեսանյութում ներկայացվում է, թե ինչպես է շահերի բախումից առաջանում կոռուպցիա:

8 Հակակոռուպցիոն պատկերասրահ

Նկարագրություն՝ Առցանց թղթապանակում տեղ են գտել հակակոռուպցիոն բովանդակությամբ gif-եր և նկարներ:

9 Կլիենտիզմ

Տևողությունը՝ 4 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում ներկայացվում է կլիենտիզմը, որը սկզբնավորվել է հազարամյակներ առաջ և շարունակում է իր քայքայիչ ազդեցությունը մինչ օրս:

10 Նեպոտիզմ

Տևողությունը՝ 7 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում ներկայացվում է կոռուպցիայի դրսևորումներից նեպոտիզմը:

11 Քրոնիզմ

Տևողությունը՝ 6 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում ներկայացվում է կոռուպցիայի դրսևորումներից քրոնիզմը:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 300 րոպե կոռուպցիայի մասին. հաղորդում 2

Տևողությունը՝ 25 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում ներկայացվում է, թե ինչ է կաշառքը, ինչպես է այն խաթարում հանրային ու պետական կյանքը, ինչ պատիժներ է սահմանում օրենքը՝ կաշառակերության, կաշառք տվողի և կաշառքի միջնորդության համար:

2 300 րոպե կոռուպցիայի մասին. հաղորդում 6

Տևողությունը՝ 25 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում ներկայացվում է«պաշտոնեական կեղծիք» կոչվող կոռուպցիոն դրսևորումը և դրա հայաստանյան օրինակները:

3 300 րոպե կոռուպցիայի մասին. հաղորդում 7

Տևողությունը՝ 25 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում խոսվում է վստահված գույքի հափշտակության մասին, վերլուծվում կոռուպցիայի նկատմամբ հանրության հանդուրժողականության պատճառները և դրա կանխարգելման հնարավոր մոտեցումները:

4 Կոլեկտիվ (անգլերեն)

Տևողությունը՝ 1 ժամ 49 րոպե

Նկարագրություն՝ Վավերագրական ֆիլմում ներկայացվում է իրական պատմություն, որտեղ ներկայացվում է առողջապահության ոլորտում հսկայական խարդախությունը, որը հարստացրել քաղաքական գործիչներին և հանգեցրել անմեղ քաղաքացիների մահվան:

5 Բուն զրույց. Քաղաքականություններ

Տևողությունը՝ 27 րոպե

Նկարագրություն՝ Հարցազրույցում ներկայացվում են Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումները, 2023-2026 թթ. Հակակոռուպցիոն ռազմավարությունից ակնկալիքները, անդրադարձ է կատարվում Կոռուպցիայի ընկալման համաթվին և Հայաստանի ցուցիչին:

2.6 ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Կոռուպցիա և իշխանության չարաշահում

Իրականացման ժամկետը՝ 2 ամիս

Նախագծի նպատակը՝ Սովորողները կգիտակցեն կոռուպցիայի բացասական ազդեցությունը պետության վրա: Կկարողանան ուսումնասիրել այլ երկրներում կոռուպցիայի տարածվածությունն ըստ ոլորտների, հակակոռուպցիոն մարմինների աշխատանքը և կառաջարկեն կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված բարեփոխումներ:

Հետազոտության հարցը՝ Ո՞ր ոլորտներում է երկիրը կոռումպացված և ինչպե՞ս է պայքարում կոռուպցիայի դեմ:

Խնդիրը՝ Վերլուծել և ներկայացնել կոռուպցիայի ազդեցությունը պետության վրա:

Վերջնարդյունքը՝
Սովորողները

- Կիրականացնեն հետազոտություն երկրի կոռումպացված ոլորտները բացահայտելու շուրջ.
- Կներկայացնեն երկրի հնչեղ կոռուպցիոն սկանդալներից մեկը և դրա ազդեցությունը երկրի վրա.
- Կուսումնասիրեն տվյալ երկրի հակակոռուպցիոն մարմինները և դրանց աշխատանքը.
- Կմշակեն բարեփոխումների պլան, որը կնպաստի տվյալ երկրում կոռուպցիայի դեմ պայքարին:

Նախագծի համառոտ նկարագրություն
Աշակերտները բաժանվում են 3-4 հոգանոց խմբերի, ընտրում մեկ երկիր, որի ուսումնասիրմամբ ցանկանում են զբաղվել: Յուրաքանչյուր խումբը պետք է ուսումնասիրի ընտրված երկրի կառավարման ձևը, դրա տնտեսական վիճակը, բնակչության կազմը, առանձնացնի այն ոլորտները, որոնցում կոռուպցիան լայնորեն տարածված է (օրինակ՝ կրթություն, առողջապահություն և այլն): Անհրաժեշտ է գտնել, առանձնացնել և ուսումնասիրել վերջին 5 տարիների ընթացքում տվյալ երկրում տեղի ունեցած հնչեղ կոռուպցիոն սկանդալներից մեկը և դրա ազդեցությունը երկրի վրա: Խումբը նաև պետք է ուսումնասիրի տվյալ երկրում հակակոռուպցիոն մարմինները, դրանց գործառույթները: Կատարված ուսումնասիրությունների և վերհանված խնդիրների հիման վրա խմբերը պետք է մտածեն և գրի առնեն բարեփոխումներ, որոնք հնարավորություն կտան արդյունավետ պայքարել կոռուպցիայի դեմ:

Նախագծի պարտադիր բաղադրիչների նկարագրություն

- **Երկրի ընդհանուր ուսումնասիրություն՝** ուսումնասիրում են երկրի կառավարման ձևը, դրա տնտեսական վիճակը, բնակչության կազմը, առանձնացնում են այն ոլորտները, որոնցում կոռուպցիան լայնորեն տարածված է:
- **Կոռուպցիոն սկանդալի ուսումնասիրություն՝** գտնում, առանձնացնում և ուսումնասիրում են վերջին 5 տարիների ընթացքում տվյալ երկրում տեղի ունեցած հնչեղ կոռուպցիոն սկանդալներից մեկը և դրա ազդեցությունը երկրի վրա:
- **Հակակոռուպցիոն մարմինների ուսումնասիրություն՝** ուսումնասիրում են տվյալ երկրի հակակոռուպցիոն մարմինները, դրանց գործառույթները:
- **Հաղթահարման ուղիներ՝** մշակում են բարեփոխումների պլան, որը հնարավորություն կտա արդյունավետ պայքարել կոռուպցիայի դեմ:
- **Ներկայացում՝** պատրաստում են ցուցադրություն (պաստառի, սահիկաշարի կամ այլ միջոցի օգտագործմամբ), որտեղ ներկայացնում են ընտրված երկիրը և դրա շուրջ կատարված ուսումնասիրությունները:

Նախագծի ընթացքը

Ուսուցչի գործողություններ	Աշակերտների գործողություններ
1| Նախապատրաստական փուլ	
• Հաշվի առնելով աշակերտների հետաքրքրությունները, կարողություններն ու հմտությունները՝ ձևավորել տարամակարդակ աշխատանքային խմբեր (յուրաքանչյուր խմբում 3-4 աշակերտ): • Ներկայացնել նախագծի համար պարտադիր համարվող բաղադրիչները: • Աջակցել խմբի անդամների աշխատանքային դերերի բաշխման գործընթացին:	• Աշխատանքային խմբերում կատարվում է աշխատանքի բաշխում. աշակերտները որոշում են իրենց դերերը, ընտրում խմբի պատասխանատուին: • Որոշում են հանդիպումների հաճախականությունը և ձևաչափը: • Նշումներ են կատարում նախագծի պարտադիր բաղադրիչների մասին:
2| Պլանավորման փուլ	
• Ուսումնասիրություններ կատարելու համար աշակերտներին առաջարկել անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրման աղբյուրների տարբերակներ՝ • -փաստաթղթերի ուսումնասիրություն, • -համացանց, • -լրատվական կայքեր, • -հայերեն և օտարալեզու գրականություն և այլն: • Ներկայացնել աշխատանքի գնահատման չափանիշները:	• Որոշում են խմբերի անունները: • Պլանավորում են խմբի կատարելիք աշխատանքները և սահմանում վերջնարդյունքները: • Որոշում են պարտադիր բաղադրիչներից բացի կան արդյոք այլ բաղադրիչներ, որը խումբը ցանկանում է ներառել նախագծում:

3| Իրականացման փուլ

- Կազմակերպել/հետևել խմբային քննարկումների իրականացման ընթացքին:
- Քննարկել միջանկյալ հարցեր, որոնք առաջացել են հետազոտական աշխատանք իրականացնելիս:
- Աջակցել աշակերտներին հավաքագրված տվյալների դասակարգման, եզրահանգումների կատարման աշխատանքում և, ըստ անհրաժեշտության, ուղղորդել նրանց աշխատանքը:

- Ընտրում են երկիրը, ուսումնասիրում կառավարման ձևը, տնտեսական վիճակը, բնակչության կազմը, առանձնացնում են կոռումպացված ոլորտները:
- Գտնում, առանձնացնում և ուսումնասիրում են վերջին 5 տարիների ընթացքում տվյալ երկրում տեղի ունեցած հնչեղ կոռուպցիոն սկանդալներից մեկը և դրա ազդեցությունը երկրի վրա:
- Ուսումնասիրում են տվյալ երկրի հակակոռուպցիոն մարմինները, դրանց գործառույթները: Կարող են կատարել նաև փաստարկված ենթադրություններ դրանց աշխատանքի արդյունավետության մասին:
- Վերհանված խնդիրները թիրախավորելով՝ մշակում են բարեփոխումների պլան, որի իրականացումը հնարավորություն կտա այդ երկրում արդյունավետ պայքարել կոռուպցիայի դեմ:

4| Արդյունքների ամփոփման փուլ

- Աշակերտների հետ կազմել աշակերտների նախագծի ներկայացման պլան:
- Կազմակերպել նախագծի պաշտպանություն (մեկ կամ երկու դասաժամ):
- Աջակցել ներկայացման ձևաչափի ընտրության և նախապատրաստման աշխատանքներին:
- Կազմակերպել նախագծի ներկայացման փորձ և տրամադրել խորհրդատվություն շտկման ենթակա հարցերի վերաբերյալ:

- Ամփոփում են կատարված աշխատանքը:
- Նախապատրաստվում են նախագծի ներկայացմանը:

5| Ներկայացման և գնահատման փուլ

- Բարձր դասարանի աշակերտների և ուսուցիչների ներգրավվածությամբ կազմել նախագծերը գնահատող խումբ:
- Գնահատող խմբին տրամադրել գնահատման ձևաթուղթը և մեկնաբանել դրա լրացման կարգը:
- Աջակցել խմբային գնահատականների ձևավորմանը և դրանց հիման վրա գնահատել յուրաքանչյուր աշակերտի (օգտագործել անհատական գնահատման ձևաթերթը): Տրամադրել հետադարձ կապ բարելավման ենթակա հարցերի վերաբերյալ:
- Կազմել իրականացված աշխատանքի վերլուծություն, առանձնացնել բարելավման ենթակա աշխատանքները:

- Ներկայացնում են կազմված զեկույցը, պատասխանում հարցերին:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ

Դասարան՝			
Խմբի անվանումը՝			
Խմբի անդամները՝			
Գնահատման չափանիշներ	**Գնահատման միավորային սանդղակ**	**Գնահատական**	**Հավելյալ նշումներ**
Կատարված հետազոտական աշխատանքի համապատասխանությունը նպատակին	0՝ չի համապատասխանում		
	1՝ մասամբ է համապատասխանում		
	2՝ հիմնականում համապատասխանում է		
	3՝ լիովին համապատասխանում է		
Իրականացրած ներկայացման բաղադրիչների համապատասխանությունը հիմնական բաղադրիչներին	0՝ չի համապատասխանում		
	1՝ մասամբ է համապատասխանում		
	2՝ հիմնականում համապատասխանում է		
	3՝ լիովին համապատասխանում է		
Կատարված աշխատանքի ներկայացման հմտությունները և պաշտպանությունը	0.5՝ բավարար		
	1՝ հիմնականում լավ		
	1.5՝ լավ		
	2՝ գերազանց		
Խմբային աշխատանքը, աշակերտների համագործակցության արդյունավետության մակարդակը	0.5՝ բավարար		
	1՝ հիմնականում լավ		
	1.5՝ լավ		
	2՝ գերազանց		
Ընդամենը՝			

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ

Գնահատումն իրականացնում է ուսուցիչը

Դասարան՝

Աշակերտի անուն ազգանուն՝

Գնահատման չափանիշներ	Գնահատման միավորային սանդղակ	Գնահատական	Հավելյալ նշումներ
Աշակերտի բովանդակային ակտիվությունը նախագծային աշխատանքն իրականացնելիս	0՝ ակտիվ չէր		
	1՝ երբեմն ակտիվ էր		
	2՝ հաճախակի ակտիվ էր		
	2.5՝ շատ ակտիվ էր		
Աշակերտի ինքնուրույնությունը և նախաձեռնողականությունը նախագծային աշխատանքն իրականացնելիս	0՝ բացակայում էր		
	1՝ դրսևորվել է հազվադեպ		
	2՝ հիմնականում առկա էր		
	2.5՝ եղել է ինքնուրույն և ցուցաբերել մի շարք նախաձեռնություններ		
Խմբային աշխատանքի միավոր	Առավելագույնը՝ 5 միավոր (կազմում է խմբային աշխատանքի միավորի 50%-ը)		

Ընդամենը՝

ԳԼՈՒԽ

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

3.1 ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.2 ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՐԻՔ ԵՎ ԱՆՁԻ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

3.3 ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

3.4 ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻ

3.5 ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՁՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

3.6 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.7 ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱԶԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՍՅՈՒՆ

3.8 ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

3.1 ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՁԱՓՈՐՈՇԻՉ

Ա մակարդակ՝ Բացատրի ազատ և արդար ընտրությունների կարևորությունը իր և հասարակության համար: Կարողանա հիմնավորել սեփական տեսակետը:

Բ մակարդակ՝ Ներկայացնի ազատ ընտրությունը որպես քվեարկության միջոցով որոշումներ կայացնելու ձև: Վերլուծի ընտրություններին գիտակցված մասնակցության ազդեցությունը ժողովրդավարական հասարակության կայացման գործում:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների անցկացման գրավականներից կարևորագույնը կոռուպցիայից զերծ ընտրական գործընթացների կազմակերպումն է: Ընտրական գործընթացներում կարող են տեղ գտնել բազմապիսի խախտումներ, որոնք հիմնականում քաղաքական կոռուպցիայի դրսևորումներ են, որտեղ քաղաքական որոշումներ կայացնողները օգտագործում են քաղաքականությունները, ինստիտուտները և կանոնակարգերը իրենց իշխանությունը, հարստությունը և կարգավիճակը պահպանելու համար:[73]

Ընտրությունների ընթացքում կարող են օգտագործվել բազմապիսի կոռուպցիոն մեթոդներ: Օրինակ՝ ընտրողներին կաշառելը, հակառակորդ թեկնածուներին կաշառելը՝ թեկնածությունը հանելու նպատակով, ընտրական հանձնաժողովների անդամներին կաշառելը՝ խախտումներ կազմակերպելու կամ դրանց վրա աչք փակելու նպատակով, կեղծ դիտորդական առաքելությունների անցկացումը՝ նախընտրելի քաղաքական ուժի օգտին հայտարարություններ անելու համար, ընտրություններին մասնակցող կուսակցությունների և թեկնածուների ապօրինի ֆինանսավորումը և այլն:

Ընտրական գործընթացների աղավաղումը, կեղծարարությունը և տարբեր դերակատարների անբարեվարք գործելակերպը կարող են կասկածի տակ դնել ընտրական գործընթացի օրինականությունը և հուսալիությունը, ուստի չափազանց կարևոր է ընտրություններն անցկացնել այնպես, որ քաղաքացիները վստահեն գործընթացի ազնվությանն ու թափանցիկությանը, և որ ամենակարևորն է՝ արդյունքների լեգիտիմությանը:

Իրական ժողովրդավարական ընտրությունները պետք է համապատասխանեն **հինգ սկզբունքների՝** համընդհանրության, հավասարության, ազատության, գաղտնիության և ուղղակի քվեարկության: Այս սկզբունքներից յուրաքանչյուրի պահպանումը կարևոր

---

73 ԹԻՀԿ Հակակոռուպցիոն բառարան, Քաղաքական կոռուպցիա, https://transparency.am/glossary/term/political_corruption (դիտված՝ 1.11.2023 թ.)

նախապայման է կոռուպցիան ընտրական գործընթացներում բացառելու համար: Օրինակ՝ գաղտնիության սկզբունքը ընտրակաշառքի դեմ պայքարի միջոցներից է: Եթե ընտրողները գաղտնի են քվեարկում, ընտրակաշառք առաջարկողները հնարավորություն չեն ունենում վերահսկելու ընտրողների քվեարկությունը և ընտրակաշառք առաջարկելն անիմաստ է դառնում: Ընտրողներն, իրենց հերթին, պետք է հրաժարվեն նման առաջարկներից, գիտակցելով, որ ընտրակաշառքի միջոցով իրենց ձայնը «վաճառելը» հանցագործություն է և ապագայում վնասում է իրենց իսկ քաղաքացիական պահանջատիրության արտահայտմանը:

ԹԻՀԿ, 2023 թ, աղբյուր՝ transparency.am

Ազատության սկզբունքը ենթադրում է, որ ընտրողներին պետք է թույլատրվի քվեարկել առանց բռնության սպառնալիքի կամ որոշակի թեկնածուի կամ կուսակցությանն աջակցելու պարտավորության: Ընտրողներն իրենց կամքը պետք է ձևավորեն նախ և առաջ մանրամասն ուսումնասիրելով կուսակցությունների նախընտրական ծրագրերը, գնահատելով դրանց արդյունավետությունը և իրատեսությունը, ինչպես նաև ուշադրություն դարձնելով թեկնածուների հմտություններին և բարեվարքությանը:

Հավասարության սկզբունքը վերաբերելի է ինչպես ընտրողներին, այնպես էլ ընտրություններին մասնակցող թեկնածուներին: Վերջիններիս դեպքում հավասարության սկզբունքը կարող է խաթարվել վարչական ռեսուրսի չարաշահման միջոցով:

Վարչական ռեսուրսները մարդկային, ֆինանսական, նյութական և այլ ոչ նյութական ռեսուրսներն են, որոնց տիրապետում են իշխող կուսակցությունները, թեկնածուները և քաղաքացիական ծառայողները ընտրությունների ընթացքում՝ հանրային հատվածի աշխատողների, ֆինանսների և այլ բաշխումների հանդեպ իրենց վերահսկողության և հանրային ենթակառուցվածքների հասանելիության բերումով: Վարչական ռեսուրսների չարաշահումը քաղաքացիական ծառայողների, ինչպես նաև իշխող կուսակցությունների և թեկնածուների անօրինական գործողությունն է՝ օգտագործելու իրենց պաշտոնական դիրքը և կապերը պետական ինստիտուտների հետ՝ ընտրությունների արդյունքի վրա ազդելու նպատակով: Այն անարդար առավելություն է տալիս իշխող կուսակցություններին և թեկնածուներին իրենց մրցակիցների հանդեպ: Այսպիսով, խախտվում է ոչ միայն ընտրական գործընթացներում հավասարության սկզբունքը, այնպես էլ ընտրողի՝ կարծիք ձևավորելու ազատությունը:[74]

74 Եվրոպայի Խորհուրդ, «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» (Վենետիկի) հանձնաժողովի «Ընտրական գործընթացներում վարչական ռեսուրսի չարաշահման մասին» զեկույցը, 2013 թ.

Վարչական ռեսուրսի չարաշահման օրինակներ են՝

ԹԻՀԿ, 2023 թ, աղբյուր՝ transparency.am

- *Ընտրողների աջակցությունը ստանալու համար քաղաքապետը, որը նաև գործող իշխանության թեկնածուն է, ընտրություններից մի քանի ամիս առաջ նախաձեռնում է մի շարք ենթակառուցվածքային ծրագրերի իրականացում (ասֆալտապատում, խաղահրապարակների կառուցում, կանաչ գոտիների ստեղծում), որոնք նախապես չեն սահմանվել համայնքի տարեկան ծրագրով:*
- *Համայնքում կառուցվում է դպրոց, որը շահագործման չի հանձնվում մինչև նախընտրական քարոզարշավը, որպեսզի այդ ընթացքում հանդիսավոր կերպով կատարվի բացման արարողություն և ընդգծվի թեկնածուի ներդրումը համայնքի զարգացման մեջ:*
- *Ընտրարշավի միջոցառումների համար թեկնածուներն օգտագործում են նյութական ակտիվներ, որոնք պատկանում են համայնքին, օրինակ՝ ծառայողական մեքենաներ, տարածքներ կամ սարքավորումներ:*
- *Հանրային ծառայողների կամ պետական աշխատողների (օրինակ՝ ուսուցիչների) վրա ճնշում է գործադրվում՝ որոշակի թեկնածուների օգտին քվեարկելու կամ քարոզարշավի միջոցառումներին կամ հանրահավաքներին մասնակցելու համար: Ճնշումը, սովորաբար, գործադրվում է աշխատանքից ազատելու սպառնալիքների միջոցով:*
- *Հանրային հեռուստատեսությամբ էապես ավելի երկար ժամանակ է հատկացվում լուսաբանելու իշխող և նրան հարող կուսակցությունների քարոզարշավը:*
- *Մասնավոր ընկերությունների ղեկավար կազմին պարտադրվում է իշխող կուսակցության նախընտրական հիմնադրամին կատարել մուծումներ՝ ձևավորելով ակնկալիք, որ նրանց տնտեսական գործունեության ընթացքում խոչընդոտներ չեն լինի կամ որ ներդրված գումարը հետագայում նրանց կվերադարձվի որևէ գույքի կամ արտոնության տեսքով:*
- *Ընտրությունների ընթացքում անհիմն վարույթներ կամ քրեական գործեր են հարուցվում ընդդիմադիր թեկնածուներին պատկանող կամ նրանց փոխկապակցված մասնավոր ընկերությունների դեմ:*[75]

Այսպիսով, ընտրությունները չպետք է կազմակերպվեն որևէ թեկնածուի կամ ընտրողի համար առավելություն ստեղծելու եղանակով: Բոլոր թեկնածուները և կուսակցությունները պետք է արժանանան նույն վերաբերմունքին, այդ թվում՝ լրատվամիջոցների և հանրային միջոցների հասանելիության առումով: Շահագրգիռ բոլոր կողմերը պետք

75 Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես, Վարչական ռեսուրսներ և արդար ընտրություններ, 2019, էջ 19-23, https://rm.coe.int/booklet-administrative-resources-and-fair-elections-public-ethics-seri/1680a7943f (դիտված՝ 14.09.2023 թ.)

ԹԻՀԿ, 2021 թ, աղբյուր՝ transparency.am

է հավասար հնարավորություն ունենան իրենց թեկնածությունն առաջադրելու և հավասար հնարավորություններ ապահովող միջավայրում ազատ մրցակցելու համար: Ընտրողները չպետք է ենթարկվեն ճնշման, իսկ պետական իշխանությունները պետք է պահպանեն չեզոքություն՝ հնարավորություն տալով ընտրողներին կատարելու տեղեկացված ընտրություն՝ առանց անհարկի միջամտության:[76]

Ընտրությունների կառավարման և վերահսկման անկախ մարմնի, ազատ և անկախ լրատվամիջոցների առկայությունը, ինչպես նաև միջազգային և ազգային կազմակերպությունների կողմից ընտրությունների անաչառ դիտորդությունը նպաստում են ընտրական գործընթացների արդարությանը: Դիտորդությունն օգնում է ոչ միայն կանխել ընտրությունների կեղծման դեպքերը, այլև հանրությանն անաչառ տեղեկություններ հայտնել ընտրությունների ընթացքի և հայտնաբերված խախտումների մասին:

Ընտրությունների ընթացքում դիտորդություն է իրականացնում օրինակ «Ականատես»[77] դիտորդական առաքելությունը, որը հիմնվել է 2018 թ. հայաստանյան 4 հասարակական կազմակերպությունների կողմից: «Ականատես»-ի նպատակն է հանրային անկողմնակալ հսկողության միջոցով նպաստել ազատ և արդար ընտրությունների անցկացմանը, ընտրական գործընթացների օրինավորությանը: «Ականատես»-ը գործում է անկախ՝ պահպանելով անկողմնակալության սկզբունքը: Ցանկացած չափահաս քաղաքացի կարող է միանալ Ականատեսին և նպաստել ընտրությունների օրինավորության պահպանմանը:

Եվ վերջում հարկ է նշել, որ ընտրությունների օրինավորությունից է կախված նաև ընտրողների մասնակցության մակարդակը: Ընտրությունների որակը չպետք է կասկածներ առաջացնի, այլապես քաղաքացիները կարող են չհետաքրքրվել և չմասնակցել ընտրություններին: Կարևոր է, որ այնպիսի մտահոգությունները, ինչպիսիք են՝ «Ես գիտեմ, որ իշխող կուսակցությունն է հաղթելու, դրա համար չեմ մասնակցի ընտրություններին», «Իմ ձայնը ոչինչ չի կարող փոխել, ամեն ինչ վաղուց որոշված է», «Արդեն մեկ ամիս է ասում են, թե ով է ընտրվելու» փոխարինվեն «Ես, որպես պատասխանատու քաղաքացի, պետք է մասնակցեմ ընտրություններին, որովհետև ե՛ս եմ իմ քվեի տերը և ես պե՛տք է մասնակցեմ որոշումների կայացմանը» սկզբունքներով:

76 Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես, Վարչական ռեսուրսներ և արդար ընտրություններ, 2019, էջ 13-14, https://rm.coe.int/booklet-administrative-resources-and-fair-elections-public-ethics-seri/1680a7943f (դիտված՝ 14.09.2023 թ.)

77 «Ականատես» դիտորդական առաքելության գործունեությանը կարող եք ծանոթանալ նախաձեռնության պաշտոնական սոցցանցային էջում՝ https://www.facebook.com/akanatesditord

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Ընտրակաշառքը

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կկարողանան տարբերակել ընտրախախտումները և ներկայացնել դրանց վտանգավորությունը հասարակության համար:

Նկարագրություն

Սովորողներից կազմել զույգեր և տրամադրել ստորև ներկայացված իրավիճակը և հարցերը: Անհրաժեշտ է, որ զույգերը 5 րոպեի ընթացքում կարդան և քննարկեն իրավիճակը՝ պատասխանելով հարցերին: Զույգերով աշխատանքից հետո քննարկել այն սովորողների հետ, լսել զույգերի պատասխանները և ամփոփել աշխատանքը:

Իրավիճակ

... Հարցին, թե արդյոք այդ գումարը նախատեսված էր ընտրողներին կաշառելու համար, կուսակցության ղեկավարն ասաց. «Մենք փող ենք տալիս, որպեսզի ընտրողները չանցնեն այլ թեկնածուների կողմը, որոնք կարող են փողով կաշառել նրանց: Մենք գիտենք, թե ովքեր են մեր հավանական ընտրողներն ու աջակիցները, ուստի մենք նրանց գումար ենք տալիս՝ ամրապնդելու համար իրենց թեկնածուի աջակցությունը»:

Հարցեր

1. Ի՞նչ եք կարծում, արդյոք նման քայլը օրինական է: Եթե ոչ՝ ինչո՞ւ:
2. Նման պրակտիկայի շարունակության դեպքում ի՞նչ հետևանքներ կլինեն:
3. Ո՞վ է մեղավոր՝ ընտրո՞ղը, թեկնածո՞ւն, թե՞ երկուսն էլ միասին: Ինչո՞ւ:
4. Ի՞նչ կարելի է անել այս իրավիճակը փոխելու համար:
5. Ի՞նչ պետք է անեն թեկնածուները/քաղաքական ուժերը, որ ընտրողներն իրենց ընտրեն:

2 «Կեղծված ընտրություններ». ներկայացում

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կճանաչեն Հայաստանում տարածված ընտրախախտումները և ստեղծագործաբար կներկայացնեն դրանք:

Նկարագրություն

Սովորողներից կազմել 4-5 հոգանոց խմբեր: Խմբերից պահանջվում է դերային խաղի/փոքրիկ ներկայացման միջոցով ներկայացնել Հայաստանում տարածված մեկ կոռուպցիոն ընտրախախտում: Ընտրախախտումների տեսակները չպետք է կրկնվեն: Ընտրախախտումն ընտրելու, դերերը բաժանելու և նախապատրաստվելու համար խմբերին հատկացվում է 5-6 րոպե, իսկ ներկայացման համար՝ 1-2 րոպե ժա-

մանակ: Ներկայացումների ավարտից հետո ամփոփել աշխատանքը և քննարկել ընտրախախտումների բացասական հետևանքները:

3 Մեր քվեները

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կգտնեն ընտրողների դրդապատճառները և կտարբերակեն դրանք ըստ ժողովրդավարական հասարակության համար դրանց կարևորության:

Նկարագրություն

Սովորողներից կազմել 4-5 հոգանոց խմբեր և յուրաքանչյուր խմբին տալ ընտրողների՝ քվեարկության մասին ասված երկուական միտք (տե՛ս ստորև), որոնք կարող են կրկնվել այլ խմբերում: Հանձնարարել 4 րոպեի ընթացքում ուսումնասիրել ընտրողների արտահայտած մտքերը, քննարկել այն և գտնել դրանցից յուրաքանչյուրի դրդապատճառը (հնարավոր է առկա լինի մեկից ավելի դրդապատճառներ): Խմբերում աշխատանքն ավարտելուց հետո դրանցից յուրաքանչյուրը կներկայացնի իրեն բաժին հասած միտքը և դրա դրդապատճառները: Դրդապատճառները քննարկելուց հետո անհրաժեշտ է առաջադրանքն ամփոփել՝ սովորողներին ուղղելով հետևյալ հարցը՝ «Ձեր կարծիքով, ընտրողներից ո՞վ է լավագույնս հասկանում, թե ինչպես պետք է գործեն ժողովրդավարական համակարգերը»:

Ընտրողները քվեարկության մասին

Արամ: Ես քվեարկեցի Հակոբյանի օգտին, քանի որ նա ասաց, որ 10.000 դրամ կտա յուրաքանչյուրին, ով իրեն ձայն կտա:

Անի: Ես չեմ քվեարկել: Նրանք բոլորը կոռումպացված են: Նույնիսկ եթե նրանք ընտրվելիս լավ բաներ են ասում, նրանք միայն իրենց մասին են մտածում:

Աբգար: Ես քվեարկել եմ բոլորի դեմ: Դա պարզապես ժամանակի կորուստ է:

Կարինե: Ես քվեարկեցի Աբրահամյանի օգտին, քանի որ նա լավագույնն էր վատերի մեջ: Ես նրանցից ոչ մեկին չեմ սիրում:

Հակոբ: Ես քվեարկել եմ Ալոյանի օգտին, քանի որ նա շատ հարուստ է և հզոր: Նա սովորել է Մոսկվայի համալսարանում՝ ինչ-որ մասնագիտությամբ: Մեզ պետք է, որ իր նման մարդիկ ասեն մեզ, թե ինչ անենք և հոգ տանեն մեր մասին:

Աստղիկ: Ես քվեարկել եմ Կարապետյանի օգտին, քանի որ նա լավ գաղափարներ ունի այն մասին, թե ինչպես շատ զբոսաշրջիկներ բերել մեր երկիր և բարելավել տնտեսությունը: Կարծում եմ նաև, որ փաստաբանի իր փորձը կօգնի իրեն կատարել իր աշխատանքը:

Պետրոս: Ես քվեարկել եմ Մանուկյանի օգտին, քանի որ իմ ընկերը և ընտրական հանձնաժողովից ինչ-որ մեկն ինձ ասաց, որ նա լավն է, և ես պետք է քվեարկեմ նրա օգտին: Իրականում ես երբեք չեմ հանդիպել նրան կամ լսել նրա մասին:

Զարուհի: Ես քվեարկեցի Մխիթարյանի օգտին, քանի որ նա ասաց, որ ինքը մի քանի նոր դասարաններ կկառուցի մեր դպրոցի համար իր պատգամավորական աշխատավարձով:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Ընտրությունները և կոռուպցիան. 300 րոպե կոռուպցիայի մասին

Տևողությունը՝ 4 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում ներկայացվում է, թե ընտրական որ չարաշահումներն են համարվում կոռուպցիոն, և օրենսդրական ինչ փոփոխություններ են արվել այդ գործընթացում կոռուպցիայի կանխարգելման համար:

2 Դիտորդները՝ որպես ժողովրդավարության պաշտպաններ

Տևողությունը՝ 2 րոպե

Նկարագրություն՝ Տեղեկատվական հոլովակում ներկայացվում է դիտորդների գործառույթները, նրանց կարևորագույն դեր ժողովրդավարության կայացման գործում:

3 Վարչական ռեսուրսի օգտագործում

Տևողությունը՝ 2 րոպե

Նկարագրություն՝ Անիմացիոն տեսանյութում ներկայացվում է, թե ինչ է վարչական ռեսուրսը և որոնք են դրա օգտագործման դրսևորումները:

4 Քաղաքացի դիտորդ

Տևողությունը՝ 16 րոպե

Նկարագրություն՝ տեղեկատվական հոլովակում ներկայացնում են ընտրությունների վերահսկման ընթացքում ի հայտ եկած դժվարությունները, խնդիրները և դիտորդական աշխատանքի առանձնահատկությունները:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 300 րոպե կոռուպցիայի մասին. հաղորդում 3

Տևողությունը՝ 25 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում փորձագետները ներկայացնում են ընտրությունների ժամանակ կոռուպցիոն դրսևորումները և դրանց կանխարգելման մեխանիզմները:

2 Մեր բրենդը ճգնաժամն է (անգլերեն)

Տևողությունը՝ 1 ժամ 47 րոպե

Նկարագրություն՝ Գեղարվեստական ֆիլմի սյուժեն հիմնված է իրական դեպքերի վրա, որոնք տեղի են ունեցել 2002 թվականին՝ Բոլիվիայում նախագահական ընտրությունների ժամանակ:

3.2 ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՐԻՔ ԵՎ ԱՆՁԻ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՁԱՓՈՐՈՇԻՉ

Ա մակարդակ՝ Բացատրի հանրային բարիքի ստեղծման մեջ անհատի ինքնագիտակցության և պատասխանատվության կարևորությունը:

Բ մակարդակ՝ Հիմնավորի ժողովրդավարական իշխանությունը՝ որպես հանրային բարիքի ստեղծման երաշխավոր:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Կոռուպցիան խաթարում է հանրային բարիքի արդար և արդյունավետ կառավարման գործընթացը, հանգեցնում է հասարակության կարիքներից չբխող որոշումների կայացմանը, բարձրացնում գներն ու ծախսերը, մեծացնում ծառայությունների և ապրանքների անորակ լինելու հավանականությունը՝ վտանգելով երկրի կայուն զարգացումը, շրջակա միջավայրը և մարդկային կյանքը:

Հանրային բարիքի կառավարման, հասարակության անդամներին դրա հասանելիության ապահովման գործընթացում կոռուպցիան շարունակում է լինել տարածված խնդիր ամբողջ աշխարհում: Դրա վառ օրինակներից է հողային կոռուպցիան, որն արտահայտվում է հողի կառավարման գործընթացներում կաշառք վճարելուց մինչև մարդկանց իրենց հողից վտարելը՝ դրանք սոցիալապես ապահովված սեփականատերերին փոխանցելու միջոցով: Ողջ աշխարհում յուրաքանչյուր հինգերորդը կաշառք է վճարել հողային ծառայություններից օգտվելու համար:[78] «Հողային» կոռուպցիան կարող է հանգեցնել ընդհուպ հանրային նշանակություն ունեցող ճարտարապետական կառույցների ոչնչացմանը՝ կոռուպցիոն ամենատարբեր եղանակներով վերջիններիս տարածքը անհիմն և ոչ մասնակցային եղանակով հանրային գերակա շահ ճանաչելու և դրանք ոչընչացնելու միջոցով:

Կառուցապատող կազմակերպությունը, որն ուզում էր բազմահարկ բիզնես համալիր կառուցել քաղաքի հին թաղամասում, կոռուպցիոն գործարքի մեջ մտավ քաղաքային իշխանությունների հետ, որպեսզի նրանք հանրային գերակա շահ ճանաչեն այդ թաղամասը: Արդյունքում՝ մեկդարյա պատմամշակութային արժեք ունեցող տները քանդվեցին, իսկ բնակիչները ստացան ոչ համարժեք փոխհատուցում և հայտնվեցին փողոցում:

78 Transparency International the global coalition against corruption, Land Corruption, Our priorities, https://www.transparency.org/en/our-priorities/land-corruption (դիտված՝ 25.07.2023 թ.)

Կոռուպցիայի ռիսկեր կարող են լինել բոլոր բնական ռեսուրսների կառավարման գործընթացներում՝ սկսած չվերականգնվող ռեսուրսներից, ինչպիսիք են նավթը, գազը, օգտակար հանածոները, ստորերկրյա ջրերը, մինչև վերականգնվող ռեսուրսներ, ինչպիսիք են անտառները, կենդանիները և մակերևութային ջուրը: Կոռուպցիոն գործարքների առիթ կարող է լինել ինքնին բնական ռեսուրսների առկայությունը, քանի որ տարբեր խմբեր սկսում են պայքարել դրանք ամեն գնով ձեռք բերելու համար: Մյուս կողմից, կոռուպցիոն դրսևորումներ կարող են տեղ գտնել հենց բնական ռեսուրսների կառավարման գործընթացներում, ինչը կարող է հանգեցնել դրանց ոչ օպտիմալ օգտագործման, տնտեսական հետընթացի և/կամ աղքատության աճի: Արդյունքում՝ բնական ռեսուրսները հանրային շահը սպասարկելու փոխարեն ծառայում են միայն փոքր, ազդեցիկ, կոռումպացված խմբերին:

Հանրային բարիքի կառավարման գործընթացում կոռուպցիան կարող է հանգեցնել մշակութային արժեքների ոչնչացումից, պետական միջոցների վատնումից մինչև մարդկանց կյանքերի կորուստի:

Ճանապարհների վերանորոգման գործընթացում տեղ գտած կոռուպցիոն դրսևորումների պատճառով կառուցվեց անորակ մայրուղի, ինչի հետևանքով յուրաքանչյուր ամիս այդ մայրուղում տեղի է ունենում նվազագույնը 15 ավտովթար՝ որից 5-ը մահվան ելքով:

Կոռուպցիան կարող է հանգեցնել նաև չզատվող հանրային բարիքների մատչելիության սահմանափակմանը:

Ազգային նշանակության ճարտարապետական գլուխգործոցը կարող է սեփականաշնորհվել, քանի որ բարձրաստիճան պաշտոնյան կաշառքի դիմաց տվել է համապատասխան թույլտվություն և կազմակերպել կադաստրային գրանցում:



ԹԻՀԿ, 2023 թ, աղբյուր՝ transparency.am

Կոռուպցիայի վնասակարությունը հանրային բարիքի համար պայմանավորված է նաև նրանով, որ դրա հետևանքով կարևոր որոշումները (հանրային շահերից ելնելով) կայացվում են մասնավոր դրդապատճառներով՝ հաշվի չառնելով հասարակության և քաղաքացիների վրա ունեցած ազդեցությունները:

Համայնքապետը, որի որդին կահույքի արտադրամասի սեփականատեր է, որոշում է առաջնահերթություն տալ մանկապարտեզի համար նոր կահույքի գնմանը՝ այն պարագայում, երբ մանկապարտեզի գույքը նոր էր և գտնվում էր բարեկարգ վիճակում, իսկ մանկապարտեզի շենքը լիովին անբարեկարգ էր, քանի որ վերջին անգամ վերանորոգվել էր 20 տարի առաջ: Համայնքապետարանը հայտարարում է մրցույթ կահույքի գնման համար, որում հաղթում է համայնքապետի որդու ընկերությունը:

Այդպիսով պաշտոնյաները, պայմանավորված իրենց զբաղեցրած դիրքով, մեծամասշտաբ ռեսուրսներին հասանելիություն ու դրանց նկատմամբ վերահսկողության են ստանում, որն էլ թափանցիկության, հաշվետվողականության բացակայության պարագայում բարձրացնում է նրանց կողմից այդ ռեսուրսների չարաշահման ռիսկը:

Կոռուպցիան հանգեցնում է նաև պետության կողմից հանրային բարիքների տրամադրման նվազմանը, քանի որ պետական պաշտոնյաների կողմից պետական միջոցների չարաշահումը քաղաքացիներին թողնում է ավելի քիչ հանրային ապրանքներ ձեռք բերելու հնարավորություն՝ պետական բյուջեի սղության պատճառով: Երբ տնտեսական գործունեությամբ զբաղվող անհատները կամ կազմակերպությունները կոռուպցիայի միջոցով խուսափում են հարկերից կամ ստանում հարկային արտոնություններ, նվազում են բյուջե վճարվող հարկային եկամուտները: Այսինքն՝ կոռուպցիան կարող է հանգեցնել բյուջետային անբարենպաստ հետևանքների, որի արդյունքում հարկերը նախատեսվածից քիչ կհավաքագրվեն, և պետության կողմից պլանավորվող ծրագրերի մի մասը չի կատարվի:

Հանքարդյունաբերությամբ զբաղվող ընկերության իրական սեփականատերը ԱԺ պատգամավոր է, որը, օգտագործելով իր դիրքը և կապերը, վճարում է օրենքով սահմանված հարկերի միայն 30%-ը՝ թաքցնելով ընկերության շրջանառության մեծ մասը: Արդյունքում պետական բյուջե չեն ուղղվում հսկայական գումարներ, որոնք կարող էին օգտագործվել հանրային ծառայությունների բարելավմանն ուղղված պետական ծրագրերի ֆինանսավորման համար:

Եթե կոռուպցիան հանգեցնի մասնավոր ներդրումների նվազմանը, ապա հավանական է, որ քաղաքացիները բախվեն նաև հանրային բարիքների ընդհանուր մակարդակի անբավարարության:

Կոռուպցիոն եղանակներով բյուջեի յուրացման պատճառով պետական բյուջեի միջոցների խիստ սղություն առաջացավ և որոշվեց կրճատել ոստիկանների 40%-ին: Արդյունքում՝ երկրում հանցավորության աճի պայմաններում բնակչությունն անվտանգային լուրջ խնդիրների բախվեց ոստիկանների անբավարար քանակի պատճառով:

Կոռուպցիան ազդում է ինչպես պետական բյուջեի եկամուտների նվազման, այնպես էլ բյուջեում հավաքագրված միջոցների ոչ արդյունավետ ծախսի վրա՝ հանգեցնելով հանրային բարիքների որակի անկման և հասարակության կարիքների չբավարարման:

Պետական ինստիտուտների աշխատանքի հաշվետվողականությունը, թափանցիկությունը և պետական իշխանության նկատմամբ հասարակության յուրաքանչյուր անդամի պահանջատեր և հետևողական վարքագիծը կարող են անկյունաքարային նշանակություն ունենալ հանրային ռեսուրսների կառավարման գործընթացում կոռուպցիոն դրսևորումների նվազման գործում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Կամուրջի կոռուպցիոն ստվերները

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կպատկերացնեն հանրային բարիքների և հասարակության վրա կոռուպցիայի ազդեցությունը:

Նկարագրություն

Սովորողներից կազմել 4-5 հոգուց կազմված խմբեր և յուրաքանչյուր խմբին տրամադրել ստորև ներկայացվող պատմությունը: Խմբերը 7 րոպեի ընթացքում պետք է.

- ծանոթանան իրավիճակին,
- պատասխանեն հարցերին,
- առաջարկեն ներկայացված իրավիճակը հարթելու, պետության պատճառված վնասները ետ բերելու տարբերակներ:

Խմբային աշխատանքից հետո խմբերը պատասխանում են հարցերին, քննարկում իրավիճակը հարթելու, պատճառված վնասը վերականգնելու տարբերակները:

Իրավիճակ

Ճանապարհի վրա գտնվող կամուրջը ջրհեղեղից էապես տուժել էր: Կառավարությունը կամուրջը վերանորոգելու համար հայտարարում է մրցույթ, որին շինարարական կազմակերպությունները դիմում են՝ ներկայացնելով վերանորոգման արժեքը: Մրցութային գործընթացը վերահսկելու և հաղթողին որոշելու նպատակով ստեղծվում է գնահատման հանձնաժողով: Մինչ կատարվելիք ծախսերի նախնական հաշվի ստացումը, հանձնաժողովի նախագահը հանդիպում է ընկերություններից մեկի ներկայացուցիչների հետ, որը ցանկանում էր դիմել մրցույթին: Հանդիպումից երկու օր անց ընկերությունը դիմում է մրցույթին մասնակցելու համար և կամրջի վերանորոգման համար պահանջում ամենաբարձր գինը, որն էապես ավելին էր հաջորդ ամենաբարձր արժեքը ներկայացրած ընկերության առաջարկից: Հանձնաժողովը հաղթող է ճանաչում ամենաբարձր գինը ներկայացրած կազմակերպությանը և նրա հետ պայմանագիրը: Հաղթող ընկերությունը մրցութային հանձնաժողովի անդամներին գաղտնի վճարում է հինգ միլիոն ՀՀ դրամ: Վերանորոգումն ավարտելուց երեք տարի հետո կամրջով անցնող երկաթուղին վթարվում է՝ կամրջի վերանորոգման ընթացքում շինարարական և տեխնիկական նորմերի չպահպանման պատճառով:

Հարցեր

1. Ի՞նչ հանրային բարիքներ են նկարագրվում պատմությունում:
2. Ի՞նչ կոռուպցիոն դրսևորում է ներկայացված պատմությունում:
3. Ինչպիսի՞ն է կոռուպցիայի ազդեցությունը ներկայացված հանրային բարիքների և հասարակության վրա:
4. Ինչպե՞ս կարելի է կանխարգելել նման իրավիճակների կրկնությունը:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Ոսկու գինը

Տևողությունը՝ 2 րոպե

Նկարագրություն՝ Անիմացիոն տեսանյութում ներկայացվում է, թե հանրային բարիքը կոռուպցիայի արդյունքում ինչպես է տուժում և վնասում հասարակությանը:

2 Ի՞նչ է պաշտոնական կեղծիքը

Տևողությունը՝ 3 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում ներկայացվում է, թե տարբեր պաշտոնյաներ, օգտվելով իրենց դիրքից, ինչպես են հոգուտ իրենց օտարում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 300 րոպե կոռուպցիայի մասին. հաղորդում 1

Տևողությունը՝ 25 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում ներկայացվում է, թե ինչ արժեցավ Հայաստանի համար հայտնի «Հյուսիս-հարավ» ճանապարհային նախագծում հայտնաբերված կոռուպցիան, և ինչը կարող է արդյունավետ լինել ճանապարհաշինության ոլորտում կոռուպցիայի կանխարգելման համար:

2 300 րոպե կոռուպցիայի մասին. հաղորդում 11

Տևողությունը՝ 26 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում ներկայացվում է կոռուպցիայի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, և քննարկվում են հայաստանյան օրինակներ:

3 Ընդդիմությունը (անգլերեն)

Տևողությունը՝ 1 ժամ 30 րոպե

Նկարագրություն՝ Վավերագրական ֆիլմում ներկայացվում է, որ Պապուա Նոր Գվինեայի բնիկ համայնքը ստիպված է պայքարել իր բնակության տարածքում ապրելու համար, քանի որ այնտեղ ցանկանում են հինգաստղանի զբոսաշրջային հյուրանոց կառուցել:

4 Մեդիամարտն ընդդեմ կոռուպցիայի. Արա Գալոյան

Տևողությունը՝ 24 րոպե

Նկարագրություն՝ հարցազրույցում ներկայացվում է նորանկախ Հայաստանի առաջին խոշոր կոռուպցիոն սկանդալներից մեկը:

3.3 ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ



ՁԱՓՈՐՈՇԻՉ

Ա մակարդակ՝ Ներկայացնի հանրային քաղաքականության մասնակիցներին, այդ քաղաքականության գործընթացում քաղաքացիների մասնակցության կարևորությունը:

Բ մակարդակ՝ Բացահայտի հանրային քաղաքականության հիմնախնդիրներ, ուսումնասիրի որևէ հիմնախնդիր, առաջարկի այդ հիմնախնդրի լուծման այլընտրանքային տարբերակներ:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Արդի հասարակություններում մարդկանց առօրյա կյանքի բաղադրիչներն այս կամ այն կերպ կրում են պետության կողմից սահմանվող կանոնակարգումների ազդեցությունը: Ժողովրդավարական երկրներում կարևորագույն սկզբունք է այդ կանոնակարգումների ժողովրդավարական բնույթը, այսինքն՝ դրանց մշակման, ընդունման, փոփոխման, վերացման, այլ կերպ ասած՝ իրավաստեղծ գործընթացների մասնակցայնությունը, դրանցում հանրության տարբեր խմբերի շահերի արտացոլումը և հավասարակշռումը: Հանրության ներգրավվածությունը իրավաստեղծ գործընթացին հնարավորություն է տալիս էականորեն նվազեցնելու այդ գործընթացի կոռուպցիոն ռիսկերը՝ այդկերպ կանխարգելելով վարվող քաղաքականության՝ նեղ խմբի շահերին սպասարկելը:

Իրավաստեղծ գործընթացներին հասարակության մասնակցայնությունը կարևորվում է իրավական ակտերի «սոցիալական լեգիտիմության», ներառականության և թափանցիկության ապահովման տեսանկյունից: Կարևոր է, որ քաղաքականություն մշակողներն ընդունվող որոշումներին հանգեն արդարացի և թափանցիկ եղանակով, կարգավորման ենթակա խնդիրներին մոտենան բաց մտքով, հաշվի առնեն խնդիրներին առնչվող շահերը, շահերի բախման իրավիճակներում չգործեն հօգուտ իրենց շահերի, կայացնեն հիմնավորված որոշումներ՝ չվտանգելով հանրային շահը:[79]

Իրավաստեղծ գործընթացի ներկայացված փուլերը թեև տրամաբանորեն հաջորդական են, գործնականում դրանք կարող են ընթանալ զուգահեռ և լինել փոխլրացնող, ինչը իրավական ակտերի անընդհատ կատարելագործումն ապահովելու տեսանկյունից միանգամայն օրինաչափ է:

79 Popelier P., "A Legal Perspective on Regulatory Impact Assessments," International Symposium on Regulatory Impact Analysis, International symposium - Regulatory Impact Analysis, 23-24 November, 2017, https://www.eca.europa.eu/sites/regulatory-impact-analysisconference/EN/Documents/Artcicle%20Popelier.pdf (դիտված՝ 25.07.2023 թ.)

Իրավաստեղծ գործընթացում հանրության տարբեր շրջանակների ներգրավման տեսանկյունից կարելի է առանձնացնել հինգ հիմնական թիրախային խումբ: Դրանք են.

- **փորձագիտական համայնք՝** առնչվող ոլորտների անհատ մասնագետներ, գիտակրթական և գիտահետազոտական կառույցներ.
- **ազդակիր համայնք՝** շահառու անհատներ կամ կազմակերպություններ, որոնք ուղղակիորեն, դրական կամ բացասական առումով կրում են ընդունվող իրավակարգավորումների ազդեցությունը.
- **հասարակական միավորումներ՝** հանրային շահի կամ առանձին խմբերի իրավունքների պաշտպանությամբ զբաղվող շահագրգիռ խմբեր, կազմակերպություններ, քաղաքացիական նախաձեռնություններ.
- **գործարար հատված՝** շահույթ հետապնդող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, իրավակարգավորումներով պայմանավորված բիզնես շահերը պաշտպանող կառույցներ.
- **լայն հանրություն՝** անկախ հետազոտողներ, շահագրգիռ քաղաքացիներ:[80]

Հանրային քաղաքականության փուլերը ներկայացնենք օրինակով.

*Հասարակական կազմակերպությունները, փորձագետները, քաղաքացիները կարող են մասնակցել ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մշակման աշխատանքներին, հանդես գալ առաջարկներով և արտահայտել իրենց համաձայնությունն ու անհամաձայնությունը փաստաթղթի նախագծում տեղ գտած գաղափարների հանդեպ **(մուտք)**: ՀՀ Կառավարությունը, ուսումնասիրելով Արդարադատության նախարարության կողմից ներկայացված Հակակոռուպցիոն ռազմավարության նախագիծը, ինչպես նաև հանրության դիրքորոշումը նախագծի վերաբերյալ՝ քվեարկությամբ որոշում է՝ հաստատել այն, թե ոչ **(որոշման կայացում)**, որից հետո հրապարակվում է Հակակոռուպցիոն ռազմավարության հաստատման մասին որոշումը **(ելք)**: Որոշման կայացումից և դրա հրապարակումից հետո սկսվում է Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացումը համապատասխան պետական գերատեսչությունների կողմից **(իրականացում)**: Հաջորդ փուլում քաղաքացիները, հասարակական կազմակերպությունները դիտարկում և գնահատում են Հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների՝ նախատեսված ժամանակահատվածում և որակով իրականացումը **(գնահատում)**, իսկ կատարած գնահատումների հիման վրա մշակում են իրենց առաջարկությունները, դիտարկումները, տեսակետները և դրանք ներկայացնում Կառավարությանը **(հետադարձ կապ)**:*

Հանրային քաղաքականության գործընթացներին հասարակության մասնակցության ակտիվացման և հասանելիության ապահովման նպատակով վերջին տասնամյակում նկատելի են թվային տեխնոլոգիաների ակտիվ մշակումը և օգտագործումը, որոնք քա-

80 ԹԻՀԿ, Հայաստանի Հանրապետությունում իրավաստեղծ գործընթացների մասնակցայնության ապահովում քաղաքականության վերլուծություն, Երևան, 2023, էջ 4-6, https://transparency.am/hy/publication/pdf/323/10351 (դիտված՝ 25.07.2023 թ.)

ղաքացիների կողմից կարող են օգտագործվել մուտքի, գնահատման և հետադարձ կապի փուլերում:

2016 թվականին ՀՀ արդարադատության նախարարության կողմից ստեղծվեց Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը (e-draft.am), որտեղ տեղադրվում են ՀՀ գերատեսչությունների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը: Միասնական կայքի ներդրմամբ ստեղծվել է առցանց հարթակ, որն ապահովում է գերատեսչությունների կողմից իրավական ակտերի նախագծերը հանրությանը ներկայացնելու, առցանց տարբերակով հանրային քննարկումներ կազմակերպելու հնարավորությունը: Կայքը հնարավորություն է ընձեռում ծանոթանալու տեղադրված նախագծերին, որոնելու նախագծեր, հետևելու դրանց հետագա ընթացքին, ծանոթանալու ներկայացված առաջարկություններին, իսկ կայքում գրանցվելու դեպքում նաև ներկայացնելու առաջարկություններ, ծանոթանալու նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ամփոփաթերթին, ընդունված առաջարկություններին կամ դրանք չընդունելու հիմնավորումներին:[81]

2016 թվականին ստեղծվեց նաև էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը (e-request.am), որի օգնությամբ քաղաքացիները կարող են առցանց եղանակով պետական մարմիններին ուղղել իրենց հարցումը, դիմումը կամ բողոքը և սահմանված ժամկետում ստանալ դրա պատասխանը:

2019 թվականին Երևանի քաղաքապետարանի կողմից գործարկվել է «Ակտիվ քաղաքացի» (activecitizen.yerevan.am) հարթակը՝ նպատակ ունենալով ապահովել մայրաքաղաքի բնակիչների հետ առավել արդյունավետ, սերտ փոխգործակցություն և իրականացնել մասնակցային կառավարում: Հարթակը հնարավորություն է տալիս ստեղծելու ակտիվ քաղաքացիների համայնք, որին Երևանի իշխանությունը ներկայացնում է գաղափարներ՝ դրանք քննարկելու և կատարելագործելու նպատակով:[82]

Հանրային քաղաքականության վերաբերյալ որոշում կայացնելու պահից սկսվում է դրա իրականացումը, որին զուգահեռ տեղի է ունենում այդ գործընթացի գնահատումը[83]: Գնահատողի դերում կարող է լինել ցանկացած քաղաքացի, ուստի անհրաժեշտ է իմանալ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկատվություն ստանալու միջոցները՝ դրանց աշխատանքը գնահատելու համար: ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք[84]: Տեղեկությունները տրամադրվում են հարցման

81 E-draft, Օգտագործման ուղեցույց, https://www.e-draft.am/guide (դիտված՝ 25.07.2023 թ.)

82 Ակտիվ քաղաքացի, Հարթակի մասին, https://activecitizen.yerevan.am/about-us/ (դիտված՝ 25.07.2023 թ.)

83 Գյուլբուդուղյան Ա., Հարությունյան Կ., Թովմասյան Տ., Հասարակագիտություն: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի 9-րդ դասարանի համար, Երևան, «Զանգակ» հրատարակչություն, 2014, էջ 49 http://online.fliphtml5.com/fumf/vwal/#p=50 (դիտված՝ 25.07.2023 թ.)

84 ՀՀ Սահմանադրություն, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118, 2015, https://www.arlis.am/documentview.aspx?docid=102510 (դիտված՝ 25.07.2023 թ.)

միջոցով՝ տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա: Գրավոր հարցման մեջ նշվում է դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը: Գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի: Բանավոր հարցմամբ դիմողը պարտավոր է նախապես հայտնել իր անունը և ազգանունը: Գրավոր հարցման պատասխանը տրվում է հարցումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, եթե հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումը ստանալուց հետո 30-օրյա ժամկետում: Սակայն հարցումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում մարմինը պետք է գրավոր տեղեկացնի դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները: Բանավոր հարցման պատասխանը տրվում է բանավոր՝ հարցումը լսելուց հետո անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում:[85] Այսպիսով՝ մենք կարող ենք տեղեկություններ ստանալ համայնքապետարանի կամ այլ պետական գերատեսչության կողմից իրականացված ծախսերի, կազմակերպած միջոցառումների և աշխատանքային գործունեության այլ մանրամասների մասին: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկատվության ազատությունը նաև թույլ է տալիս վերահսկել այդ մարմինների աշխատանքը և նույնիսկ բացահայտել տեղի ունեցած կոռուպցիոն դրսևորումները:

Հայաստանում համայնքապետարաններից մեկը 6 տարի շարունակ յուրաքանչյուր տարի վճարել է մոտ 15.120.000-16.170.000 ՀՀ դրամ՝ հեռախոսային ծառայություններից օգտվելու համար: Համայնքի բնակիչները, հարցում կատարելով և բացահայտելով հսկայական միջոցների վատնումը, բարձրաձայնեցին խնդրի մասին, որով պայմանավորված՝ հաջորդ տարիների ընթացքում կտրուկ նվազեց այդ ծառայության համար վճարումների չափը՝ հասնելով տարեկան 6.090.000-7.560.000 ՀՀ դրամի:

Տեղեկատվության ազատության մասին խոսելուն զուգահեռ շատ կարևոր է հիշել նաև անձնական տվյալների պաշտպանության մասին, քանի որ անձնական տվյալների պաշտպանության իրավունքը մարդու հիմնական իրավունքներից է և յուրաքանչյուրը պետք է ունենա հնարավորություն պաշտպանելու իրեն վերաբերող տվյալները, թույլ չտալու, որ իր կյանքի, առօրյայի և իրեն վերաբերող ցանկացած տեղեկություն օգտագործվի ապօրինի կերպով:[86] Հայաստանում անձնական տվյալների պաշտպանությունը կարգավորում է Անձնական տվյալների պաշտպանության օրենքը, որը սահմանում է պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային կազմակերպությունների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անձնական տվյալները օգտագործելու, դրանց նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու կարգն ու պայմանները: Այն նպատակ ունի ապահովելու, որ քաղաքացիներին վերաբերող տվյալները մշակվեն արդար և օրինական կերպով, և

85 ՀՀ ԱԳՆ, Տեղեկատվություն, Տեղեկատվության ստացում, Հաճախ տրվող հարցեր տեղեկատվության ազատության մասին https://www.mfa.am/hy/f_a_q/ (դիտված՝ 25.07.2023 թ.)

86 Հայրապետյան Գ., Խաչատրյան Մ., Զգո՛ւյշ, երեխաներ են, Ուղեցույց երեխաների անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ երեխաների և բոլորի համար, Երևան, 2018, էջ 4, https://shorturl.at/8TuOm (դիտված՝ 20.03.2024 թ.)

որ անհատները վերահսկողություն ունենան իրենց սեփական տեղեկատվության նկատմամբ: Այս օրենքի կարևորությունը կայանում է նրանում, որ պաշտպանվի անհատների գաղտնիությունը և կանխվի նրանց անձնական տվյալների չարաշահումը:

Այսպիսով՝ քաղաքացիների ակտիվ և բովանդակային ներգրավվածությունը հանրային քաղաքականության գործընթացներում կարևոր դեր է խաղում ապահովելու համար, որ քաղաքականությունն իսկապես արտացոլի համայնքի կարիքներն ու ցանկությունները:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Հարցնում են աշակերտները

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կկարողանան պատրաստել և ուղարկել հարցումներ ՀՀ պետական մարմիններ:

Նկարագրություն

Սովորողներից կազմել 4-5 հոգանոց խմբեր և հանձնարարել մինչև 10 րոպեի ընթացքում պատրաստել որևէ պետական գերատեսչության գործունեության վերաբերյալ տեղեկատվության հարցման դիմում (դիմումի օրինակը տե՛ս ստորև): Խմբերին առաջարկել դիմումի բովանդակության՝ ստորև ներկայացվող տարբերակները՝ նշելով, որ նրանք ազատ են ընտրելու նաև այլ պետական գերատեսչություններ: Դիմումը կազմելուց հետո անհրաժեշտ է այն քննարկել, խմբագրման անհրաժեշտության դեպքում՝ խմբագրել, որից հետո e-request.am հարթակի կամ տվյալ մարմնի էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկել այն:

Հարցվող տեղեկության տարբերակներ

1. Հարցում համայնքապետարան՝ նախորդ տարվա ընթացքում կատարված ծախսերի մասին:

2. Հարցում դպրոց՝ վերջին երկու տարիներին սովորողների քանակի, սեռային կազմի և առաջադիմության վերաբերյալ տվյալներ տրամադրելու նպատակով:

3. Հարցում ոստիկանություն՝ վերջին երկու տարվա ընթացքում տվյալ քաղաքում/մարզում բնակվող, իրավախախտում կատարած անչափահաս անձանց քանակի մասին:

Դիմում

Պետական գերատեսչության անվանումը
Տեղեկություններ տրամադրող պաշտոնյայի անուն, ազգանունը
դիմողի անունը, ազգանունը, հայրանունը
բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը (հասցեն),
քաղաքացիությունը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պրն/տկն _____,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ

_____

_____

_____ մասին:
(հնարավորինս հստակ ձևակերպեք անհրաժեշտ տեղեկությունը)

Խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Խնդրում եմ ծանուցումն ուղարկել էլեկտրոնային *(կամ թղթային)* տարբերակով:

(Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար):

Կանխավ շնորհակալ եմ:

Դիմող՝ _____
ստորագրություն, անուն, ազգանուն

_____
ամսաթիվ

ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Լինել քաղաքացի

Տևողությունը՝ 31 րոպե

Նկարագրություն՝ Փաստավավերագրական ֆիլմում ներկայացվում է քաղաքացիների ակտիվ մասնակցության կարևորությունը իրենց վերաբերող որոշումների կայացմանը և սեփական իրավունքների պաշտպանությանը:

3.4 ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻ

ՁԱՓՈՐՈՇԻՉ

Ա մակարդակ՝ Բացահայտի հանրային քաղաքականության հիմնախնդիրներ, ուսումնասիրի որևէ հիմնախնդիր, առաջարկի այդ հիմնախնդրի լուծման այլընտրանքային տարբերակներ:

Բ մակարդակ՝ Մեկնաբանի մասնակցությունն ու առաջնորդությունը՝ որպես քաղաքացիական դիրքորոշման բնութագրիչներ:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Ժողովրդավարության զարգացումը ուղիղ կապի մեջ է երկրում ակտիվ քաղաքացիների առկայության հետ: Որքան շատ քաղաքացի է մասնակցում ժողովրդավարական գործընթացներին, այնքան ավելի մեծ պատասխանատվությամբ է մոտենում իշխանությունը երկրի կառավարմանը: Յուրաքանչյուր քաղաքացուց պահանջվում է առավելագույնս օգտագործել Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված հնարավորությունները և ակտիվորեն ներգրավվել պետության և սեփական համայնքի կառավարմանը:[87]

Ակտիվ քաղաքացին պետք է հետաքրքրվի երկրում, համայնքում տեղի ունեցող գործընթացներով, բարձրաձայնի և հարցեր առաջադրի հասարակական նշանակության խնդիրների մասին: Զարգացած ժողովրդավարական երկրներում ակտիվ քաղաքացիները հետևում են իշխանության աշխատանքին տեղական կամ կենտրոնական մակարդակներում: Նրանք, քաղաքացիական հասարակության տարբեր կազմակերպությունների մասնակցությամբ, հասարակության և իշխանության ուշադրությունը կենտրոնացնում են առկա հիմնախնդիրների վրա, ակտիվորեն համագործակցում են լրատվամիջոցների հետ, հանրային ելույթներ են ունենում և մասնակցում խաղաղ հանրահավաքներին:

Ակտիվ քաղաքացին մասնակցում է հասարակական խնդիրների քննարկմանը, տեսնում է հիմնախնդիրը, որոնում ու առաջարկում դրա հաղթահարման ուղիներ, լինում իրազեկ ու պահանջատեր, վերահսկում և դիտարկում է պետական գերատեսչությունների և հանրային ծառայողների աշխատանքը, մասնակից լինում ու աջակցում ժողովրդավարության ամրապնդմանը հանգեցնող փոփոխություններին:

Քաղաքացու կամավոր մասնակցությունը երկրի և հասարակության զարգացման աշխատանքներին նաև օգնում է անհատին գիտակցել սեփական կարիքները, հիմնախնդիրները, դերերը և պատասխանատվությունները: Սեփական դերի նշանակության

87 Քաղաքացիական կրթություն բոլորի համար, Գլուխ 1, Դաս 10, Քաղաքացի, հասարակություն, պետություն, http://am.civiceducation.ge/lessons/1-10 (դիտված՝ 25.07.2023 թ.)

գիտակցումը բարձրացնում է անհատի ինքնավստահությունը և հանդիսանում է սեփական նախաձեռնությամբ հիմնախնդիրների կարգավորման խթանիչ:[88]

Հասարակական և քաղաքական կյանքում տեղի ունեցող գործընթացներին մասնակցելու և դրանց վրա ազդեցություն ունենալու համար քաղաքացիները կարող են օգտվել Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բազմաթիվ գործիքներից: Ստորև փորձենք ավելի մանրամասն ուսումնասիրել դրանցից մի քանիսը:

Ակտիվ քաղաքացիները կարող են օգտվել Սահմանադրությամբ[89] ամրագրված իրավաստեղծ գործընթացում իրենց մասնակցության իրավունքներից, այդ թվում՝ կարծիք արտահայտելու ազատությունից (հոդված 42), տեղեկություններ ստանալու իրավունքից (հոդված 51) և հանրագիր ներկայացնելու իրավունքից (հոդված 53)[90]:

ՀՀ Սահմանադրության 53-րդ հոդվածը նախատեսում է, որ յուրաքանչյուր ոք ունի անհատապես կամ այլոց հետ մեկտեղ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագիր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք: Սահմանադրական նորմի մանրամասն կանոնակարգումներն ամրագրված են «Հանրագրերի մասին» ՀՀ օրենքով[91]: Օրենքի համաձայն հանրագիրը կարող է վերաբերել՝

Սահմանադրության 53-րդ հոդվածի հիման վրա հանրային նշանակություն ունեցող հարցերին.

- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության թերություններին.
- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության բարելավման, տնտեսական, քաղաքական, սոցիալական և հասարակական կյանքի այլ ոլորտների վերաբերող հարցերի կարգավորման կամ գործող իրավակարգավորումների կատարելագործմանը:

2019 թվականին մի խումբ քաղաքացիներ հանրագիր ուղղեցին ՀՀ վարչապետին՝ անդրադառնալով պետական պարգևավճարների խնդրին: Ըստ հանրագիրը ներկայացրած քաղաքացիների՝ ուսումնասիրությունների արդյունքում իրենք պարզել էին, որ պարգևատրման գործընթացում կան լուրջ բացթողումներ, նույնիսկ օրենքի խախտումներ, և որոշել են վարչապետին հանրագրով առաջարկել իրենց ուսումնասիրությունների հիման վրա իրականացնել ծառայողական քննություններ կամ

88 Բեսելիա Ն., Բոկերիա Ն., Կորձաձե Մ., Ինչպես դառնամ ակտիվ քաղաքացի. աշակերտի գիրք Քաղաքացիական կրթության օժանդակ ձեռարկ IX դասարանի համար, երկրորդ հրատարակություն, 2015 https://www.civics.ge/uploads/how_to_become_an_active_citizen_student_manual_folder_.pdf (դիտված՝ 25.07.2023 թ.)

89 ՀՀ Սահմանադրություն, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118 https://www.arlis.am/documentview.aspx?docid=143723 (դիտված՝ 25.07.2023 թ.)

90 ԹԻՀԿ, Հայաստանի Հանրապետությունում իրավաստեղծ գործընթացների մասնակցայնության ապահովում, քաղաքականության վերլուծություն, Երևան, 2023, էջ 14 https://www.transparency.am/hy/publication/pdf/323/10351 (դիտված՝ 25.07.2023 թ.)

91 ՀՀ օրենք «Հանրագրերի մասին», ՀՕ-15-Ն, 2018, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151406 (դիտված՝ 25.07.2023 թ.)

ուսումնասիրություններ: Եթե հանրագրով ներկայացված խախտումները իրականում տեղի են ունեցել, ապա առաջարկել են կարգապահական բնույթի պատիժներ սահմանել կարգազանց պաշտոնյաների նկատմամբ, և ոչ օրինական ձևով տնօրինված գումարները վերադարձնել պետական բյուջե[92]:

Հանրագիրը կարող է իրացվել անհատական և կոլեկտիվ մակարդակով: 2021 թվականին օրենքում կատարված փոփոխությունների համաձայն՝ հանրագրերը կարելի է ներկայացնել ինչպես տպագիր, այնպես էլ՝ էլեկտրոնային եղանակով՝ հանրագրերի միասնական հարթակի միջոցով, որը գործում է e-petition.am հասցեով: Հանրագրերի միասնական հարթակի միջոցով ներկայացված հանրագրերի վիճակագրությանը կարելի է հետևել կայքի «Վիճակագրություն» բաժնում՝ https://e-petition.am/am/statistics: Հանրագրերը ենթակա են հրապարակման, եթե հանրագիր ներկայացնողի կողմից չկա նշում չհրապարակման մասին:

Ակտիվ քաղաքացին ներգրավված է նաև իր համայնքում տեղի ունեցող գործընթացներին, մասնակցում է համայնքի ավագանու նիստերին: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգը երաշխավորում է համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը,[93] ուստի քաղաքացին իրացնում է օրենքով իրեն վերապահված իրավունքը, համաձայն որի համայնքի բնակիչները, առանց խտրականության, պետք է տեղեկացվեն ՏԻՄ-երի գործունեության մասին և կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ դրանց կողմից ընդունվող որոշումների վրա:

Եթե մասնակցային մեխանիզմները չեն գործում կամ արդյունավետ չեն, ակտիվ քաղաքացին կարող է մասնակցել ոչ բռնի քաղաքացիական շարժումներին և ցույցերին, իր անհամաձայնությունը հայտնի հանրության շահերի խախտումների և ոչ ժողովրդավարական գործընթացների նկատմամբ:

2013 թվականի հուլիսի 20-ից մինչև 25-ը Երևանում ակտիվ քաղաքացիների նախաձեռնությամբ անցկացվեցին բողոքի ցույցեր, որոնք ուղղված էին Երևանի քաղաքապետարանի՝ հանրային տրանսպորտի ուղեվարձը 50%-ով թանկացնելու՝ 100 դրամի փոխարեն 150 դրամ դարձնելու որոշման դեմ: Բողոքի ցույցերի արդյունքում հուլիսի 25-ին Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը կասեցրեց ուղեվարձի բարձրացման մասին որոշումը:

Կոռուպցիայի դեմ պայքարի և դրա կանխարգելման նպատակով ակտիվ քաղաքացին կարող է անանուն կամ տվյալները ներկայացնելու եղանակներով ազդարարել: Ազդարարումն ազդարարի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական հիմնարկներում և կազմակերպություններում, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպություններում կոռուպցիոն բնույթի դեպքի, շահերի բախ-

92 Մուրադյան Լ., Հանրագիր վարչապետին. ով և ինչ է պահանջում, 2019 https://hy.armradio.am/archives/217610

93 ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», ՀՕ-337, 2002, հոդված 8, մաս 1, կետ 14, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=170580 (դիտված՝ 25.07.2023 թ.)

ման, էթիկայի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, հայտարարագրման հետ կապված խախտման, հանրային շահերին ուղղված այլ վնասի, դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների գրավոր կամ բանավոր հաղորդում ներկայացնելն է:[94] Ազդարարման նպատակներն են՝

ԹԻՀԿ, 2023 թ, աղբյուր՝ transparency.am

1. բացահայտել կոռուպցիոն բնույթի դեպքերը, շահերի բախման, էթիկայի կանոնների, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, հայտարարագրման հետ կապված խախտումները, հանրային շահերին ուղղված այլ վնասները.
2. նվազեցնել և կանխարգելել կոռուպցիան.
3. նպաստել կոռուպցիայի նկատմամբ հասարակական անհանդուրժող վերաբերմունքի ձևավորմանը:[95]

Ազդարարումը կատարվում է www.azdararir.am կայքի միջոցով կամ համապատասխան իրավասու մարմին հաղորդում ներկայացնելով: Ազդարարներն ունեն օրենքով սահմանված իրավունքներ, որոնցից են՝

- պաշտպանության իրավունք.
- անձնական տվյալների գաղտնիության, վնասակար գործողություններից և դրանց հետևանքներից պաշտպանության իրավունք.
- ազդարարը, որը հաղորդում է ներկայացրել, կամ որի հաղորդումն ուղարկվել է քրեական հետապնդման մարմիններ, ենթակա է պաշտպանության Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով.
- յուրաքանչյուր պայմանագիր կամ պայմանագրի դրույթ, որը միտված է անձին ազդարարման կամ ազդարարի պաշտպանության իրավունքից զրկելուն կամ այն սահմանափակելուն, առ ոչինչ է.
- ազդարարի հետ փոխկապակցված անձն ազդարարի պաշտպանության միջոցներից օգտվելու իրավունք ունի, եթե ողջամտորեն հիմնավորում է, որ ազդարարի հետ ունեցած կապի պատճառով իր դեմ կարող են կատարվել վնասակար գործողություններ[96]:

Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով իրականացված ազդարարումների վիճակագրությանը կարելի է հետևել կայքի «Վիճակագրություն» բաժնում՝ https://www.azdararir.am/am/statistics:

94 ՀՀ օրենքը «Ազդարարման համակարգի մասին», ՀՕ-97-Ն, 2018, հոդված 2 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114364 (դիտված՝ 25.07.2023 թ.)

95 ՀՀ օրենքը «Ազդարարման համակարգի մասին», ՀՕ-97-Ն, 2018, հոդված 3 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114364 (դիտված՝ 25.07.2023 թ.)

96 ՀՀ օրենքը «Ազդարարման համակարգի մասին», ՀՕ-97-Ն, 2018, հոդված 10 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114364 (դիտված՝ 25.07.2023 թ.)

Ժողովրդավարական հասարակությունը ձևավորում է ակտիվ քաղաքացի, և, ընդհակառակը, ակտիվ քաղաքացին ստեղծում է ժողովրդավարական հասարակություն,[97] ուստի ժողովրդավարական հասարակություն կարող ենք ունենալ, եթե քաղաքացուց վերափոխվենք ակտիվ քաղաքացու:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Ո՞վ է ակտիվ քաղաքացին

Տևողությունը՝ 10 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կմշակեն ակտիվ քաղաքացու կերպար և կնշեն խնդիրների հաղթահարմանն ուղված նրա գործողությունները:

Նկարագրություն

Սովորողներին հանձնարարել, որ 5 րոպեի ընթացքում զույգերով մշակեն ակտիվ քաղաքացու կերպար և նրա գործողությունները դպրոցում, աշխատավայրում, հասարակությունում: Զույգերով աշխատանքից հետո լսել և քննարկել աշխատանքի արդյունքները ու կատարել առաջադրանքի ամփոփում:

2 «Սովորական» հերոսներ

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կծանոթանան ակտիվ քաղաքացիների պայքարի հաջողված պատմություններին և կտեսնեն դրանց ազդեցությունը հասարակության համար:

Նկարագրություն

Սովորողներին հանձնարարել տանը ուսումնասիրել Հայաստանում և աշխարհում քաղաքական գործիչ չհանդիսացող ակտիվ քաղաքացիների կողմից հասարակության համար արժեքավոր հարցերի լուծման հաջողված պատմություններ (յուրաքանչյուրը մեկ պատմություն): Անհրաժեշտ է պատմությունը ներկայացնել ըստ ստորև ներկայացված հարցերի հաջորդականության: Հաջորդ դասի ընթացքում անհրաժեշտ է առավելագույնը 15 րոպեի ընթացքում լսել սովորողների ուսումնասիրած պատմությունները, քննարկել կատարված աշխատանքը և ամփոփել այն:

97 Բեսելիա Ն., Բոկերիա Ն., Կորձաձե Մ., Ինչպես դառնամ ակտիվ քաղաքացի. Աշակերտի գիրք Քաղաքացիական կրթության օժանդակ ձեռարկ IX դասարանի համար, երկրորդ հրատարակություն, 2015 https://www.civics.ge/uploads/how_to_become_an_active_citizen_student_manual_folder_.pdf (դիտված՝ 25.07.2023 թ.)

Հարցեր

1. Ե՞րբ է տեղի ունեցել իրադարձությունը:
2. Ովքե՞ր են նախաձեռնողները և մասնակիցները:
3. Ի՞նչ ընթացք է ունեցել ակտիվ քաղաքացիների պայքարը:
4. Ի՞նչ արդյունք է արձանագրվել:
5. Ի՞նչ փոփոխությունների է այն հանգեցրել:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Ամուլսար. Պետության բնանտարբերությունը

Տևողությունը՝ 40 րոպե

Նկարագրություն՝ Վավերագրական ֆիլմը նպատակ ունի բացահայտելու, թե ինչպես կարող ենք վերահսկել ընդերքի շահագործումը՝ կանխելով կամ նվազագույնի հասցնելով մարդկային, էկոլոգիական և այլ վնասները:

2 Թեղուտ՝ 10 տարի անց. դբա լա՞վը

Տևողությունը՝ 18 րոպե

Նկարագրություն՝ Վավերագրական ֆիլմը պատմում է Թեղուտի հանքի շահագործման խոստումների և այսօրվա իրականության մասին է:

3 Ինչպե՞ս ազդարարել և ո՞ւմ

Տևողությունը՝ 1 րոպե 40 վայրկյան

Նկարագրություն՝ Անիմացիոն տեսանյութում ներկայացվում է ազդարարման տեսակները, ձևերը ու կառույցները, որոնց պետք է ազդարարել:

4 Ազդարարի և փոխկապակցված անձի պաշտպանությունը

Տևողությունը՝ 1 րոպե 50 վայրկյան

Նկարագրություն՝ Անիմացիոն տեսանյութում ներկայացվում է ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց՝ օրենքով սահմանված երաշխիքները:

5 Մաշտոցի պուրակի պայքար. անավարտ

Տևողությունը՝ 47 րոպե

Նկարագրություն՝ Փաստավավերագրական ֆիլմում ներկայացվում է 2012 թ. փետրվար-մայիս ամիսներին Երևանի Մաշտոցի պուրակում իրականացված քաղաքացիական պայքարը՝ ընդդեմ Աբովյան փողոցից ապամոնտաժված առևտրային տաղավարները Մաշտոցի պողոտային հարակից հանրային տարածք տեղափոխելուն:

6 «Պոլիտեա»

Նկարագրություն՝ «Պոլիտեա» խաղի նպատակն է զարգացնել խաղացողների քաղաքագիտական-քաղաքացիական գիտելիքները: «Պոլիտեան» կարելի է խաղալ 2 կամ ավելի խմբերով: Յուրաքանչյուր խմբից մեկական խաղացող վերցնում է որևէ քարտ և իր թիմակիցներին բացատրում քարտի վրա գրված բառերը: Յուրաքանչյուր գուշակած բառը 1 միավոր է: Հաղթում է առավելագույն միավորներ հավաքած խումբը: Խաղը պարունակում է տարբեր բարդության խաղաքարտեր, խաղալ հնարավոր է ինչպես թղթային խաղաքարերի օգտագործմամբ, այնպես էլ ներբեռնելով այն սմարթֆոններում Google Play և App Store համակարգերից:

7 «ՏԻՄագետ»

Նկարագրություն՝ «ՏԻՄագետ»-ը ինտերակտիվ խաղ է, որի միջոցով խաղի մասնակիցները սովորում են տեղական ինքնակառավարման ոլորտի առանձնահատկությունները: Այն բաղկացած է 3 տեսակի խաղաքարտերից՝ դերաքարտ, որի դեպքում մասնակիցը պետք է դերախաղի միջոցով բացատրի տվյալ բառը, բառաքարտ, որն իրենից ներկայացնում է 5 բառ, որոնք պետք է բացատրվեն առանց արմատներ օգտագործելու, և հարցաքարտ, որի դեպքում մասնակիցը պետք է պատասխանի նշված հարցին:[98]

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Հարված քարին (անգլերեն)

Տևողությունը՝ 1 ժամ 27 րոպե

Նկարագրություն՝ Վավերագրական ֆիլմն անդրադառնում է 2012 թվականին ոստիկանների կողմից Մարիկանայում գնդակահարված 37 հանքափորների պատմությանը: Ներկայացվում են երկու ակտիվիստներ, որոնք դուրս են գալիս իրենց աղքատ հանքարդյունաբերական համայնքից՝ արդարության և արժանապատվության համար շարունակական պայքար մղելու համար:

98 ՏԻՄագետ խաղը կարող եք գտնել Արմավիր, Արարատ, Վանաձոր, Գյումրի, Իջևան, Վայք, Մարտունի, Գորիս, Հրազդան քաղաքներում գործող Ինֆոտանը:

2 Սնոուդեն (անգլերեն)

Տևողությունը՝ 2 ժամ 14 րոպե

Նկարագրություն՝ Գեղարվեստական ֆիլմը Կենտրոնական հետախուզական վարչության նախկին սպա Էդվարդ Սնոուդենի մասին է, որը արել է համաշխարհային պատմության մեջ պետական գերատեսչությանն առնչվող ամենամեծ բացահայտումներից մեկը:

3 Վտանգավոր գաղտնիքներ (ռուսերեն)

Տևողությունը՝ 1 ժամ 52 րոպե

Նկարագրություն՝ Գեղարվեստական ֆիլմում ներկայացվում է պատմություն բրիտանացի ազդարարի մասին, որը մամուլում տեղեկատվության արտահոսք է անում անօրինական լրտեսական գործողության մասին: Արտահոսքի նպատակն էր ստիպել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին պատժամիջոցներ սահմանել ԱՄՆ-ի և ՄԹ նկատմամբ՝ 2003 թվականին Իրաք ներխուժելու համար:

3.5 ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ՁԱՓՈՐՈՇԻՉ

Ա մակարդակ՝ Բացահայտի հանրային քաղաքականության հիմնախնդիրներ, ուսումնասիրի որևէ հիմնախնդիր, առաջարկի այդ հիմնախնդրի լուծման այլընտրանքային տարբերակներ:

Բ մակարդակ՝ Մեկնաբանի մասնակցությունն ու առաջնորդությունը որպես քաղաքացիական դիրքորոշման բնութագրիչներ:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Քաղաքացու պարտավորություններից մեկը հարկեր վճարելն է: Մեր կողմից վճարած հարկերը կուտակվում են պետական կամ տեղական/համայնքային բյուջեում, որը վերաբաշխվում է տարբեր ոլորտների միջև, ինչպիսիք են առողջապահությունը, կրթությունը, ենթակառուցվածքների զարգացումը, պետական անվտանգությունը և այլն: Քաղաքացին կարող է լինել պասիվ և, օրինակ, բյուջեին վերաբերող որոշումների ընդունումն ամբողջովին վստահել պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին, սակայն որքան ավելի շատ քաղաքացի կընտրի պասիվությունը, այնքան ավելի կմեծանա ընդհանուր գումարի անպատասխանատու տնօրինման ռիսկը: Իսկ ակտիվ քաղաքացին տարբեր ճանապարհներով կարող է ներգրավվել որոշումներ կայացնելու գործընթացին և իր ազդեցությունն ունենալ վերջնական որոշման կայացման վրա: Նույնը կարելի է ասել օրենքների ընդունման և իրավաստեղծ գործընթացի մասին:[99]

Կառավարման մեջ քաղաքացիների ներգրավումը հանգեցնում է սոցիալական վստահության բարձր մակարդակի ձևավորմանը: Քաղաքացիների ներգրավվածությունը կարող է օգնել նվազեցնել կոռուպցիայի մակարդակն իրենց բնակավայրում, մարզում կամ երկրում՝ կառավարման մարմինների գործունեությանը մասնակցելու, ինչպես նաև հակակոռուպցիոն մարմինների աշխատանքին աջակցելու միջոցով:[100]

Կարևորելով քաղաքացիների ակտիվ մասնակցայնությունը հանրային կառավարման և վերահսկողության գործընթացներում՝ մշակվել և ներդրվել են մի շարք ձևեր, որոնք հնարավորություն են տալիս քաղաքացիներին մասնակցելու իրավաստեղծ, պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների կառավարման, իրենց վերաբերող որոշումների կայացման գործընթացներին:

---

99 Վրաստանի ժողովրդավարական նախաձեռնություն, Քաղաքացիական կրթություն բոլորի համար, Գլուխ 1, Դաս 10, Քաղաքացի, հասարակություն, պետություն, http://am.civiceducation.ge/lessons/1-10 (դիտված՝ 25.07.2023 թ.)

100 United Nations Logo Department of Economic and Social Affairs Public Institutions, Citizen Engagement and Preventing Corruption, https://publicadministration.un.org/en/CitizenEngagementandPreventingCorruption (դիտված՝ 25.07.2023 թ.)

ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է հանրության մասնակցության հիմք հանդիսացող մի շարք քաղաքացիական և քաղաքական իրավունքներ, այդ թվում՝

- կարծիք արտահայտելու ազատությունը (հոդված 42),
- հանրաքվեին մասնակցելու իրավունքը (հոդված 48),
- տեղեկություններ ստանալու իրավունքը (հոդված 51),
- հանրագիր ներկայացնելու իրավունքը (հոդված 53):

Քաղաքացիական նախաձեռնությունների համար առկա են լրացուցիչ հնարավորություններ ևս, մասնավորապես՝ ՀՀ ԱԺ-ին առաջարկել օրենքի նախագիծ՝ ստորագրված ընտրական իրավունք ունեցող առնվազն 50 հազար քաղաքացիների կողմից (հոդված 109), առաջարկել սահմանադրական փոփոխություններ՝ ստորագրված ընտրական իրավունք ունեցող առնվազն 150 հազար քաղաքացիների կողմից (հոդված 202): Քաղաքացիների առաջարկած նախագիծը ԱԺ կողմից մերժում ստանալու դեպքում՝ 60 օրվա ընթացքում ընտրական իրավունք ունեցող ևս 300 հազար քաղաքացիների միանալու և ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը համապատասխանող ճանաչվելու դեպքում նախագիծը դնել հանրաքվեի (հոդված 204)[101]: Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք: Այսպիսով՝ քաղաքացիներն ունեն սահմանադրական իրավունք մասնակցելու հանրային կյանքում տեղի ունեցող գործընթացներին և դրանց մասին արտահայտելու իրենց կարծիքը նաև հավաքներին մասնակցության միջոցով:

2015 թվականի հունիսին տեղի ունեցան ՀՀ տարածքում էլեկտրաէներգիայի թանկացման դեմ ուղղված բողոքի ցույցեր: Արդյունքում, ռուսական պետական «ԻՆՏԵՐ ՌԱՕ ԵԷՍ» կորպորացիան ստիպված եղավ Հայաստանի էլեկտրական ցանցերը վաճառել «Տաշիր գրուպ» ընկերությանը[102], որից մեկ տարի անց էլեկտրաէներգիայի սակագինն առաջին անգամ նվազեց[103]:

Հանրային քաղաքականությանն առնչվող հիմնախնդիրների բարձրաձայնում և առաջարկությունների ներկայացում

Այս գործընթացի իրականացմանն աջակցում է ՀՀ Սահմանադրության 53-րդ հոդվածը, որը նախատեսում է, որ յուրաքանչյուր ոք ունի անհատապես կամ այլոց հետ մեկտեղ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագիր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու

---

101 ԹԻՀԿ, Հայաստանի Հանրապետությունում իրավաստեղծ գործընթացների մասնակցայնության ապահովում, քաղաքականության վերլուծություն, Երևան, 2023, էջ 14-15 https://www.transparency.am/hy/publication/pdf/323/10351 (դիտված՝ 25.07.2023 թ.)

102 Իրազեկ քաղաքացիների միավորում, Էլեկտրիկ Երևանի հաջողությունն ու ռուսական պետկորպորացիաների թալանը (անիմացիոն տեսանյութ), 2017, https://uic.am/3410 (դիտված՝ 25.07.2023 թ.)

103 Արմենպրեսս, Հայաստանում էլեկտրաէներգիայի սակագները նվազեցին, 2016 https://armenpress.am/arm/news/872994/hayastanum-elektraenergiayi-sakagnery-nvazecin.html (դիտված՝ 25.07.2023 թ.)

իրավունք: Սահմանադրական նորմի մանրամասն կանոնակարգումներն ամրագրված են «Հանրագրերի մասին» ՀՀ օրենքով: Համաձայն «Հանրագրերի մասին» ՀՀ օրենքի՝ հանրագրերը կարելի է ներկայացնել ինչպես տպագիր, այնպես էլ՝ էլեկտրոնային եղանակով՝ հանրագրերի միասնական հարթակի միջոցով, որը գործում է հանրագիր.հայ կամ e-petition.am հասցեով:[104] Հանրագրի մասին ավելի մանրամասն կարող եք կարդալ «Ակտիվ քաղաքացի» թեմայում:

Մասնակցություն իրավական ակտերի մշակման և ընդունման գործընթացում

Հայաստանի Հանրապետությունում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրավական ակտերի մշակման և ընդունման գործում հանրային մասնակցությունը հիմնականում կարգավորվում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով: Այն սահմանում է, որ հանրային քննարկման նպատակը իրավաստեղծ գործընթացին հասարակության մասնակցության, թափանցիկության և հաշվետվողականության ապահովումն է, նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ հանրության իրազեկումը, հանրային կարծիքի բացահայտումը և դրանց վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների ստացումը:

Հանրային քննարկումների կարգի համաձայն՝ պետական կառավարման համակարգի մարմինների կողմից մշակվող ՀՀ կառավարության նորմատիվ որոշումների նախագծերը պարտադիր ենթակա են հանրային քննարկման: Հանրային քննարկումներն իրականացվում են սահմանված ընթացակարգի համաձայն, բացառությամբ ռազմական և արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ կառավարության որոշումների նախագծերի: Կառավարության ներքին իրավական ակտերի նախագծերը և կառավարության անդամների կողմից ընդունման ենթակա ներքին իրավական ակտերի նախագծերը ևս ենթակա են հանրային քննարկման:

Հանրային քննարկումը պարտադիր իրականացվում է քննարկում իրականացնող մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում և ՀՀ արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (edraft.am) հրապարակման եղանակով: Կարգով սահմանված է, որ հանրային քննարկում իրականացնող մարմինն իր պաշտոնական ինտերնետային կայքում և միասնական կայքում հրապարակում է նորմատիվ իրավական ակտի նախագիծը, իրավական ակտի ընդունման հիմնավորումը: Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումների տևողությունը նախատեսված է առնվազն 15 օր, եթե հանրային քննարկում իրականացնող մարմինը չի սահմանել ավելի երկար ժամկետ: Հանրային քննարկումների մասնակցելու միջոցով քաղաքացիները կկարողանան բարձրաձայնել իրենց կարծիքն օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ, կհայտնեն դիտողություններ և կներկայացնեն առաջարկություններ: Նրանք նաև հնարավորություն ունեն քվեարկել տվյալ նախագծի օգտին՝ հայտնելով վերջինիս նկատմամբ իրենց կողմ կամ դեմ դիր-

104 ԹԻՀԿ, Հայաստանի Հանրապետությունում իրավաստեղծ գործընթացների մասնակցայնության ապահովում, քաղաքականության վերլուծություն, Երևան, 2023, էջ 18 https://www.transparency.am/hy/publication/pdf/323/10351 (դիտված՝ 25.07.2023 թ.)

քորոշումը, սակայն քվեարկության արդյունքները ավելի շատ խորհրդատվական են և պարտադիր բնույթ չեն կրում:

Տեղական ինքնակառավարում

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգը երաշխավորում է համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:[105] Վերջինս սահմանվում է որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները, առանց խտրականության, տեղեկացվում են ՏԻՄ-երի գործունեության մասին և կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ նրանց կողմից ընդունվող որոշումների վրա: Տեղական ինքնակառավարմանը բնակիչները կարող են մասնակցել ինչպես անձամբ, այնպես էլ հասարակական միավորումների և քաղաքացիական նախաձեռնությունների միջոցով:[106] Համայնքի բնակիչները կարող են մասնակցություն ունենալ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի, համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի կամ տարեկան բյուջեի նախագծերի շուրջ կազմակերպվող հանրային բաց լսումներին կամ քննարկումներին:

Մասնակցություն մարդու կենսագործունեության միջավայրի փոփոխության վերաբերյալ որոշումների կայացմանը

Մարդու կենսագործունեության միջավայրի փոփոխությունների վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների ներգրավվման հնարավորություններ հիմնականում նախատեսված են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» և «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքներում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ նախագծերի էկոլոգիական գնահատման գործընթացում նախատեսված են մի քանի փուլ հանրային լսումներ, որին կարող են մասնակցություն ցուցաբերել քաղաքացիները: Դրանք կարող են լինել սոցիալ-տնտեսական, էներգետիկայի, քաղաքաշինության, տրանսպորտի, կապի, գյուղատնտեսության, ընդերքօգտագործման, արդյունաբերական ճյուղերի, առողջապահության, բնապահպանության և մի շարք այլ բնագավառներին վերաբերող քաղաքականության, ռազմավարության, ծրագրի և այլ փաստաթղթերի նախագծերը:[107]

Քաղաքաշինության ոլորտում հանրային իրազեկման և քննարկումների իրավակարգավորումներ ներառված են «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում, ըստ որի մինչև

---

105 ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», ՀՕ-337, 2002թ, հոդված 8, մաս 1, կետ 14, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=170580 (դիտված՝ 25.07.2023 թ.)

106 ԹԻՀԿ, Հայաստանի Հանրապետությունում իրավաստեղծ գործընթացների մասնակցայնության ապահովում, քաղաքականության վերլուծություն, Երևան, 2023, էջ 25 https://www.transparency.am/hy/publication/pdf/323/10351 (դիտված՝ 25.07.2023 թ.)

107 ԹԻՀԿ, Հայաստանի Հանրապետությունում իրավաստեղծ գործընթացների մասնակցայնության ապահովում, քաղաքականության վերլուծություն, Երևան, 2023, էջ 28 https://www.transparency.am/hy/publication/pdf/323/10351 (դիտված՝ 25.07.2023 թ.)

հրապարակված քաղաքաշինական ծրագրերի և նախագծերի հաստատումը՝ քաղաքացիները կարող են մասնակցել դրանց քննարկումներին, ներկայացնել իրավական և նորմատիվ ակտերով հիմնավորված դիտողություններ, առաջարկություններ, այլընտրանքային նախագծեր և ծրագրեր:[108]

Մասնակցային բյուջետավորում

Մասնակցային բյուջետավորումը հանրային քննարկման և որոշումների կայացման գործընթաց է, որն օգնում է մարդկանց որոշել, թե ինչպես պլանավորել և օգտագործել համայնքային, պետական կամ, օրինակ, դպրոցի բյուջեն: Այն մասնակցային ժողովրդավարության մի գործիք է, որը քաղաքացիներին հնարավորություն է տալիս համագործակցելու տեղական կամ պետական կառավարման մարմինների հետ, մասնակցելու հանրային ռեսուրսների բաշխման և բյուջետային գործընթացներում կայացվող որոշումներին, որոնք անմիջական ազդեցություն ունեն իրենց կյանքի որակի վրա:[109] Մասնակցային բյուջետավորումը կիրառելի է նույնիսկ դպրոցում, որի ընթացքում աշակերտները մասնակցում են բյուջեի ծախսերի պլանավորման գործընթացին: Մասնակցային բյուջետավորումն աշակերտների և դպրոցի այլ դերակատարների հետ միասին որոշումներ կայացնելու միջոց է, որի ընթացքում գաղափարներ են առաջարկվում պետական միջոցների ծախսման մասին, որոնցից աշակերտները, ուսուցիչները, դպրոցի վարչական աշխատակիցները քվեարկությամբ ընտրում են բյուջեի ծախսման լավագույն տարբերակները:

2019-ին երկու ամիս շարունակ Լիտվայի երկու դպրոցների աշակերտները քննարկում էին իրենց դպրոցական համայնքների կարիքները, սովորում, թե ինչպես պետք է ֆինանսական որոշումներ կայացնեն, և որոշեցին, թե ինչպես լավագույնս ծախսել իրենց դպրոցի բյուջեի մի մասը (մինչև 1.500 եվրո): Նախաձեռնության սկզբում աշակերտները փոխանակեցին 100-ից ավելի մտքեր՝ առաջարկելով ունենալ դրոններ, երաժշտական գործիքներ, սուրճի մեքենաներ և այլն: Այնուհետև նրանք մշակեցին իրենց առաջարկները՝ նշելով, թե որքանով է իրենց գաղափարը ծառայելու իրենց դպրոցական համայնքին, որքան կարժենա և որն է լինելու դրա հիմնական նպատակը: Երկու ամիս անց աշակերտներն իրենց գաղափարները ներկայացրին ողջ դպրոցական համայնքին: Դպրոցական համայնքը՝ աշակերտներ, ուսուցիչներ և դպրոցի ղեկավար անձնակազմ, քվեարկեցին գաղափարների օգտին և ընտրեցին լավագույն առաջարկները: Դպրոցներից մեկում աշակերտները որոշել էին ունենալ բացօթյա ուսումնական տաղավար, իսկ մեկ այլ դպրոցի աշակերտներ քվեարկել էին սպորտային սարքավորումների ձեռքբերման օգտին:[110] Հայաստանում չնայած օրենսդրական համապատասխան կարգավորումներին և

108 ՀՀ օրենքը «Քաղաքաշինության մասին», ՀՕ-217, 1998, հոդված 13 https://www.arlis.am/documentview.aspx?docID=69797 (դիտված՝ 07.04.2024 թ.)

109 «Մասնակցային բյուջետավորում» ծրագիր, Ինչ է մասնակցային բյուջետավորումը, https://pbudgeting.am/?p=171 (դիտված՝ 25.07.2023 թ.)

110 Duncikaite Ieva, Participatory budgeting initiatives lead to greater transparency: example of two Lithuanian schools, 2019, https://etico.iiep.unesco.org/en/participatory-budgeting-initiatives-lead-greater-transparency-example-two-lithuanian-schools (դիտված՝ 24.12.2023 թ.)

աշակերտների ցանկությանը՝ ըստ հարցումների, գործնականում աշակերտական խորհուրդները գրեթե չեն մասնակցում բյուջեի քննարկումներին և ազատորեն չեն տնօրինում իրենց հատկացված գումարները (դրամաշնորհները):[111]

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Թվային էքսկուրսիա

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կծանոթանան Հայաստանում գործող էլեկտրոնային կառավարման որոշ հարթակներին և կուսումնասիրեն դրանց գործունեության առանձնահատկությունները, ընձեռած հնարավորությունները քաղաքացիների՝ հանրային կառավարման գործընթացում մասնակցայնության ապահովման տեսանկյունից:

Նկարագրություն

Սովորողներից կազմել 3-4 հոգանոց խմբեր և հանձնարարել ուսումնասիրել Հայաստանում գործող էլեկտրոնային կառավարման հարթակները: Սովորողները կարող են ուսումնասիրել Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը՝ www.e-draft.am, Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը՝ www.e-request.am (ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ «Հավելյալ ռեսուրսներ» բաժնի «Թեմատիկ կառույցների և պետական կառավարման հարթակների մասին տեղեկատվություն» հատվածում կամ ուսումնասիրելով www.digital-armenia.am կայքը), ինչպես նաև համայնքապետարանների կամ մարզպետարանների կայքէջերը: Յուրաքանչյուր խումբ պետք է ուսումնասիրի մեկ հարթակ և պատրաստի հակիրճ ներկայացում՝ կայքի ընձեռած հնարավորությունների մասին, ինչպես նաև նշի հարթակի նպատակը (օրինակ՝ մասնակցայնության ապահովում, հանրության համար իրավական ակտերի հասանելիության ապահովում և այլն): Խմբերին իրենց կատարած աշխատանքը ներկայացնելու համար հատկացվում է մինչև 3 րոպե ժամանակ, իսկ առաջադրանքի ավարտին ուսուցիչը կատարում է ամփոփում՝ ընդգծելով մասնակցայնության կարևորությունը:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Մասնակցային կառավարում

Տևողությունը՝ 1 րոպե 30 վայրկյան

111 ԹԻՀԿ, Աշակերտական խորհուրդների գործունեության արդյունավետությունը, Երևան, 2022 թ, էջ 49, https://transparency.am/hy/publication/pdf/306/10040 (դիտված՝ 22.2.2024 թ.)

Նկարագրություն՝ Անիմացիոն տեսանյութում ներկայացվում է համայնքի քաղաքացիների ակտիվ մասնակցության կարևորությունը համայնքում իրականացվող գործընթացներին:

2 Բանտի հացը

Տևողությունը՝ 9 րոպե

Նկարագրություն՝ տեսանյութում ներկայացվում է, թե ինչպես էր «Նուբարաշեն» մասնաճյուղի հացի արտադրամասում տարիներ շարունակ թխվում և բանտին տրամադրվում որակի չափանիշներին չհամապատասխանող հացեր, որոնք էլ դարձել էին բանտարկյալների առողջական խնդիրների առաջացման պատճառ:

3 Ինչու՞ է կարևոր տեղեկացված լինել պետբյուջեի մասին

Տևողությունը՝ 1 րոպե

Նկարագրություն՝ Տեսանյութում ներկայացվում է պետբյուջեի մասին տեղեկացված լինելու կարևորությունը քաղաքացիների համար:

4 Ինչպե՞ս կարող են քաղաքացիները մասնակցել բյուջեի ձևավորմանը

Տևողությունը՝ 1 րոպե

Նկարագրություն՝ Տեսանյութում ներկայացվում է, թե ինչ է բյուջեն, ինչպես քաղաքացիները կարող են մասնակցել դրա կազմմանն և ինչու է դա կարևոր:

5 Ո՞ւմ դիմել բյուջեի ձևավորմանը մասնակցելու համար

Տևողությունը՝ 1 րոպե

Նկարագրություն՝ Տեսանյութում ներկայացվում է, թե քաղաքացիներն ում կարող են դիմել բյուջեի ձևավորմանը մասնակցելու համար:

3.6 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՁՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՁԱՓՈՐՈՇԻՉ

Ա մակարդակ՝ Իմանա «քաղաքացիական հասարակություն» հասկացությունը:

Բ մակարդակ՝ Հասկանա և բացատրի հասարակական կազմակերպությունների, միությունների և այլ կազմակերպությունների տեղն ու դերը քաղաքացիական հասարակության մեջ շահերի պաշտպանության, բազմազանության և բազմակարծության ապահովման առումով: Հիմնավորի հասարակական կարծիքի և խոսքի, մտքի, խղճի ազատության կարևորությունը:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Կոռուպցիայի դեմ պայքարը երկարաժամկետ գործընթաց է, որը պահանջում է խոր կառուցվածքային փոփոխություններ երկրի ինստիտուտներում, դրա իրավական դաշտում և մշակույթում: Կառավարությունից դուրս գտնվող դերակատարները, հատկապես՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, կոռուպցիայի դեմ հաջող պայքարի կարևոր բաղադրիչներն են: Այդ գործում քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ) աջակցում են իրազեկման և կանխարգելման արշավների կազմակերպման, քաղաքականության և հակակոռուպցիոն ռազմավարությունների մշակման, կառավարության աշխատանքների մոնիտորինգի, հանրային վերահսկողության և մի շարք այլ աշխատանքների իրականացմանը:[112] Քաղաքացիական հասարակությունն ի զորու է պայքարելու կոռուպցիայի դեմ ոչ միայն ներքևից վերև՝ քաղաքացիների հետ աշխատելով, այլ նաև վերևից ներքև՝ կառավարությանը դրդելով իրականացնել հակակոռուպցիոն բարեփոխումներ, պահանջելով ավելի շատ թափանցիկություն և հաշվետվողականություն, նպաստելով քաղաքականությունների և կանոնակարգերի զարգացմանը, վերահսկելով դրանց իրագործումը, գնահատելով բարեփոխումների արդյունավետությունը, չափելով հանրային կարծիքը և ներկայացնելով այն կառավարությանը:[113] Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները հատկապես ներգրավված են կառավարությունների վրա ճնշում գործադրելու մեջ՝ իրենց ստանձնած պարտավորությունները կատարելու համար: Այս բոլոր միջոցառում-

---

112 **Škorić** V., Civil society participation: an essential element in anti-corruption efforts, UNCA Coalition Civil Society, 2015, page 12 https://uncaccoalition.org/civil-society-participation-an-essential-element-in-anti-corruption-efforts/ (դիտված՝ 25.07.2023 թ.)

113 Ասատրյան Վ., Ինջեյան Ա., Նանտոյ Օ., Պանահինտե Պ., Պիդտեպա Ի., Պլատոն Ա., Պրեսնյակով Ի., Շապովալովա Ն., Տարապատովա Օ.,Պայքար կոռուպցիայի դեմ Արևելյան գործընկերության երկրներում. քաղաքացիական հասարակության տեսակետները, https://www.moj.am/storage/uploads/001.Ardir_49..pdf (դիտված՝ 26.07.2023 թ.)

ները կարևոր նշանակություն ունեն կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ազգային կարողությունների զարգացման և ինստիտուցիոնալ բարեփոխումների աջակցության համար:[114] Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների աշխատանքի արդյունավետությունը մեծապես կախված է այն միջավայրից, որտեղ նրանք ծավալում են իրենց գործունեությունը: Նրանց աշխատանքի վրա էական ազդեցություն ունեն ֆինանսավորման մատչելիությունը, խաղաղ հավաքների ազատությունը, որոշումների ընդունման գործընթացում մասնակցության իրավունքը, խոսքի ազատությունը, պետական աջակցությունը, պետություն-ՔՀԿ համագործակցությունը և այլ գործոններ:[115]

Համաձայն Հայաստանի օրենսդրության՝ Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են ֆինանսավորում հայցել, ստանալ և օգտագործել բոլոր օրինական աղբյուրներից, սակայն առավել տարածված ֆինանսավորման ձևերն են միջազգային աղբյուրներից և պետական գերատեսչություններից ստացված դրամաշնորհները և նվիրատվությունները:

Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարող հասարակական կազմակերպություններն իրականացնում են նախագծեր, որոնք միտված են բարձրացնելու քաղաքացիների իրազեկվածության մակարդակը, աջակցություն և իրավական խորհրդատվություն տրամադրելու քաղաքացիներին, ինչպես նաև գործելու իբրև վերահսկող և վերլուծական կենտրոններ: Լրագրողական հասարակական կազմակերպությունները կոռուպցիայի դեմ պայքարի գործում իրենց ներդրումն են ունենում կոռուպցիայի վերաբերյալ հետաքննությունների իրականացման միջոցով:[116]

2023 թվականին հասարակական հինգ կազմակերպություններ՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը, Իրավաբանների հայկական ասոցիացիան, Իրազեկ քաղաքացիների միավորումը, Հայաստանի արդյունաբերողների ու գործարարների միությունը և Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը,[117] ներգրավված են եղել նաև ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի աշխատանքներում:

Հանրային անկողմնակալ հսկողության միջոցով ազատ և արդար ընտրությունների անցկացման, ընտրական գործընթացների օրինավորության ձևավորման նպատակով՝ հասարակական կազմակերպություններն իրականացնում են նաև անկախ դիտորդական առաքելություններ և ներկայացնում զեկույցներ: Մասնավորապես, հայտնի են

114 Škorić V., Civil society participation: an essential element in anti-corruption efforts, UNCA Coalition Civil Society, 2015, https://uncaccoalition.org/civil-society-participation-an-essential-element-in-anti-corruption-efforts/ (դիտված՝ 26.07.2023 թ.)

115 ԹԻՀԿ, ՔՀԿ չափիչ Հայաստան, 2023, էջ 10, https://transparency.am/hy/publication/pdf/353/10893 (դիտված՝ 20.03.2024 թ.)

116 Ասատրյան Վ., Ինջեյան Ա., Նանտոյ Օ., Պանահինտե Պ., Պիդտեպա Ի., Պլատոն Ա., Պրեսնյակով Ի., Շապովալովա Ն., Տարապատովա Օ.,Պայքար կոռուպցիայի դեմ Արևելյան գործընկերության երկրներում. քաղաքացիական հասարակության տեսակետները, էջ 12 https://www.moj.am/storage/uploads/001.Ardir_49..pdf (դիտված՝ 26.07.2023 թ.)

117 Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման գործընթացի իրականացման նպատակով ստեղծված հանձնաժողովի 2023 թվականի հունվարի 10-ի որոշում, https://www.gov.am/files/docs/5144.pdf, (դիտված՝ 19.12.2023 թ.)

«Ականատես» (ներառում է Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը (ԹԻՀԿ), «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը» (ԺԱԱ), Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամը և «Ռեստարտ» գիտակրթական հիմնադրամը) և «Անկախ դիտորդ» (ներառում է Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, Իրազեկ քաղաքացիների միավորումը, Մարտունու կանանց համայնքային խորհուրդը և Գորիսի մամուլի ակումբը) դիտորդական առաքելությունները:

Չնայած կան հուսադրող օրինակներ այն մասին, թե ինչպես են կառավարությունները ներգրավում քաղաքացիական հասարակությանը կոռուպցիայի դեմ պայքարի աշխատանքներում, սակայն ավելի ու ավելի շատ երկրներում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեությունը խաթարվում և թիրախավորվում է կառավարությունների կողմից՝ երբեմն հենց կոռուպցիայի դեմ պայքարում դրանց մասնակցության պատճառով[118]: Այդ հանգամանքը չպետք է արգելք հանդիսանա հասարակական կազմակերպությունների՝ բարեփոխումներին միտված պայքարին, այլ, ընդհակառակը, պետք է քաղաքացիների մեջ արթնացնի այդ պայքարի մասնիկը դառնալու ցանկություն և հանգեցնի հանրային լայն աջակցության:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Փոփոխությունների մարաթոն

Տևողությունը՝ 10 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կկարողանան տարբերակել և թվել կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների ծավալած աշխատանքի ազդեցությունը հասարակության վրա:

Նկարագրություն

Սովորողներին հանձնարարել 3-4 րոպեի ընթացքում մտածել և գրել հնարավորինս շատ տարբերակներ այն մասին, թե ինչ փոփոխությունների կարող է հանգեցնել կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում մասնագիտացած հասարակական կազմակերպությունների գործունեությունը: Այնուհետև աշակերտները պետք է առանձնացնեն մեկ այնպիսի տարբերակ, որը չի կրկնի դասընկերների արտահայտած գաղափարները: Մեկ շրջափուլի ավարտից հետո հնարավորություն տալ սովորողներին ասելու այն տարբերակները, որոնք չեն հնչել, որից հետո ամփոփել առաջադրանքը:

118 Škorić V., Civil society participation: an essential element in anti-corruption efforts, UNCA Coalition Civil Society, 2015, https://uncaccoalition.org/civil-society-participation-an-essential-element-in-anti-corruption-efforts/ (դիտված՝ 26.07.2023 թ.)

2 Զրույց ՀԿ ներկայացուցչի հետ

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կծանոթանան իրենց համայնքում/մարզում գործունեություն ծավալող որևէ հասարակական կազմակերպության աշխատանքներին:

Նկարագրություն

Դասի ընթացքում հյուրընկալել հանրային հարցերով մասնագիտացած համայնքային/մարզային հասարակական կազմակերպության ներկայացուցչի: Նախորդ դասին անհրաժեշտ է աշակերտներին հանձնարարել, որ տանը ուսումնասիրեն այդ հասարակական կազմակերպության գործունեությունը և դուրս գրեն հարցեր, որոնք կցանկանան ուղղել տվյալ հասարակական կազմակերպության ներկայացուցչին: Հանդիպման ընթացքում հասարակական կազմակերպության ներկայացուցիչը համառոտ կներկայացնի իրենց գործունեությունը, փոփոխությունները, որոնց հանգեցրել է տվյալ հասարակական կազմակերպության աշխատանքը, որից հետո աշակերտներն իրենց հարցերը կուղղեն ներկայացուցչին:

3 Հզորացնելով համայնքը

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները գործնականում կպատկերացնեն հասարակական կազմակերպության աշխատանքը և դրա ազդեցությունը համայնքային կյանքում:

Նկարագրություն

Սովորողներից կազմել 4-5 հոգանոց խմբեր և ասել, որ նրանք իրենց համայնքում հիմնադրել են համայնքի խնդիրներով զբաղվով հասարակական կազմակերպություն: Խմբերը 5 րոպեի ընթացքում պետք է մտածեն, թե համայնքային ինչ խնդիրների հաղթահարմանն ուղղված կլինի հասարակական կազմակերպության աշխատանքները և պատասխանեն ստորև ներկայացվող հարցերին: Խմբային աշխատանքի ավարտից հետո անհրաժեշտ է լսել խմբերին, որից հետո կատարել ամփոփում՝ կարևորելով այն դրական ազդեցությունը, որը կարող են ունենալ համայնքային հասարակական կազմակերպությունները:

Հարցեր

1. Ի՞նչ է ձեր հիմնադրած հասարակական կազմակերպության անվանումը և նպատակը:
2. Ովքե՞ր կարող են անդամակցել կազմակերպությանը:
3. Համայնքային ո՞ր խնդիրներով է հիմնականում զբաղվում ձեր կազմակերպությունը:

4. Ի՞նչ աշխատանքներ եք պլանավորում իրականացնել այդ համայնքային խնդիրների հաղթահարման համար:
5. Ինչպե՞ս եք ռեսուրսներ հայթայթելու հասարակական կազմակերպության գործունեության ապահովման համար:
6. Ի՞նչ խնդիրների կարող է բախվել ձեր հիմնադրած հասարակական կազմակերպությունը ձեր համայնքում գործունեություն ծավալելիս:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Բուն զրույց. Քաղաքականություններ, Տաթևիկ Մարգարյան

Տևողությունը՝ 29 րոպե

Նկարագրություն՝ Հարցազրույցում խոսվում է հասարակական կազմակերպությունների ֆինանսավորման, կայունության և անկախության մասին:

3.7 ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱՋԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՍՅՈՒՆ

ՁԱՓՈՐՈՇԻՉ

Ա մակարդակ՝ Բացատրի շուկայական տնտեսության մեջ արտադրողների և սպառողների փոխկապվածությունը: Նկարագրի սպառողների պահանջարկի վրա ազդող գործոնները, մրցակցությունն ապահովող մեխանիզմներ:

Բ մակարդակ՝ Մեկնաբանի տնտեսության պետական կառավարման անհրաժեշտությունը: Սպառողների իրավունքների խախտման, պետության կողմից հակամենաշնորհային քաղաքականության իրականացման օրինակներ բերի:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Պետական մի շարք գործառույթներ ուղղված են շուկայական տնտեսության, ազատ ձեռնարկատիրական համակարգի զարգացմանը, սակայն հաճախ այդ գործառույթներն իրականացնելիս կարող են առաջանալ կոռուպցիոն բարձր ռիսկեր, որոնք հակառակ ազդեցությունն են ունենում տնտեսության վրա:

Պետության կողմից սահմանափակումները կարող են հանգեցնել կոռուպցիայի: Եթե որոշակի ապրանքի ներմուծումը ենթակա է քանակական սահմանափակման (օրինակ՝ տարեկան կարող են ներմուծվել միայն սահմանափակ քանակությամբ օտարերկրյա տրանսպորտային միջոցներ), ապա ներմուծման համար անհրաժեշտ լիցենզիաները դառնում են շատ արժեքավոր, և ներմուծողները կարող են փորձել կաշառել այն պաշտոնյաներին, որոնք վերահսկում են դրանց տրամադրումը:

Ընդհանուր առմամբ, տեղական արդյունաբերությունն արտաքին մրցակցությունից սակագների միջոցով պաշտպանելը ստեղծում է մենաշնորհ այդ արդյունաբերության համար: Տեղական արտադրողները կարող են լոբբինգ իրականացնել այդ սակագների սահմանման և պահպանման համար, իսկ ոմանք գուցե ցանկանան կաշառել ազդեցիկ քաղաքական գործիչներին՝ մենաշնորհը պահպանելու համար: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կոռուպցիայի ցածր մակարդակն էապես կախված է բաց տնտեսություն ունենալու հանգամանքից: Այլ կերպ ասած՝ երկրները հակված են ավելի քիչ կոռումպացված լինելու, երբ դրանց առևտուրը համեմատաբար զերծ է կառավարչական սահմանափակումներից, որոնք կոռումպացված պաշտոնյաները կարող են չարաշահել:[119]

Հարկային և մաքսային մարմինների կոռուպցիոն գործելակերպը ևս կարող է իր ազդեցությունն ունենալ շուկայական տնտեսության զարգացման վրա: Երբ այդ մարմինների

119 Mauro P., Why Worry About Corruption? ECONOMIC ISSUES NO. 6, 1997, https://www.imf.org/EXTERNAL/PUBS/FT/ISSUES6/INDEX.HTM (դիտված՝ 26.07.2023 թ.)

աշխատակիցները ոչ հավասար պայմաններ են ստեղծում ձեռնարկությունների համար, հաստատվում է շուկայական անբարեխիղճ մրցակցություն, ստեղծվում են արտոնյալ ձեռնարկատերերի խմբեր, որոնք ունեն բիզնեսի զարգացման, շուկայում գերիշխող դիրք գրավելու և մյուս ձեռնարկություններին շուկայից դուրս մղելու ավելի շատ հնարավորություններ: Դա հանգեցնում է նաև ապրանքների գների էական տարբերությունների, քանի որ այն ձեռնարկությունները, որոնք օգտվում են հարկային և մաքսային «արտոնություններից», վաճառում են իրենց ապրանքն ավելի մատչելի գնով՝ պայմանավորված ինքնարժեքի ցածր լինելով, որի արդյունքում էլ մյուս ձեռնարկությունները չեն կարողանում անհրաժեշտ քանակով սպառել իրենց արտադրանքը և կանգնում են սնանկացման վտանգի առջև:

Գների վերահսկումը, որի նպատակն է իջեցնել որոշ ապրանքների գինը շուկայական արժեքից (սովորաբար սոցիալական կամ քաղաքական պատճառներով), ևս իր մեջ պարունակում է կոռուպցիոն բարձր ռիսկեր: Գների վերահսկողությունը պատճառ է դառնում, որ անհատները կամ խմբերը փորձեն կաշառել պաշտոնյաներին՝ իրենց գործունեությունը իրենց ձեռնտու գներով շարունակելու համար, ինչն էական վնաս է հասցնում տնտեսության զարգացմանը:

Կոռուպցիայի պայմաններում գործարարներին հաճախ տեղեկացվում է, որ ձեռնարկության գործարկման համար պահանջվում է նախնական կաշառք, և որ հետագայում ևս կոռումպացված պաշտոնյաները կարող են պահանջել ներդրումներից ստացված եկամտի մի մասը: Արդյունքում գործարարները կոռուպցիան մեկնաբանում են որպես վնասակար բնույթ ունեցող «հարկի» տեսակ: Քանի որ, մի կողմից, անհրաժեշտ է պահպանել կոռուպցիոն գործարքի գաղտնիությունը, իսկ մյուս կողմից՝ չկա վստահություն, որ կաշառք վերցնողը կկատարի գործարքի իր մասը՝ գործարարների՝ ներդրումներ կատարելու ցանկությունն էապես նվազում է:[120]

Կոշիկի արտադրությամբ զբաղվող հայտնի ընկերություններից մեկը ցանկանում էր մասնաճյուղ բացել Հայաստանի սահմանամերձ քաղաքներից մեկում՝ նպատակ ունենալով նպաստել համայնքի զարգացմանը և աշխատանքով ապահովել համայնքի բնակիչներին: Նախապատրաստական աշխատանքների փուլում, սակայն, պարզվեց, որ ընկերությունն իր տարեկան եկամտի կեսի չափ գումար պետք է փոխանցի համայնքում հայտնի օլիգարխին, հակառակ դեպքում՝ չի ստանա արտադրամաս կառուցելու թույլտվություն: Ընկերությունը դեմ էր նման պայմաններով աշխատելուն և հրաժարվեց մասնաճյուղ բացելու մտքից:

Եթե փորձենք ներկայացնել կոռուպցիայի ազդեցությունը տնտեսական գործունեության պահանջարկի և առաջարկի վրա, ապա կարող ենք ասել, որ պահանջարկ ներկայացնողն այն պաշտոնյան է, որի ձեռքին կա լիցենզիա տրամադրելու, պետական պայմանագիր առաջարկելու իշխանություն, իսկ կոռուպցիա առաջարկողը գործարարն է,

120 Mauro P., Why Worry About Corruption? ECONOMIC ISSUES NO. 6, 1997, https://www.imf.org/EXTERNAL/PUBS/FT/ISSUES6/INDEX.HTM (դիտված՝ 26.07.2023 թ.)

որն ուզում է ստանալ այդ «բարիքները»: Կոռուպցիոն գործարքի 2 կողմն էլ իրավական պատժամիջոցների թիրախ են:[121]

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կազմակերպության կողմից հրապարակվող Կոռուպցիայի ընկալման համաթիվը երկրների համաթվերի հաշվարկման գործընթացում ևս անդրադարձ է կատարում տնտեսական գործունեության ոլորտում առկա կոռուպցիոն դրսևորումներին: Կոռուպցիայի ընկալման համաթիվը գնահատում և դասակարգում է երկրները/տարածքները, որոնք արտացոլում են փորձագետների և գործարարների ընկալումները: Համաթվի ձևավորման համար հիմնականում օգտագործվող 13 հետազոտություններից առնվազն 4-ում խորքային անդրադարձ է կատարվում տնտեսական գործունեության վրա կոռուպցիայի ազդեցությանը:

Օրինակ՝ Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից իրականացվող հետազոտությունում ընդգրկված է հարց այն մասին, թե որքան հաճախ են ձեռնարկությունները կաշառք կամ առանց փաստաթղթավորման հավելավճարներ տրամադրում ներմուծման կամ արտահանման, տարեկան հարկային վճարումների և իրենց գործունեությունից բխող այլ գործողությունների կատարման համար:

Փողի ուժը, հեղինակ՝ Սպիրոս Դերվենիոտիս, 2011 թ, աղբյուրը՝ cartoonmovement.com

Տնտեսության մեջ կոռուպցիոն դրսևորումների դեմ պայքարի գործում խիստ կարևոր է կոռումպացված պաշտոնյաներից ձերբազատվելը: Այդ գործում կարևոր է ինչպես պետության դերակատարումը՝ նմանատիպ դրսևորումները բացահայտելու և դատապարտելու տեսանկյունից, այնպես էլ հանրության դերա կատարումը՝ ազդարարման միջոցով պաշտոնյաների կատարած հանցանքների մասին հայտնելու, կոռումպացված պաշտոնյաների վարքագիծը չհանդուրժելու և բարձրաձայնելու տեսանկյունից:

Առանցքային նշանակություն ունեն նաև կանխարգելիչ միջոցառումները, այդ թվում՝ ընկերությունների իրական սեփականատերերի թափանցիկությունը, պետություն-բիզնես հարաբերությունների արդյունավետ կարգավորումը, գործարարների շրջանում բիզնեսի բարեվարքության սկզբունքների ընդունումն ու արմատավորումը:

121 ԹԻՀԿ, Կառավարման ակադեմիա, «Հակակոռուպցիոն ակադեմիա» դասընթացի գործնական առաջադրանքների ժողովածու .– Եր.: Հեղ. հրատ., 2022.– Հակակոռուպցիոն ակադեմիայի սլայդներ, մոդուլ 6.1, էջ 21, https://www.transparency.am/hy/publication/pdf/304/10018 (դիտված՝ 26.07.2023 թ.)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Ազատ ձեռնարկատիրությունը՝ առանց կոռուպցիայի

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունքը՝ Սովորողները կկարողանան նշել ազատ ձեռնարկատիրության հենասյունների վրա կոռուպցիայի ազդեցությունը և դրան հակազդելու միջոցները:

Նկարագրություն

Սովորողներից կազմվում են 3-4 հոգանոց խմբեր և յուրաքանչյուր խմբին տրամադրվում ստորև ներկայացված աղյուսակը: Խմբերից պահանջվում է 7 րոպեի ընթացքում վերլուծել և գրի առնել կոռուպցիայի ազդեցությունը ազատ ձեռնարկատիրության հենասյունների վրա, այնուհետև յուրաքանչյուր հենասյան համար առաջարկել հակազդման միջոցներ: Աղյուսակի լրացումն ավարտելուց հետո քննարկվում է յուրաքանչյուր խմբի կատարած աշխատանքը և կատարվում ամփոփում:

Ազատ ձեռնարկատիրության հենասյուներ	Կոռուպցիայի ազդեցություն	Հակազդման միջոցներ
Մասնավոր սեփականություն		
Գների համակարգ		
Մրցակցություն		
Ձեռներեցություն		

2 Ո՞ւմ դիմել

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կկարողանան ելքեր գտնել բարձր կոռուպցիոն ռիսկեր պարունակող իրավիճակներում:

Նկարագրություն

Սովորողներից կազմել 4 խումբ և յուրաքանչյուր խմբին տրամադրել կոռուպցիոն բարձր ռիսկեր նկարագրող մեկ իրավիճակ: Սովորողները պետք է որոշեն, թե ինչպես կարող է ձեռնարկատերը պաշտպանել իր իրավունքները՝ առանց ներքաշվելու կոռուպցիայի մեջ: Անհրաժեշտ է նշել, թե քննարկվող դեպքում պետական կամ համայնքային որ մարմիններին կարող է նա դիմել տվյալ իրավիճակում:

Խմբում քննարկման համար տրամադրվում է 5 րոպե, իսկ խմբային աշխատանքի արդյունքների ներկայացման համար՝ մինչև 2 րոպե ժամանակ:

Իրավիճակների օրինակներ

Իրավիճակ 1

Դուք աշխատում եք անշարժ գույքի գործակալությունում:Գլխավոր տնօրենին հեռախոսով սկսել են սպառնալ անհայտ անձինք, որոնք խոսել են Ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) հետ իրենց կապերի մասին և հիշատակել պայմանագրեր կնքելիս ընկերության կողմից բազմաթիվ խախտումների մասին: Խաբեբաներն ակնարկել են կեղծ փաստաթղթեր ստորագրելու համար գլխավոր տնօրենի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու հնարավորության մասին և առաջարկել իրենց վրա վերագրանցել ընկերությունը:

Իրավիճակ 2

Դուք ներկայացնում եք անհատ ձեռներեց Անահիտ Գրիգորյանի շահերը, որը մետրոյի «Բարեկամություն» կայարանի մոտ կրպակ է կահավորել՝ սեփական հացի փռի արտադրանքը վաճառելու համար: Երեկ երեկոյան կրպակավաճառին են մոտեցել երկու երիտասարդներ, որոնք ներկայացել են որպես ոստիկանության ծառայողներ և պահանջել են կրպակատիրոջ բջջային հեռախոսի համարը: Հաջորդ օրը, հեռախոսով կապվելով Ա. Գրիգորյանի հետ, ոստիկանության աշխատակիցները պահանջել են ամսական 250 հազար դրամ գումար փոխանցել իրենց, որպեսզի «տեսչական մարմինների հետ խնդիրներ չառաջանան»:

Իրավիճակ 3

Անցած տարի անհատ ձեռներեց Արթուր Ասատրյանը տպարան էր բացել: Տպարանի մաքրման աշխատանքներում պարբերաբար ներգրավվում էին ապօրինի միգրանտներ, որոնց հետ աշխատանքային պայմանագրեր չէին կնքվում (հետևաբար, նրանց աշխատավարձից հարկեր չէին վճարվում): Աշխատանքի մեկնարկից երկու ամիս անց տպարանում հայտնվել են երկու ոստիկան, որոնք Ա. Ասատրյանին հայտնել են ստուգայց իրականացնելու մասին: Ստուգման արդյունքներով՝ նրանք հաստատել են տպարանում անօրինական միգրանտների աշխատանքի փաստը և Ա. Ասատրյանին առաջարկել են վճարել 1 մլն դրամ, որի փոխանցումից հետո «կարող են աչք փակել խախտման վրա»:

Իրավիճակ 4

«Ստրիմ» ՍՊԸ-ի պլանային ստուգման ժամանակ, որի աշխատակիցն եք դուք, հրշեջ տեսուչ Դավիթ Պետրոսյանը պարզել է, որ առևտրի կենտրոնում հակածխային օդափոխման համակարգը չի համապատասխանում հրդեհային անվտանգության ստանդարտներին: «Ստրիմ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրենի հետ զրույցում տեսուչը խստիվ խորհուրդ է տվել հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով առևտրի կենտրոնը վերազինելիս օգտագործել «Վինկս» ընկերության կողմից արտադրված հակահրդեհային և ծխահեռացնող կափույրներ: Նա սպառնացել է առաջիկայում արտապլանային ստուգում անցկացնել՝ ստուգելու տվյալ պահանջի կատարումը:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Ձուկ գողացողը ձի էլ կգողանա

Տևողությունը՝ 2 րոպե

Նկարագրություն՝ Անիմացիոն տեսանյութում ներկայացվում է, թե ինչպես են պատանիները պայքարում կոռուպցիայի դեմ, կանխում ձկան ոչնչացումն ու նպաստում Սևանի էկոհամակարգի պահպանմանը:

3.8 ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ



Թեմաներ՝ Ակտիվ քաղաքացի, Մասնակցություն և առաջնորդություն, Ընտրություններ

Իրականացման ժամկետը՝ 1 կիսամյակ

Նախագծի նպատակը՝ Սովորողները մասնակցություն կցուցաբերեն հանրային միջոցների վերահսկման գործընթացին, կկարողանան մշակել և կյանքի կոչել իրենց գաղափարը:

Հետազոտության հարցը՝ Ինչպե՞ս մասնակցել բյուջեի ծախսերի պլանավորման գործընթացին:

Խնդիրը՝ մասնակցել հանրային ֆինանսական միջոցների կառավարմանը

Վերջնարդյունքը՝
Սովորողները

- Կմշակեն բյուջեի ծախսման՝ դպրոցական համայնքի կարիքներից բխող գաղափարներ.
- Կկարողանան կազմակերպել ընտրություններ.
- Կկարողանան ֆոնդհայթայթում կատարել:
- Նախագծի համառոտ նկարագրություն

Սովորողները պետք է որոշեն, թե դպրոցի բյուջեի մի փոքր մասը (մինչև 150.000 ՀՀ դրամ) դպրոցի որ կարիքների բավարարմանը կարելի է ուղղել: Այդ նպատակով սովորողները պետք է ուսումնասիրեն դպրոցի բյուջեն, նախատեսվող ծախսերը, ինչպես նաև կարիքները՝ խոսելով աշակերտների, ուսուցիչների, վարչական անձնակազմի ներկայացուցիչների հետ: Դպրոցի կարիքներն ուսումնասիրելուց հետո պետք է մշակեն գաղափարներ, թե նախատեսված գումարով ինչ պետք է գնվի, կամ ինչ աշխատանքներ պետք է կատարվեն դպրոցում: Գաղափարների մշակումից հետո անհրաժեշտ է դրանցից ընտրել 10 լավագույն գաղափարները և աշակերտների, ուսուցիչների և դպրոցի վարչական աշխատակիցների մասնակցությամբ կազմակերպել քվեարկություն: Քվեարկության արդյունքով ամենաշատ ձայներ հավաքած գաղափարի համար կհատկացվի նախատեսված գումարը: Բյուջեում անհրաժեշտ քանակի գումարի բացակայության կամ երկրորդ տեղը զբաղեցրած գաղափարի կյանքի կոչման նպատակով սովորողները կկազմակերպեն ֆոնդհայթայթում: Աշխատանքի ավարտին կազմել համառոտ հաշվետվություն կատարված աշխատանքների, արձանագրված արդյունքի և դրա իրականացման դժվարությունների մասին:

Նախագծի պարտադիր բաղադրիչների նկարագրություն

- **Գաղափարների մշակում՝** ուսումնասիրում են դպրոցի կարիքները՝ խոսելով աշակերտների, ուսուցիչների, վարչական անձնակազմի ներկայացուցիչների հետ, և մշակում գաղափարներ նախատեսված գումարի օգտագործման համար:
- **Ընտրություններ՝** ընտրվում են 10 լավագույն գաղափարները, աշակերտների, ուսուցիչների և դպրոցի վարչական աշխատակիցների մասնակցությամբ կազմակերպվում է քվեարկություն:
- **Ֆոնդհայթայթում՝** բյուջեում անհրաժեշտ քանակի գումարի բացակայության դեպքում՝ ընտրված գաղափարի, իսկ բյուջեի առկայության դեպքում՝ երկրորդ տեղը զբաղեցրած գաղափարի կյանքի կոչման նպատակով կազմակերպվում է ֆոնդհայթայթում:

Նախագծի ընթացքը

Ուսուցչի գործողություններ	Աշակերտների գործողություններ
1| Նախապատրաստական փուլ	
• Ներկայացնել նախագծի համար պարտադիր համարվող բաղադրիչները: • Ներկայացնել բյուջեի չափը: • Հաշվի առնելով աշակերտների հետաքրքրությունները՝ ձևավորել աշխատանքային խմբեր (յուրաքանչյուր խմբում 3-4 աշակերտ): • Աջակցել խմբի անդամների աշխատանքային դերերի բաշխման գործընթացին:	• Սովորողները ծանոթանում են բյուջեի չափին և այն աշխատանքներին կամ գնումներին, որոնք հնարավոր է իրականացնել այդ գումարի սահմանում: • Կազմվում են աշխատանքային խմբերը: Սովորողները կատարում են աշխատանքի բաշխում և որոշում են իրենց դերերը: Ընտրում են խմբի պատասխանատուին: • Որոշում են հանդիպումների հաճախականությունը և ձևաչափը: • Նշումներ են կատարում նախագծի պարտադիր բաղադրիչների մասին:
2| Պլանավորման փուլ	
• Աջակցել նախագծի ներկայացման աշխատանքներին: • Ներկայացնել աշխատանքի գնահատման չափանիշները:	• Որոշում են խմբերի անունները: • Պլանավորում են խմբի կողմից կատարվելիք աշխատանքները և սահմանում վերջնարդյունքներ: • Որոշում են, թե պարտադիր բաղադրիչներից բացի կան արդյոք այլ բաղադրիչներ, որը խումբը ցանկանում է ներառել նախագծում:

3| Իրականացման փուլ	
• Կազմակերպել/հետևել կարիքի գնահատման աշխատանքներին: • Քննարկել միջանկյալ հարցեր, որոնք առաջացել են աշխատանքն իրականացնելիս: • Աջակցել լավագույն գաղափարների ընտրման, քվեարկության կազմակերպման և անցկացման, ֆոնդհայթայման աշխատանքներին:	• Հարցազրույցներ, քննարկումներ են կազմակերպում դպրոցում առկա կարիքների բացահայտման նպատակով: • Գրի են առնում գաղափարները, ապա ուսուցչի հետ ընտրում լավագույն 10-ը գաղափարները: • Կազմակերպում և անցկացնում են քվեարկություն: • Իրականացնում են ֆոնդհայթայթում ընտրված կամ երկրորդ տեղը զբաղեցրած գաղափարը կյանքի կոչելու նպատակով: Ֆոնդհայթայթման նպատակով կարելի է կազմակերպել դրամահավաք սոցիալական մեդիայում, դիմել համայնքապետարանին, դպրոցի կառավարման խորհրդին, Հայաստանում գործունեություն ծավալող բարեգործական կառույցներին և այլն: • Դպրոցի վարչական աշխատակիցների աջակցությամբ կյանքի է կոչվում գաղափարը:

4| Արդյունքների ամփոփման փուլ	
• Կազմել աշակերտների նախագծի ներկայացման պլան՝ համաձայնեցնելով աշակերտների հետ: • Կազմակերպել նախագծի պաշտպանությունը (մեկ կամ երկու դասաժամ): • Աջակցել նախագծի ներկայացման նախապատրաստման աշխատանքներին: • Կազմակերպել նախագծի ներկայացման փորձ և տրամադրել խորհրդատվություն շտկման ենթական հարցերի վերաբերյալ:	• Ամփոփում են կատարված աշխատանքները: • Կազմվում է համառոտ հաշվետվություն կատարված աշխատանքների, արձանագրված արդյունքի և դրա իրականացման դժվարությունների մասին: • Նախապատրաստվում են նախագծի ներկայացմանը:

5| Ներկայացման և գնահատման փուլ	
• Բարձր դասարանի աշակերտների և ուսուցիչների ներգրավվածությամբ կազմել նախագծերը գնահատող խումբ: • Գնահատող խմբին տրամադրել գնահատման ձևաթուղթը և մեկնաբանել դրա լրացման կարգը: • Աջակցել խմբային գնահատականների ձևավորմանը և դրանց հիման վրա գնահատել յուրաքանչյուր աշակերտի (օգտագործել անհատական գնահատման ձևաթերթը): Տրամադրել հետադարձ կապ բարելավման ենթակա հարցերի վերաբերյալ: • Կազմել իրականացված աշխատանքի վերլուծություն, առանձնացնել բարելավման ենթակա աշխատանքները:	• Ներկայացնում են կատարված աշխատանքը, պատասխանում հարցերին:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ

Դասարան՝

Խմբի անվանումը՝

Խմբի անդամները՝

Գնահատման չափանիշներ	Գնահատման միավորային սանդղակ	Գնահատական	Հավելյալ նշումներ
Կատարված հետազոտական աշխատանքի համապատասխանությունը նպատակին	0՝ չի համապատասխանում		
	1՝ մասամբ է համապատասխանում		
	2՝ հիմնականում համապատասխանում է		
	2.5՝ լիովին համապատասխանում է		
Իրականացված աշխատանքի համապատասխանությունը հիմնական բաղադրիչներին	0՝ չի համապատասխանում		
	1՝ մասամբ է համապատասխանում		
	2՝ հիմնականում համապատասխանում է		
	2.5՝ լիովին համապատասխանում է		
Կատարված աշխատանքի ներկայացման հմտությունները և պաշտպանությունը	0.5՝ բավարար		
	1՝ հիմնականում լավ		
	1.5՝ լավ		
	2՝ գերազանց		
Խմբային աշխատանքը, աշակերտների համագործակցության արդյունավետության մակարդակը	0.5՝ բավարար		
	1՝ հիմնականում լավ		
	1.5՝ լավ		
	2՝ գերազանց		
Կատարված աշխատանքների կազմակերպվածությունը և համակարգվածությունը	0՝ առկա չէ		
	1՝ առկա է		
Ընդամենը՝			

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ

Գնահատումն իրականացնում է ուսուցիչը

Դասարան՝

Աշակերտի անուն ազգանուն՝

Գնահատման չափանիշներ	Գնահատման միավորային սանդղակ	Գնահատական	Հավելյալ նշումներ
Աշակերտի բովանդակային ակտիվությունը նախագծային աշխատանքն իրականացնելիս	0՝ ակտիվ չէր		
	1՝ երբեմն ակտիվ էր		
	2՝ հաճախակի ակտիվ էր		
	2.5՝ շատ ակտիվ էր		
Աշակերտի ինքնուրույնությունը և նախաձեռնողականությունը նախագծային աշխատանքն իրականացնելիս	0՝ բացակայում էր		
	1՝ դրսևորվել է հազվադեպ		
	2՝ հիմնականում առկա էր		
	2.5՝ եղել է ինքնուրույն և ցուցաբերել մի շարք նախաձեռնություններ		
Խմբային աշխատանքի միավոր	Առավելագույնը՝ 5 միավոր (կազմում է խմբային աշխատանքի միավորի 50%-ը)		

Ընդամենը՝

ԳԼՈՒԽ

10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

4.1 ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՐԴՈՒ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

4.2 ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

4.3 ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

4.1 ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՐԴՈՒ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ



ՁԱՓՈՐՈՇԻՉ

Նպատակ և այլ պահանջներ[122]՝ Զարգացնել ժամանակակից մարդու և հասարակության հիմնախնդիրները վերլուծելու կարողությունները տարբեր հասարակական գիտությունների տեսանկյունից:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Հասարակական փոխհարաբերություններում մեր ունեցած դերը պատկերացնելը շատ հաճախ բարդ է, քանի որ որքան էլ մենք մեզ տեսնում ենք որպես հասարակության մաս, այդ փոխհարաբերության անմիջական, պատկերավոր ազդեցությունը մենք միշտ չէ, որ նկատում ենք: Կոռուպցիան անձնականի և հասարակականի փոխհարաբերությունները արտացոլող սոցիալական երևույթներից է, որը հասարակական և անձնական շահերի պայքարում առավելությունը տալիս է անձնականին:

Պաշտոնյան գերադասում է վերանորոգել ոչ թե քաղաքի բանուկ և վթարային վիճակում գտնվող պողոտան, այլ նեղլիկ ու սակավամարդ ճանապարհը, որի հարևանությամբ ապրում է իր եղբայրը, քանի որ չվերանորոգված ճանապարհով երթևեկելն իր ու իր հարազատների համար անհարմարություններ է ստեղծում:

Հասարակության մեջ արմատավորված կոռուպցիան բացասական ազդեցություն է թողնում պետության և հասարակության տնտեսական, սոցիալ-քաղաքական և այլ ոլորտների վրա: Խորանալով և ներթափանցելով տարբեր ինստիտուտներ և համակարգեր այն դառնում է մշակույթի ու առօրյա կյանքի մաս, սովորական երևույթ: Սոցիալական ոլորտում կոռուպցիան նպաստում է բնակչության տարբեր խավերի միջև սոցիալական անհավասարության խորացմանը: Պետական միջոցները բաշխվում են անհավասար՝ հօգուտ փոքր ազդեցիկ խմբերի, հաճախ՝ բարձրաստիճան պաշտոնյաների՝ անտեսելով բնակչության խոցելի խմբերին: Տնտեսական ոլորտում կոռուպցիան հանգեցնում է շուկայական հարաբերությունների խաթարմանը: Այն սահմանափակում է մրցակցությունը շուկայում, նվազեցնում է արտադրանքի որակը և բարձրացնում ինքնարժեքը: Քաղաքական ոլորտում կոռուպցիան դառնում է քաղաքական միջավայրի «կեղտոտման», ընդհանուր

122 Վերջնարդյունք 4-րդ՝ Բացատրի անհատականի և հասարակականի փոխհարաբերությունը:
Թեմայի բովանդակություն 3-րդ՝ Հասարակական փոփոխությունների վրա ազդող գործոնները. տեխնոլոգիաներ, մշակույթ, գաղափարներ, կոլեկտիվ գործողություններ:
Ուղղորդող հարցեր 3-րդ՝ Ինչպե՞ս են ազդում տեխնոլոգիաները, մշակույթը, գաղափարները, կոլեկտիվ գործողությունները հասարակական փոփոխությունների վրա:

քաղաքականության վարկաբեկման ու «փչացման», քաղաքական էլիտայի նկատմամբ հանրային վստահության կորստի պատճառ, շեղում է քաղաքական գործիչների նպատակները և գործունեությունը հանրային շահերից դեպի անձնական կամ նեղ կուսակցական շահեր, և ի վերջո կարող է հանգեցնել կառավարման ոչ ժողովրդավար մոդելների հաստատման:[123] Այն նաև անխուսափելիորեն թուլացնում է իրավապահ և դատական համակարգերը, ռիսկի տակ դնում արդարադատության բոլոր հնարավորությունները:

Ժամանակակից մարդու և հասարակության առջև ծառացել են բազմաթիվ մարտահրավերներ, որոնց հիմքում նաև կոռուպցիոն գործոններն են: Դրանցից են կլիմայի փոփոխությունը, ահաբեկչությունը, թրաֆիքինգը և այլն: Կոռուպցիան հանգեցնում է կլիմայի փոփոխությունների և նույնիսկ կարող է էապես նվազեցնել դրա դեմ պայքարին ուղղված ջանքերը՝ առաջին հերթին՝ այդ նպատակով ուղղված միջոցների ոչ նպատակային օգտագործման պատճառով: Զարմանալի չէ, որ որոշ ոլորտներ, որոնք շատ կարևոր դեր են խաղում կլիմայական փոփոխության դեմ պայքարում, հայտնի են բարձր կոռուպցիոն ռիսկայնությամբ:

Նման ոլորտներից է, օրինակ, հանքարդյունաբերությունը, որտեղ կարող են կուտակվել հսկայական եկամուտներ և քաղաքական մեծ ազդեցություն, որով էլ պայմանավորված՝ կոռուպցիան սկսում է կիրառվել որպես երկրում գործող կարգավորումներից և հասցրած վնասի վերականգնումից խուսափելու միջոց:[124] Առանց կոռուպցիայի, ածխածնի արտանետումները շատ ավելի ցածր կլինեին, քանի որ կոռուպցիան ավելի քան մեկ դար է, ինչ նպաստում է ածխաջրածինների արդյունահանմանը:[125]

Կոռուպցիան խոչընդոտում է կլիմայական բարեփոխումների կյանքի կոչմանը և շեղում կլիմայի պահպանմանն ուղղված ֆինանսավորումը իր նպատակից: Ի վերջո, կոռուպցիան թուլացնում է մեր դիմադրողականությունը կլիմայի փոփոխության հանդեպ՝ մեծացնելով հասարակության խոցելիությունը կլիմայի փոփոխությունների նկատմամբ և, հետևաբար, սպառնում է մարդկանց կյանքին, ինչն իր հերթին խթանում է նոր կոռուպցիոն գործարքների կայացումը[126]: Կոռուպցիան նպաստում է աղքատության աճին,[127] իսկ սոցիալապես խոցելի մարդիկ ավելի են տուժում նաև կլիմայական փոփոխություններից[128]: Ժամանակակից հասարակության համար մեկ այլ սպառնալիք և մարտահրավեր են կեղծ լուրերը՝ կեղծ տեղեկությունների տարածումը, որը ժողովրդավարության և լրատվամիջոց-

123 Journal of Contemporary Issues in Business and Government, Effects Of Corruption On People, https://www.cibgp.com/article_7367_bb42f63cce207bcb4a7ead8080816046.pdf (դիտված՝ 26.07.2023 թ.)

124 Anderson J., To tackle climate change, take on corruption, Development, and a Changing Climate, 2021 https://blogs.worldbank.org/climatechange/tackle-climate-change-take-corruption (դիտված՝ 26.07.2023 թ.)

125 Transparency International France, Corruption and climate change: the key to the past and the fight for the future, 2023, https://transparency-france.org/2023/03/20/corruption-and-climate-change-the-key-to-the-past-and-the-fight-for-the-future/ (դիտված՝ 18.12.2023 թ.)

126 Transparency International France, Rafitoson K., Valérian F., Corruption, and climate change: the key to the past and the fight for the future, https://shorturl.at/EofAa (դիտված՝ 26.07.2023 թ.)

127 International Monetary Fund, Sanjeev Gupta, Hamid Davoodi, Rosa Alonso-Terme, Does corruption affect income inequality and poverty? 1998, page 4, https://shorturl.at/C05V9 (դիտված՝ 19.12.2023 թ.)

128 The World Bank, Social Dimensions of Climate Change, 2023, https://www.worldbank.org/en/topic/social-dimensions-of-climate-change (դիտված՝ 19.12.2023 թ.)

ԹԻՀԿ, 2023 թ, աղբյուր՝ transparency.am

ների նկատմամբ հանրային վստահության հիմնական սպառնալիքներից է: Զանգվածային լրատվության միջոցներով տարածվող իրականությանը չհամապատասխանող նորությունների հիմքում կարող է ընկած լինել հենց կոռուպցիան: Քաղաքական ազդեցություն ունեցող պաշտոնյաները, ազդեցիկ, կոռուպցիոն տարբեր ճանապարհներով հարստացած գործարարները, օգտվելով իրենց դիրքից և կապերից, կարող են «գնել» լրատվամիջոցներին և լրագրողներին՝ իրենց շահերը սպասարկող նորությունների հրապարակման համար: Այսպիսով՝ կոռուպցիայի արդյունքում լրատվադաշտում հայտնվում են իրականությանը չհամապատասխանող և մանիպուլատիվ լուրեր, որոնք առաջացնում են զայրույթ, բացասական հանրային տրամադրություններ, հեղինակազրկում անձանց, սերմանում ատելություն տարբեր խմբերի միջև: Ապատեղեկատվության տարածմանը հատկապես նպաստում է սոցիալական մեդիան և ներկայումս բազմաթիվ ժողովրդավարական երկրներ փնտրում են լուծումներ՝ կարգավորելու տվյալ խնդիրն այնպես, որ վնաս չհասցվի խոսքի ազատությանը:

Միգրացիան և կոռուպցիան, հեղինակ՝ Խալիդ Չերրադի, 2018 թ, աղբյուր՝ cartoonmovement.com

Ժամանակակից ամենահրատապ խնդիրներից մյուսը միգրացիան է, քանի որ միլիոնավոր մարդիկ լքում են իրենց երկրները՝ փնտրելով անվտանգություն, ավելի լավ աշխատանք կամ բարեկեցիկ կյանք: 1990 թվականին կար 153 միլիոն միջազգային միգրանտ, 2020-ին՝ 281 միլիոն, ինչը նշանակում է, որ միգրանտների թիվը 30 տարվա ընթացքում աճել է գրեթե 50%-ով: Վերջերս կոռուպցիան սահմանվել է որպես միգրացիայի հիմնական շարժիչ ուժ, որն ազդում է մարդկանց՝ այլ երկրներ և տարածաշրջաններ տեղափոխվելու ցանկության վրա: Տնտեսական հնարավորությունների բացակայությունը և անապահովությունը համարվել են միգրացիայի վրա ազդող հիմնական գործոններ, որոնց վրա էլ կոռուպցիան ունի հսկայական ազդեցություն: Կոռուպցիան դանդաղեցնում է տնտեսական աճը՝ դրանով իսկ նվազեցնելով տնտեսական հնարավորությունները: Մյուս կողմից, կոռուպցիան խթանում է անվտանգության ու խաղաղության բացակայությունը և հակամարտությունների աճը:[129]

Մի խումբ անձինք՝ շահադիտական նպատակով, երկու և ավելի անձանց անօրինական միգրացիան կազմակերպելու դիտավորությամբ, նախնական համաձայնու-

129 Transparency International the global coalition against corruption, Literature review: corruption as a driver of migration, Anti-Corruption Resource Centre https://knowledgehub.transparency.org/assets/uploads/helpdesk/Literature_review_corruption_and_migrations.pdf (դիտված՝ 26.07.2023 թ.)

թյան գալով Երևան քաղաքում գործող տուրիստական գործակալության ղեկավար կազմի հետ, յուրաքանչյուր անձի հաշվարկով 20.000-26.000 ԱՄՆ դոլարի դիմաց կազմակերպել են ՀՀ մի շարք քաղաքացիների անօրինական մեկնումն օտարերկրյա պետություններ՝ այդ նպատակով մեկնող անձանց անվամբ պատրաստելով աշխատանք ունենալու, աշխատավարձի չափի, այլ եկամուտների, անշարժ ու շարժական գույքերի վերաբերյալ կեղծ փաստաթղթեր, որոնք ներկայացվել են ՀՀ-ում և արտերկրում գտնվող իրավասու մարմիններին:[130]

Հասարակության ժամանակակից հիմնախնդիրներից է նաև թրաֆիքինգը, որը չի կարող իրականացվել առանց կոռուպցիայի:[131] Մարդկանց թրաֆիքինգը կազմակերպված հանցավորության ամենաեկամտաբեր ձևերից մեկն է: Աշխարհում ավելի քան 20,9 միլիոն մարդ համարվում է թրաֆիքինգի զոհ: Մարդկանց թրաֆիքինգը տեղի է ունենում այն ժամանակ, երբ կոռումպացված պաշտոնյաները համագործակցում են հանցավոր խմբավորումների հետ: Այն թույլ է տալիս, որ կատարված հանցագործությունը մնա անկատ և հանգեցնում է մեղավորների անպատժելիությանը՝ նույնիսկ թրաֆիքինգի դեպքերի բացահայտումից հետո:[132]

Հանցավոր խմբի ներկայացուցիչները, համագործակցելով իրավապահ մարմինների հետ, ստանում էին անբարենպաստ ընտանիքներում ապրող անչափահասների տվյալներ և ներգրավում նրանց մուրացկանության մեջ: Երեխաներից յուրաքանչյուրը մուրացկանությամբ օրական մինչև 50 հազար դրամ էր աշխատում, որից ստանում էր միայն 3 հազար դրամ: Մնացած գումարը տնօրինում էր հանցավոր խումբը՝ ամսական որոշակի գումար էլ բաժին հանելով իրավապահներին, որոնք, ի պատասխան, չէին նկատում մուրացիկ երեխաներին և ընթացք չէին տալիս մտահոգ քաղաքացիների դիմումներին:

Թմրանյութերի տարածման և ապօրինի շրջանառության նկատմամբ վերահսկողական ջանքերը հաճախ խաթարվում են կոռուպցիայի պատճառով, որտեղ ներգրավված են լինում բարձրաստիճան պաշտոնյաները: Կոռուպցիան ամենաարդյունավետ գործիքներից է, որը կազմակերպված հանցավոր խմբերն օգտագործում են իրավապահ մարմինների՝ թմրամիջոցների շրջանառության դեմ պայքարի ջանքերին հակազդելու համար: Պետական պաշտոնյաների կոռումպացվածությունը, ի վերջո, հզորացնում է հանցավոր կազմակերպություններին՝ հաճախ նրանց դարձնելով օրենքի համար անհասանելի:[133]

Ամփոփելով կարող ենք ասել, որ կոռուպցիան գլոբալ երևույթ է, որն առաջացնում է աղքատություն, խոչընդոտում է տնտեսության զարգացումը և վանում ներդրումները: Այն

130 Հայաստանի հանրային ռադիո, Բացահայտվել է անօրինական միգրացիայի կազմակերպմամբ զբաղվող հերթական հանցավոր խումբը, https://hy.armradio.am/archives/430368 (դիտված՝ 26.07.2023 թ.)

131 OECD, Human trafficking and corruption, https://shorturl.at/9XzLye (դիտված՝ 26.07.2023 թ.)

132 OECD, Human trafficking and corruption, https://shorturl.at/9XzLy (դիտված՝ 26.07.2023 թ.)

133 Report of the International Narcotics Control Board, chapter I. Drugs and corruption, 2010 https://www.incb.org/documents/Publications/AnnualReports/Thematic_chapters/English/AR_2010_E_Chapter_I.pdf (դիտված՝ 26.07.2023 թ.)

բացասաբար է ազդում կլիմայական փոփոխությունների, թրաֆիքինգի, միգրացիայի և մի շարք այլ հասարակական հիմնախնդիրների վրա՝ խաթարելով պետությունների, ազգերի, համայնքների կայուն զարգացումը: Անկախ նրանից, թե կառավարությունը, մասնավոր հատվածը և քաղաքացիական հասարակությունը աշխատում են միմյանցից անկախ, թե միասին, նրանք կարող են առանցքային դեր ունենալ կոռուպցիան զսպելու ջանքերում: Անհատները նույնպես կարող են օգնել դիմակայելու այս գլոբալ խնդրին՝ հրաժարվելով և պայքարելով հանցավոր գործողությունների դեմ, որոնք կարող են կործանարար հետևանքներ ունենալ իրենց հասարակության և երկրի համար:[134]

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Կոռուպցիան և հասարակությունը

Տևողությունը՝ 10 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կկարողանան ներկայացնել կոռուպցիայի ազդեցությունը հասարակության վրա:

Նկարագրություն

Սովորողներից կազմել 3-4 հոգանոց խմբեր և հայտարարել մրցույթ, ըստ որի հաղթող կդառնա այն խումբը, որը 5 րոպեի ընթացքում կկարողանա դուրս գրել ամենաշատ խնդիրները, որն առաջացնում է կոռուպցիան ժամանակակից հասարակական կյանքում: Խմբային աշխատանքի ավարտից հետո անհրաժեշտ է քննարկել յուրաքանչյուր խմբի պատասխանները՝ ճիշտ պատասխանի համար հատկացնելով 1 միավոր, որից հետո ամփոփել առաջադրանքը և հայտարարել, թե որ խումբն է հաղթել:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Հայաստանի կոտրվող ողնաշարը

Տևողությունը՝ 1 ժամ 7 րոպե

Նկարագրություն՝ Վավերագրական ֆիլմում ներկայացվում է, թե ինչ բնապահպանական, առողջապահական և սոցիալական խնդիրների է հանգեցնում հանքերի շահագործումը Հայաստանում:

134 Countering the global problem of corruption, Every year, over US$ 1 trillion is paid in bribes around the world, enriching the corrupt and robbing generations of a future, UNODC, https://www.unodc.org/newsletter/200601/page004.html (դիտված՝ 26.07.2023 թ.)

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Դավաճանություն սկսնակների համար (անգլերեն)

Տևողությունը՝ 1 ժամ 48 րոպե

Նկարագրություն՝ Գեղարվեստական ֆիլմում ներկայացվում է ՄԱԿ-ի կոռումպացված բարձրաստիճան պաշտոնյայի գործունեությունը, դրա հետևանքները խոցելի խմբերի վրա և ազդարարման դերը կոռուպցիայի դեմ պայքարում:

4.2 ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՁԱՓՈՐՈՇԻՉ

Նպատակ և այլ պահանջներ[135]՝ Ներկայացնել տնտեսական ռեսուրսների և արտադրական գործոնների բաշխման խնդիրը, զարգացնել շուկայական գնի վրա առաջարկի ու պահանջարկի, ինչպես նաև մրցակցության ազդեցությունը վերլուծելու հմտությունները:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Կոռուպցիան հսկայական բացասական ազդեցություն ունի տնտեսության զարգացման, շուկայական տնտեսության բնականոն աշխատանքի վրա: Այն խորացնում է տնտեսական անհավասարությունը, համաձայն որի՝ անօրինական միջոցներով հարստացածներն ավելի հավանական է, որ կազդեն հօգուտ իրենց տարբեր որոշումների կայացման վրա՝ խախտելով օրինականությունն ու հավասար հնարավորությունների սկզբունքները: Կոռուպցիան կարող է խոչընդոտ դառնալ անհատների կամ կազմակերպությունների համար, որոնք, օրինակ, ցանկանում են ներդրումներ կատարել նոր ապրանքների արտադրության գործընթացում: Այն կարող է խեղաթյուրել արդար մրցակցությունը՝ կաշառակերության, մրցութային հայտերի կեղծման կամ մանիպուլյացիայի այլ ձևերի և անազնիվ խաղի միջոցով: Բարձր էթիկական չափանիշներ ունեցող ընկերությունների համար կարող է դժվար լինել մրցակցել կոռուպցիոն բարձր ռիսկայնություն ունեցող երկրներում կամ ոլորտներում, եթե մյուս ընկերությունները ցանկանում են և կարողանում են աշխատել ստվերում:[136]



Կոռուպցիա, հեղինակ՝ Ռահմա, 2020թ, աղբյուր՝ cartoonmovement.com

Կոռուպցիան կարող է խոչընդոտել արդար շուկայական մրցակցությանը՝ մինչև իսկ խեղաթյուրելով պետական ծախսերի կառուցվածքը: Այն կարող է պատճառ դառնալ, որ պետական պաշտոնյաները որոշեն պետական ծախսերի առաջնահերթությունները՝ ելնելով ոչ թե հանրային, այլ անձնական շահերից: Այդպիսով՝ անհրաժեշտ է դառնում հանրային ռեսուրսների կառավարման գործընթացում կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, որի նպատակով մշակվում և ներդրվում են տարաբնույթ գործիքներ, որոնք կնպաստեն պետական համակարգի աշխատանքի հաշվետվողականության, թափանցիկության և այդ գործընթացներում

135 Վերջնարդյունք 3-րդ՝ Ներկայացնի արտաքին և ներքին գործոնների ազդեցությունը շուկայի վրա:
Թեմայի բովանդակություն 3-րդ՝ Շուկայական մրցակցություն և մենաշնորհ:
Ուղղորդող հարցեր 3-րդ՝ Ի՞նչ նպատակով են տնտեսվարողները խախտում տնտեսական մրցակցությունը: Ինչո՞ւ է կարևոր այն վերականգնելը, ինչպե՞ս կարելի է դա իրագործել:

136 Aiolfi G., Müller Torbrand C., Is Collective Action against corruption a competition risk for companies?, ICC, 2022 https://shorturl.at/w3Rri (դիտված՝ 26.07.2023 թ.)

հասարակության անդամների մասնակցայնության աճին: Այդպիսի գործիքներից են պետական գնումների էլեկտրոնային համակարգերը (https://gnumner.minfin.am/hy/, https://www.e-gov.am/transparent/), որտեղ տեղ են գտնում պետական գերատեսչությունների բոլոր գնումները, բացառությամբ օրենքով սահմանված ազգային անվտանգության նկատառումներով պետական գաղտնիք պարունակող գնումների: Ըստ գնումների մասին ՀՀ օրենքի՝ գնում է համարվում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և այլ պատվիրատուների ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների ձեռքբերումը և մի շարք այլ գործարքներ:[137] Գնումների էլեկտրոնային համակարգերը թույլ են տալիս բարձրացնել հանրության կողմից հանրային վերահսկողության հնարավորությունը, մեծացնում են գնումների գործընթացի թափանցիկությունը և տեղ գտած կոռուպցիոն դրսևորումների բացահայտման հավանականությունը:

Կոռուպցիայի ու ապօրինի ֆինանսական գործարքների, այդ թվում՝ պաշտոնատար անձանց ներգրավման արդյունքում շահերի բախման, հարկերից խուսափելու ու ոչ մրցակցային արտոնություններ ստանալու, կաշառակերության, փողերի լվացման ու ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցներից է իրական շահառուների բացահայտումը[138]: Իրական շահառուն այն անձն է, որին փաստացի պատկանում է կազմակերպությունը կամ որն իրականում վերահսկում է կազմակերպությունը:[139] Իրական շահառուների բացահայտման առանցքային խնդիրը հնարավոր չարաշահումների բացառումն է, քանի որ անանուն շահառուներով կազմակերպությունները պարարտ հող են ստեղծում կոռուպցիայի տարբեր դրսևորումների ու ապօրինի ֆինանսական գործարքների համար: Ընկերությունների իրական շահառուներին բացահայտելիս կարևոր է նաև քաղաքական ազդեցություն ունեցող անձանց նույնականացնելը՝ առևտրային կազմակերպությունների հետ նրանց կապը և դրանից ծագող կոռուպցիոն ռիսկերը վերահսկելու համար:[140]

Պետք է հիշել նաև, որ խոշոր նախագծերը, որոնց ճշգրիտ արժեքը դժվար է որոշել, կարող են շահավետ հնարավորություններ ստեղծել կոռուպցիայի համար:[141] Արդյունքում՝ ոչ օրինական ճանապարհով ձեռք բերված եկամուտները որպես օրինական ներկայացնելու, այսպես ասած՝ «փողերը լվանալու» անհրաժեշտություն կառաջանա: Փողերի լվացումը ապօրինի ճանապարհով ձեռք բերված եկամուտների օրինականացումն է, որը կատարվում է օրինական տնտեսական գործունեության միջոցով՝ թաքցնելով այդ

137 ՀՀ օրենքը «Գնումների մասին», ՀՕ-21-Ն, 2016, հոդված 2, 1-ին մաս https://www.arlis.am/documentview.aspx?docID=110820, (դիտված՝ 20.12.2023 թ.)

138 ԹԻՀԿ, Գրիգորյան Ա., Այդինյան Վ., Իրական շահառուների թափանցիկությունը. միջազգային փորձ և հայաստանյան գործընթացներ, 2021, էջ 4 https://transparency.am/assets/documents/1643014090-44187-797.pdf (դիտված՝ 26.07.2023 թ.)

139 ՀՀ օրենքը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին», ՀՕ-80-Ն, 2008, Հոդված 3, 1-ին մաս, 12-րդ կետ, https://www.arlis.am/documentview.aspx?docid=44673 (դիտված՝ 12.20.2023 թ.)

140 ԹԻՀԿ, Գրիգորյան Ա., Այդինյան Վ., Իրական շահառուների թափանցիկությունը. միջազգային փորձ և հայաստանյան գործընթացներ, 2021, էջ 5-6, https://transparency.am/assets/documents/1643014090-44187-797.pdf (դիտված՝ 26.07.2023 թ.)

141 Mauro P., Why Worry About Corruption? ECONOMIC ISSUES NO. 6, 1997, https://www.imf.org/EXTERNAL/PUBS/FT/ISSUES6/INDEX.HTM (դիտված՝ 26.07.2023 թ.)

եկամուտների իրական ծագումը, պատկանելությունը և նպատակը: Համաշխարհային մասշտաբով լվացված փողերի ծավալը տարեկան կազմում է մոտ 800 միլիարդից մինչև մեկ տրիլիոն դոլար, ընդ որում՝ 300-500 միլիարդը ստացվում է թմրանյութերի ապօրինի վաճառքից: Լվացված փողերի քանակը կազմում է համաշխարհային համախառն արդյունքի 2-5%-ը:[142] Փողերի լվացման նպատակով հաճախ կիրառվում են նաև օֆշորային գոտիներում[143] բացված ընկերությունները: Գնահատվում է, որ զարգացող երկրները տարեկան կորցնում են 120-160 միլիարդ դոլարի պոտենցիալ հարկային եկամուտներ այն քաղաքացիներից, որոնք իրենց հարստությունը թաքցնում են օֆշորներում:

Կոռուպցիան, հեղինակ՝ Սեյրան Գաֆերլի, 2022, աղբյուր՝ cartoonmovement.com

Աֆրիկան հարկերից խուսափելու պատճառով երկու անգամ ավելի շատ է կորցնում, քան ստանում է միջազգային օգնության տեսքով:[144]

Իրավաբանների, հաշվապահների և այլ մասնագետների կողմից ստեղծված ընկերություններն ապահովում են անհրաժեշտ գաղտնիություն հանցագործների և կոռումպացվածների համար՝ անպատիժ միջոցներ գողանալու և թաքցնելու համար: Գողացված միջոցները, «լվացվելով» մի շարք օֆշորային կեղծ կազմակերպությունների միջոցով, դուրս են գալիս «մաքուր» և պատրաստ օգտագործվելու շքեղ իրերի և ճոխ ապրելակերպի համար: Աշխարհում բացահայտվել են փողերի լվացման մի քանի խոշոր սխեմաներ, որոնք ստացել են լվացքատուն անվանումը, օրինակ՝ ռուսական լվացքատուն, ադրբեջանական լվացքատուն և այլն: Փորձագետների գնահատմամբ՝ ավելի քիչ զարգացած տնտեսություններն օֆշորային գոտիների պատճառով կորցնում են երեք անգամ ավելի շատ գումար, քան ստանում են օգնություն:

Նիկարագուայի երբեմնի խոստումնալից տնտեսությունը խոր հետընթաց է գրանցել այն բանից հետո, երբ նախագահը և նրա գործընկերները պետական բյուջեից միլիոնավոր դոլարներ են փոխանցել օֆշորային բանկային հաշիվների վրա՝ սառեցնելով խոշոր ենթակառուցվածքային նախագծերը և օտարերկրյա ներդրումները:[145]

---

142 Bonderud D., The most mind-blowing money laundering statistics of 2023, https://shorturl.at/Lr35x (դիտված՝ 26.07.2023 թ.)

143 Օֆշորային գոտիները երկրներ կամ տարածաշրջաններ են, որոնք իրավաբանական անձանց գործունեության համար տրամադրում են հարկային, մաքսային և այլ արտոնություններ: Այն անվանում են նաև հարկային ապաստարաններ:

144 Ohlbaum L. D., Terrorism, Inc.: How Shell Companies Aid Terrorism, Crime, and Corruption, OSF, 2013, page 2 https://www.opensocietyfoundations.org/publications/terrorism-inc-how-shell-companies-aid-terrorism-crime-and-corruption#publications_download (դիտված՝ 26.07.2023 թ.)

145 Kalman G., Offshore Finance Hurts Us—All of Us, Global financial Integrity, 2022, https://gfintegrity.org/offshore-finance-hurts-us-all-of-us/ (դիտված՝ 26.07.2023 թ.)

2016 թվականին պարզ դարձավ, որ ՀՀ գլխավոր հարկադիր կատարողը Պանամայում գրանցած ընկերությունների միջոցով պաշտոնն օգտագործել էր սեփական բիզնեսի զարգացման համար և թաքցրել եկամուտները:[146] 2019 թվականին Հատուկ քննչական ծառայությունը նրան առաջադրել է մեղադրանք խոշոր չափի փողերի լվացման համար, այն է՝ 1 միլիոն 190 հազար դոլարի աղբյուրը թաքցնելը, խեղաթյուրելը և փողն օրինականացնելը:[147]

Շուկայական տնտեսությունները չեն կարող պատշաճ կերպով աշխատել, եթե շուկայում առաջատար դիրքերում են մենաշնորհները: Մենաշնորհ դիրք ունեցող ընկերությունը կամ անհատը կարող է օգտագործել իր գերիշխանությունը շուկայում՝ ներգրավվելու համար կոռուպցիայի մեջ, ինչպիսին է, օրինակ, գների ֆիքսումը՝ ապահովելով, որ սպառողներն այլընտրանք չունեն, քան վճարել ապրանքների կամ ծառայությունների համար ուռճացված գները: Ավելին, մենաշնորհային իրավիճակում մրցակցության բացակայությունը կարող է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ կոռուպցիան ծաղկում է: Սպառողների համար սահմանափակ տարբերակների առկայության դեպքում ընկերությունները կարող են վատթարացնել արտադրանքի որակը՝ իմանալով, որ իրենց հաճախորդներն այլընտրանքային ընտրություն չունեն: Որոշ դեպքերում կոռուպցիան նույնիսկ կարող է օգտագործվել մենաշնորհը պահպանելու համար: Ընկերությունները, օրինակ, կարող են պետական պաշտոնյաներին կաշառել՝ հնարավոր մրցակիցներին խոչընդոտելու և շուկայի նկատմամբ նրանց վերահսկողությունը պահպանելու համար: Սա ոչ միայն վնասում է սպառողներին՝ սահմանափակելով ընտրությունը և բարձրացնելով գները, այլև խաթարում է արդար մրցակցությունն ու նորարարությունը:

Կոռուպցիայի հետևանքով նվազում է երկիր մտնող օտարերկրյա ներդրումները՝ հանգեցնելով նոր աշխատատեղերի ավելի քիչ ստեղծմանը և տնտեսության ավելի լայնածավալ մոնոպոլացման, որից էլ ավելի շատ տուժում են սոցիալապես խոցելի խմբերը:

Շուկայական տնտեսության և կոռուպցիայի մասին խոսելիս անհրաժեշտ է անդրադառնալ նաև մասնավորեցման գործընթացին: Կոռուպցիան և մասնավորեցումը սերտորեն փոխկապակցված են, քանի որ հանրային ակտիվները և ծառայությունները մասնավոր ձեռքերին փոխանցելու գործընթացը իր մեջ պարունակում է բարձր կոռուպցիոն ռիսկեր: Մասնավորեցումը հաճախ ներառում է մասնավոր ընկերությունների ընտրություն մրցույթների միջոցով, սակայն այդ գործընթացները կարող են հեշտությամբ շահարկվել կոռումպացված պաշտոնյաների կողմից՝ որոշակի ընկերություններին օգուտ բերելու համար՝ կաշառքի կամ նվերների դիմաց: Դա կարող է հանգեցնել այնպիսի ընկերությունների ընտրության, որոնք ամենաորակյալը կամ ծախսարդյունավետը չեն, ինչը կհանգեցնի ցածրորակ ծառայությունների մատուցմանը և հանրության համար կենթադրի ավելի շատ ծախսեր:

---

146 Աղալարյան Ք., Բաղդասարյան Է., Պանաման նվաճած հայ գեներալը. Միհրան Պողոսյանի օֆշորային ընկերությունները և հաշիվները շվեյցարական բանկերում, Հետք, 2016, https://hetq.am/hy/article/66918

147 Առաջին լրատվական ալիք, Նոր մեղադրանք՝ Միհրան Պողոսյանին, 2019, https://shorturl.at/PBdaY (դիտված՝ 26.07.2023 թ.)

Ավելին, մասնավորեցումը կարող է նաև հանգեցնել թափանցիկության և հաշվետվողականության բացակայության, քանի որ մասնավոր ընկերությունները չեն ենթարկվում նույն մակարդակի վերահսկողության, ինչ պետական հաստատությունները: Թափանցիկության այս բացակայությունը կարող է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ կոռուպցիոն պրակտիկաները կարող են զարգանալ, երբ մասնավոր ընկերությունները ներգրավվում են դավադրության, գների ֆիքսման և այլ ոչ բարոյական վարքագծերի մեջ՝ առավելագույնի հասցնելով իրենց շահույթը:

Վերջին տարիներին հանցագործություններից ստացված եկամուտները պաշտոնական բանկային համակարգով տեղափոխելու փոխարեն հանցագործները նախընտրում են կրիպտոարժույթները, ինչը քիչ հավանական է դարձնում իրավապահ մարմինների կամ ավանդական ֆինանսական հաստատությունների կողմից դրանց հայտնաբերումը: Դրանք հետագայում կարող են վաճառվել՝ ապահովելով կեղտոտ փողերի լվացումը:[148]

Փողերի լվացման, օֆշորային ընկերությունների միջոցով հարկերից խուսափելու և մի շարք այլ կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործում կարևորվում է լրատվամիջոցների դերը: Լրագրողական հետաքննությունները վճռորոշ են կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործում՝ ջրի երես հանելով բիզնեսի և պետական պաշտոնյաների գործարքների ու ծավալած գործունեության մեջ խարդախության, կաշառակերության, յուրացման և կոռուպցիոն այլ դեպքերը: Հաճախ համագործակցելով օֆշորային գոտիներում գործունեություն ծավալող բանկերի աշխատակիցների հետ կամ համեմատելով տեղեկատվական բաց հարթակներում առկա տվյալները՝ լրագրողները կատարում են այնպիսի բացահայտումներ, որոնք հանգեցնում են դատական գործընթացների, քաղաքականության և օրենսդրական փոփոխությունների:

Արդյունավետ գործող իրավակարգավորումները, կայացած ինստիտուտները և դրանց թափանցիկ աշխատանքը էական նշանակություն կունենան կոռուպցիայի դեմ պայքարի և շուկայական տնտեսությունում արդար մրցակցության խթանման համար: Իսկ թափանցիկության խրախուսումը և բարեվարքության մշակույթի զարգացումը կարող են օգնել նվազագույնի հասցնել կոռուպցիան և խթանել շուկայական տնտեսության բարգավաճումը, որտեղ հնարավորությունները հասանելի կլինեն բոլորին:

148 Elsayed S., Cryptocurrencies, corruption and organised crime Implications of the growing use of cryptocurrencies in enabling illicit finance and corruption, Transparency International the global coalition against corruption, 2023, https://knowledgehub.transparency.org/helpdesk/cryptocurrencies-corruption-and-organised-crime-implications-of-the-growing-use-of-cryptocurrencies-in-enabling-illicit-finance-and-corruption (դիտված՝ 26.07.2023 թ.)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Ապացուցիր հակառակը

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կկարողանան հիմնավորել կոռուպցիայի բացասական հետևանքները տնտեսության վրա:

Նկարագրություն

Սովորողներից կազմել 3-4 հոգանոց խմբեր և հանձնարարել վերլուծել ներկայացված տեսությունները և մշակել դրանք հերքող քննադատություն ու հակափաստարկներ: Յուրաքանչյուր խումբ պետք է հերքի մեկ տեսություն, հետևաբար կլինեն խմբեր, որոնց տեսությունները կլինեն նույնը: Ուսուցիչը խմբերից յուրաքանչյուրին տրամադրում է տեսություններից մեկը՝ տպագրված տարբերակով, և հատկացնում 5 րոպե առաջադրանքի կատարման համար: Յուրաքանչյուր խմբին հատկացվում է 3 րոպե ելույթ ունենալու համար, որից հետո կազմակերպվում է քննարկում և կարծիքների փոխանակում:

Տեսություններ

1. Կոռուպցիան նպաստում է երկրի եկամուտների հավասար բաշխմանը և սոցիալական հավասարությանը: Այլ կերպ ասած՝ կոռուպցիան օգնում է, որ բնակչության ֆինանսապես ապահով հատվածը ստիպված լինի կիսել իր միջոցները պետական պաշտոնյաների հետ, որոնց աշխատավարձերը զարգացող շատ երկրներում չափազանց ցածր են:

2. Կոռուպցիան նպաստում է բարդ ու անարդյունավետ բյուրոկրատական գործընթացների շրջանցմանը: Եթե կոռուպցիան կրում է կամավոր բնույթ, այն նպաստում է տնտեսական արդյունավետության բարձրացմանը՝ թեթևացնելով պետական ու մասնավոր հատվածի միջև լարվածությունը: Այլ կերպ ասած՝ այն երկրներում, որտեղ կա ավելորդ վարչարարություն, լիազորությունների անարդյունավետ ու սխալ բաշխում, կաշառքը կարող է լինել ավելորդ խնդիրներից խուսափելու «արդյունավետ» միջոց: Այս տեսության կողմնակիցները պնդում են, որ այս դեպքում կոռուպցիան ձեռք է բերում հերթական հարկատեսակի ձև և նպաստում է տնտեսական ցիկլի արագացմանը:[149]

2 Գնա՞նք գնումների

Տևողությունը՝ 10 րոպե

149 ԹԻՀԿ, Ա. Հակոբյան, Ա. Խուդավերդյան, Վ. Հոկտանյան, Գ. Հովհաննիսյան, Խ. Բեզիրջյան, Թ. Խեչոյան, «Հակակոռուպցիոն ակադեմիա» դասընթացի գործնական առաջադրանքների ժողովածու– Եր.: Հեղ. հրատ., 2022, էջ 69 https://www.transparency.am/hy/publication/pdf/304/10018 (դիտված՝ 26.07.2023 թ.)

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կկարողանան օգտվել գնումների հարթակից և կիրականացնեն ուսումնասիրություններ:

Նկարագրություն
Սովորողներին հանձնարարել, որ տանն իրականացնեն Հայաստանում գործող գնումների հարթակի ուսումնասիրություն: Սովորողները պետք է ծանոթանան «Գնումներ» հարթակի կառուցվածքին և բովանդակությանը՝ https://gnumner.minfin.am/hy/ կամ https://www.e-gov.am/transparent/ կայքերում, որից հետո ուսումնասիրեն իրենց համայնքապետարանի կամ մարզպետարանի կատարած գնումները, ընտրեն դրանցից առնվազն երկուսը ու համեմատեն գնված ապրանքի գինը շուկայական գնի հետ: Կատարած ուսումնասիրության մասին անհրաժեշտ է կազմել համառոտ զեկույց և հաջորդ դասի ընթացքում այն ներկայացնել դասարանում:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Ի՞նչ է փողերի լվացումը

Տևողությունը՝ 3 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում ներկայացվում է, թե ինչ կարող է պատահել պետության ու քաղաքացիների հետ, եթե պաշտոնյան որոշի փող լվանալ՝ հայաստանյան օրինակի մեկնաբանմամբ:

2 Հայաստանից գողացել են շուրջ 10 մլրդ դոլար

Տևողությունը՝ 4 րոպե

Նկարագրություն՝ տեսանյութում ներկայացվում է, թե 2004-2013 թվականներին Հայաստանից տարեկան որքան գումար է ապօրինի ճանապարհով դուրս բերվել և ինչ բարեփոխումներ էր հնարավոր իրականացնել այդ գումարով:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Փողերի լվացում - Դենիս Ջիդիչ

Տևողությունը՝ 9 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում ներկայացվում է, թե ինչ մեխանիզմներով են օրինականացվում ոչ օրինական ճանապարհով ստացված միջոցները:

2 Լվացքատուն

Տևողությունը՝ 1 ժամ 35 րոպե

Նկարագրություն՝ Գեղարվեստական ֆիլմում ներկայացվում է կազմակերպությունների գործունեությունը, որոնք ստեղծվել են օֆշորային գոտիներում՝ օգնելու ընկերություններին թաքցնելու հարկերը և լվանալու ապօրինի ձեռք բերված միջոցները:

3 Մեդիամարտն ընդդեմ կոռուպցիայի. Էդիկ Բաղդասարյան

Տևողությունը՝ 20 րոպե

Նկարագրություն՝ հարցազրույցում ներկայացվում է Հայաստանի մի քանի խոշոր օֆշորային գործարքները և դրանց բացահայտման գործում մեդիայի դերը:

4 Մեդիամարտն ընդդեմ կոռուպցիայի. Օֆշորային համայնապատկեր. Բաբկեն Թունյան

Տևողությունը՝ 15 րոպե

Նկարագրություն՝ հարցազրույցում ներկայացվում են հայաստանյան մի քանի խոշոր օֆշորային սկանդալները:

5 Պանամայի թղթերը (անգլերեն)

Տևողությունը՝ 1 ժամ 40 րոպե

Նկարագրություն՝ վավերագրական ֆիլմում ներկայացվում է պատմության մեջ ամենամեծ գլոբալ կոռուպցիոն սկանդալի և հարյուրավոր լրագրողների մասին, ովքեր լուսաբանում են պատմությունը՝ վտանգելով իրենց կյանքը:

4.3 ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ժամանակակից մարդու և հասարակության հիմնախնդիրները

Իրականացման ժամկետը՝ 2.5 ամիս

Նախագծի նպատակը՝ Սովորողները վեր կհանեն կոռուպցիայի ազդեցությունը մարդու և հասարակության հիմնախնդիրների վրա, կկարողանան ուսումնասիրել հիմնախնդիրը հայաստանյան կոնտեքստում:

Հետազոտության հարցը՝ Ինչպե՞ս է կոռուպցիան ազդում ժամանակակից մարդու և հասարակության հիմնախնդիրների վրա:

Խնդիրը՝ Ուսումնասիրել կոռուպցիայի ազդեցությունը ժամանակակից հասարակության և մարդու հիմնախնդիրների վրա:

Վերջնարդյունքը՝
Սովորողները

- Կիմանան ժամանակակից մարդու և հասարակության հիմնախնդիրների վրա կոռուպցիայի ազդեցությունը.
- Կհիմնավորեն ընտրված հիմնախնդրի վրա կոռուպցիայի բացասական ազդեցությունը և կներկայացնեն դրա պատճառները.
- Կառաջարկել հիմնախնդրի վրա կոռուպցիայի ազդեցության դեմ պայքարի եղանակներ.
- Կկատարեն Հայաստանում հիմնախնդրի վրա կոռուպցիայի ազդեցության ուսումնասիրություն.
- Կկազմեն հոդված, որը կամփոփի կատարված ուսումնասիրությունները:

Նախագծի համառոտ նկարագրություն
Սովորողները ծանոթանում են ժամանակակից մարդու և հասարակության հիմնախընդիրներին (օրինակ՝ կլիմայի փոփոխություն, միգրացիա, ահաբեկչություն և այլն), ընտրում այն հիմնախնդիրը, որի ուղղությամբ ցանկանում են կատարել ուսումնասիրություն և, ըստ դրա, կազմում են առավելագույնը 4 հոգանոց խմբեր: Ուսումնասիրում են հիմնախնդրի վրա կոռուպցիայի ազդեցության վերաբերյալ կատարված հետազոտությունները, հրապարակված հոդվածները, գտնում են պատճառները, հետևանքները, ազդող գործոնները, առաջարկում դրա դեմ պայքարի եղանակներ: Կատարում են հիմնախնդրի վրա կոռուպցիայի ազդեցության հայաստանյան դեպքերի ուսումնասիրություն. ուսում-

նասիրում են մամուլի և ոստիկանության հրապարակումները, էլեկտրոնային բաց շտեմարաններում առկա տվյալները, կատարում են հարցումներ: Վերհանված տվյալների, կատարված ուսումնասիրությունների հիման վրա կազմվում է հոդված, որը հրապարակվում է դպրոցի կայքում, ֆեյսբուքյան էջում կամ, հնարավորության դեպքում, լրատվական էջերում:

Նախագծի պարտադիր բաղադրիչների նկարագրություն

- Ընտրված հիմնախնդրի ուսումնասիրություն՝ ուսումնասիրում են կոռուպցիայի ազդեցությունը հիմնախնդրի վրա և ներկայացնում դրա պատճառները, հետևանքները, ազդող գործոնները, առաջարկում դրա դեմ պայքարի եղանակներ:
- Հայաստանում ընտրված հիմնախնդրի առկա վիճակի ուսումնասիրություն՝ համացանցում առկա նյութերի և սեփական հետազոտության հիման վրա կազմում են եզրակացություններ Հայաստանում հիմնախնդրի վրա կոռուպցիայի ազդեցության մասին:
- Հիմնախնդրի մասին հոդվածի մշակում և հրապարակում, որը լուսաբանում է առկա հիմնախնդիրը՝ անդրադառնալով նաև դրա հայաստանյան համատեքստին:

Նախագծի ընթացքը

Ուսուցչի գործողություններ	Աշակերտների գործողություններ
1| Նախապատրաստական փուլ	
• Ներկայացնել նախագծի համար պարտադիր համարվող բաղադրիչները: • Համառոտ ներկայացնել ժամանակակից մարդու և հասարակության հիմնախնդիրները: • Հաշվի առնելով աշակերտների հետաքրքրությունները՝ ձևավորել աշխատանքային խմբեր (յուրաքանչյուր խմբում 2-4 աշակերտ): • Աջակցել խմբի անդամների աշխատանքային դերերի բաշխման գործընթացին:	• Սովորողները ծանոթանում են ժամանակակից մարդու և հասարակության հիմնախնդիրներին և կատարում հիմնախնդրի ընտրություն: • Կազմվում են աշխատանքային խմբեր: Սովորողները կատարում են աշխատանքի բաշխում և որոշում են իրենց դերերը: Ընտրում են խմբի պատասխանատուին: • Որոշում են հանդիպումների հաճախականությունը և ձևաչափը: • Նշումներ են կատարում նախագծի պարտադիր բաղադրիչների մասին:
2| Պլանավորման փուլ	
• Ուսումնասիրություններ կատարելու համար աշակերտներին առաջարկել անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրման աղբյուրների տարբերակներ՝ • -գիտական շտեմարաններ, • -փաստաթղթերի ուսումնասիրություն, • -համացանց, • -լրատվական կայքեր, • -հայերեն և օտարալեզու գրականություն և այլն: • Ներկայացնել աշխատանքի գնահատման չափանիշները	• Որոշում են խմբերի անունները: • Պլանավորում են խմբի կողմից կատարվելիք աշխատանքները և սահմանում վերջնարդյունքներ: • Որոշում են, թե պարտադիր բաղադրիչներից բացի կան արդյոք այլ բաղադրիչներ, որը խումբը ցանկանում է ներառել նախագծում:
3| Իրականացման փուլ	
• Կազմակերպել/հետևել խմբային քննարկումների, կատարվելիք հետազոտությունների իրականացման ընթացքին: • Քննարկել միջանկյալ հարցեր, որոնք առաջացել են հետազոտական աշխատանքն իրականացնելիս: • Աջակցել աշակերտներին հավաքագրված տվյալների դասակարգման, եզրահանգումների կատարման աշխատանքում, հարցումներ իրականացնելու հարցում և, ըստ անհրաժեշտության, ուղղորդել նրանց աշխատանքը:	• Ուսումնասիրում են կոռուպցիայի ազդեցությունը հիմնախնդրի վրա և վերհանում դրա պատճառները, հետևանքները, ազդող գործոնները, առաջարկում դրա դեմ պայքարի եղանակներ: • Կատարում են ուսումնասիրություն Հայաստանում այդ հիմնախնդրի վրա կոռուպցիայի ազդեցության մասին. ուսումնասիրում են մամուլի և ոստիկանության հրապարակումները, էլեկտրոնային բաց շտեմարաններում առկա տվյալները, կատարում են հարցումներ և այլն: • Մշակում են ընտրված հիմնախնդիրը և Հայաստանում առկա վիճակը լուսաբանող հոդված, քննարկում են այն լրագրողների հետ (ըստ հնարավորության), խմբագրում և հրապարակում են դպրոցի կայքում կամ ֆեյսբուքյան էջում (հնարավորության դեպքում նաև՝ որևէ լրատվական կայքում):

4| Արդյունքների ամփոփման փուլ	
• Աշակերտների հետ կազմել աշակերտների նախագծի ներկայացման պլան: • Կազմակերպել նախագծի պաշտպանություն (մեկ կամ երկու դասաժամ): • Աջակցել ներկայացման ձևաչափի ընտրության և նախապատրաստման աշխատանքներին: • Կազմակերպել նախագծի ներկայացման փորձ և տրամադրել խորհրդատվություն շտկման ենթակա հարցերի վերաբերյալ:	• Կազմում են կատարված հետազոտության եզրակացությունները: • Ամփոփում են կատարված աշխատանքը և, ընտրված ձևաչափի համաձայն, պատրաստում են ներկայացում (պաստառ, սլայդ և այլն): • Նախապատրաստվում են նախագծի ներկայացմանը:

5| Ներկայացման և գնահատման փուլ	
• Բարձր դասարանի աշակերտների և ուսուցիչների ներգրավվածությամբ կազմել նախագծերը գնահատող խումբ: • Գնահատող խմբին տրամադրել գնահատման ձևաթուղթը և մեկնաբանել դրա լրացման կարգը: • Աջակցել խմբային գնահատականների ձևավորմանը և դրանց հիման վրա գնահատել յուրաքանչյուր աշակերտի (օգտագործել անհատական գնահատման ձևաթերթը): Տրամադրել հետադարձ կապ բարելավման ենթակա հարցերի վերաբերյալ: • Կազմել իրականացված աշխատանքի վերլուծություն, առանձնացնել բարելավման ենթակա աշխատանքները:	• Ներկայացնում են կատարված աշխատանքը, պատասխանում հարցերին:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ

Դասարան՝			
Խմբի անվանումը՝			
Խմբի անդամները՝			
Գնահատման չափանիշներ	**Գնահատման միավորային սանդղակ**	**Գնահատական**	**Հավելյալ նշումներ**
Կատարված հետազոտական աշխատանքի համապատասխանությունը նպատակին	0՝ չի համապատասխանում		
	1՝ մասամբ է համապատասխանում		
	2՝ հիմնականում համապատասխանում է		
	2.5՝ լիովին համապատասխանում է		
Իրականացված աշխատանքի բաղադրիչների համապատասխանությունը հիմնական բաղադրիչներին	0՝ չի համապատասխանում		
	1՝ մասամբ է համապատասխանում		
	2՝ հիմնականում համապատասխանում է		
	2.5՝ լիովին համապատասխանում է		
Կատարված աշխատանքի ներկայացման հմտությունները և պաշտպանությունը	0.5՝ բավարար		
	1՝ հիմնականում լավ		
	1.5՝ լավ		
	2՝ գերազանց		
Խմբային աշխատանքը, աշակերտների համագործակցության արդյունավետության մակարդակը	0.5՝ բավարար		
	1՝ հիմնականում լավ		
	1.5՝ լավ		
	2՝ գերազանց		
Բովանդակային մասնակցությունը և հարցուպատասխանը մյուս նախագծերի ներկայացման ընթացքում	0՝ առկա չէ		
	1՝ առկա է		
Ընդամենը՝			

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ

Գնահատումն իրականացնում է ուսուցիչը

Դասարան՝

Աշակերտի անուն ազգանուն՝

Գնահատման չափանիշներ	Գնահատման միավորային սանդղակ	Գնահատական	Հավելյալ նշումներ
Աշակերտի բովանդակային ակտիվությունը նախագծային աշխատանքն իրականացնելիս	0՝ ակտիվ չէր		
	1՝ երբեմն ակտիվ էր		
	2՝ հաճախակի ակտիվ էր		
	2.5՝ շատ ակտիվ էր		
Աշակերտի ինքնուրույնությունը և նախաձեռնողականությունը նախագծային աշխատանքն իրականացնելիս	0՝ բացակայում էր		
	1՝ դրսևորվել է հազվադեպ		
	2՝ հիմնականում առկա էր		
	2.5՝ եղել է ինքնուրույն և ցուցաբերել մի շարք նախաձեռնություններ		
Խմբային աշխատանքի միավոր	Առավելագույնը՝ 5 միավոր (կազմում է խմբային աշխատանքի միավորի 50%-ը)		

Ընդամենը՝

ԳԼՈՒԽ

11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

5.1 ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ: ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

5.2 ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

5.3 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

5.4 ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

5.5 ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

5.6 ՊԱՏԵՐԱԶՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ

5.7 ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

5.1 ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ: ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ՁԱՓՈՐՈՇԻՉ

Ա մակարդակ՝ Ներկայացնի իրավական պատասխանատվության հիմքերը և տեսակները, իրավական պատասխանատվության նշանակման սկզբունքները:

Բ մակարդակ՝ Բնութագրի իրավախախտման տեսակները, սահմանազատի հանցանքը այլ իրավախախտումներից: Քննարկի իրավական պատասխանատվության հիմքերը:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

«Կոռուպցիա» ասելով հաճախ նկատի են առնվում հանցագործությունները, սակայն այդ հասկացությունն ավելի լայն է և ներառում է ոչ միայն քրեական, այլև վարչական ու քաղաքացիաիրավական իրավախախտումները և կարգապահական զանցանքները:[150]

- **կոռուպցիոն հանցագործությունները.**
  Կարելի է առանձնացնել կոռուպցիոն հանցագործությունների երկու խումբ, որոնք մեծ մասամբ իրենց արտացոլումն են ստացել ՀՀ քրեական օրենսգրքում. առաջին խումբը վերաբերում է կոռուպցիային հանրային ոլորտում և հիմնականում ներառում է հանրային ծառայության շահերի դեմ ուղղված արարքները: Երկրորդ խումբը վերաբերում է մասնավոր ոլորտի կոռուպցիային և հիմնականում ուղղված է սեփականության և տնտեսական գործունեության դեմ:
- **վարչական կոռուպցիոն իրավախախտումները.**
  Վարչական կոռուպցիոն իրավախախտումներից է, օրինակ, գույքի մանր հափշտակումը, որը կատարվել է յուրացման, վատնման, պաշտոնական դիրքի չարաշահման կամ խարդախության միջոցով, մի շարք ընտրական զանցանքներ և այլ իրավախախտումներ, որի համար նախատեսված է պատասխանատվություն ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով:
- **քաղաքացիաիրավական կոռուպցիոն իրավախախտումները.**
  Քաղաքացիաիրավական կոռուպցիոն իրավախախտումներից են, օրինակ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված նվիրատվության կանոնների, ինչպես նաև ծառայություններ մատուցելու կարգի՝ կոռուպցիայի հատկանիշներով օժտված և հանցագործություն չհամարվող խախտումները:
- **կարգապահական կոռուպցիոն զանցանքները.**
  Կարգապահական կոռուպցիոն զանցանքներ են համարվում կոռուպցիայի հատ-

150 Ծաղիկյան Ս., Կոռուպցիայի հակազդումը Հայաստանում.- ՍՊԲ. Անտարես, 2006, էջ 61-93

կանիշներով օժտված և հանցագործություն կամ վարչական իրավախախտում չհամարվող ծառայողական խախտումները: Օրինակ՝ պաշտոնատար անձանց, հանրային ծառայողների վրա տարածվում են մի շարք սահմանափակումներ, այդ թվում՝ վարքագծի, էթիկայի կանոններին վերաբերվող, որոնց խախտումն առաջացնում է պատասխանատվություն, այդ թվում՝ կարգապահական:

Կոռուպցիոն հանցագործությունները հաճախ լատենտային են՝ այսինքն՝ ունեն գաղտնի, թաքնված բնույթ:[151]

ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես՝ քրեական օրենսգրքով, սահմանվում է կոռուպցիոն հանցագործությունների լայն շրջանակ, որին կարող եք ծանոթանալ նաև Ձեռնարկի «Հավելյալ ռեսուրսներ» գլխի 2-րդ բաժնում (2.2 ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների ցանկ): Հաշվի առնելով կոռուպցիոն հանցագործությունների վտանգավորության աստիճանը՝ կարելի է առանձնացնել հետևյալ տեսակները.

- կաշառք տալը, կաշառք ստանալը, կաշառքի միջնորդությունը (այդ թվում մասնավոր ոլորտում).
- ընտրողներին կաշառք տալը, կաշառք ստանալը, ընտրությունների ժամանակ բարեգործության արգելքի խախտումը կամ ընտրողի ազատ կամքի իրականացումը խոչընդոտելը, ընտրակաշառքի միջնորդությունը.
- յուրացնելը կամ վատնելը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով.
- ֆինանսական բուրգ ստեղծելը, կազմակերպելը կամ ղեկավարելը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով.
- հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելը (փողերի լվացում).
- ապօրինի հարստանալը.
- պաշտոնեական լիազորությունները չարաշահելը, անցնելը.
- իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը.
- պաշտոնեական կեղծիքը.
- հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելը, հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը:

Անհատը կարող է քրեական պատասխանատվություն կրել կոռուպցիայի համար, եթե.

- **անմիջականորեն ներգրավված է եղել** կոռուպցիոն հանցագործություն կատարելու մեջ: *Անձը, որն անձամբ է կաշառք տվել կամ ստացել.*
- հանցագործության կատարման մեջ **անուղղակիորեն ներգրավված անձ է:**

Անհատը կարող է պատասխանատվություն կրել, երբ նա դրդել է մեկ այլ անձի կամ կազմակերպության կոռուպցիոն գործողություն կատարելու.

151 GIACC, What is Corruption https://shorturl.at/fq9F7. (դիտված՝ 26.07.2023 թ.)

- **Իշխանություն ունեցող անձը,** ինչպիսին է նախարարը, վարչության պետը, գործադիր տնօրենը, ֆինանսական տնօրենը, կարող է պատասխանատվություն կրել կոռուպցիոն հանցագործության համար, նույնիսկ եթե նա ուղղակիորեն ներգրավված չի եղել հանցագործության կատարման մեջ, բայց երբ նա կամ բացահայտորեն թույլատրել է հանցագործությունը, իմացել է հանցագործության մասին կամ աչք է փակել դրա վրա: Նման պատասխանատվությունը կարող է առաջանալ, օրինակ, երբ

կազմակերպության գլխավոր հաշվապահը, կազմակերպության հաշիվներն օգտագործելով, զբաղվում է փողերի լվացմամբ, իսկ գործադիր տնօրենը, տեղյակ լինելով հաշվապահի ծավալած անօրինական գործունեության մասին, ոչ մի քայլ չի ձեռնարկում այն կանխելու համար.

- կոռուպցիայի կատարմանն **աջակցություն և օժանդակություն տրամադրած անձը.** անհատը կարող է պատասխանատվություն կրել օժանդակության (կամ համարժեք հանցագործության) համար, երբ նա ինչ-որ կերպ նպաստել, օգնել կամ աջակցել է հանցագործության կատարմանը:

Կոռուպցիոն վճարումը կազմակերպող ֆինանսական տնօրենը, որը գիտակցում է, որ վճարումը կաշառք է:

Անհատը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության նույնիսկ այն դեպքում, երբ.

- որևէ անձնական օգուտ չէր ունենա այդ գործունեությունից.
- անձամբ չի վճարել կամ չի ստացել կաշառքը, փոխարենը կաշառքը վճարել կամ ստացել է մեկ այլ անձի միջոցով կամ նրա կողմից,
- անձամբ չի կատարել խարդախություն, փոխարենը խարդախությունը կատարվել է մեկ այլ անձի կողմից կամ նրա միջոցով.
- հետևել է կազմակերպության վերադասի ցուցումներին.
- կարծել է, որ գործողությունները բխում են իր գործատուի շահերից.
- նրա հասցեին հնչել են անբարենպաստ հետևանքների սպառնալիքներ, որպեսզի ստիպեն նրան կատարել իրավախախտումը (եթե նա վախենա անմիջական ֆիզիկական վնասից).
- կաշառքը կամ խարդախ գործունեությունը կապված չի եղել գումարի հետ, փոխարենը ներառել է ոչ ֆինանսական առավելությունների տրամադրում,
- կաշառքը առաջարկվել է, բայց իրականում այդպես էլ չի փոխանցվել.
- կաշառքի չափն ավելի քիչ է եղել, քան ֆինանսական վնասը, որը կարող էր առաջանալ կաշառքը չվճարելու հետևանքով.
- հանցագործություն կազմող վարքագիծը լայնորեն տարածված էր և համարվել է սովորական բիզնես պրակտիկա.
- իրավախախտում համարվող վարքագիծն անհրաժեշտ է եղել դաշտում մրցունակ մնալու համար.

- հանցագործությունը չի հաջողվել (անձը կարող է պատասխանատվություն կրել հանցագործությունը կատարելու փորձի համար):[152]

Կոռուպցիայի դեմ պայքարի գործում կարևոր են ինչպես տեղական, այնպես էլ միջազգային իրավակարգավորումները: Այժմ գործում են կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված մի շարք միջազգային հակակոռուպցիոն գործիքներ, մասնավորապես Եվրոպայի խորհրդի՝ Կոռուպցիայի դեմ պայքարի 20 առաջնորդող սկզբունքները (1997 թ), Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիան (1998 թ), Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիան (1998 թ), ինչպես նաև Հանրային պաշտոնյաների վարքագծի կանոնագիրքը (2000 թ) և Կուսակցությունների ու նախընտրական քարոզարշավների ֆինանսավորման կոռուպցիայի դեմ ընդհանուր կանոնները (2003 թ): ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան ընդունվել է 2003 թ. և ուժի մեջ է մտել 2005 թ. դեկտեմբերին: Այն 170 մասնակից պետությունների կողմից ընդունված՝ կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող առաջին գլոբալ իրավապարտադիր համաձայնագիրն է: Հայաստանը կոնվենցիան ստորագրել է 2005 թ. մայիսի 19-ին և վավերացրել է 2007 թ. մարտի 8-ին: Այն երկրները, որոնք վավերացնում են այս փաստաթղթերը, պարտավորություն են ստանձնում կատարելու դրանցում ներկայացվող պահանջները: 1999 թ. մայիսի 1-ին Եվրոպայի խորհրդի անդամ 17 երկրներ ստեղծեցին Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբը (ԳՐԵԿՈ)՝ մշտադիտարկելու անդամ պետությունների հակակոռուպցիոն օրենսդրության և պրակտիկայի համապատասխանությունը կազմակերպության հակակոռուպցիոն չափանիշներին:

Քիչ հավանական է, որ անհատը կարող է պատասխանատվություն կրել կոռուպցիոն արարքի համար, եթե նա գործում է բարեխիղճ և հիմքեր չունի կասկածելու, որ արարքը կոռուպցիոն է: Մեր բարեվարք վարքագիծը և կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժող վերաբերմունքը «կպաշտպանեն» մեզ ամենատարբեր կոռուպցիոն գործարքների մեջ ներգրավվելուց:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Ճանաչե՛նք կոռուպցիոն հանցագործությունները

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կկարողանան ճանաչել կոռուպցիոն իրավախախտումները, հանցագործությունները և կանվանեն դրանք ըստ դրսևորման տեսակի:

Նկարագրություն

Սովորողներից կազմել 4-5 հոգանոց խմբեր և յուրաքանչյուր խմբին տրամադրել մեկ իրավիճակի նկարագրություն: Գրատախտակին գրել հետևյալ հարցերը.

152 GIACC, Liability for Corruption, 2020, https://shorturl.at/y3OL9 (դիտված՝ 26.07.2023 թ.)

- ո՞ւմ և ո՞ր իրավունքն է խախտվում.
- ո՞վ է խախտողը.
- կատարվե՞լ է որևէ հանցագործություն.
- եթե այո, ապա նշեք, թե ինչ հանցագործություն է կատարվել:

Յուրաքանչյուր խումբ 5 րոպեի ընթացքում վերլուծում է իր ստացած իրավիճակը և քննարկում այն, որից հետո յուրաքանչյուր խմբից մեկ ներկայացուցիչ 3 րոպեի ընթացքում ներկայացնում է իրավիճակը, պատասխանում գրատախտակին գրված հարցերին և մեկնաբանություններ անում: Յուրաքանչյուր խմբի ներկայացումից հետո ուսուցիչը խմբին է ուղղում «Ի՞նչ պետք է փոխենք հասարակության մեջ, որպեսզի այսպիսի իրավախախտումները քիչ լինեն» հարցը:

Իրավիճակներ

1. Արան գնացքի ուղեկցորդին ասաց, որ խցանումների պատճառով մեծ դժվարությամբ է հասել կայարան ու չի հասցրել կայարանում գնացքի տոմս գնել: Ուղեկցորդն առաջարկեց վճարել տոմսի կես գինը՝ տոմսը և վճարման կտրոնը չտրամադրելու պայմանով:
2. «Կառուցենք միասին» ընկերությունը մասնակցում է նոր դպրոցի կառուցման համար հայտարարված մրցույթին: Ընկերությունը բջջային հեռախոսներ է նվիրել գնահատող հանձնաժողովի անդամներին՝ «հանձնաժողովի աշխատանքը հեշտացնելու» համար, ինչպես ասում են ընկերության ներկայացուցիչները:
3. Երբ Հակոբը մի քանի անգամ ձախողեց վարորդական իրավունքի գործնական քննությունը, քննությունն ընդունող ոստիկանության տեսուչը նրան ասաց, որ 60.000 ՀՀ դրամի դիմաց նա կարող է ստանալ իր վարորդական իրավունքը՝ առանց երկրորդ անգամ քննություն հանձնելու:
4. Գործարար Տիգրանը դատավորին հրավիրել է շքեղ ռեստորանում ընթրիքի՝ դատական գործընթացի ճակատագիրը քննարկելու համար: Գործարարին մեղադրանք է առաջադրված ծանր հարկային հանցագործությունների համար, և դատական գործը քննում է ռեստորան հրավիրված դատավորը: Դատավորն ընթրիքի է գնացել մուգ ակնոցով, որպեսզի ոչ ոք չճանաչի իրեն:
5. Հայկին ոստիկանները կանգնեցնում են ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու համար: Պաշտոնական տուգանքը կազմում է 15.000 դրամ: Հայկն այդ պահին այդքան գումար չունի և խնդրում է ոստիկանին կազմել տուգանքի որոշումը՝ սահմանված 15-օրյա ժամկետում այն վճարելու համար: Ոստիկանը հարցնում է, թե որքան գումար ունի այդ պահին Հայկը, պահանջում է նրա մոտ եղած 7.000 դրամը ու առանց փաստաթղթավորված տուգանք նշանակելու՝ բարի ճանապարհ մաղթում նրան:

«Կատարվե՞լ է որևէ հանցագործություն» հարցի պատասխաններն են՝

1. ոչ՝ վարչական իրավախախտում է, 2. այո՝ քրեական հանցագործություն է, 3. այո՝ քրեական հանցագործություն է, 4. այո՝ քրեական հանցագործություն է, 5.այո՝ քրեական հանցագործություն է:

2 Ճանապարհի առեղծվածը

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կկարողանան ճանաչել կոռուպցիոն հանցագործությունները և կկարողանան նշել իրավախախտման կատարած անձին/անձանց:

Նկարագրություն
Սովորողներին ներկայացնել ստորև ներկայացվող իրավիճակը: Անհրաժեշտ է, որ սովորողները հիմնավորեն, թե ով և որ հանցագործության համար է ենթակա պատասխանատվության:

Իրավիճակ
Արենը կառուցապատման ոլորտի գործարար է: Մայրաքաղաքում պլանավորվում է կառուցել օդանավակայան տանող նոր ճանապարհ: Նախարարությունում այդ կապակցությամբ նոր մրցույթ է նախապատրաստվում, որի համար պատասխանատու է Հասմիկը:

ա. Արենը անվճար վերանորոգում է Հասմիկի բնակարանը այն պայմանով, որ նա մրցույթը կազմակերպի այնպես, որ Արենի կազմակերպությունը հաղթելու առավել մեծ շանս ունենա:
բ. Արենը խոստանում է անվճար վերանորոգել Հասմիկի բնակարանը այն պայմանով, որ նա մրցույթը կանցկացնի հօգուտ Արենի, իսկ Հասմիկը ընդունում է Արենի խոստումը:
գ. Արենը հանձնարարում է իր փաստաբանին հանդիպել Հասմիկին՝ մրցույթը հաղթելու նպատակով խոստացած գումարը նրան փոխանցելու համար:
դ. Արենը Հասմիկի գիտությամբ գումար է փոխանցում Հասմիկի մորը:[153]

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 300 րոպե կոռուպցիայի մասին. հաղորդում 4

Տևողությունը՝ 25 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում ներկայացվում է, թե ինչու և ինչ վնաս է հասցնում պաշտոնեական լիազորությունների չարաշահումը պետական ու հանրային շահին, ինչ մեխանիզմներով կարելի է կանխարգելել պաշտոնեական դիրքի չարաշահումները:

153 ԹԻՀԿ, Ա. Հակոբյան, Ա. Խուդավերդյան, Վ. Հոկտանյան, Գ. Հովհաննիսյան, Խ. Բեգիրջյան, Թ. Խեչոյան/ «Հակակոռուպցիոն ակադեմիա» դասընթացի գործնական առաջադրանքների ժողովածու– Եր.: Հեղ. հրատ., 2022, էջ 57 https://www.transparency.am/hy/publication/pdf/304/10018 (դիտված՝ 26.07.2023 թ.)

5.2 ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Անկախ դատական համակարգը և պատշաճ իրավակիրառումն առանցքային նշանակություն ունեն ժողովրդավարության և օրենքի գերակայության համար: Լավ գործող արդարադատության համակարգը վճռորոշ նշանակություն ունի կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի համար, ինչն էլ իր հերթին կարևոր է պետության զարգացման համար[154]:

Դատական համակարգի՝ որպես իշխանության անկախ և իրավահավասար ճյուղի դերը մարդու իրավունքների և քաղաքացիական ազատությունների պաշտպանությունն է՝ ապահովելով իրավասու և անաչառ դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքը: Բոլոր քաղաքացիներն ակնկալում են հավասար հասանելիություն դատարաններին և քննչական մարմինների, դատախազության և դատարանների կողմից հավասար վերաբերմունք՝ անկախ հասարակության մեջ իրենց դիրքից, ֆինանսական վիճակից ու ունեցած կապերից: Կոռումպացված դատական համակարգերում իշխանություն ունեցողները և ապօրինի հարստացածները կարող են խուսափել հետապնդումից և դատապարտումից, իսկ հասարակության մեծ մասի համար հասանելի չլինի արդարադատությունը:

Բարձրագույն դատական խորհրդի անդամը գաղտնի համաձայնության է գալիս իր զարմիկի գործը քննող դատավորի հետ և խոստանում օգտագործել իր պաշտոնեական դիրքը վերջինիս առաջխաղացման ներկայացնելու համար: Արդյունքում՝ զարմիկը, որը մեղավոր էր հանցագործության կատարման համար, ազատ է արձակվում, իսկ գործը քննող դատավորը՝ ներկայացվում առաջխաղացման:

Կարող ենք ասել, որ դատական համակարգում կոռուպցիան խախտում է օրենքի առջև բոլորի հավասարության հիմնական սկզբունքը և մարդկանց զրկում արդար դատաքննության իրավունքից:

Կոռումպացված դատական համակարգում փողն ու ազդեցությունը կարող են որոշել, թե որ գործերն են առաջնահերթ կամ որոնք են մերժվում, իսկ հանցագործներն էլ կարող են անպատիժ մնալ:[155]

Դատավորը, նախապես ստանալով կաշառք, հայտարարում է, որ ապօրինի հարստացած պաշտոնյան անմեղ է, և դատարանի դահլիճից նրան ազատ արձակելու որոշում է կայացնում:

---

154 Gloppen S., Courts, corruption and judicial independence, 2014, https://www.cmi.no/publications/file/5091-courts-corruption-and-judicial-independence.pdf (դիտված՝ 26.07.2023 թ.)

155 Transparency International the global coalition against corruption, Judiciary, and law enforcement, https://www.transparency.org/en/our-priorities/judiciary-and-law-enforcement (դիտված՝ 26.07.2023 թ.)

Փաստաբանը, լրացուցիչ գումար վերցնելով պաշտպանյալից, գաղտնի բանակցում է դատավորի հետ և նրան փոխանցում գումարի մեծ մասը, որի արդյունքում պաշտպանյալը ստանում է դատարանի բարենպաստ որոշում:

Որքան կարևոր է պայքարել կոռուպցիայի դեմ, այնքան էլ կարևոր է պայքարել հասարակության այն համոզմունքի դեմ, թե բոլորը դիմում են կոռուպցիայի:[156]

2022 թվականին իրականացված «Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրության» շրջանակներում հարցվածների 22.9%-ը կաշառք վերցնելը համարում է սովորություն. մարդիկ կաշառք են վերցնում, քանի որ բոլորն են վերցնում:[157]

Քաղաքացիներն ավելի քիչ հավանական է, որ ենթարկվեն օրենքին, եթե կարծեն, որ մյուսները, հատկապես՝ բարձրաստիճան պաշտոնյաները, չեն պահպանում դրանք և խուսափում են բացահայտումից ու պատժից: Տուժած անձինք «օրենքն իրենց ձեռքը կվերցնեն» վեճերը լուծելու համար, այլ ոչ թե կդիմեն դատական համակարգին, որը կարող է ընկալվել որպես անազնիվ և կողմնակալ: Օտարերկրյա ներդրողները կխուսափեն այն երկրներում ներդրումներ անելուց, որտեղ դատական համակարգն օրենքը քմահաճ կերպով կիրառելու համբավ ունի:[158]

Կոռումպացված արդարադատություն, հեղինակ՝ Նաջի Բենաջի, 2019 թ, աղբյուր՝ cartoonmovement.com

Արդարադատության համակարգում առկա կոռուպցիան կարող է տեղի ունենալ ցանկացած պահի՝ սկսած քրեական հետաքննություն սկսելուց կամ քաղաքացիական հայց ներկայացնելուց՝ որպես դատական գործընթացի մաս, մինչև դատարանի որոշումն ի կատար ածելը: Կոռուպցիայի մեծ մասը տեղի է ունենում հասարակության աչքից հեռու և հաճախ միայն երկու անձանց միջև, որոնք երկուսն էլ ներգրավված են անօրինական գործողությունների մեջ, և յուրաքանչյուրը ստանում է անձնական օգուտ: Հետևաբար, արդարադատության համակարգում կոռուպցիան դժվար է բացահայտել և դժվար է ապացուցել, ինչը դժվարացնում է կոռուպցիոն վարքագծի դատապարտման համար դատական հետապնդումը[159]:

156 Pepys N. M., Corruption and the Justice Sector January 2003, Management Systems International, Washington, https://pdf.usaid.gov/pdf_docs/PNACT878.pdf (դիտված՝ 26.07.2023 թ.)

157 Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ, Հայաստանի բարեվարքության ծրագիր. կոռուպցիայի հանրային ընկալումը, էջ 42, 2022 թ. https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Arm_v2.pdf (դիտված՝ 22.2.2024 թ.)

158 Pepys N. M., Corruption and the Justice Sector January 2003, Management Systems International, Washington, https://pdf.usaid.gov/pdf_docs/PNACT878.pdf (դիտված՝ 26.07.2023 թ.)

159 Pepys N. M., Corruption and the Justice Sector January 2003, Management Systems International, Washington, https://pdf.usaid.gov/pdf_docs/PNACT878.pdf (դիտված՝ 26.07.2023 թ.)

Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարը իրականացնում են հակակոռուպցիոն մասնագիտացված մարմինները[160], որոնք ներառում են՝ Հակակոռուպցիոն կոմիտեն, ՀՀ գլխավոր դատախազության մասնագիտացած ստորաբաժանումները, Հակակոռուպցիոն դատարանը: Այդ մարմիններից յուրաքանչյուրը կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակում ունի օրենքով սահմանված առաքելություն:

Հակակոռուպցիոն կոմիտեն ստեղծվել է 2021 թ.-ին: Հակակոռուպցիոն կոմիտեն քննչական մարմին է, որը կազմակերպում և իրականացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր ենթակայությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթը, իրականացնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն և օրենքով սահմանված այլ լիազորություններ:[161] Իր լիազորություններն իրականացնելիս կոմիտեն պետք է լինի անկախ և ենթարկվի միայն Սահմանադրությանն ու օրենքներին: Կոմիտեի գործունեությունը պետք է հիմնվի անկախության, հրապարակայնության, ֆինանսական ինքնուրույնության և քաղաքական չեզոքության սկզբունքների վրա: Այսինքն՝ վերջինս իր լիազորություններն իրականացնելիս որևէ պետական մարմնից կախում չունի, ինքնուրույն է տնօրինում իրեն հատկացված ֆինանսական միջոցները, ինչպես նաև չի խառնվում որևէ քաղաքական գործընթացի: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին նշանակում է Կառավարությունը՝ վեց տարի ժամկետով:

ՀՀ գլխավոր դատախազությունում գործում են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը: Առաջին վարչության հիմնական նպատակն է հայտնաբերել ապօրինի միջոցներով ձեռք բերված գույքը և բռնագանձել այն հօգուտ պետության, իսկ երկրորդինը՝ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացվող մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողությունը:

2021 թ.-ին օրենքով ստեղծվել է **Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանը**, որն իրականացնում է կոռուպցիոն գործերով արդարադատություն՝ դատաքննության միջոցով:[162] Մասնագիտացված հակակոռուպցիոն դատարանների ստեղծումը կարևորվում է նրանով, որ մասնագիտացված դատարանները բարձրացնում են գործերի քննության արդյունավետությունը՝ հստակ որոշված ընթացակարգի միջոցով, ինչպես նաև նպաստում են իրավունքի առանձին ոլորտներում առավել բարձրորակ և հաստատուն դատական պրակտիկայի ձևավորմանը:[163]

---

160 Այդ մարմինների գործառույթներին մանրամասն կարող եք ծանոթանալ 8-րդ դասարանի «Կոռուպցիա և իշխանության չարաշահում» թեմայում առկա գծապատկերում

161 ՀՀ օրենքը «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին», ՀՕ-147-Ն, 2021, https://www.arlis.am/documentview.aspx?docID=151799 (դիտված՝ 26.07.2023 թ.)

162 FES, Ներգրավված քաղաքացի, Համալսարանական դասընթացի դասագիրք, 3.8 «Ի՞նչ է կոռուպցիան», 2022 թ, https://www.engagedcitizen.am/book#text_3.8 (դիտված՝ 26.07.2023 թ.)

163 «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքների և հարակից օրենքների նախագծերի ընդունման հիմնավորում, էջ 3

Կոռուպցիան բացահայտելու ու դատապարտելու համար ձևավորված հակակոռուպցիոն մարմինների համակարգում կոռուպցիայի ներթափանցումը կարող է վարկաբեկել այդ ինստիտուտները և վտանգել կոռուպցիայի դեմ պայքարը: Այդ առումով կարևորվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից քննիչների, դատախազների, դատավորների ու այդ պաշտոնների թեկնածուների բարեվարքության ուսումնասիրությունների իրականացումը, հակակոռուպցիոն մարմինների պաշտոնյաների բարեվարքության՝ վարքագծի կանոնների, նվերների ընդունման, շահերի բախման ու օրենքով սահմանված սահմանափակումների պահանջներին հետևելը, դրանց պահանջների խախտումների բացահայտումը ու պաշտոնյաների բարեվարք վարքագծի խրախուսումը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Հանդիպում իրավաբանի հետ

Տևողությունը՝ 20 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կիմանան իրավունքի գերակայության և արդարադատության համակարգում կոռուպցիայի հասցրած վնասների մասին:

Նկարագրություն

Հյուրընկալել իրավաբանի՝ իրավունքի գերակայության և արդարադատության համակարգում կոռուպցիայի հասցրած վնասների, հակակոռուպցիոն մարմինների մասին սովորողների հետ խոսելու համար: Անհրաժեշտ է նախապես տեղեկացնել հյուրին քննարկվելիք հարցերի մասին: Հանդիպմանը նախապատրաստվելու նպատակով սովորողները տանը պետք է մշակեն հյուրին ուղղվելիք հարցերի նախնական ցանկ: Բանախոսի գնալուց հետո սովորողները խմբերով կարող են գրել իրենց հարցերի պատասխանները պաստառի կամ գրատախտակի վրա:[164]

Հարցերի նախնական ցանկի օրինակ

1. Ի՞նչ եք կարծում, օրենքի գերակայությունից բացառություններ պե՞տք է լինեն:
2. Ձեր աշխատանքային գործունեության ընթացքում եղե՞լ է իրավիճակ, երբ մարդիկ փորձել են օրենքի գերակայության փոխարեն կիրառել սեփական կանոնները: Արդյո՞ք այնտեղ կային նաև կոռուպցիոն դրսևորումներ:
3. Կարո՞ղ եք ասել, թե այդ իրավիճակներն ինչ խնդիրներ են ստեղծում դատարանների և արդարադատության համակարգի համար:
4. Ի՞նչ կարող ենք մենք անել, որպեսզի խրախուսենք հանրության կողմից օրենքներին հետևելու և կոռուպցիան մերժելու վարքագիծը:
5. Արդարադատություն իրականացնող մարմինների հետ առնչվելիս ինչպիսի՞ կոռուպցիոն դրսևորումների եք բախվել:

164 OECD, Education for Integrity Teaching on Anti-Corruption, Values and the Rule of Law, page 80, https://www.oecd.org/governance/ethics/education-for-integrity-web.pdf (դիտված՝ 26.07.2023 թ.)

6. Առկայության դեպքում, խնդրում եմ, ներկայացրեք հայաստանյան հակակոռուպցիոն մարմինների հետ Ձեր համագործակցությունը:

2 Ուսումնաճանաչողական այց

Տևողությունը՝ 2 ժամ

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կծանոթանան հակակոռուպցիոն մարմնի աշխատանքներին, գործունեության յուրահատկություններին և կստանան իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները:

Նկարագրություն՝ Դասերից հետո կազմակերպել ուսումնաճանաչողական այց կոռուպցիայի դեմ պայքարի մարմիններից մեկը (Հակակոռուպցիոն կոմիտե, ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության կամ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություններ, Հակակոռուպցիոն դատարան): Սովորողներին հանձնարարել մշակել հարցեր, որոնք կարող են այցի ընթացքում ուղղել տվյալ մարմնի աշխատակիցներին: Մինչ այցելություն իրականացնելն անհրաժեշտ է, որ ուսուցիչը ևս մշակի հարցեր, որոնք կարող են կապված լինել հաջորդիվ ուսումնասիրվելիք թեմաների հետ: Այցից անմիջապես հետո կամ հաջորդ դասի ընթացքում ամփոփվում է այցը, որի ընթացքում սովորողները կիսվում են իրենց տպավորություններով:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Քո գրպանից՝ դատավորների սխալներին

Տևողությունը՝ 2 րոպե

Նկարագրություն՝ տեսանյութում ներկայացվում է, թե Հայաստանի բազմաթիվ քաղաքացիներ ինչպես են իրենց խախտված իրավունքները փորձում վերականգնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանում և որքան գումար է պետական բյուջեից վճարվել Հայաստանի արդարադատության համակարգի թույլ տված խախտումների համար:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 300 րոպե կոռուպցիայի մասին. հաղորդում 10

Տևողությունը՝ 25 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում ներկայացվում են արդարադատության համակարգում առկա կոռուպցիոն դրսևորումները, դրանց պատճառները և հետևանքները:

2 Բուն զրույց. Քաղաքականություններ, Հասմիկ Տիգրանյան

Տևողությունը՝ 28 րոպե

Նկարագրություն՝ Հարցազրույցում ներկայացվում են Հայաստանում գործող հակակոռուպցիոն մարմինները, և թե ինչ խնդիրներ է լուծելու 2023-2026 թթ. Հակակոռուպցիոն ռազմավարությունը:

5.3 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՁԱՓՈՐՈՇԻՉ

Ա մակարդակ՝ Բացատրի պետության բնութագրիչները, տարրերը, խնդիրները:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Պետություններն իրենց առջև դրված պարտականությունները կատարելու համար իրականացնում են բազմաթիվ գործառույթներ, որոնց հաջող իրականացումն ուղղակիորեն նպաստում է պետության հզորացմանը և քաղաքացիների կյանքի որակի բարելավմանը: Սակայն երբ այդ գործառույթների մեջ կոռուպցիոն երևույթները սկսում են ակտիվորեն տարածվել, վտանգվում են պետության պարտականությունների հաջող կատարումը և հասարակության կարիքների բավարարումը: Այս ամենն ավելի լավ պատկերացնելու համար քննարկենք պետության ներքին գործառույթներում հնարավոր կոռուպցիոն դրսևորումները և դրանց վնասները:

Տնտեսական գործառույթ: Այս գործառույթում կոռուպցիոն երևույթների ներթափանցման հետևանքով շուկա դուրս կգան անորակ ապրանքներ, նպաստավոր պայմաններ կստեղծվեն ոչ թե բոլոր ձեռնարկությունների, այլ համապատասխան պաշտոնյաների «ֆավորիտ» բիզնեսների համար: Պետական բյուջեի միջոցները կկառավարվեն ոչ արդյունավետ, իսկ տնտեսական ծրագրեր կմշակվեն այն ոլորտներում, որոնցից կոռումպացված պաշտոնյաները կամ գործարարները շահ կունենան: Հանրային ռեսուրսները կմասնավորեցվեն և արտոնյալ պայմաններով կտրամադրվեն կասկածելի կապերով ընկերություններին, իսկ ստացված եկամուտները կհարստացնեն այլ պետությունների պաշտոնյաներին:

Ֆինանսական վերահսկողության և հարկման գործառույթ: Այս գործառույթում կոռուպցիոն դրսևորումները կհանգեցնեն հարկահավաքության գործընթացի սկզբունքների խախտման, ինչի արդյունքում որոշ խմբեր կխուսափեն հարկերից և ապօրինի կհարստանան, կօգտագործեն իրենց պաշտոնը կամ ազդեցությունը հարկային արտոնություններ ստանալու համար: Մինչդեռ պարտաճանաչ և օրինապահ խմբերը կկատարեն իրենց հարկային պարտավորությունները՝ այդպիսով հայտնվելով մրցակցային ոչ նպաստավոր պայմաններում:

Նախորդ երկու գործառույթների օրինակ կարող է լինել, երբ գործող իշխանության հետ լավ հարաբերություններ ունեցող մեծահարուստ գործարարներից մեկին պատկանող ընկերությունը, որը զբաղվում է տեքստիլ արդյունաբերությամբ, ստանում է հարկային արտոնություն և ազատվում ներկրման մաքսատուրքից: Արդյունքում՝ ընկերության արտադրանքը շուկայում իրացվում է ավելի ցածր գնով՝ անհավասար մրցակցային պայմաններ ստեղծելով ոլորտի մյուս արտադրողների համար:

Սոցիալական գործառույթ: Առողջապահական կամ այլ սոցիալական ծրագրերի իրականացման ընթացքում կոռուպցիան կհանգեցնի նրան, որ պետական միջոցները կմսխվեն, հասարակության մեջ կմեծանա սոցիալական անհավասարությունը, իսկ սոցիալական խոցելի խավերի համար էլ չեն ապահովվի մարդու արժանապատիվ կյանքի համար անհրաժեշտ պայմանները:

Կրթամշակութային գործառույթ: Կոռուպցիայի տարածումը կրթական համակարգի կազմակերպման, գիտության և մշակույթի զարգացման, մշակութային ժառանգության պահպանման գործում կհանգեցնի կրթության ոլորտում անհավասար պայմանների առաջացմանը, շուկայի համար ոչ մրցունակ մասնագետների պատրաստմանը, գիտության և մշակութային ոլորտների ոչ բավարար զարգացմանը, գիտնականների և մշակութային գործիչների անբավարար աջակցությանը և տվյալ երկրում մասնագիտական գործունեության դադարեցմանը, մշակութային ժառանգության ուղղությամբ հատկացված ֆինանսների ոչ հավասարաչափ օգտագործմանը և մի շարք այլ բացասական հետևանքների:

Իրավական գործառույթ: Այս գործառույթի շրջանակում կոռուպցիան կխաթարի մարդու իրավունքների ապահովումը և պաշտպանությունը, չի ապահովվի օրենսդրության համընդհանուր և հավասար կիրառումը, իրականացված իրավախախտումները ոչ միշտ կբացահայտվեն և իրավախախտում կատարած անձը միշտ չէ, որ պատասխանատվության կենթարկվի: Կոռուպցիան կխաթարի մարդկանց իրավահավասարությունը և կնպաստի «օրենքից դուրս» գտնվողների շրջանակի ձևավորմանը:

Բնապահպանական գործառույթ: Առանց բնապահպանական նորմերի պահպանման տնտեսական գործունությունը, շրջակա միջավայր վնասակար նյութեր արտանետող գործարանները, բնական ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործումը, Կարմիր գրքում գրանցված կենդանիների չթույլատրված որսը կամ վաճառքը, անտառահատումները, արտեզյան ջրերի ապօրինի շահագործումը, քաղաքային կանաչ տարածքների վերացումը հիմնականում պայմանավորված են բնապահպանական գործառույթում կոռուպցիոն շղթաների առկայությամբ: Դրանք հսկայական վնասներ կհասցնեն բնությանը, կդառնան մարդու կենսագործունեության համար վտանգավոր պայմանների ստեղծման, բնապահպանական աղետների առաջացման և էկոմիջավայրում անդառնալի հետևանքների առաջացման պատճառ:

Կառավարությունը հաստատում է հանքարդյունաբերական ոլորտի մի մեծ ծրագիր, չնայած, որ հանքը շահագործել պատրաստվող ընկերությունը չի իրականացրել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման լիարժեք փորձաքննություն, և հանքի շահագործումից առաջացող բնապահպանական վնասն ավելի մեծ է, քան ենթադրյալ տնտեսական օգուտը: Այն, որ պաշտոնատար անձինք համառորեն անտեսում են փորձագիտական եզրակացությունները և շրջակա համայնքների բնակչության դժգոհությունը, ստիպում է հանրությանը կասկածել, որ հանքի շահագործման հիմքում կոռուպցիոն գործարքներ կան:

Այսպիսով՝ պետության գործառույթների ներդաշնակ և նպատակային իրականացումը հնարավոր է դառնում, եթե դրանում տարածված չէ կոռուպցիան: Պետության գործառույթներում կոռուպցիայի տարածումը դադարեցնելու համար մեզանից յուրաքանչյուրից պահանջվում է անհանդուրժողականություն կոռուպցիայի ցանկացած դրսևորման նկատմամբ և բարձր ներգրավվածություն կոռուպցիայի դեմ պայքարի աշխատանքներում: Ակտիվորեն մասնակցելով, ազդարարելով և աջակցելով հակակոռուպցիոն ջանքերին՝ անհատները նպաստում են ավելի թափանցիկ և հաշվետու պետության կառուցմանը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Հակակոռուպցիոն բլոգերները

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կկարողանան ներկայացնել պետության ներքին գործառույթներում առկա կոռուպցիայի ազդեցությունը քաղաքացիների վրա:

Նկարագրություն

Սովորողներից կազմել 6 խումբ՝ յուրաքանչյուրին տալով պետության ներքին գործառույթներից մեկը (տնտեսական, ֆինանսական վերահսկողության և հարկման, սոցիալական, կրթամշակութային, իրավական, բնապահպանական) և հանձնարարել մինչև հաջորդ դասը տեսանկարահանել մինչ 2 րոպեանոց տեսահոլովակ, թե ինչպես է Հայաստանում պետական տվյալ գործառույթում առկա կոռուպցիան ազդում քաղաքացու վրա: Խմբերից պահանջվում է ինքնուրույն հորինել կամ համացանցից գտնել Հայաստանում տվյալ ներքին գործառույթին առնչվող կոռուպցիոն դրսևորումներ և տեսանյութով ցույց տալ դրանց ազդեցությունը քաղաքացու վրա: Հաջորդ դասի ընթացքում աշակերտները կցուցադրեն իրենց պատրաստած տեսանյութերը, որից հետո ուսուցիչը կամփոփի դասը:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Թեղուտ՝ օրենքից դուրս

Տևողությունը՝ 30 րոպե

Նկարագրություն՝ Վավերագրական ֆիլմում պատմվում է Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման թույլտվության ապօրինության մասին, ներկայացվում են հանքի շահագործման խախտումների և պետական պատասխանատու մարմինների անգործության ապացույցներ:

5.4 ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

ՁԱՓՈՐՈՇԻՉ

Ա մակարդակ՝ Նկարագրի պետական իշխանության ճյուղերի հարաբերակցության մի քանի մոդելներ և բերի օրինակ:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Ինչպես ժողովրդավարության, այնպես էլ՝ կոռուպցիայի կանխարգելման ու հակազդման համար առանցքային նշանակություն ունի իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի տարանջատումը, փոխզսպումն ու հակակշռումը:

Վատ կառավարման, կոռուպցիայի և իշխանության չարաշահման հավանականությունն ավելի մեծ է լինում, երբ շատ լիազորություն է տրվում իշխանության որևէ ճյուղի[165]: Այս առումով օգնության է գալիս պետական իշխանության բաժանումը, որը թույլ է տալիս իշխանության յուրաքանչյուր ճյուղին վերահսկել մյուսներին: Իշխանությունների տարանջատումը միաժամանակ նվազեցնում է պետական պաշտոնյաների մենաշնորհային լիազորությունները, հայեցողականությունը և մեծացնում նրանց հաշվետվողականությունը՝ դրանով իսկ նպաստելով կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:[166]

Անհրաժեշտ է պետական իշխանությունը բաշխել մի շարք ինստիտուտների միջև, որոնք ունեն որոշակի ինքնավարություն՝ իշխանության տարանջատում, որպեսզի կարողանան հաշվետու պահել միմյանց՝ հավաքելով ապացույցներ իշխանության ենթադրյալ չարաշահումների մասին և պատժելով խախտումների համար:[167]

Իշխանությունների տարանջատման կարևորությունն ընդգծող օրինակ է Ուոթերգեյթի սկանդալը, որը տեղի ունեցավ ԱՄՆ-ում 1970-ականներին: Այդ ժամանակահատվածում ԱՄՆ նախագահը Ռիչարդ Նիքսոնն էր, որի գլխավորած կառավարության՝ գործադիր իշխանության ներսում տիրում էր կոռուպցիա: Սկանդալը սկիզբ առավ այն բանից, երբ ԱՄՆ նախագահական ընտրություններից 4 ամիս առաջ «Ուոթերգեյթ» հյուրանոցում ձերբակալվեցին նախագահի կուսակիցները՝ ընդդիմադիր կուսակցության ներկայացուցիչներին գաղտնալսելու և նրանց որոշ փաստաթղթեր լուսանկարելու համար: Արդյունքում պարզ դարձավ, որ նախագահի վարչակազմը ներգրավված էր տարբեր ապօրինությունների, այդ թվում՝ կո-

165 Goel R., Sharma P., Kaushal T., Separation of powers, 2022, https://blog.ipleaders.in/separation-of-powers/#Introduction (դիտված՝ 26.07.2023 թ.)

166 Da Ros L., Checks and Balances: The Concept and Its Implications for Corruption, 2021, https://www.scielo.br/j/rdgv/a/4RS7DBhrzgc9Bn8K6drZQwG/ (դիտված՝ 26.07.2023 թ.)

167 Barret D., State capture and development: a conceptual framework, J Int Relat Dev (Ljubl). 2023, https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC10034251/ (դիտված՝ 26.07.2023 թ.)

ռուպցիոն տարբեր հանցագործությունների, լրտեսության և արդարադատության իրականացումը խոչընդոտելու մեջ: Այդ բացահայտումներից հետո իշխանության մյուս թևերը սկսեցին հետաքննել գործադիր իշխանության գործունեությունը՝ կատարված անօրինությունների համար վերջինիս պատասխանատվության ենթարկելու նպատակով: Օրենսդիր մարմինը, մասնավորապես՝ Սենատի Ուոթերգեյթի հանձնաժողովը, լայնածավալ լսումներ և հարցաքննություններ անցկացրեց՝ բացահայտելու կոռուպցիոն մեղադրանքների հիմքում ընկած ճշմարտությունը: Իշխանությունների տարանջատումն օրենսդիր մարմնին հնարավորություն տվեց գործադիր իշխանությունից առանձին իրականացնել իր վերահսկողական գործառույթը՝ ապահովելով հակակշիռների և զսպումների առկայությունը: Կոմիտեի հետաքննությունները, ի վերջո, հանգեցրին բազմաթիվ դատապարտումների, հրաժարականների, այդ թվում՝ նախագահ Նիքսոնի, և ընկան բազմաթիվ բարեփոխումների հիմքում, որոնք նպատակ ունեին կանխելու ապագա կոռուպցիոն միջադեպերը:[168]

Բոս Քրոքեր ութոտնուկը, հեղինակ՝ Ջոն Ս. Պյու, 1901 թ, աղբյուր՝ cartoonmovement.com

Պետական իշխանության ճյուղերի բաժանման, դրանց անկախ գործունեության համար սպառնալիք է «պետության զավթումը»՝ իրավիճակ, երբ երկրի ներսում կամ դրսում գործող ազդեցիկ անհատները, հաստատությունները, ընկերությունները կամ խմբերը, ելնելով իրենց անձնական շահերից, օգտագործում են կոռուպցիան պետության քաղաքականության, իրավական միջավայրի և տնտեսության վրա ազդելու համար:[169] «Պետության զավթումը» համակարգային կոռուպցիայի տեսակ է, որի ընթացքում փոքր խմբերը վերահսկում են այն ինստիտուտներն ու գործընթացները, որոնց միջոցով ձևավորվում է պետական քաղաքականությունը՝ հանրային քաղաքականությանը հեռու պահելով հանրային շահերից և փոխարենը ձևավորելով այնպես, որ այն ծառայի իրենց սեփական շահերին:

2010 թ. խորհրդարանական բացարձակ մեծամասնություն ստանալուց հետո Եվրոպական միության անդամ պետություն համարվող Հունգարիայի վարչապետ Վիկտոր Օրբանն օգտվեց առիթից և որոշեց վերանայել Հունգարիայի Սահմանադրությունը: Արդյունքում Սահմանադրական դատարանը, դատական համակարգը, Կենտրոնական բանկը, Աուդիտի պետական ծառայությունը, Ազգային հարկային խորհուրդը, դատախազությունը, լրատվական ոլորտը կարգավորող մարմինը և այլ պետական հաստատություններ հայտնվեցին Օրբանի նշանակած պաշտոնյաների կատարյալ վերահսկողության տակ, ինչը գործնականում հանգեցրեց զսպում-

168 Rick Perlstein, Watergate scandal, United States history, 2023, https://www.britannica.com/topic/The-Washington-Post (դիտված՝ 26.12.2023 թ.)

169 ԹԻՀԿ, Հակակոռուպցիոն բառարան, https://transparency.am/glossary/term/state_capture (դիտված՝ 26.07.2023 թ.)

ների և հակակշիռների համակարգի անհետացմանը:[170] Փորձագետներն առկա իրավիճակը որակել են «պետության զավթում՝ ամրագրված Հունգարիայի հիմնարար օրենքով»[171]:[172] 2023 թվականի դրությամբ Օրբանը շարունակում է պաշտոնավարել որպես Հունգարիայի վարչապետ:

2010-2020 թվականներին Բուլղարիայի ազդեցիկ օլիգարխները, սերտ կապեր ունենալով տարբեր քաղաքական ուժերի քաղաքական գործիչների հետ, օգտագործում էին պետական ապարատը՝ ի շահ իրենց բիզնեսի: Նրանք համաձայնության էին եկել շահարկել գները՝ պետական էներգետիկ ընկերություններից օգուտներ քաղելու նպատակով:[173] Լրատվամիջոցների սեփականությունը կենտրոնացվել էր, որի արդյունքում խոշոր լրատվամիջոցները սկսել էին վերահսկվել քաղաքական կապեր ունեցող որոշ անձանց կողմից:[174] Քննադատությունների էր ենթարկվում նաև Բուլղարիայի դատական համակարգը՝ անկախության բացակայության համար: Ճիշտ է՝ նշված ժամանակահատվածում տեղի ունեցան կառավարող ուժի փոփոխություններ, սակայն պետության զավթումը շարունակվեց: Թրանսփարենսի Ինթերնեշնլը Բուլղարիան ճանաչել է Եվրամիության ամենակոռումպացված երկիրը:[175]

Պետության զավթման մեկ այլ օրինակ է Ադրբեջանը, որի դատական համակարգը, հակակոռուպցիոն գործակալությունները և ընտրական հանձնաժողովները մեղադրվում են իշխող վերնախավի վերահսկողության տակ լինելու և նրա կամքը կատարելու մեջ: Այնտեղ քաղաքական կոռուպցիան համակարգային է, և պետության ռեսուրսները օգտագործվում են պետական պաշտոնյաների հարստացման համար: Ադրբեջանի բնական ռեսուրսների՝ հատկապես նավթի վաճառքից ստացված եկամուտների մեծ մասը փոխանցվում են իշխող վերնախավի բանկային հաշիվներին՝ այդկերպ էապես կրճատելով պետական բյուջեի եկամուտները և խոչընդոտելով երկրի տնտեսության բնականոն զարգացումը:[176]

---

170 Patrick Kingsley, "As West fears the rise of autocrats, Hungary shows what's possible." New York Times, February 10, 2018. https://www.nytimes.com/2018/02/10/world/europe/hungary-orban-democracy-far-right.html (դիտված՝ 12.09.2023 թ.)

171 Dániel Hegeds, "Hungarian politics is about to enter a new period — no matter who wins the elections." GMFUS, April 5, 2018. https://www.academia.edu/36338612/Hungarian_Politics_Is_About_to_Enter_a_New_Period_No_Matter_Who_Wins_the_Elections (դիտված՝ 12.09.2023 թ.)

172 Iragir.am, Պետության զավթում՝ սահմանադրությամբ. հունգարական և հայկական զուգահեռներ, https://www.lragir.am/2019/12/04/499637/#_ednref6 (դիտված՝ 12.09.2023 թ.)

173 Heather A. Conley, Ruslan Stefanov, James Mina, Martin Vladimirov, The Kremlin Playbook: Understanding Russian Influence in Central and Eastern Europe, Appendix.: Case Studies, 2016, page 46 https://www.jstor.org/stable/resrep23311.13 (դիտված՝ 1.11.2023 թ.)

174 Luque J., Bulgarian independent media operating in a 'captured state', International Press Institute, 2020, https://ipi.media/bulgarian-independent-media-operating-in-a-captured-state/ (դիտված՝ 1.11.2023 թ.)

175 Luque J., Bulgarian independent media operating in a 'captured state', International Press Institute, 2020, https://ipi.media/bulgarian-independent-media-operating-in-a-captured-state/ (դիտված՝ 1.11.2023 թ.)

176 Kopecek V., How to Capture a State. The Case of Azerbaijan, University of Ostrava, 2016, page 82, https://www.researchgate.net/publication/304284675_How_to_Capture_a_State_The_Case_of_Azerbaijan (դիտված՝ 27.12.2023 թ.)

«Պետության զավթողները», որպես կանոն, ձգտում են իրենց ենթարկել իշխանության ճյուղերի ներկայացուցիչներին, ինչի արդյունքում խափանվում է իշխանության ճյուղերի միջև հակակշիռների մեխանիզմը: Դատական իշխանությունը հատկապես կարևոր թիրախ է զավթման համար, քանի որ կատարում է գործադիր իշխանությանը զսպող մարմնի դերը՝ իրականացնելով կառավարության որոշումների դատական վերանայում և չեղարկում դրանք այն դեպքերում, երբ ընթացակարգերը պատշաճորեն չեն պահպանվում: Դատական իշխանության զավթումը կարող է շահավետ լինել որոշակի անձանց կամ խմբերի համար, քանի որ դրա միջոցով ի վերջո կկոծկվեն կամ անպատիժ կմնան անօրինական գործողությունները կամ հանցավոր վարքը: Գործադիր իշխանությունը կարող է ոտնձգություն կատարել դատական իշխանության անկախության վրա՝ բյուջեների, նշանակումների և այլ հարցերի վերահսկման միջոցով, ինչպիսիք է, օրինակ, դատական գործերի բաշխումը:

Պետական իշխանության ճյուղերի անկախության ապահովման հարցում խիստ անհրաժեշտ է ազատ և արդար ընտրությունների անցկացումը: Ժողովրդավարական հասարակությունում իշխանության առնվազն երկու ճյուղերը ձևավորվում են ընտրությունների արդյունքում, ուստի կարևոր է բարեվարքություն ապահովող ու կոռուպցիան բացառող կարգավորումների առկայությունը: Կուսակցությունների և քարոզարշավների ֆինանսավորման թույլ կանոնակարգերը հաճախ նպաստում են օրենսդիր իշխանության գրավմանը, ինչը հնարավոր է դարձնում օրենքների և կանոնակարգերի վրա ներգործելը: Այդպիսի իրավիճակներում քաղաքական էլիտաները կարող են չարաշահել օրենսդրական օրակարգը վերահսկելու լայն լիազորությունները և առաջարկել ու հաստատել փոքր խմբերի շահերը սպասարկող օրենսդրական նախաձեռնություններ: Նրանք նաև կարող են օգտագործել խորհրդարանական ընթացակարգերում առկա բացերը՝ առանց բավարար հիմնավորման հապճեպ օրենքներ ընդունելու նպատակով՝ խաթարելով խորհրդարանի առանցքային դերը:[177]

Կարևոր է հիշել, որ Հայաստանում օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորները, Ազգային ժողովի խմբակցությունները և Կառավարությունը, որը հնարավորություն է տալիս այդ մարմիններին օրենսդրական առաջարկներով հանդես գալ, օրինակ՝ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման շրջանակում: Օրենսդիրը՝ որպես ներկայացուցչական մարմին, օրենքի նախագիծը քննարկելիս կարող է ամբողջովին համաձայնել, մասամբ համաձայնել դրա դրույթներին կամ լիովին մերժել նախագիծը: Դա է նրա՝ գործադիրին թելադրելու սահմանադրական իրավունքը: Որպես վերահսկողություն իրականացնող մարմին՝ օրենսդիրը նաև հետևում է, որ գործադիրը պատշաճ կերպով կյանքի կոչի իր կողմից ընդունված օրենքները և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերը: Օրենսդիր մարմնի կողմից ընդունված օրենքների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը ստուգվում է ՀՀ սահմանադրական դատարանի կողմից, իսկ դատական համակարգի մյուս կառույցները հետևում են այդ օրենքների պատշաճ կատարմանը և խախտումների հայտնաբերման դեպքում պատժում խախտումները կատարողներին:

177 Barrett D. E. State capture and development: a conceptual framework. J Int Relat Dev (2023). https://link.springer.com/article/10.1057/s41268-023-00290-6 (դիտված՝ 26.07.2023 թ.)

Պետության կառավարմանն առնչվող որոշումների կայացման գործընթացում թափանցիկության և հաշվետվողականության բարձրացումը կարևոր է կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման համար: Պետական իշխանության տարանջատումը և յուրաքանչյուր ճյուղի անկախ գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ է դրանց աշխատանքի արդյունավետ, հաշվետու և թափանցիկ իրականացումը: Դրան կարելի է հասնել անկախ դատական համակարգի ստեղծման, խորհրդարանական վերահսկողության իրականացման, կառավարության՝ իր ստանձնած գործառույթների և պարտավորությունների կատարման միջոցով, որն էլ կարող է հանգեցնել կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի համար առավել ամուր համակարգի ստեղծմանը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Իշխանության ճյուղերն ընդդեմ կոռուպցիայի

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կկարողանան տարբերակել իշխանության ճյուղերի դերը և կգիտակցեն դրանց ազդեցությունը պետության զավթումը կանխարգելելու գործում:

Նկարագրություն՝ Սովորողներից կազմել 3 խումբ և յուրաքանչյուրին տրամադրել ծրարներ, որոնցից յուրաքանչյուրում առկա է մեկ մեծ և բազմաթիվ փոքրիկ թղթեր: Մեծ թղթի վրա նշված է իշխանության ճյուղերից մեկի անվանումը (օրինակ՝ գործադիր), իսկ փոքրի թղթերի վրա գրված են պետության երեք ճյուղերին հատուկ գործառույթներ (տե՛ս դասագրքի տվյալ թեմայում): Խմբերը 7 րոպեի ընթացքում պետք է պետության երեք ճյուղերին հատուկ գործառույթներից ընտրեն նրանք, որոնք հատուկ են իշխանության տվյալ ճյուղին, որից հետո, օգտվելով նաև ընտրված գործառույթներից, պետք է թվեն հնարավորինս շատ առանձնահատկություններ/կարևորություններ, որոնք ունի իշխանության այդ ճյուղը կոռուպցիայի և պետության զավթման դեմ պայքարի գործում: Խմբերի աշխատանքից հետո յուրաքանչյուր խմբից մեկ սովորող ներկայացնում է խմբի կատարած աշխատանքը, որի ավարտին ուսուցիչը կատարում է ամփոփում՝ շեշտելով կոռուպցիայի դեմ պայքարի գործում իշխանության ճյուղերի ներդաշնակ աշխատանքի կարևորությունը:

2 Ոչ անկախ = կոռուպցիային հակված

Տևողությունը՝ 10 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կկարևորեն իշխանության ճյուղերի անկախ աշխատանքը կոռուպցիայի դեմ պայքարում:

Նկարագրություն՝ Հանձնարարել տանը մշակել իրավիճակ, որտեղ իշխանության ճյուղերից մեկի միջամտությունը մյուսի/մյուսների աշխատանքին հանգեցրել է կոռուպցիայի կամ եղել կոռուպցիոն գործարքի հետևանք: Դասարանում սովորողները կկարդան իրավիճակները, որից հետո մանկավարժը կկատարի ամփոփում՝ կարևորելով իշխանության յուրաքանչյուր ճյուղի անկախ աշխատանքը:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Ուոթերգեյթյան սկանդալ: Առաջին մաս

Տևողությունը՝ 6 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում ներկայացվում է ուոթերգեյթյան սկանդալը մի շարք մանրամասներով:

2 Ուոթերգեյթյան սկանդալ: Երկրորդ մաս

Տևողությունը՝ 7 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում ներկայացվում է ուոթերգեյթյան սկանդալը իր մի շարք մանրամասներով՝ ներկայացնելով իշխանության ճյուղերի անկախության կարևորությունը:

5.5 ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՁԱՓՈՐՈՇԻՉ

Բ մակարդակ՝ Կարողանա մեկնաբանել արտաքին քաղաքական դոկտրինի «ազգային շահեր», «ազգային անվտանգություն» հասկացությունները:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Կոռուպցիան կարող է կործանարար լինել պետության և նրա ժողովրդի անվտանգության համար: Որպեսզի ազգային անվտանգության պահպանմանն ուղղված քայլերն արդյունավետ լինեն, պետությունները պետք է գիտակցեն, թե ինչպիսի վնաս է կոռուպցիան հասցնում ինչպես պաշտպանական համակարգին, այնպես էլ անվտանգության այլ բաղադրիչներին, ինչպիսիք են, օրինակ, ժողովրդագրական, էներգետիկ, տեղեկատվական, շրջակա միջավայրի, կենսանվտանգության, և ամենախիստ կերպով արձագանքի դրան: Կոռուպցիայի հետևանքով առաջացած սոցիալական խնդիրները, աղքատությունը կնպաստեն երկրից արտագաղթի աճին և ծնելիության մակարդակի նվազմանը՝ հանգեցնելով ժողովրդագրական խնդիրների սրմանը: Էներգետիկայի ոլորտում տիրող կոռուպցիան կհանգեցնի էներգետիկ ճգնաժամերի, հովհարային անջատումների, էներգաապահովումն իրականացնող կայանների տեխնիկական չհագեցվածության, ընդհուպ՝ այլ երկրներից էներգետիկ կախվածության և մատուցվող ծառայությունների, տրամադրված էներգիայի արժեքի անհիմն բարձրացման: Տեղեկատվական անվտանգության ոլորտում առկա կոռուպցիան կհանգեցնի, օրինակ, սահմանափակ հասանելիությամբ և պետական անվտանգության համար խիստ կարևորություն ներկայացնող տեղեկատվության շրջանառությանն ինչպես երկրի ներսում, այնպես էլ այլ, նույնիսկ թշնամական երկրներում: Կոռուպցիոն ճանապարհով թույլատրված զանգվածային անտառահատումները, հսկայական մասշտաբների հասնող քաղցրահամ ջրի ոչ նպատակային օգտագործումը և շրջական միջավայրին վնասող մի շարք այլ խնդիրներ պատճառ կդառնան միջավայրի անդառնալի կամ երկարաժամկետ բացասական փոփոխությունների: Իսկ կենսանվտանգության ոլորտում առկա կոռուպցիոն սխեմաները կարող են պատճառ դառնալ վտանգավոր տարրեր պարունակող սննդի, ջրի օգտագործմանը ու դրանով պայմանավորված՝ բնակչության շրջանում հիվանդացության աճին:

Կոռուպցիան Լիբանանում, հեղինակ՝ Մահմուդ Ռիֆայ, 2020 թ, աղբյուր՝ cartoonmovement.com

Նույնիսկ մեկ կոռուպցիոն արարքը կարող է սկիզբ դնել իրադարձությունների շղթայի, որը կխաթարի հասարակության անվտանգությունն ու կայունությունը, կարժենա բազմաթիվ կյանքեր:

Զենքի մաքսանենգությամբ զբաղվող անձինք կարող են իրենց ապօրինի եկամուտներն օգտագործել պաշտոնատար անձանց կաշառելու համար, որպեսզի անցնեն պետական սահմանները և իրականացնեն ահաբեկչական գործողություններ:

Կառավարությունները կարող են օգտագործել «ազգային անվտանգության» կարգախոսը՝ չարաշահումները և տեղեկատվությունը թաքցնելու համար, որն էլ, իր հերթին, կարող է նպաստել անվտանգության սպառնալիքների բարձրացմանը:

Պաշտպանության ոլորտում կոռուպցիան թուլացնում է առնչվող պետական ինստիտուտները և սահմանափակում երկրի ինքնապաշտպանության ունակությունը: Պաշտպանության ոլորտում կոռուպցիան գնահատելիս ուշադրության կենտրոնում պետք է լինեն հինգ առանցքային բաղադրիչների՝ քաղաքական, ֆինանսական, կադրային (անձնակազմի), օպերացիոն ու գնումների կոռուպցիոն ռիսկերը և դրանց նվազեցմանն ուղղված միջոցառումները:[178]

Քաղաքական ռիսկերը վերաբերում են պաշտպանության ոլորտի արդյունավետ խորհրդարանական վերահսկողությանը, որը կարող է բացահայտել և նվազեցնել պաշտպանական համակարգում կոռուպցիոն դրսևորումները, օրինակ՝ բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունները խորհրդարան պարտադիր ներկայացնելու և կատարված ծախսերը վերահսկելու միջոցով:

Ֆինանսական ռիսկերի առումով կարևորվում են բյուջետային ու ֆինանսական գործընթացների թափանցիկությունը, հաշվետվողականությունը և վերահսկողությունը:

Անձնակազմին առնչվող ռիսկերի առումով գնահատվում են, թե արդյո՞ք իրականացվում են անձնակազմի ուսուցում, վերապատրաստումներ, առանձին դասընթացներ բարեվարքության և կոռուպցիայի դեմ պայքարի համար, առկա՞ են առանձին ստորաբաժանումներ, որոնք մասնագիտացած են բարեվարքության ամրապնդման և կոռուպցիայի դեմ պայքարի գործում, արդյո՞ք աշխատակիցները տեղյակ են կոռուպցիոն դեպքերի ազդարարման մեխանիզմների մասին:

Զորամասի հրամանատարը, շահադիտական նպատակներից ելնելով, օգտագործելով պաշտոնեական դիրքը, նվագախմբի նախկին երաժշտին նշանակել է էլեկտրաեռակցողի պաշտոնում, այնուհետև ապօրինաբար թույլատրել է նրան փաստացի չներկայանալ ծառայության՝ դրսևորելով թողտվություն և դրա դիմաց երեք ամսվա ընթացքում որպես կաշառք ստացել 150.000 ՀՀ դրամ:[179]

178 TI, The Government Defence Integrity, https://ti-defence.org/gdi/about/ (դիտված՝ 26.07.2023 թ.)

179 DataLex, Դատական տեղեկատվական համակարգ, Գործի համար: ՍԴ1/0111/01/17, 2017, https://shorturl.at/1OSxm (դիտված՝ 25.02.2024 թ.)

Օպերացիոն ռիսկերը կարևորվում է նրանով, որ պաշտպանական ոլորտի աշխատակիցները և ծառայություն իրականացնողներն իրենց ծառայության կամ աշխատանքի ընթացքում ունենան կոռուպցիոն խնդիրները բացահայտելու և դրանց դեմ պայքարելու բավարար կարողությունները և ջանքերը:

Գնումների կոռուպցիոն ռիսկերը հաճախ պայմանավորված են դրանց պլանավորման և իրականացման ընթացակարգերի գաղտնի լինելու հանգամանքով, ինչը սահմանափակում է վերահսկողությունը և բարենպաստ պայմաններ է ստեղծում այդ գործընթացում կոռուպցիոն տարբեր դրսևորումների համար:

Վերը թվարկված ոլորտների ուսումնասիրությամբ կատարվում են նաև հետազոտություններ՝ գնահատելու համար պաշտպանական և անվտանգային համակարգում կոռուպցիոն ռիսկերի կառավարման ինստիտուցիոնալ վերահսկողության որակը:[180] Այդպիսի ուսումնասիրություններից է Թրանսփարենսի Ինթերնեշնլի՝ Կառավարության պաշտպանության ոլորտի օրինավորության համաթիվը, ըստ որի՝ Հայաստանը դասվում է այն երկրների շարքին, որտեղ կոռուպցիոն ռիսկերը բարձր են, իսկ կոռուպցիայի նկատմամբ հաստատությունների դիմադրողականությունը՝ ցածր:[181]

Պաշտպանության ոլորտում կոռուպցիոն ռիսկի գործոններից են նաև պաշտպանական ծառայություններ մատուցելու պետական մենաշնորհը, գաղտնիության ռեժիմը:[182]

Ճիշտ է, պաշտպանության բնագավառի գաղտնիության ռեժիմն ունի ընդունելի հիմնավորվածություն, բայց երբեմն որոշ գործընթացներ քողարկված են ավելորդ կամ անհիմն գաղտնիության իրավակարգավորումների և պրակտիկայի շղարշով, ինչն ավելացնում է այս բնագավառի հակվածությունը կոռուպցիային: Գաղտնիության ռեժիմի պատճառաբանմամբ զինված ուժերում հաճախ պաշտպանության ոլորտի ողջ գույքի մասին տեղեկությունը ներկայացվում է իբրև պետական գաղտնիք: Կամ նույնիսկ ոչ գաղտնի գործընթացների մասին չեն ներկայացվում բավարար տեղեկություններ: Պետությունների ազգային անվտանգության շահը և քաղաքացիների տեղեկատվության ազատությունը հավասարակշռելու նպատակով միջազգային մակարդակում ընդունվել են որոշ սկզբունքներ (Ցվանեի սկզբունքները), որոնք նախատեսված են օգնելու պաշտոնյաներին ճիշտ կողմնորոշվել տեղեկատվությունը հասանելի դարձնելու հարցում:

ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածն ասում է, որ զինված ուժերը գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո, հետևաբար պաշտպանության բնագավառի հակակոռուպցիոն բարեփոխումները մշտապես պետք է լինեն մեր հանրության օրակարգում: Այդ բարեփոխումների շրջանակներում անհրաժեշտ է իրականացնել զինված ուժերի կոռուպցիոն ռիսկերի հսկողությանն ու վերահսկողությանը միտված միջոցա-

---

180 TI, The Government Defence Integrity, https://ti-defence.org/gdi/about/ (դիտված՝ 26.07.2023 թ.)

181 ԹԻՀԿ, Հրապարակվել է Թրանսփարենսի Ինթերնեշնլի՝ Կառավարության պաշտպանության ոլորտի օրինավորության համաթիվը, 2021, https://transparency.am/hy/media/news/article/3203 (դիտված՝ 26.07.2023 թ.)

182 Вандышева А., После войны наступает расследование: злоупотребления властью в воюющих странах, лекция, стр. 9

ռումներ, որոնք կարող են բացահայտել առկա խնդիրները և հուշել պաշտոնյաներին, իրավապահ մարմիններին, պատգամավորներին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և այլ վերահսկողական մարմիններին, թե որ դեպքերում է հարկավոր իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություն:

Դատելով վերջին տարիներին տեղի ունեցած պատերազմների ելքերից՝ կարող է տպավորություն ստեղծվել, թե կոռումպացված երկրներում ապրելն ավելի ապահով է, նրանք ունեն ավելի զորեղ պաշտպանական կարողություններ, իսկ ժողովրդավարական երկրներն ավելի թույլ են պաշտպանված: Այսպես մտածելով՝ մենք հաշվի չենք առնում, որ կոռուպցիան խժռում է երկրի պաշտպանական կարողություններին ուղղված ռեսուրսները՝ անխուսափելիորեն հանգեցնելով զինված ուժերի մարտունակության նվազմանը, երկրի պաշտպանունակության թուլացմանը: Դրանով իսկ պայմանավորված, կոռուպցիան պետք է դիտարկել որպես ազգային անվտանգությանն ուղղված լուրջ սպառնալիք, որի դեմ պայքարը պետք է օրակարգային լինի թե՛ պետությունների և թե՛ քաղաքացիների համար: Անվտանգ և պաշտպանված երկիր ունենալու համար առանցքային է պետության ամրապնդումն ու զարգացումը, որը հնարավոր է միայն կոռուպցիայի նկատմամբ զրո հանդուրժողականության արդյունքում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 «Ո՞րտեղից է գալիս վտանգը». բանավեճ

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կճանաչեն և կթվարկեն կոռուպցիայի բացասական հետևանքները ազգային անվտանգության համար:

Նկարագրություն

Կազմակերպել բանավեճ «Կոռուպցիան և ազգային անվտանգությունը» թեմայով: Սովորողներին բաժանել երկու խմբի՝ առաջինին հանձնարարելով հանդես գալ «Կոռուպցիան դրական ազդեցություն ունի ազգային անվտանգության համար», իսկ երկրորդին՝ «Կոռուպցիան բացասական ազդեցություն ունի ազգային անվտանգության համար» գաղափարների ներքո: Խմբերին հանձնարարել տանը նախապատրաստվել բանավեճին և հաջորդ դասի խթանման փուլում կազմակերպել այն: Բանավեճին հատկացնել 15 րոպե, որից հետո ամփոփել այն՝ ներկայացնելով կոռուպցիայի հսկայական բացասական հետևանքներն ազգային անվտանգության վրա:

2 Կոռուպցիոն սարդոստայնում

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կճանաչեն և կթվարկեն կոռուպցիայի բացասական հետևանքները ազգային անվտանգության վրա:

Նկարագրություն՝ Սովորողներին հանձնարարել տանը ինքնուրույն ուսումնասիրել միջազգային կամ ներպետական մակարդակում բարձր հնչեղություն ստացած որևէ կոռուպցիոն դրսևորում (սկանդալ), որը կապված է եղել ազգային անվտանգության հետ: Անհրաժեշտ է նաև ներկայացնել դրա առանձնահատկությունները, պատճառները և հետևանքները: Հաջորդ դասին լսել սովորողների կատարած աշխատանքը և քննարկել այն:[183]

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Զինկոմիսարիատ պապայի հետ

Տևողությունը՝ 30 վայրկյան

Նկարագրություն՝ Անիմացիոն տեսանյութում ներկայացվում է, թե ինչպես կարող է կոռուպցիան սպառնալ ազգային անվտանգությանը:

2 Կոռուպցիայի աղետալի հետևանքները

Տևողությունը՝ 1 րոպե

Նկարագրություն՝ Անիմացիոն տեսանյութում ներկայացվում է, թե քաղաքաշինության ոլորտում առկա կոռուպցիոն դրսևորումներն ինչպես կարող են սպառնալ երկրի ազգային անվտանգությանը:

3 Ի՞նչ է կոռուպցիան. Բարդության հինգ աստիճան

Տևողությունը՝ 23 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում ներկայացվում է, թե ինչ է կոռուպցիան, ինչու է կոռուպցիան համարվում պետության անվտանգությանն ուղղված լրջագույն մարտահրավեր:

183 ԹԻՀԿ, Ա. Հակոբյան, Ա. Խուդավերդյան, Վ. Հոկտանյան, Գ. Հովհաննիսյան, Խ. Բեզիրջյան, Թ. Խեչոյան/ «Հակակոռուպցիոն ակադեմիա» դասընթացի գործնական առաջադրանքների ժողովածու– Եր.: Հեղ. հրատ., 2022, էջ 10 https://www.transparency.am/hy/publication/pdf/304/10018 (դիտված՝ 26.07.2023 թ.)

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Էլիտար ջոկատ. թշնամին ներսում (անգլերեն)

Տևողությունը՝ 1 ժամ 55 րոպե

Նկարագրություն՝ Գեղարվեստական ֆիլմում ներկայացվում են իրավապահ մարմիններում տիրող կոռուպցիոն սխեմաները և դրանց ազդեցությունը հատուկ ջոկատայինների աշխատանքի վրա:

2 Պետության թշնամի (ռուսերեն)

Տևողությունը՝ 2 ժամ 20 րոպե

Նկարագրություն՝ Գեղարվեստական ֆիլմը պատմում է Ազգային անվտանգության ծառայության մի խումբ կոռումպացված գործակալների մասին:

3 Մեդիամարտն ընդդեմ կոռուպցիայի. Վահե Սարուխանյան

Տևողությունը՝ 23 րոպե

Նկարագրություն՝ Հարցազրույցում ներկայացվում է բանակի գնումների գործընթացում բացահայտված կոռուպցիոն խոշոր սխեմաներից մեկը:

4 Մեդիամարտն ընդդեմ կոռուպցիայի. Ավետիք Իշխանյան

Տևողությունը՝ 24 րոպե

Նկարագրություն՝ Հարցազրույցում ներկայացվում են բանակի ստեղծումից ի վեր հայտնի դարձած մի շարք կոռուպցիոն բացահայտումների մասին և դրանց ազդեցությունը հասարակություն-բանակ վստահության մթնոլորտի վրա:

5.6 ՊԱՏԵՐԱԶՄԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ

ԶԱՓՈՐՈՇԻՉ

Բ մակարդակ՝ Կարողանա բացատրել պատերազմի (դրա միջոցների, վարման եղանակների, կանոնների) և քաղաքակրթության զարգացման աստիճանի փոխկապակցվածությունը:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Կոռուպցիան հակամարտությունների առաջացման կարևոր պատճառներից է, այն թուլացնում է երկրի կառավարման համակարգը, տնտեսությունը և առաջացնում դժգոհություններ հասարակության շրջանում:[184] Կոռուպցիայի և պատերազմի միջև կապի մասին է վկայում, օրինակ, այն, որ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կազմակերպության 2020 թվականի «Կոռուպցիայի ընկալման համաթվի» ստորին քառորդում գտնվող երկրների կեսը ներքաշված է հակամարտությունների մեջ:[185]

20 ամենակոռումպացված երկրներից 11-ն ամենաշատն են տուժել զինված հակամարտություններից: Դրանցից 9-ի տարածքում խաղաղապահ առաքելություններ են իրականացրել ՄԱԿ-ն ու ՆԱՏՕ-ն, ԵՄ-ն ու Աֆրիկյան միությունը: Այս երկրներն ունեն բռնի մահացության (այսինքն՝ մահ հակամարտությունից, ահաբեկչությունից, հանցագործությունից և քաղաքացիական բնակչության նկատմամբ պետության կիրառած բռնությունից) ամենաբարձր ցուցանիշները:[186]

Հակամարտությունների ընթացքում կարող են տեղ գտնել կոռուպցիա, իսկ կոռուպցիան՝ ծնել հակամարտություն: Համաշխարհային բանկի տվյալներով՝ բռնի հակամարտությունների հավանականությունը մեծանում է, երբ կառավարությունները պատշաճ կերպով չեն կանխում կոռուպցիան կամ չեն իրականացնում պատշաճ արդարադատություն:[187]

Զուգահեռաբար՝ հակամարտությունը կարող է կոռուպցիայի նոր ձևերի զարգացման համար բարենպաստ միջավայր ստեղծել: Հակամարտության գոտիներում ռեսուրսների

---

184 Billon P., Buying Peace or Fuelling War: The Role of Corruption in Armed Conflicts, Journal of International Development, vol.15, 2003, https://gsdrc.org/document-library/buying-peace-or-fuelling-war-the-role-of-corruption-in-armed-conflicts/ (դիտված՝ 26.07.2023 թ.)

185 Sofuoglu M., Why war and corruption are inseparable, TRT World, 2021 https://www.trtworld.com/magazine/why-war-and-corruption-are-inseparable-49816 (դիտված՝ 26.07.2023 թ.)

186 Transparency International Deutschland, Corruption as a threat to stability and peace, 2014, p 15, https://ti-defence.org/wp-content/uploads/2016/03/2014-01_CorruptionThreatStabilityPeace.pdf (դիտված՝ 26.12.2023 թ.)

187 Transparency International the global coalition against corruption, Conflict at the bottom, https://www.transparency.org/en/news/conflict-at-the-bottom (դիտված՝ 26.07.2023 թ.)

մատակարարման բարձր պահանջարկը, ինչպես նաև զանգվածային անկայունությունը կարող են օգտագործվել անձնական նպատակներով: Ընդ որում, կոռուպցիոն այս սխեմաները կարող են պահպանվել նաև պատերազմի ավարտից հետո, ինչն էլ ավելի կդժվարացնի խաղաղաշինությունը, վերակառուցումն ու զարգացումը:

Փորձագետների կարծիքով 2020 թ. արցախյան պատերազմի ընթացքում հայկական կողմի պարտության պատճառներից մեկը տարիներ տևած կոռուպցիան էր, որը հանգեցրեց զինկոմիսարիատների աշխատանքի անարդյունավետության, միջոցների թերի գույքագրման և սխալ նշանակումների:[188]

Զինված հակամարտությունները և պատերազմները կարող են նաև իդեալական միջավայր ստեղծել փողերի լվացման համար: Հակամարտություններին բնորոշ է քաոսը և անկայունությունը, ինչը հեշտացնում է ապօրինի գործողությունները, ինչպիսիք են թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը, մարդկանց առևտուրը և զենքի մաքսանենգությունը: Այս հանցավոր գործողությունները մեծ գումարներ են առաջացնում, որոնք պետք է լվացվեն օրինական երևալու համար: Փողերի լվացման միջոցով զինված հակամարտություններում ներգրավված անհատները և խմբերը կարող են քողարկել իրենց ապօրինի միջոցների ծագումը, ինչը կդժվարացնի իրավապահ մարմինների համար հանցագործությունից ստացված եկամուտներին հետևելը և առգրավելը: Բացի այդ, հակամարտությունների մեջ ներգրավված զինված խմբերը կարող են նաև հանցավոր գործունեություն ծավալել՝ իրենց գործողությունները ֆինանսավորելու համար: Այս խմբերը կարող են օգտագործել փողերի լվացման մեթոդներ՝ իրենց միջոցների աղբյուրը թաքցնելու և իշխանությունների կողմից հայտնաբերումից խուսափելու համար:

Կոռուպցիայի և պատերազմի կապը հատկապես տեսանելի է թույլ պետականություն ունեցող երկրներում: Սոմալիի և Սիրիայի նման խիստ կոռումպացված երկրներում թույլ հիմքերի վրա գտնվող պետականությունը հանգեցրել է պետական ծառայությունների և ինստիտուտների անարդյունավետ աշխատանքին, որն էլ բարենպաստ միջավայր է ստեղծել կոռուպցիայի զարգացման համար:

Սոմալիում, օրինակ, կոռումպացված իրավապահ ուժերը ծառայում են իրենց և ռազմական ղեկավարների շահերին՝ չպաշտպանելով բնակչությանը՝ այդպիսով ստեղծելով կոռուպցիայի և պատերազմի մշտական ցիկլ:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ կոռուպցիայի և պատերազմի միջև կապը բնութագրվում է պետական կառույցների թուլացմամբ և հանրային վստահության քայքայմամբ՝ ստեղծելով կոնֆլիկտների համար նպաստավոր միջավայր:

Մամուլի ազատության բացակայությունը ևս մեկ պատճառ է, թե ինչու է կոռուպցիան հանգեցնում պատերազմի: Կոռումպացված քաղաքական համակարգը ոչնչացնում է մամուլի ազատությունը՝ թույլ տալով առաջնորդներին ամրապնդել իրենց իշխանությու-

188 Այդաբիրյան Ռ., Լիպարիտյան Ժ., Փափազյան Թ., 2020 թ. Ղարաբաղյան պատերազմը և Հայաստանի ապագա արտաքին ու անվտանգության քաղաքականությունները, 2021, էջ 18 https://enlightngo.org/wp-content/uploads/2022/01/Սպիտակ-Թուղթ.-final.pdf (դիտված՝ 27.12.2023 թ.)

նը և հետամուտ լինել տարածքային նոր հավակնությունների կյանքի կոչմանը՝ չհանդիպելով ներքին դիմադրության:

Մեկ այլ պատճառ է տնտեսական անհավասարությունը և թույլ տնտեսական զարգացումը, որը նույնպես էական դեր է խաղում կոռուպցիայի հետևանքով պատերազմի առաջացման համար: Այս գործոնները նպաստում են անկայունության առաջացմանը՝ ստեղծելով կոնֆլիկտների համար նպաստավոր միջավայր:[189]

Պատերազմի ժամանակ քաղաքական դերակատարների համար հանրային հաշվետվողականությունը դառնում է ավելի բարդ խնդիր, որը ստեղծում է կոռուպցիայի համար կատարյալ պայմաններ՝ քաղաքական գործիչներին ազատություն տալով օգտագործելու իրենց իշխանությունը սեփական շահերը առաջ տանելու համար:

2002-2011 թթ. Աֆղանստանում և Իրաքում 30-60 միլիարդ դոլար վատնվել է կոռուպցիայի և անարդյունավետ գնումների պատճառով:[190]

Չափազանց կարևոր է, որ կոռուպցիայի դեմ պայքարը պատերազմող երկրներում դառնա վերականգնման ջանքերի հիմքը: Առանց դրա՝ կոռուպցիայի, անկայունության և հակամարտությունների ցիկլը կարող է երկար տարիներ մթագնել երկրի ճանապարհը դեպի խաղաղություն, բարգավաճում և օրենքի գերակայություն:[191]

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Զրո կոռուպցիա զինված ուժերում

Տևողությունը՝ 10 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կկարողանան փաստերով ներկայացնել կոռուպցիայի և պատերազմի միջև կապը:

Նկարագրություն

Սովորողներից կազմել երեք խումբ և հանձնարարել տնային աշխատանք՝ մշակել զինված ուժերի հակակոռուպցիոն բարեփոխումների գործողությունների պլան և ներկայացնել այն դերախաղով: Խմբերից մեկը պետք է մշակի գործողությունների պլան, որն առնչվում է մինչպատերազմական փուլին, իսկ մյուս երկուսը՝ պատերազմական և հետպատերազմական փուլերին: Դերախաղի համար սցենարի օրինակ

189 Bertrand V., Corruption and war: two scourges that feed off each other, The Conversation, 2023, https://theconversation.com/corruption-and-war-two-scourges-that-feed-off-each-other-199265 (դիտված՝ 27.12.2023 թ.)

190 Вандышева А., После войны наступает расследование: злоупотребления властью в воюющих странах, лекция, стр. 13

191 Transparency International the global coalition against corruption, Conflict at the bottom, https://www.transparency.org/en/news/conflict-at-the-bottom (դիտված՝ 26.07.2023 թ.)

կարող է լինել կառավարության նիստը, պաշտպանության նախարարի մամուլի ասուլիսը, պաշտպանության նախարարությունում իրականացվող խորհրդակցությունը, որի ընթացքում ներկայացվում է մշակված ռազմավարությունը և իրականացվում հարց ու պատասխան: Հաջորդ դասի ընթացքում խմբերը դերախաղով պետք է ներկայացնեն իրենց կազմած գործողությունների պլանները, որից հետո սովորողներն ուսուցչի հետ կամփոփեն կատարված աշխատանքը և կկատարեն եզրակացություններ:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Բարեփոխումներ Զինված ուժերում. բարդության հինգ աստիճան

Տևողությունը՝ 15 րոպե

Նկարագրություն՝ Հաղորդման ընթացքում ներկայացվում է, թե ինչու են կարևոր բարեփոխումները ՀՀ զինված ուժերում, և թե՛ տարածքային, թե՛ ռեսուրսների համեմատաբար համեստ հնարավորություններ ունեցող երկրները, որոնց շարքում է նաև Հայաստանը, ինչպես կարող են արդյունավետ լուծել իրենց անվտանգության խնդիրները

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 Թերթը (անգլերեն)

Տևողությունը՝ 1 ժամ 55 րոպե

Նկարագրություն՝ Գեղարվեստական ֆիլմը այն մասին է, թե ինչպես «The New York Times»-ի և «The Washington Post»-ի խիզախ լրագրողներին հաջողվեց հրապարակել Պենտագոնի գաղտնի փաստաթղթերը Վիետնամի պատերազմի վարման վերաբերյալ:

2 Պենտագոնի պատերազմները (անգլերեն)

Տևողությունը՝ 1 ժամ 44 րոպե

Նկարագրություն՝ Գեղարվեստական ֆիլմում ներկայացվում է, թե ինչպես է զինված ուժերում առկա կոռուպցիան հանգեցնում չհիմնավորված և անարդյունավետ ռազմական ծախսերի:

5.7 ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Պատերազմը՝ որպես հասարակական երևույթ

Իրականացման ժամկետը՝ 2.5 ամիս

Նախագծի նպատակը՝ Սովորողները վեր կհանեն հակամարտությունների/պատերազմների վրա կոռուպցիայի ազդեցությունը, կկարողանան ուսումնասիրել միջազգային հակամարտություններ և կատարել եզրահանգումներ:

Հետազոտության հարցը՝ Ինչպե՞ս է կոռուպցիան ազդում հակամարտությունների /պատերազմների առաջացման և դրա ընթացքի վրա:

Խնդիրը՝ Ուսումնասիրել կոռուպցիայի ազդեցությունը հակամարտությունների/պատերազմների վրա:

Վերջնարդյունքը՝
Սովորողները

- Կիմանան ժամանակակից հակամարտությունների/պատերազմների մասին, կիրականացնեն այդ ուղղությամբ հետազոտություններ և վերլուծություններ.
- Կներկայացնեն հակամարտությունների/պատերազմների առաջացման վրա ազդող գործոնները.
- Կնույնականացնեն կոռուպցիան՝ որպես հակամարտություններ/պատերազմներ առաջացնող և սառած հակամարտություններն ակտիվացնող գործոն.
- Կկարողանան առկա փաստերի հիման վրա կատարել կանխատեսումներ:

Նախագծի համառոտ նկարագրություն
Սովորողներն ընտրում են մեկ միջազգային հակամարտություն/պատերազմ և ուսումնասիրում են այն՝ վերհանելով դրա առաջացման նախապայմանները, ընթացքի վրա ազդեցություն ունեցած գործոնները, հակամարտության այժմյան վիճակը և կոռուպցիայի ազդեցությունը հակամարտության ամբողջ ընթացքի վրա: Կատարում են կանխատեսումներ հակամարտության հետագա ընթացքի համար և քննարկում այն անվտանգության ոլորտի մասնագետի կամ ուսուցիչներից կազմված խմբի հետ: Նախագծի ավարտին պատրաստում են իրականացրած ուսումնասիրությունն ամփոփող զեկույց:

Նախագծի պարտադիր բաղադրիչների նկարագրություն.

- **Ընտրված հակամարտության/պատերազմի առաջացման նախապայմանների ուսումնասիրություն՝** ուսումնասիրում են այն գործոնները, որոնք հանգեցրեցին հակամարտության/պատերազմի առաջացմանը՝ առանձին անդրադարձ կատարելով կոռուպցիային:

- **Հակամարտության/պատերազմի ընթացքի վրա ազդեցություն ունեցած գործոններ՝** ուսումնասիրվում է ընթացքի վրա վճռորոշ ազդեցություն ունեցած գործոնները, այդ թվում՝ կոռուպցիան:
- **Հակամարտության/պատերազմի այժմյան վիճակի նկարագրություն և կանխատեսումներ՝** նշվում է այժմյան վիճակը, երկրում կոռուպցիայի այժմյան մակարդակը և իրականացված ուսումնասիրությունների հիման վրա կատարվում են կանխատեսումներ հետագա ընթացքի հետ կապված: Կանխատեսումները քննարկում են անվտանգության ոլորտի մասնագետի կամ ոլորտին քաջատեղյակ ուսուցիչներից կազմված խմբի հետ (օրինակ՝ Պատմության, Հասարակագիտության ուսուցիչներ և այլն):

Նախագծի ընթացքը

Ուսուցչի գործողություններ	Աշակերտների գործողություններ
1 Նախապատրաստական փուլ	
• Ներկայացնել նախագծի համար պարտադիր համարվող բաղադրիչները: • Ներկայացնել վերջին տարիների ակտիվ համարվող/համարված հակամարտությունները/պատերազմները: Օրինակ՝ արցախյան պատերազմ, պաղեստինա-իսրայելական հակամարտություն, թուրք-քրդական հակամարտություն, սիրիական ճգնաժամ, ռուս-վրացական պատերազմ, Հնդկաստան-Պակիստան հակամարտություն, ռուս-ուկրաինական պատերազմ և այլն: • Հաշվի առնելով աշակերտների հետաքրքրությունները՝ ձևավորել աշխատանքային խմբեր (յուրաքանչյուր խմբում՝ 2-4 աշակերտ): • Աջակցել խմբի անդամների աշխատանքային դերերի բաշխման գործընթացին:	• Սովորողները ծանոթանում են հակամարտություններին/պատերազմներին և կատարում ընտրություն: • Կազմվում են աշխատանքային խմբերը: Սովորողները կատարում են աշխատանքի բաշխում և որոշում են իրենց դերերը: Ընտրում են խմբի պատասխանատուին: • Որոշում են հանդիպումների հաճախականությունը և ձևաչափը: • Նշումներ են կատարում նախագծի պարտադիր բաղադրիչների մասին:
2 Պլանավորման փուլ	
• Ուսումնասիրություններ կատարելու համար աշակերտներին առաջարկել անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրման աղբյուրների տարբերակներ՝ • -գիտական շտեմարաններ, • -փաստաթղթերի ուսումնասիրություն, • -համացանց, • -լրատվական կայքեր, • -հայերեն և օտարալեզու գրականություն և այլն: • Ներկայացնել աշխատանքի գնահատման չափանիշները:	• Որոշում են խմբերի անունները: • Պլանավորում են խմբի կողմից կատարվելիք աշխատանքները և սահմանում վերջնարդյունքներ: • Որոշում են, թե պարտադիր բաղադրիչներից բացի կան արդյոք այլ բաղադրիչներ, որը խումբը ցանկանում է ներառել նախագծում:

3 Իրականացման փուլ

- Կազմակերպել/հետևել խմբային քննարկումների, կատարվելիք հետազոտությունների իրականացման ընթացքին:
- Քննարկել միջանկյալ հարցեր, որոնք առաջացել են հետազոտական աշխատանք իրականացնելիս:
- Աջակցել աշակերտներին հավաքագրված տվյալների դասակարգման, եզրահանգումներ ու կանխատեսումներ կատարելու աշխատանքում և, ըստ անհրաժեշտության, ուղղորդել նրանց աշխատանքը:
- Կազմակերպել քննարկում անվտանգության ոլորտի մասնագետի կամ ոլորտին քաջատեղյակ ուսուցիչներից կազմված խմբի հետ:

- Ուսումնասիրում են այն գործոնները, որոնք հանգեցրին հակամարտության/պատերազմի առաջացմանը՝ առանձին անդրադարձ կատարելով կոռուպցիային:
- Ուսումնասիրում են ընթացքի վրա վճռորոշ ազդեցություն ունեցած գործոնները, այդ թվում՝ կոռուպցիան:
- Որոշում են հակամարտության/պատերազմի այժմյան վիճակը, երկրում կոռուպցիայի այժմյան մակարդակը և իրականացված ուսումնասիրությունների հիման վրա կատարում կանխատեսումներ հետագա ընթացքի հետ կապված:
- Կանխատեսումները քննարկում են անվտանգության ոլորտի մասնագետի կամ ոլորտին քաջատեղյակ ուսուցիչներից կազմված խմբի հետ (օրինակ՝ Պատմության, Հասարակագիտության ուսուցիչներ և այլն):

4 Արդյունքների ամփոփման փուլ

- Աշակերտների հետ կազմել նախագծի ներկայացման պլան:
- Կազմակերպել նախագծի պաշտպանություն (մեկ կամ երկու դասաժամ):
- Աջակցել խմբերի նախապատրաստական աշխատանքներին:
- Կազմակերպել նախագծի ներկայացման փորձ և տրամադրել խորհրդատվություն շտկման ենթական հարցերի վերաբերյալ:

- Որոշում են, թե ինչ ձևաչափով և ինչպես են ներկայացնելու հետազոտության արդյունքները,
- Ամփոփում են կատարված աշխատանքը և ընտրված ձևաչափի համաձայն՝ պատրաստում են ներկայացում (պաստառ, սլայդ, տեսանյութ և այլն):
- Նախապատրաստվում են նախագծի ներկայացմանը:

5 Ներկայացման և գնահատման փուլ

- Բարձր դասարանի աշակերտների և ուսուցիչների ներգրավվածությամբ կազմել նախագծերը գնահատող խումբ:
- Գնահատող խմբին տրամադրել գնահատման ձևաթուղթը և մեկնաբանել դրա լրացման կարգը:
- Աջակցել խմբային գնահատականների ձևավորմանը և դրանց հիման վրա գնահատել յուրաքանչյուր աշակերտի (օգտագործել անհատական գնահատման ձևաթերթը): Տրամադրել հետադարձ կապ բարելավման ենթակա հարցերի վերաբերյալ:
- Կազմել իրականացված աշխատանքի վերլուծություն, առանձնացնել բարելավման ենթակա աշխատանքները:

- Ներկայացնում են կատարված աշխատանքը, պատասխանում հարցերին:

ՆԱԽԱԳԾԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ

Դասարան՝

Խմբի անվանումը՝

Խմբի անդամները՝

Գնահատման չափանիշներ	Գնահատման միավորային սանդղակ	Գնահատական	Հավելյալ նշումներ
Կատարված հետազոտական աշխատանքի համապատասխանությունը նպատակին	0՝ չի համապատասխանում		
	1՝ մասամբ է համապատասխանում		
	2՝ հիմնականում համապատասխանում է		
	2.5՝ լիովին համապատասխանում է		
Իրականացրած ներկայացման բաղադրիչների համապատասխանությունը հիմնական բաղադրիչներին	0՝ չի համապատասխանում		
	1՝ մասամբ է համապատասխանում		
	2՝ հիմնականում համապատասխանում է		
	2.5՝ լիովին համապատասխանում է		
Կատարված աշխատանքի ներկայացման հմտությունները և պաշտպանությունը	0.5՝ բավարար		
	1՝ հիմնականում լավ		
	1.5՝ լավ		
	2՝ գերազանց		
Խմբային աշխատանքը, աշակերտների համագործակցության արդյունավետության մակարդակը	0.5՝ բավարար		
	1՝ հիմնականում լավ		
	1.5՝ լավ		
	2՝ գերազանց		
Կատարված կանխատեսումների փաստարկվածությունը	0՝ առկա չէ		
	1՝ առկա է		
Ընդամենը՝			

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ

Գնահատումն իրականացնում է ուսուցիչը

Դասարան՝

Աշակերտի անուն ազգանուն՝

Գնահատման չափանիշներ	Գնահատման միավորային սանդղակ	Գնահատական	Հավելյալ նշումներ
Աշակերտի բովանդակային ակտիվությունը նախագծային աշխատանքն իրականացնելիս	0՝ ակտիվ չէր		
	1՝ երբեմն ակտիվ էր		
	2՝ հաճախակի ակտիվ էր		
	2.5՝ շատ ակտիվ էր		
Աշակերտի ինքնուրույնությունը և նախաձեռնողականությունը նախագծային աշխատանքն իրականացնելիս	0՝ բացակայում էր		
	1՝ դրսևորվել է հազվադեպ		
	2՝ հիմնականում առկա էր		
	2.5՝ եղել է ինքնուրույն և ցուցաբերել մի շարք նախաձեռնություններ		
Խմբային աշխատանքի միավոր	Առավելագույնը՝ 5 միավոր (կազմում է խմբային աշխատանքի միավորի 50%-ը)		

Ընդամենը՝

12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

6.1 ԻՆԴՈՒԿՑԻԱ

6.2 ԴԵՊՈՒԿՑԻԱ

6.3 ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՊԻ ՊԱՐԶՈՒՄ

6.4 ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

6.1 ԻՆԴՈՒԿՑԻԱ

ՁԱՓՈՐՈՇԻՉ

Ա մակարդակ՝ Բացատրի ինդուկցիայի և դեդուկցիայի տարբերությունը: Թվարկի ինդուկցիայի քայլերը:

Բ մակարդակ՝ Կիրառի ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները: Արժևորի ինդուկցիան և դեդուկցիան:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Ինդուկցիա մեթոդը, որը ներառում է մասնավոր փաստերի հիման վրա ընդհանուր եզրակացություններ անելը, ունի իր յուրահատկությունները, երբ առնչվում է «կոռուպցիա» երևույթին: Կոռուպցիան բարդ և բազմակողմանի խնդիր է, որը հնարավոր չէ ճշգրիտ գնահատել սահմանափակ փաստերի հիման վրա կատարված ընդհանրացումների միջոցով: Այն պահանջում է տարբեր գործոնների համապարփակ վերլուծություն, ինչպիսիք են հասարակական նորմերը, անհատական դրդապատճառները, առկա իրավակարգավորումները և այլն: Հետևաբար, կոռուպցիայի վերաբերյալ եզրակացություններ անելու համար բացառապես ինդուկցիայի վրա հիմնվելը կարող է հանգեցնել սխալի:

«Մեկ տարվա ընթացքում 24 բարձրաստիճան պաշտոնյա ձերբակալվեց կոռուպցիոն հանցագործություն կատարելու մեղադրանքով, հետևաբար բարձրաստիճան բոլոր պաշտոնյաները կոռուպցիոներներ են» դատողությունը ոչ հիմնավոր, սխալ դատողության օրինակ է, քանի որ հավաքագրված փաստերը բավարար չեն այդպիսի դատողություն կատարելու համար: Ձերբակալված բարձրաստիճան պաշտոնյաների մեծ թիվը կարող է պայմանավորված լինել քննչական մարմինների արդյունավետ աշխատանքով, իրականացված հակակոռուպցիոն բարեփոխումներով և մի շարք այլ հանգամանքներով:

Կամ

Մարզերից մեկի սոցիալական ծառայության գրասենյակի աշխատակիցները սոցիալական նպաստ տրամադրելու համար պահանջում են կաշառք՝ նպաստի մեկ ամսվա գումարի չափով, հետևաբար՝ եթե ցանկանում ես մարզում ստանալ նպաստ, ապա պետք է տրամադրվելիք նպաստի չափով կանխիկ գումար ունենաս:

Առանց հիմնավոր ապացույցների որոշ խմբերին կամ անհատներին որպես կոռումպացված ներ պիտակավորելը կարող է հիմք դառնալ կարծրատիպերի առաջացմանը:

Նախորդ տարվա ընթացքում անբարեվարք որոշ դատավորի թեկնածուներ նշանակվեցին դատավորներ, հետևաբար նախորդ տարվա ընթացքում նշանակված բոլոր դատավորները անբարեվարք են:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ թեև ինդուկցիան կարող է օգտակար գործիք լինել որոշ համատեքստերում եզրակացություններ կատարելու համար, սակայն անհրաժեշտ է զգուշություն ցուցաբերել այն կոռուպցիային առնչվող հարցերում կիրառելիս: Կոռուպցիայի մասին դատողություններ անելուց առաջ շատ կարևոր է հավաքել բավարար ապացույցներ և հաշվի առնել նրա վրա ազդող գործոնների լայն շրջանակը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Ընդհանուր, թե՞ մասնավոր

Տևողությունը՝ 10 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կկարողանան որոշել ինդուկտիվ մեթոդով կատարված ընդհանրացումների հիմնավորվածությունը:

Նկարագրություն

Սովորողներից կազմել 4 խումբ, յուրաքանչյուր խմբին տալ ստորև ներկայացված ընդհանրացումներից մեկը և հանձնարարել քննարկել դրանք ու որոշել, թե որքանով են եզրակացությունները հիմնավորված: Խմբերին աշխատելու համար տրվում է 3 րոպե, որից հետո խմբերից յուրաքանչյուրը 1,5-2 րոպեում ներկայացնում է իր աշխատանքը: Վերջում ուսուցիչն ամփոփում է առաջադրանքը՝ շեշտադրելով ընդհանրացումներ անելիս բավարար փաստերի առկայության և հապճեպ ընդհանրացումներից խուսափելու կարևորությունը:

Ընդհանրացումներ

- Վերջին տարվա ընթացքում Հայաստանի դատական համակարգում գրանցվել է կոռուպցիոն բնույթի երկու հանցագործություն: Ընդդիմադիր պատգամավորը, լրագրողների հետ ճեպազրույցում ներկայացնելով այս տեղեկությունը, ասաց, որ այդ դեպքերն ապացուցում են, որ Հայաստանի դատական համակարգը ոտքից գլուխ կոռումպացված է:
- Աշակերտներին հանձնարարված էր ուսումնասիրել վերջին մեկ տարվա ընթացքում արված կոռուպցիոն բացահայտումները և փորձել վերհանել կոռուպցիայի պատճառները: Աշակերտների ուսումնասիրած տասը դեպքերում կոռուպցիոն գործարքների հիմնական մասնակիցներն արական սեռի ներկայացուցիչներ էին: Աշակերտները եզրակացրին, որ կոռուպցիայի հիմնական պատճառներից մեկն այն է, որ տղամարդիկ ի բնե հակված են կոռուպցիայի:

6.2 ԴԵԴՈՒԿՑԻԱ

ՁԱՓՈՐՈՇԻՉ

Ա մակարդակ՝ Բացատրի ինդուկցիայի և դեդուկցիայի տարբերությունը: Թվարկի ինդուկցիայի քայլերը:

Բ մակարդակ՝ Կիրառի ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները: Արժևորի ինդուկցիան և դեդուկցիան:

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Դեդուկցիայի մեթոդը ընդհանուր փաստերի հիման վրա մասնավոր եզրակացություններ անելն է: Կոռուպցիայի համատեքստում դեդուկտիվ ճիշտ և սխալ մտահանգումների օրինակներ կարող են լինել.

Կոռուպցիոն հանցագործության մասնակից բոլոր պաշտոնյաները դրսևորել են ոչ բարեվարք վարքագիծ: Արամը կոռուպցիոն հանցագործությանը մասնակցած պաշտոնյա է, հետևաբար Արամը դրսևորել է ոչ բարեվարք վարքագիծ:

Բարձրաստիճան պաշտոնատար անձիք պարտավոր են հանձնել հայտարարագիր: Նարեկը բարձրաստիճան պաշտոնյա է, հետևաբար նա պարտավոր է հանձնել հայտարարագիր:

Աշակերտների վարքագծի կանոններին պարտավոր են ենթարկվել բոլոր սովորողները: Անին և Արան սովորում են դպրոցում: Անին և Արան պարտավոր են ենթարկվել աշակերտների վարքագծի կանոններին:

Արամը հարուստ է և նա երբեմն դիմել է կոռուպցիայի, հետևաբար Արամը հարստացել է կոռուպցիոն ճանապարհով:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Ճիշտ, թե՞ սխալ

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները կկարողանան կատարել դեդուկտիվ մտահանգումներ և տարբերակել դրանք ըստ ճշմարտացիության:

Նկարագրություն

Սովորողներից կազմել 4-5 հոգանոց խմբեր և հանձնարարել կազմել դեդուկտիվ մտահանգումների օրինակներ այնպես, որ դրանք

1. Վերաբերեն կոռուպցիային և լինեն ճշմարիտ,
2. Վերաբերեն կոռուպցիային և լինեն սխալ,
3. Վերաբերեն բարեվարքությանը և լինեն ճշմարիտ,
4. Վերաբերեն բարեվարքությանը և լինեն սխալ:

Յուրաքանչյուր խումբ կկազմի վերոնշյալ չափանիշներից յուրաքանչյուրին համապատասխան մեկական օրինակ (ընդհանուր 4 օրինակ): Խմբային աշխատանքի համար հատկացնել 7 րոպե ժամանակ, որից հետո լսել խմբերի մշակած տարբերակները, քննարկել այն աշակերտների հետ և կատարել ամփոփում:

6.3 ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՊԻ ՊԱՐԶՈՒՄ

ՁԱՓՈՐՈՇԻՉ

Ա մակարդակ՝ Կատարի պատճառահետևանքային կապերի վերլուծություններ

ՏԵՍԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Սոցիալական երևույթներն ուսումնասիրելիս շատ կարևոր է վերհանել այն պատճառահետևանքային կապերը, որոնք հաճախ ընկած են դրա հիմքում: Համաձայն համակարգային մտածողության «Այսբերգ» մոդելի, տեղի ունեցող իրադարձությունները միայն այսբերգի երևացող մասն են կազմում, իսկ դրա հիմքում ընկած են մի քանի անգամ ավելի շատ պատճառներ ու օրինաչափություններ, որոնք ուսումնասիրման և նույնականացման կարիք ունեն:[192] Ուսումնասիրելով «Այսբերգ» մոդելը՝ քննարկենք կոռուպցիայի պատճառները:

192 Hyper Island. Methods & Tools, Systems Thinking: The Iceberg Model, https://toolbox.hyperisland.com/a-systems-thinking-model-the-iceberg, (դիտված՝ 25.03.2024 թ.)

1. **Միջադեպի մակարդակ.** Այս մակարդակում տեղի է ունենում կոռուպցիոն դրսևորումը, ինչպիսիք են կաշառակերությունը, յուրացումը և այլն: Սրանք կոռուպցիայի տեսանելի դրսևորումներ են, որոնք հաճախ հայտնվում են լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում և առաջացնում հանրության վրդովմունքը:

2. **Օրինաչափության և միտման մակարդակ.** Երբ մենք սկսում ենք նկատել որոշակի համակարգում կամ կազմակերպությունում կոռուպցիայի կրկնվող դեպքեր, մենք կարող ենք բացահայտել վարքագծի օրինաչափություններ, որոնք էլ կմատնանշեն համակարգային խնդիրները: Օրինակ՝ պետական գնումների գործընթացում կիրառվող ֆավորիտիզմը կամ որոշակի պաշտոնյաների կողմից իշխանության չարաշահումը:

3. **Կառուցակարգերի մակարդակ.** Կոռուպցիոն դրսևորումների հետևում թաքնված են խորքային խնդիրներ, որոնք նպաստում և ամրագրում են կոռուպցիոն վարքագիծը: Սա կարող է ներառել թափանցիկության բացակայությունը, հաշվետվողականության թույլ մեխանիզմները, համակարգային կոռուպցիան պետական հաստատություններում կամ կազմակերպություններում և այլն:

4. **Մտածելակերպի մակարդակ.** Կոռուպցիայի ամենախորը մակարդակը գաղափարախոսությունը կամ համոզմունքներն են, որոնց հետևում են անհատները, որոնք արդարացնում կամ նորմալացնում են կոռուպցիոն վարքագիծը: Այս մտավոր օրինաչափությունները կարող են ներառել այնպիսի համոզմունքներ, ինչպիսիք են՝ «բոլորը դա անում են, ինչո՞ւ մենք չանենք», «դա իրականում ոչ ոքի չի վնասում» կամ «սոցիալապես ապահով լինելու համար անհրաժեշտ է կոռուպցիայի դիմել»:

   Այսպիսով, «Այսբերգ» մոդելը ենթադրում է, որ կոռուպցիոն միջադեպն այսբերգի միայն գագաթն է՝ ավելի խորը հիմքում ընկած պատճառներով, որոնք նպաստում են դրա գոյությանը: Անհրաժեշտ է կոռուպցիայի դեմ համակարգային միջոցառումներ իրականացնել «Այսբերգ» մոդելի բոլոր մակարդակներում և միայն այդպես հնարավոր կլինի հասնել խնդրի խորքային լուծմանը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1 Կոռուպցիայի պատճառները

Տևողությունը՝ 15 րոպե

Ակնկալվող վերջնարդյունք՝ Սովորողները «Այսբերգ» մոդելի կիրառմամբ կգտնեն կոռուպցիոն դրսևորումների պատճառները

Նկարագրություն

Սովորողներից կազմել 4-5 հոգանոց խմբեր և հանձնարարել ընտրել վերջին մեկ տարվա ընթացքում Հայաստանում լայնորեն քննարկված կոռուպցիոն բացահայտումներից մեկը (կարող են օգտվել նաև համացանցից) և վերլուծել այն «Այսբերգ» մոդելի (տե՛ս տեսական նյութում) օգնությամբ: Խումբն աշխատանքի կատարման համար կունենա 7 րոպե ժամանակ, որից հետո յուրաքանչյուր խումբ կներկայացնի կատարված աշխատանքը: Խմբերի ներկայացումից հետո անհրաժեշտ է կատարել ամփոփում:

6.4 ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Քննադատական և ստեղծագործական մտածողություն

Իրականացման ժամկետը՝ 2 ամիս

Նախագծի նպատակը՝ Սովորողները կպլանավորեն հակակոռուպցիոն բովանդակությամբ միջոցառում և կիրականացնեն այն:

Հետազոտության հարցը՝ Ինչպե՞ս կազմակերպել հակակոռուպցիոն իրազեկման արշավներ:

Խնդիրը՝ Մշակել հակակոռուպցիոն բովանդակությամբ իրազեկման արշավ կամ միջոցառում:

Վերջնարդյունքը՝
Սովորողները

- Կպլանավորեն իրազեկման արշավ կամ միջոցառում և կմշակեն դրա բովանդակությունը.
- Կկարողանան մատչելի կերպով ներկայացնել «կոռուպցիա» հասկացությունը և նպաստել համայնքի բնակիչների շրջանում վերջինիս նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորմանը.
- Կկարողանան ցուցաբերել ստեղծագործ մոտեցում:

Նախագծի համառոտ նկարագրություն
Սովորողներն ընտրում են համայնքային միջոցառման կամ իրազեկման արշավի մեկ տեսակ, պլանավորում են դրա իրականացումը, մշակում են բովանդակությունը և իրականացնում այն: Միջոցառումը կամ իրազեկման արշավը պետք է լինի կոռուպցիայի դեմ պայքարի մասին:

Նախագծի պարտադիր բաղադրիչների նկարագրություն.

- Հակակոռուպցիոն բովանդակությամբ համայնքային միջոցառման կամ իրազեկման արշավի պլան՝ կազմում են նախատեսվող միջոցառման մանրամասն պլանը:
- Միջոցառման կամ իրազեկման արշավի բովանդակություն՝ մշակվում են ներկայացվող տեղեկատվությունը և օգտագործվելիք զննական պարագաները:
- Միջոցառման կամ իրազեկման արշավի իրականացում՝ իրականացվում է պլանավորված միջոցառումը՝ հնարավորինս շատ անձանց ներգրավմամբ:

Նախագծի ընթացքը

Ուսուցչի գործողություններ	Աշակերտների գործողություններ
1| Նախապատրաստական փուլ	
• Ներկայացնել նախագծի համար պարտադիր համարվող բաղադրիչները: • Ներկայացնել միջոցառումների, իրազեկման արշավների ընթացքը: • Հաշվի առնելով աշակերտների հետաքրքրությունները՝ ձևավորել աշխատանքային խմբեր (յուրաքանչյուր խմբում 4-5 աշակերտ): • Աջակցել խմբի անդամների աշխատանքային դերերի բաշխման գործընթացին:	• Սովորողները ծանոթանում են միջոցառումների, իրազեկման արշավների ընթացքին: • Կազմվում են աշխատանքային խմբերը: Սովորողները կատարում են աշխատանքի բաշխում և որոշում են իրենց դերերը: Ընտրում են խմբի պատասխանատուին: • Որոշում են հանդիպումների հ աճախականությունը և ձևաչափը: • Նշումներ են կատարում նախագծի պարտադիր բաղադրիչների մասին:
2| Պլանավորման փուլ	
• Խմբերին ուղղորդել, աջակցել միջոցառման տեսակի (ֆլեշմոբի անցկացում, թռուցիկների ստեղծում և տարածում, թվային կոնտենտի ստեղծում, պոդքասթ, բլոգ, պոստեռների փակցնում, street-art, ակցիաներ, կոռուպցիայի ներկայացում արվեստի միջոցով, կոմիքսների կազմում և այլն), բովանդակության մշակման աշխատանքում անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրման աղբյուրների և գրականության ձեռքբերման աշխատանքներում: • Ներկայացնել աշխատանքի գնահատման չափանիշները	• Որոշում են խմբերի անունները: • Պլանավորում են խմբի կողմից կատարվելիք աշխատանքները և սահմանում վերջնաժամկետներ, վերջնարդյունքներ: • Որոշում են, թե ինչ ձևաչափով, որտեղ և երբ են կազմակերպելու միջոցառումը: • Հստակեցնում են թիրախային խումբը, որի համար կազմակերպվելու է միջոցառումը/իրազեկման արշավը:
3| Միջոցառման նախապատրաստման փուլ	
• Կազմակերպել/հետևել խմբերի աշխատանքին: • Քննարկել միջանկյալ հարցեր, որոնք առաջացել են նախագիծն իրականացնելիս: • Աջակցել աշակերտներին միջոցառման իրականացման աշխատանքում և, ըստ անհրաժեշտության, ուղղորդել նրանց աշխատանքը: • Կազմել խմբերի միջոցառումների ժամանակացույց: • Կազմակերպել միջոցառման ներկայացման փորձ և տրամադրել խորհրդատվություն շտկման ենթական հարցերի վերաբերյալ: • Ուսուցիչների ներգրավվածությամբ կազմել նախագծերը գնահատող խումբ: • Գնահատող խմբի անդամներին տեղեկացնել միջոցառման ժամանակացույցի մասին:	• Կազմում են նախատեսվող միջոցառման մանրամասն պլանը: • Մշակվում են ներկայացվող տեղեկատվությունը և օգտագործվելիք զննական պարագաները: • Միջոցառման անցկացման մասին տեղեկացնում են թիրախային խմբի ներկայացուցիչներին (ըստ անհրաժեշտության և կախված միջոցառման բնույթից): • Նախապատրաստվում են միջոցառման իրականացմանը:

4| Արդյունքների ամփոփման փուլ

- Գնահատող խմբին տրամադրել գնահատման ձևաթուղթը և մեկնաբանել դրա լրացման կարգը:
- Մասնակցել միջոցառմանը:
- Աջակցել խմբային գնահատականների ձևավորմանը և դրանց հիման վրա գնահատել յուրաքանչյուր աշակերտի (օգտագործել անհատական գնահատման ձևաթերթը): Տրամադրել հետադարձ կապ բարելավման ենթակա հարցերի վերաբերյալ:
- Կազմել իրականացված աշխատանքի վերլուծություն, առանձնացնել բարելավման ենթակա աշխատանքները:
- Իրականացվում է պլանավորված միջոցառումը՝ հնարավորինս շատ անձանց ներգրավմամբ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ

Դասարան՝

Խմբի անվանումը՝

Խմբի անդամները՝

Գնահատման չափանիշներ	Գնահատման միավորային սանդղակ	Գնահատական	Հավելյալ նշումներ
Կազմակերպված միջոցառման կազմակերպվածությունը և որակը	0՝ անբավարար		
	1՝ հիմնականում լավ		
	2՝ լավ		
	2.5՝ գերազանց		
Իրականացրած նախագծի բաղադրիչների համապատասխանությունը հիմնական բաղադրիչներին	0՝ չի համապատասխանում		
	1՝ մասամբ է համապատասխանում		
	2՝ հիմնականում համապատասխանում է		
	2.5՝ լիովին համապատասխանում է		
Կատարված միջոցառման բովանդակությունը և ստեղծագործականությունը	0.5՝ բավարար		
	1՝ հիմնականում լավ		
	1.5՝ լավ		
	2՝ գերազանց		
Խմբային աշխատանքը, աշակերտների համագործակցության արդյունավետության մակարդակը	0.5՝ բավարար		
	1՝ հիմնականում լավ		
	1.5՝ լավ		
	2՝ գերազանց		
Միջոցառման մասնակիցների քանակը 30-ից ավելի է	0՝ ոչ		
	1՝ այո		
Ընդամենը՝			

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ

Գնահատումն իրականացնում է ուսուցիչը

Դասարան՝

Աշակերտի անուն ազգանուն՝

Գնահատման չափանիշներ	Գնահատման միավորային սանդղակ	Գնահատական	Հավելյալ նշումներ
Աշակերտի բովանդակային ակտիվությունը նախագծային աշխատանքն իրականացնելիս	0՝ ակտիվ չէր		
	1՝ երբեմն ակտիվ էր		
	2՝ հաճախակի ակտիվ էր		
	2.5՝ շատ ակտիվ էր		
Աշակերտի ինքնուրույնությունը և նախաձեռնողականությունը նախագծային աշխատանքն իրականացնելիս	0՝ բացակայում էր		
	1՝ դրսևորվել է հազվադեպ		
	2՝ հիմնականում առկա էր		
	2.5՝ եղել է ինքնուրույն և ցուցաբերել մի շարք նախաձեռնություններ		
Խմբային աշխատանքի միավոր	Առավելագույնը՝ 5 միավոր (կազմում է խմբային աշխատանքի միավորի 50%-ը)		

Ընդամենը՝





ՀԱՎԵԼՅԱԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲԱՌԱՐԱՆ
2. ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ
3. ԱՌՑԱՆՑ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ
4. ԹԵՄԱՏԻԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
5. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈԼԵԳԻԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ՝ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԱԶԴԱՐԱՐՈՒՄ	Կազմակերպության աշխատակցի, տնօրենի կամ որևէ երրորդ անձի կողմից հանուն հանրային շահի բացահայտում/հաղորդում կատարելը՝ փորձելով հայտնաբերել բացթողումներ կամ չարաշահումներ կազմակերպության, պետական մարմնի կամ ընկերության (կամ նրա բիզնես գործընկերներից մեկի) գործողություններում, որը սպառնում է հանրային շահին կամ տվյալ մարմնի հեղինակությանը: Այս եզրույթը (whistleblowing) անգլերենում լայնորեն օգտագործվում է դրական իմաստով, թեև շատ լեզուներ չունեն նույն համատեքստով օգտագործվող համանման արտահայտություն:
ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ	Ակտիվների վերականգնումն իրավական գործընթաց է, որի միջոցով պետությունը, իշխանությունները և/կամ քաղաքացիները վերականգնում են այլ իրավասության տակ գտնվող այն ռեսուրսները և այլ ակտիվները, որոնք գողացվել են կոռուպցիայի միջոցով:
ԱՈՒԴԻՏ	Կազմակերպությունների հաշիվների, գործունեության, գործառույթների և կատարողականի ներքին կամ արտաքին փորձաքննություն՝ օրենքներին և կանոնակարգերին դրանց համապատասխանությունը անկողմնակալ և արժանահավատ գնահատելու համար:
ԱՊՕՐԻՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ	Ապօրինի ֆինանսական հոսքերը վերաբերում են այն դրամական միջոցների շարժերին, որոնք ապօրինաբար ձեռք են բերվել, փոխանցվել կամ ծախսվել են երկրի սահմաններից դուրս: Այս անդրսահմանային փոխանցումների ֆոնդերը ձևավորվում են երեք աղբյուրներից՝ կոռուպցիա, (ինչպես, օրինակ, կաշառքը կամ պետական պաշտոնյաների կողմից կատարված յուրացումը), հանցագործ գործունեություն (ինչպես թմրանյութերի վաճառքը, թրաֆիքինգը, զենքի ապօրինի վաճառքը) և հարկերից խուսափում ու փոխանցումային գների կեղծում:
ԳԱՂՏՆԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Հանրային կամ մասնավոր ոլորտում կողմերի միջև գաղտնի պայմանավորվածություն՝ կատարելու այնպիսի գործողություններ, որոնց նպատակն է խաբեությամբ կամ խարդախությամբ ապօրինի ֆինանսական շահ ստանալը:
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ	Որևէ անհատից կամ կազմակերպությունից ծառայություններ կամ ապրանքներ ձեռք բերելու համար սահմանված ընթացակարգերի բազմաքայլ գործընթաց՝ սկսած կարիքների գնահատումից մինչև պայմանագրերի կնքումն ու ծառայության մատուցումը:
ԷԹԻԿԱ	Հիմնական արժեքների և նորմերի վրա հիմնված չափանիշներ, որոնցով պետք է առաջնորդվեն իշխանությունները, կազմակերպությունները և հասարակությունը որոշումներ ընդունելիս և գործողություններ կատարելիս:

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ	Հանրային (կամ պետական) մարմիններին, կազմակերպություններին, կառույցներին և անհատներին բնորոշ հատկանիշ, որը ցույց է տալիս, թե որքանով են նրանք բաց հստակ և ճշգրիտ ցույց տալու իրենց առնչվող տեղեկատվությունը, կանոնները, գործառույթները և ընթացակարգերը: Որպես սկզբունք պաշտոնատար անձինք, հանրային ծառայողները, կառույցների և կազմակերպությունների տնօրենները և տարբեր ստորաբաժանումների ղեկավարները, նրանց կառավարման խորհուրդները պարտավոր են գործել տեսանելի, կանխատեսելի և հասկանալի՝ խթանելու մասնակցությունն ու հաշվետվողականությունը:
ԻՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ	Իրական սեփականատերն այն իրական անձն է, որն ի վերջո տնօրինում, վերահսկում և օգուտներ է ստանում կազմակերպությունից և դրա ստեղծած եկամուտներից: Այս տերմինն օգտագործվում է ի հակադրություն կազմակերպությունների անվանական կամ իրավաբանական սեփականատերերի և հոգաբարձուների, որոնք բոլորը կարող են գրանցված լինել որպես սեփականատերեր՝ առանց փաստացի օգտվելու օգուտներ ստանալու իրենց իրավունքից:
ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆ	Խաբեություն: Անօրինական կամ անարդարացի առավելություն (ֆինանսական, քաղաքական կամ այլ) ձեռք բերելու նպատակով որևէ մեկին դիտավորյալ խաբելը:
ԿԱՇԱՌՔ	Նյութական կամ ոչ նյութական արտոնության առաջարկ, խոստում, ընդունում կամ տրամադրում՝ դրդելու անօրինական, ոչ էթիկական կամ վստահությունը խաթարող գործողությունների: Այն կարող է արտահայտվել նվերների, վարկերի, վճարների, պարգևների կամ այլ բարիքների (հարկեր, ծառայություններ, նվիրատվություններ և այլն) տեսքով:
ԿԱՇԱՌՔԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ	Մեկ այլ անձի խնդրել, համոզել, գայթակղել կամ հրահրել կաշառք տալ կամ վերցնել կամ կատարել դրա դիմաց ապօրինի գործողություն:
ԿԼԻԵՆՏԻԶՄ / ԿԼԻԵՆՏԵԼԻԶՄ	Անհավասար կողմերի միջև ռեսուրսների և ծառայությունների փոխանակման համակարգ՝ հիմնված ավելի հարուստ և/կամ ավելի ազդեցիկ «շեֆի» և ավելի աղքատ ու ավելի թույլ ենթակայի («հաճախորդի») միջև շահագործողական բնույթի հարաբերությունների վրա:
ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐ	Բազմաթիվ պետությունների կողմից ստորագրված կամ վավերացման միջոցով ընդունված միջազգային կամ տարածաշրջանային համաձայնագրեր, որոնք սահմանում են կանոններ, նորմեր և չափանիշներ այն հարցերի վերաբերյալ, որոնք ունեն անդրսահմանային բնույթ և պահանջում են ընդհանուր մոտեցում և բազմակողմանի համագործակցություն:
ԿՈՌՈՒՊՑԻԱ	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» (ԹԻ) միջազգային հակակոռուպցիոն կազմակերպության սահմանման համաձայն՝ կոռուպցիան ի պաշտոնե տրված լիազորությունների չարաշահումն է՝ անձնական օգուտ ստանալու նպատակով:
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ (COMPLIANCE)	Վերաբերում է պետական մարմինների կամ կազմակերպությունների ընթացակարգերին, համակարգերին կամ ստորաբաժանումներին, որոնք ապահովում են այդ կառույցների իրավական, գործառնական և ֆինանսական գործունեության համապատասխանությունը գործող օրենքներին, նորմերին, կանոնակարգերին, կանոններին, չափանիշներին և հանրային ակնկալիքներին:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ	Օրենքի պահանջով կամ բարի կամքի դրսևորմամբ տրամադրված տեղեկատվություն անհատի, հանրային ծառայողի, կազմակերպության կամ կազմակերպության գործունեության մասին: Տեղեկատվությունը կարող է ներառել քաղաքական թեկնածուի ակտիվները, կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները, ՀԿ-ների դրամաշնորհատուների անունները:
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	Կառավարությունը և նրա ապակենտրոնացված միավորները (ներառյալ ոստիկանությունը, բանակը, հիմնական դպրոցները, առողջապահական հաստատությունները), որոնք օգտագործում են հանրային միջոցները և մատուցում ծառայություններ՝ քաղաքացիների կյանքը բարելավելու, ոչ թե շահույթ ստանալու նպատակով:
ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	Կոնցեպտ, ըստ որի անհատները, պետական գերատեսչությունները և կազմակերպությունները (պետական, մասնավոր և քաղաքացիական հասարակության) պատասխանատվություն են կրում իրենց գործունեության և իրենց լիազորությունները պատշաճ կերպով կատարելու համար: Սա նաև ներառում է պատասխանատվություն գումարի և այլ վստահված գույքի համար:
ՀԱՐԿԵՐԻՑ ԽՈՒՍԱՓՈՒՄ	Հարկերից խուսափումը հարկերի անօրինական կերպով չվճարելը կամ մասամբ վճարելն է, որը սովորաբար կատարվում է հարկային ծառայություններին ներկայացվելիք հայտարարագրերի կեղծման կամ իսպառ բացակայության միջոցով, ինչպես օրինակ հայտարարագրելով ավելի քիչ շահույթ, եկամուտներ, ձեռքբերումներ, քան փաստացի վաստակած գումարներն են, կամ մեծացնելով նվազեցումները: Սա կարող է հանգեցնել քրեական կամ վարչական պատասխանատվության:
ՀՈՎԱՆԱՎՈՐՉՈՒԹՅՈՒՆ	Կողմնակալության ձև, երբ անձն ընտրվում է/նշանակվում է որևէ պաշտոնի ի հաշիվ անձնական կապերի կամ պատկանելության (քաղաքական, խմբային, կլանային)՝ անկախ իր որակավորումից և հանրային շահից:
ՄԱՆՐ ԿՈՌՈՒՊՑԻԱ	Միջին և ստորին օղակի պետական պաշտոնյաների կողմից իրենց լիազորված իշխանության չարաշահում շարքային քաղաքացիների հետ փոխհարաբերություններում, որոնք հաճախակի փորձում են օգտվել հիմնական ծառայություններից այնպիսի հաստատություններում, ինչպիսիք են հիվանդանոցները, դպրոցները, ոստիկանության բաժինները կամ այլ կառույցները:
ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ	Ցանկացած ընկերություն, ինստիտուտ կամ կազմակերպություն, որը չի ղեկավարվում հանրային հատվածի կողմից և գործում է շահույթ ստանալու նպատակով: Մասնավոր հատվածի կոռուպցիային բնորոշ է այս հատվածի առանձին խմբերի ազդեցությունն այնպիսի որոշումների կայացման վրա, որոնք հանգեցնում են պաշտոնական լիազորությունների չարաշահման:
ՄԵԾ ԿՈՌՈՒՊՑԻԱ	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց կոռուպցիա, որը շահավետ է փոքրամասնության համար՝ ի հաշիվ մեծամասնության ծախսերի, և որը լուրջ ու լայնամասշտաբ վնաս է հասցնում հասարակությանն ու անհատներին:
ՅՈՒՐԱՑՈՒՄ	Երբ կազմակերպությունում կամ հաստատությունում պաշտոն զբաղեցնող անձն անազնվորեն և անօրինական կերպով յուրացնում, օգտագործում կամ փոխանցում է իրեն վստահված միջոցները (ներառյալ՝ դրամական)՝ անձնական հարստացման կամ այլ նպատակներով:

ՆԵՊՈՏԻԶՄ	Կողմնակալության ձև՝ հիմնված ծանոթությունների և ընտանեկան կապերի վրա, երբ պաշտոնատար անձը չարաշահում է իր լիազորությունները և իշխանությունը՝ իր ընտանիքի անդամին, բարեկամին կամ ընկերոջը աշխատանքով ապահովելու կամ ծառայություն մատուցելու համար՝ անկախ նրանից, որ վերջինս չունի համապատասխան որակավորումներ ու արժանիքներ:
ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ	Իրավիճակ, երբ անհատը կամ կառույցը, որտեղ նա աշխատում է՝ լինի դա կառավարություն, բիզնես, ՀԼՄ կամ քաղաքացիական հասարակություն, կանգնում է, մի կողմից, պաշտոնից բխող պարտականությունների և պահանջների, իսկ մյուս կողմից՝ այդ անհատի մասնավոր անձնական շահերի ընտրության միջև:
ՇՈՐԹՈՒՄ	Հարկադրանքի և/կամ սպառնալիքների միջոցով նյութական փոխհատուցում կամ անհարկի համագործակցություն պահանջելը՝ օգտագործելով ունեցած իշխանությունը կամ գիտելիքները/տեղեկատվությունը:
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՎԹՈՒՄ	Իրավիճակ, երբ երկրի ներսում կամ դրսում գործող ազդեցիկ անհատները, հաստատությունները, ընկերությունները կամ խմբերը, ելնելով իրենց անձնական շահերից, օգտագործում են կոռուպցիան՝ ազդելու պետության քաղաքականության, իրավական միջավայրի և տնտեսության վրա:
ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ	Սահմանված սկզբունքներ և արժեքներ, որոնց վրա հիմնված են կազմակերպության, պետական մարմնի, դրանց հետ առնչվող խմբի կամ անհատի վարքագծի չափանիշները և դրանից ունեցած ակնկալիքները՝ ներառյալ այդ կանոններին հետևելու կարգապահական նվազագույն պահանջներ կազմակերպության, դրա աշխատակազմի և կամավորների համար:
ՎԵՐԱՀՍԿՈՒՄ	Հաշվետվողականությունը և հանրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ապահովելու համար պետական մարմինների, ընկերությունների կամ հասարակական կազմակերպությունների գործունեությունն արտաքին կամ ներքին անկախ մոնիթորինգի և հետաքննության ենթարկելու գործընթաց:
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ	Սահմանադրությամբ տրված իրավունք (հաճախ տեղեկատվության ազատության մասին իրավական ակտերի վրա հիմնված) կառավարությունից կամ ցանկացած հանրային մարմնից ձեռք բերելու կարևոր տվյալներ և փաստեր՝ հիմնվելով այն գաղափարի վրա, որ քաղաքացիները կարող են ստանալ այն տեղեկատվությունը, որին տիրապետում է պետությունը:
ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՈՒՄ	Ապօրինի ճանապարհով ձեռք բերված եկամուտների օրինականացում, որը կատարվում է օրինական տնտեսական գործունեության միջոցով՝ թաքցնելով այդ եկամուտների իրական ծագումը, պատկանելությունը և նպատակը:
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔ	Քաղաքական առաջնորդների կողմից հասարակության առջև ծառացած մարտահրավերներին դիմակայելու և/կամ քաղաքական խոստումները կատարելու պատրաստակամության դրսևորում/հանձնառություն: Օրինակ՝ կոռուպցիայի դեմ պայքար կամ քաղաքական որոշումներում մասնակցայնության բարձրացում՝ իրականացնելով քաղաքականության համապատասխան փոփոխություններ և լուրջ բարեփոխումներ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱ	Քաղաքական որոշումներ կայացնողների կողմից ռեսուրսների և ֆինանսավորման բաշխման գործընթացում քաղաքականությունների, ինստիտուտների և կանոնակարգների մանիպուլյացիա՝ իրենց իշխանությունը, հարստությունը և կարգավիճակը պահպանելու համար չարաշահելով իրենց դիրքը:
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ	Պետությունից, շուկայից ու ընտանիքից դուրս ոլորտ, ուր մարդիկ համախմբվում են՝ առաջ մղելու իրենց համար ընդհանուր տարբեր տեսակի հետաքրքրություններ: Համայնքային կամ կամավորական խմբերը, հասարակական կազմակերպությունները (ՀԿ), արհմիությունները և հավատքի վրա հիմնված կազմակերպությունները սովորաբար ներառվում են այս ոլորտում՝ եզրույթը դարձնելով ավելի ընդարձակ, քան միայն ՀԿ-ներն են:
ՕՐԵՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ	Իշխանությունների՝ իրավական և քաղաքական համակարգերով, կառուցվածքներով և պրակտիկայով պայմանավորված գործողություններ, որոնք ապահովում են քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանվածությունը, ընդունված օրենքների կիրառումը՝ նպաստելով պետության արդյունավետ կառավարմանը:
ՕՐԻՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ	Կոռուպցիայի կանխարգելմանը նպաստող վարքագիծ և գործողություններ՝ համապատասխան էթիկական նորմերին և բարոյական չափանիշներին, որոնք ընդունված են ինչպես անհատների, այնպես էլ կառույցների կողմից: Տե՛ս Էթիկա:
ՕՖՇՈՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ	Պետություններ կամ իրավական տարածքներ, որտեղ, օտարերկրյա կապիտալի ներհոսքը խթանելու նպատակով, գործում է ոչ ռեզիդենտ ընկերությունների հատուկ և դյուրին գրանցման համակարգ, և որտեղ այդ ընկերությունները վճարում են ցածր կամ 0 տոկոս հարկեր և/կամ ստանում այլ արտոնություններ: Հաճախ այսպիսի երկրներին անվանում են «հարկային դրախտներ»:

2. ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ[193]

Հոդված	Նկարագրություն	Պատիժ
218	Ընտրակաշառք ստանալը	1. Պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով: 2. Եթե արարքը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, ապա պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:
219	Ընտրակաշառք տալը	1. Ազատազրկում երեքից վեց տարի ժամկետով: 2. Եթե արարքը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, ապա պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:
220	Ընտրակաշառքի միջնորդությունը	1. Պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով: 2. Եթե արարքը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:
221	Հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը	Պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:
231	Կուսակցության օգտին խոշոր չափերով ապօրինի նվիրատվություն ներգրավելը	1. Պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով: 2. Եթե արարքը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, ապա պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

193 Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ի՝ ընդունված 2021 թվականի մայիսի 5-ին

232	Կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված չափը չգերազանցելու արգելքը կամ օրենքով չթույլատրված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը խոշոր չափերով շրջանցելը	1. Պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով: 2. Եթե արարքը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, ապա պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:
255	2-րդ մաս, 2-րդ կետ. Խարդախությունը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, 2-րդ մաս, 3-րդ կետ, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով	2-րդ մաս, 2-րդ կետ.՝ պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից հիսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով: 2-րդ մաս, 3-րդ կետ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:
256	2-րդ մաս, 2-րդ կետ. Վստահված գույքը հափշտակելը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, 2-րդ մաս, 3-րդ կետ, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով	2-րդ մաս, 2-րդ կետ՝ պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից հիսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից յոթ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով: 2-րդ մաս, 3-րդ կետ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:
258	2-րդ մաս, 9-րդ կետ. Շորթումը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով	2-րդ մաս, 9-րդ կետ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:
268	3-րդ մաս, 2-րդ կետ. Ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործումը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով	Պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

269	3-րդ մաս, 3-րդ կետ. Արժեթղթերի շուկայում գնային չարաշահումը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով	Պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:
272	Մասնավոր ոլորտում կաշառք ստանալը	1. Պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: 2. Եթե արարքը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, խոշոր չափերով, կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին թողտվության կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողության կամ անգործության համար կամ անձի իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը ոտնահարելու սպառնալիքով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով: 3. Եթե արարքը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից կամ առանձնապես խոշոր չափերով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:
273	Մասնավոր ոլորտում կաշառք տալը	1. Պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: 2. Եթե արարքը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, խոշոր չափերով կամ իր կամ իր մատնանշած անձի օգտին թողտվության կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողության կամ անգործության համար՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:
274	Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության մարզիկի, մրցավարի, թիմի ղեկավարի, մարզչի, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցի կամ դրա կազմակերպչի, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցի կամ դրա կազմակերպչի կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամի կողմից կաշառք ստանալը	1. Պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: 2. Եթե արարքը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, խոշոր չափերով կամ անձի իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը ոտնահարելու սպառնալիքով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով: 3. Եթե արարքը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից կամ առանձնապես խոշոր չափերով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:
275	Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության մարզիկին, մրցավարին, թիմի ղեկավարին, մարզչին, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցի կամ դրա կազմակերպչին, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցին կամ դրա կազմակերպչին կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամին կաշառք տալը	1. Պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: 2. Եթե արարքը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ խոշոր չափերով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: 3. Եթե արարքը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից կամ առանձնապես խոշոր չափերով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

276	Ծառայողական կամ մասնագիտական պարտականությունները կատարելու համար ապօրինի վարձատրություն ստանալը կամ պահանջելը	1. Պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: 2. Եթե արարքը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, խոշոր չափերով կամ անձի իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը ոտնահարելու սպառնալիքով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով: 3. Եթե արարքը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից կամ առանձնապես խոշոր չափերով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:
277	Մասնավոր ոլորտում ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը	1. Պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: 2. Եթե արարքը կատարվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով, պատճառել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս, կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ անզգուշությամբ առաջացրել է այլ ծանր հետևանք՝ պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:
282	2-րդ մաս, 1-ին կետ, Ֆինանսական բուրգ ստեղծելը, կազմակերպելը կամ ղեկավարելը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով.	2-րդ մաս, 1-ին կետ՝ պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:
284	2-րդ մաս, 2-րդ կետ. Հակամրցակցային գործունեությունը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով	Պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

296	Փողերի լվացումը	1. Պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով: 2. Եթե արարքը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ խոշոր չափերով՝ պատըժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով: 3. Եթե արարքը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից, իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ առանձնապես խոշոր չափերով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:
435	Կաշառք ստանալը	1. Պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով: 2. Եթե արարքը կատարվել է մի խումբ պաշտոնատար անձանց կողմից, խոշոր չափերով, կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին թողտվության կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողության կամ անգործության համար կամ անձի իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը ոտնահարելու սպառնալիքով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից տասը տարի ժամկետով: 3. Եթե արարքը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից, դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից կամ առանձնապես խոշոր չափերով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով:
436	Կաշառք տալը	1. Պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: 2. Եթե արարքը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, խոշոր չափերով կամ իր կամ իր մատնանշած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից թողտվության կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողության կամ անգործության համար՝ պատըժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով: 3. Եթե արարքը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից կամ առանձնապես խոշոր չափերով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով

437	Կաշառքի միջնորդությունը	1. Պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: 2. Եթե արարքը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝ պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից հիսնապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:
438	Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելը	1. Պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: 2. Եթե արարքը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, խոշոր չափերով, ապօրինի վարձատրություն տված կամ նրա մատնանշած անձի օգտին թողտվության կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողության կամ անգործության համար կամ անձի իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին վնաս պատճառելու սպառնալիքով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով: 3. Եթե արարքը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից կամ առանձնապես խոշոր չափերով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:
439	Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու նպատակով ապօրինի վարձատրություն տալը	1. Պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: 2. Եթե արարքը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, խոշոր չափերով կամ ապօրինի վարձատրություն տված կամ նրա մատնանշած անձի օգտին թողտվության կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողության կամ անգործության համար՝ պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով: 3. Եթե արարքը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից կամ առանձնապես խոշոր չափերով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

440	Կաշառք ստանալու, կաշառքի միջնորդության կամ իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով օգտագործելու պատրվակով գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալը	1. Պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով: 2. Պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:
441	Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը	1. Պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից յոթ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով: 2. Եթե արարքը կատարվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով, պատճառել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս, կատարվել է զենք կամ հատուկ միջոց օգտագործելով, կատարվել է մի խումբ պաշտոնատար անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ անզգուշությամբ առաջացրել է այլ ծանր հետևանք՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով: 3. Եթե արարքը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:
442	Պաշտոնատար անձի կողմից ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը	1. Պատժվում է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: 2. Եթե արարքը կատարվել է մի խումբ պաշտոնատար անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:
443	Ապօրինի հարստանալը	Պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

444	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելը, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելը կամ հայտարարագիր չներկայացնելը	1. Հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը կամ հայտարարագիրը օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումից հետո՝ 30 օրվա ընթացքում, չներկայացնելը պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: 2. Հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը, որը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերով գույքի կամ եկամտի կամ ծախսի չհայտարարագրմանը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:
445	Պաշտոնեական կեղծիքը	1. Պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: 2. Եթե արարքը կատարվել է մի խումբ պաշտոնատար անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝ պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից յոթ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:
477	Կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիան	Պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:
480	Ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը	Եթե արարքը կատարվել է շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

481	Քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելը	Պատժվում է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից յոթ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:
482	Ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը	Պատժվում է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից յոթ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:
486	2-րդ մաս, 2-րդ կետ. Արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը միջամտելը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, 3-րդ մաս, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով	Պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:
496	Դատավարության մասնակիցներին՝ իրենց լիազորությունների հետ կապված կաշառք տալը	Պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
497	Դատավարության մասնակիցների կողմից իրենց լիազորությունների հետ կապված կաշառք ստանալը	Պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:
549	Իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը	1. Պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով: 2. Եթե արարքը կատարվել է կատարվել է մի խումբ պաշտոնատար անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

3. ԱՌՅԱՆՑ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. **Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կայք** (հայերեն)

   Նկարագրություն՝ Կայքում կարող եք գտնել կոռուպցիայի վերաբերյալ տեսանյութեր, ինֆոգրաֆիկա և հետազոտական զեկույցներ:

2. **ՄԱԿ-ի Հակակոռուպցիոն կրթության և երիտասարդության հզորացման գլոբալ ռեսուրս (GRACE)** (անգլերեն)

   Նկարագրություն՝ Այս հարթակում ներկայացված են հակակոռուպցիոն բովանդակությամբ խաղեր, կոմիքսներ, ուսուցչի ձեռնարկներ և տեսանյութեր՝ նախատեսված հիմնական դպրոցի սովորողների հակակոռուպցիոն կրթությունը կազմակերպելու համար:

3. **ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի «Կրթություն հանուն արդարության» նախագիծ (E4J)** (անգլերեն)

   Նկարագրություն՝ Այս հարթակում ներկայացված են հակակոռուպցիոն բովանդակությամբ խաղեր և ուսուցչի ձեռնարկներ:

4. **Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության «Կրթություն հանրային բարեվարքության համար» ձեռնարկ** (անգլերեն)

   Նկարագրություն՝ Ձեռնարկում կարող եք գտնել հակակոռուպցիոն բովանդակությամբ դասերի անցկացման մեթոդական ցուցումներ և առաջադրանքներ:

4. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ ԵՎ ՀԱՐԹԱԿՆԵՐ

Կոռուպցիայի դեմ պայքարի գործում մասնագիտացված պետական և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցելու, համատեղ միջոցառումներ, այցեր կազմակերպելու նպատակով՝ ստորև կարող եք ծանոթանալ այդ կազմակերպությունների և գերատեսչությունների կոնտակտային տվյալներին: Ստորև ներկայացված են նաև Հայաստանում կիրառվող էլեկտրոնային կառավարման գործիքները, որոնց իմացությունը շատ կարևոր է թե՛ մանկավարժների և թե՛ սովորողների համար:

Հակակոռուպցիոն և այլ պետական մարմիններ

Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմիններ

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
Կայք՝ www.cpcarmenia.am
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15
Հեռախոսահամար՝ +374-12-777-721
Էլ. հասցե՝ info@cpcarmenia.am

2. Հակակոռուպցիոն կոմիտե
Կայք՝ www.anticorruption.am
Հասցե՝ ք. Երևան, Վ. Վաղարշյան 13ա
Հեռախոսահամար՝ +374-11-900-035
Էլ. հասցե՝ press@anticorruption.am

3. Հակակոռուպցիոն դատարան
Կայք՝ https://court.am/hy/courts/141
Հասցե՝ ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/9
Հեռախոսահամար՝ +374-10 293-131
Էլ. հասցե՝ anticorruption@court.am

Այլ մարմիններ

1. Ազգային ժողով
Կայք՝ www.parliament.am
Հասցե՝ ք. Երևան, Մ. Բաղրամյան 19
Հեռախոսահամար՝ 8788,
374-11-506-050, 374-10-506-050
Էլ. հասցե՝ webmaster@parliament.am

2. Արդարադատության նախարարություն
Կայք՝ www.moj.am
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8
Հեռախոսահամար՝ +374-10-594-163
Էլ. հասցե՝ info@moj.am

3. Հաշվեքննիչ պալատ
Կայք՝ https://armsai.am/
Հասցե՝ Երևան, Մ. Բաղրամյան 19
Հեռախոսահամար՝ +374-11-888-107,
+374-11-888-111
Էլ. հասցե՝ secretariat@armsai.am

4. Կենտրոնական ընտրական հանձնաժողով
Կայք՝ www.elections.am
Հասցե՝ ք. Երևան, Գևորգ Քոչար 21Ա
Հեռախոսահամար՝ +374-10-543-523
Էլ. հասցե՝ cec@elections.am

5. Դատախազություն
Կայք՝ www.prosecutor.am
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 5
Հեռախոսահամար՝ +374-10- 511-650
Էլ. հասցե՝ info@prosecutor.am

6. Պետական վերահսկողական ծառայություն
Կայք՝ www.supervision.am
Հասցե՝ ք. Երևան, Մաշտոցի պող. 47
Հեռախոսահամար՝ +374-10- 313-131
Էլ. հասցե՝ info@supervision.am

Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդին անդամակցող հասարակական կազմակերպություններ

1. Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
Կայք՝ www.transparency.am
Հասցե՝ ք. Երևան, Սարյան 12, 5-րդ հարկ
Հեռախոսահամար՝ +374-10-569-589, +374-10-569-689,
Էլ. հասցե՝ info@transparency.am

2. Իրազեկ քաղաքացիների միավորում
Կայք՝ www.uic.am
Հեռախոսահամար՝ +374-11-355-042
Էլ. հասցե՝ uicarmenia@gmail.com

3. Իրավաբանների հայկական ասոցիացիա
Կայք՝ www.armla.am
Հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 7, գրասենյակ 2
Հեռախոսահամար՝ +374-10-540-199, +374-10-568-788
Էլ. հասցե՝ info@armla.am

4. Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն
Կայք՝ http://umba.am/
Հասցե՝ ք. Երևան, Սայաթ-Նովայի պող., 19 շենք, Բիզնես հարկ, գրասենյակ N 3
Հեռախոսահամար՝ +374-11-540-715
Էլ. հասցե՝ info@umba.am

5. Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
Կայք՝ https://hcav.am/
Հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 32, 33բն
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59,
Հեռախոսահամար՝ +374- 91-700-974
Էլ. հասցե՝ foi@foi.am

Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային կառավարման հարթակներ

1. Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակ

Կայք՝ www.azdararir.am

Նկարագրություն՝ Այս հարթակի միջոցով Դուք կարող եք անանուն կամ տվյալներ ներկայացնելու եղանակով ներկայացնել հաղորդում «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերի վերաբերյալ: Այդպիսի դեպքեր են կոռուպցիոն բնույթի իրավիճակի, շահերի բախման, էթիկայի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, հայտարարագրման հետ կապված խախտումները, հանրային շահերին ուղղված այլ վնասները կամ դրանց սպառնալիքները՝

- պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում,
- պետական հիմնարկներում և կազմակերպություններում,
- հանրային նշանակության կազմակերպություններում:

Հարթակի միջոցով անանուն եղանակով հաղորդում ներկայացնելու դեպքում Ձեր անանունությունը երաշխավորվում է «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

2. Գնումների համակարգ

Կայք՝ www.gnumner.minfin.am

Նկարագրություն՝ Այս հարթակում կարող եք գտնել կազմակերպությունների գնումների պլաններ, հաշվետվություններ, հանրային հսկողությանը վերաբերող նյութեր, շահերի բախման բացակայության և իրական շահառուների տվյալների մասին հայտարարություններ և գնումների գործընթացին վերաբերվող մի շարք նյութեր:

3. Դատական տեղեկատվական համակարգ

Կայք՝ www.datalex.am

Նկարագրություն՝ Այս համակարգը հնարավորություն է տալիս գտնելու համապատասխան դատական գործեր, որոնելու ՀՀ օրենքներ, հետևելու դատական նիստերի ժամանակացույցին և այլն:

4. Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակ

Կայք՝ www.e-request.am

Նկարագրություն՝ Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի օգնությամբ քաղաքացիները կարող են տեղեկատվություն տնօրինող պետական մարմիններին առցանց եղանակով ուղղել իրենց հարցումը, դիմումը կամ բողոքը և սահմանված ժամկետում առցանց եղանակով ստանալ դրա պատասխանը:

5. Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք

Կայք՝ www.e-draft.am

Նկարագրություն՝ Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում տեղադրվում են ՀՀ գերատեսչությունների կողմից մշակվող նորմատիվ իրա-

վական ակտերի նախագծերը: Կայքը հնարավորություն է ընձեռում ծանոթանալու տեղադրված նախագծերին, որոնելու նախագծեր, հետևելու դրանց հետագա ընթացքին, ծանոթանալու ներկայացված առաջարկություններին, իսկ կայքում գրանցվելու դեպքում նաև ներկայացնելու առաջարկություններ, ծանոթանալու նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ամփոփաթերթին, ընդունված առաջարկություններին կամ դրանք չընդունելու հիմնավորումներին:

6. Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ

Կայք՝ www.arlis.am

Նկարագրություն՝ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի միասնական էլեկտրոնային շտեմարան, որը հնարավորություն է տալիս մեկ միասնական համակարգից ծանոթանալու ՀՀ օրենսդրությանը՝ սկսած Միջազգային պայմանագրերից մինչև համայնքի ավագանու ընդունած որոշումները:

7. Հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրերի ռեեստր

Կայք՝ registry.cpcarmenia.am, http://cpcarmenia.am/hy/declarations-registry/

Նկարագրություն՝ Ռեեստրում ներկայացված է հայտարարատու պաշտոնատար անձանց տարեկան և պաշտոնեական պարտականությունները ստանձնելու, դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրերը:

8. Մեկ անձից կատարվող գնումների հարթակ

Կայք՝ www.e-gov.am/transparent/

Նկարագրություն՝ Հրապարակային և թափանցիկ կառավարման ապահովման նպատակով ստեղծվել է պետական գերատեսչությունների կողմից մեկ անձից կատարվող գնումները ներկայացնող այս բաժինը:

5. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈԼԵԳԻԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ՝ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ[194]

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ հաստատություն) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) անդամների և մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոնները (այսուհետ՝ վարքականոն) բխում են «Հանրակրթության մասին» օրենքով, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատությունների կանոնադրություններով, հանրակրթական պետական չափորոշիչներով, ուսուցչին ներկայացվող մասնագիտական չափանիշներով սահմանված պահանջներից:

2. Սույն հավելվածով սահմանվում է ընդհանուր էթիկական արժեքներին, սկզբունքներին և նորմերին համապատասխան վարքականոն, որի նպատակն է՝
1) ուղղորդել հաստատության խորհրդի անդամների և մանկավարժական աշխատողներին՝ ապահովելու պատշաճ վարքագիծ.
2) ամրապնդել հանրության վստահությունը հանրակրթության բնագավառի և մանկավարժական աշխատողների նկատմամբ.
3) ապահովել վարքագծի սկզբունքների կիրառման միասնականությունը:

3. Հաստատությունում մանկավարժական խորհրդի որոշմամբ, ելնելով հաստատության առանձնահատկություններից, համայնքում գործող ավանդույթներից, կարող են սահմանվել վարքականոնի առանձին դրույթների հավելումներ և լրացումներ՝ ներքին կարգապահական կանոններում՝ սույն կարգում ամրագրված նպատակներին ու հիմնական սկզբունքներին չհակասելու պայմանով:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐԸ

4. Խորհրդի անդամը՝
1) պարտավոր է հարգել հանրության բարոյական նորմերը, մարդու արժանապատվությունը, անհարկի չընդգծել պաշտոնեական դիրքը.

194 Հաստատված է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թ. փետրվարի 24-ի N 10-Ն հրամանով, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=174675 (դիտված 26.05.2024 թ)

2) պետք է լինի անկողմնակալ, օրինապահ, զուսպ, բարեկիրթ, համբերատար, հարգալից վարվի այն բոլոր անձանց նկատմամբ, ում հետ առնչվում է իր գործառույթներն իրականացնելիս.
3) չպետք է օգտագործի պաշտոնական դիրքը՝ իր կամ այլ անձանց համար արտոնություններ, բացառություններ և այլ նպաստավոր պայմաններ ստեղծելու համար, որոնք կարող են վնասել հաստատության կրթության կառավարմանը.
4) հաստատությունում իրեն վերապահված գործառույթներն իրականացնելիս պետք է դրսևորի քաղաքականապես չեզոքություն և զսպվածություն.
5) պետք է թույլ չտա, որ անձնական կամ այլ հարաբերություններն ազդեցություն ունենան խորհրդի անդամների պարտականությունների կատարման վրա.
6) չպետք է ստեղծի բարոյահոգեբանական ճնշող մթնոլորտ, որն անմիջական ազդեցություն կարող է ունենալ գործընկերների վրա.
7) իր լիազորությունները կատարելիս պարտավոր է խուսափել այնպիսի հարաբերություններից, որոնք առաջացնում են կամ կարող են առաջացնել շահերի բախում կամ որոնց առկայության պայմաններում հնարավորություն չի ունենա անաչառ և անկողմնակալ կատարելու իր պարտականությունները.
8) պետք է նախատեսված ժամկետում մասնակցի խորհրդի նիստերին, չպետք է խոչընդոտի խորհրդի մյուս անդամների աշխատանքային պարտականությունների կատարմանը:

3. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԿԱՆՈՆԸ

5. Մանկավարժական աշխատողը՝

1) պետք է գիտակցի իր սոցիալական դերի, հետևաբար՝ հասարակության մեջ սոցիալական դերը գիտակցող անհատի ձևավորման գործում իր առաքելությունը.
2) պետք է հարգի սովորողի անհատականությունը՝ անկախ նրա ազգությունից, տարիքային, ֆիզիկական, մտավոր, անձնային առանձնահատկություններից, դավանանքից, ռասայից, սեռից, լեզվից, ընտանեկան և սոցիալական կարգավիճակից.
3) որոշումներ ընդունելիս պետք է գործի ազնվորեն՝ ցուցաբերելով քաղաքավարություն, ողջամտություն.
4) պարտավոր է հաստատության գույքը, ֆինանսական միջոցները, տեղեկատվական միջոցները, էլեկտրոնային համակարգերը օգտագործել ծառայողական նպատակներով.
5) պարտավոր է խուսափել սոցիալական ցանցերում անձնական այնպիսի լուսանկարներ և տեսագրություններ հրապարակելուց, որոնք կարող են հաստատությանը, գործընկերներին կամ սովորողներին վարկաբեկող լուրերի տարածման պատճառ հանդիսանալ, հաստատության մասին հրապարակումներում պետք է լինի զուսպ և անկողմնակալ.
6) պարտավոր է հաստատությունում դրսևորել քաղաքական չեզոքություն, հաստատությունից դուրս իր գործունեության ոլորտի շահառուների (սովորող, ծնող) նկատմամբ դրսևորել զսպվածություն.

7) պարտավոր է զերծ մնալ հաստատությունում կրոնական գործունեություն և քարոզչություն իրականացնելուց.
8) պարտավոր է խուսափել նվեր ընդունել կամ տալ, եթե ողջամտորեն կարող է ենթադրվել, որ այն կապված է մասնագիտական պարտականությունների իրականացման հետ, որը կարող է ուղղակի կամ անուղղակի կերպով ազդել իր կողմից իրականացվող մասնագիտական գործունեության որակի կամ համապատասխանության վրա:

4. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂ – ՍՈՎՈՐՈՂ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Մանկավարժական աշխատողը՝

1) սովորողների հետ իր հարաբերությունները պետք է կառուցի փոխադարձ հարգանքի վրա.
2) պետք է դասարանում ձևավորի բարենպաստ մթնոլորտ, որին կարող է հասնել նաև սովորողներին վարքագծի կանոնները սովորեցնելու, հետևողականորեն դրանց կիրառմանը ուղղորդելու՝ սեփական օրինակի ճանապարհով.
3) պետք է անաչառ ու բարյացակամ լինի բոլոր սովորողների նկատմամբ, հետևողական՝ նրանց կրթական պահանջների բավարարման գործում, պատրաստակամությամբ արձագանքի այդ առնչությամբ ծագած բոլոր խնդիրներին.
4) պետք է նպաստի սովորողների մեջ այնպիսի դրական անձնային հատկանիշների ձևավորմանը, ինչպիսիք են՝ ինքնակրթությունը, ուսման արժևորումը, ինքնադաստիարակությունը, ինքնուրույնությունը, ինքնավերահսկումը, պատասխանատվությունը.
5) պետք է նպաստի սովորողների ներանձնային և միջանձնային հարաբերություններում դրսևորվող դրական այնպիսի որակների զարգացմանը, ինչպիսիք են համագործակցելու, ապրումակցման, ուրիշներին օգնելու պատրաստակամությունը.
6) սովորողի մեջ սերմանի պատասխանատվություն հաստատության և հանրային սեփականություն համարվող գույքի պահպանման համար.
7) պետք է հարգի սովորողների մտքի, խղճի և դավանանքի ազատությունը, պատշաճ ուշադրություն դարձնի նրանց արտահայտած կարծիքներին ու հայացքներին և նրանց չպարտադրի իր սեփական հայացքները.
8) յուրաքանչյուր սովորողի հիմնարար իրավունքները երաշխավորելու համար պետք է հարգի յուրաքանչյուր սովորողի անձնական կյանքը և չտարածի կամ չփոխանցի սովորողի կողմից սոցիալական կայքերում.
9) պետք է պահանջկոտ և հետևողական լինի բոլոր սովորողների նկատմամբ, ընդ որում՝ այդ պահանջկոտությունը պետք է հիմնավորված լինի և բխի գործընթացի կազմակերպման համընդհանուր շահերից.
10) պարտավոր է գաղտնի պահել սովորողի մասնավոր կյանքին առնչվող տեղեկությունը, ինչպես նաև նրա կողմից իրեն վստահված գաղտնիքը՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Սովորողի անձին վերաբերող տեղեկությունը կարող է օգտագործվել բացառապես ի շահ սովորողի.

11) պետք է սովորողներին ծանոթացնի հաստատության սահմանած ներքին կարգապահական կանոններին, ուղղորդի, աջակցի և հետևի դրանց կատարմանը.

12) ելնելով իր, նաև ոլորտի հեղինակության պահպանման շահերից՝ պետք է անաչառ լինի սովորողներին գնահատելիս, գնահատումը պետք է լինի հիմնավորված և անկողմնակալ՝ բարոյական արժեքներին ու սկզբունքներին համապատասխան: Սովորողների նվաճումները գնահատելիս ուսուցիչը պարտավոր է ձգտել օբյեկտիվության և արդարության: Իրավունք չունի սեփական հայեցողությամբ բարձրացնելու կամ իջեցնելու սովորողների գնահատականները, առաջադիմությունն արհեստականորեն բարձրացնելու նպատակով նրանց փոխարեն ուղղելու թույլ տված սխալները կամ քողարկել դրանք.

13) չպետք է դրսևորի կոպիտ, արհամարհական վերաբերմունք սովորողի անձի նկատմամբ, պետք է զերծ մնա անհիմն, կրկնվող մեղադրանքներից:

5. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂ - ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Մանկավարժական աշխատողը՝

1) պետք է ձգտի գործընկերների հետ ակտիվ համագործակցության, փոխադարձաբար հարգի և օգնի գործընկերոջը՝ ի շահ հաստատության: Գործընկերներին պետք է միավորի փոխադարձ վստահությունը, թիմային համերաշխությունը, միմյանց աջակցելու ազնիվ մղումն ու պատրաստակամությունը.

2) պարտավոր է պաշտպանել ոչ միայն իր, այլև հաստատության, յուրաքանչյուր գործընկերոջ հեղինակությունը: Սովորողների կամ այլ անձանց ներկայությամբ չպետք է քննադատի գործընկերներին.

3) գործընկերների և ղեկավարության աշխատանքային գործունեության գնահատումը մանկավարժական աշխատողի իրավունքն ու պարտականությունն է, ուստի արգելվում է քննադատության համար վերջինիս հետապնդումը: Ցանկացած դիտարկում պետք է լինի հաստատության ներսում, անաչառ և հիմնավոր, արվի նրբանկատ կերպով, ոչ վիրավորական շեշտով: Բամբասանքն անհանդուրժելի է հաստատությունում.

4) պարտավոր է խուսափել աղմկահարույց իրավիճակներ ստեղծելուց և ընդհարումներ հրահրելուց: Տարաձայնությունների առաջացման դեպքում պետք է ձգտի հարթել դրանք՝ ցուցաբերելով կառուցողական մոտեցում.

5) չպետք է թաքցնի գործընկերների գործած սխալներն ու զանցանքները, չպետք է իր քաղաքական և կրոնական կողմնորոշումը պարտադրի այլ անձանց.

6) հանրակրթության ոլորտի աշխատակիցների, սեփական իրավունքների առավել արդյունավետ պաշտպանության նպատակով կարող է համերաշխություն արտահայտել գործընկերների, նրանց միությունների օրինական պահանջներին:

6. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂ - ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Մանկավարժական աշխատողը՝

1) պետք է հարգալից և փոխըմբռնումով վերաբերվի սովորողների ծնողներին, սովորողի կրթության իրավունքն իրացնելու գործում նրանց ընդունի որպես աջակից.

2) չպետք է հրապարակի ինչպես սովորողների, այնպես էլ ծնողների՝ միմյանց մասին իրեն վստահած կարծիքներն ու դիտարկումները.

3) ծնողների հետ մանկավարժական աշխատողի հարաբերությունները ոչ մի կերպ չպետք է ազդեն սովորողների գնահատականի կամ կրթական այս կամ այն ծրագրերում նրանց չհիմնավորված ներառելու կամ չներառելու հանգամանքի վրա.

4) մանկավարժական աշխատող-սովորող փոխհարաբերությունների և սովորողների գնահատականների վրա ոչ մի կերպ չպետք է ազդի սովորողների ծնողների կողմից հաստատությանը ցուցաբերված աջակցությունը՝ անկախ դրա ձևից, չափից, կարևորությունից և բարդության աստիճանից.

5) սովորողի անվտանգության նկատառումներց ելնելով՝ խնդրահարույց իրավիճակ առաջանալու դեպքում ցանկալի է, որ մանկավարժական աշխատողը հարցը պարզաբանի տվյալ սովորողի ծնողի հետ, անհամաձայնության դեպքում դիմի դասղեկին, հետո՝ հաստատության տնօրենի տեղակալին, տնօրենին.

6) պետք է ծնողին իրազեկի, որ խնդրահարույց հարցերի առկայության դեպքում ցանկալի է մինչև կրթության գերատեսչական մարմին դիմելը հարցը պարզաբանել հաստատությունում:

7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎԱՐՔԱԿԱՆՈՆԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

9. Հաստատությունում վարքականոնի կենսագործումն իրականացվում է անհատի գիտակցման, համարժեք վարքագծի դրսևորման, իսկ վերահսկողությունը՝ ինքնագնահատման, հասարակական կարծիքի զուգակցման ու համագործակցման միջոցով:

10. Հասարակական դերակատարումը պատշաճ իրականացնելու նպատակով մանկավարժական աշխատողի համար կարևոր է վարքականոնի կիրառումը իրեն վերապահված գործառույթներն իրականացնելիս:

11. Հաստատությունում մանկավարժական աշխատողների գործունեությունն ու վարքագիծը վերահսկելու, կարողությունը խթանելու նպատակով հաստատության տնօրենը պարտավոր է իրականացնել փաստաթղթի դրույթների պատշաճ իրազեկում, որոնք հասցեատերը պարտավոր է յուրացնել ու դարձնել իր գործելակերպի և մտադրությունների ուղեցույց:

12. Հաստատության ղեկավարությունն իրավունք չունի ուսուցչից պահանջելու կամ սեփական նախաձեռնությամբ՝ առանց ուսուցչի գիտության, հավաքելու նրա անձնական կյանքին վերաբերող տեղեկություններ, եթե դա ուղղակիորեն չի առնչվում վերջինիս կողմից իր աշխատանքային պարտականությունների կատարմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Այդաբիրյան Ռ., Լիպարիտյան Ժ., Փափազյան Թ., 2020 թ. Ղարաբաղյան պատերազմը և Հայաստանի ապագա արտաքին ու անվտանգության քաղաքականությունները, 2021, https://enlightngo.org/wp-content/uploads/2022/01/Սպիտակ-Թուղթ.-final.pdf

2. Ականատես դիտորդական առաքելություն, Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի հերթական ընտրությունների դիտորդական առաքելության ամփոփիչ զեկույց, 2023, https://www.transparency.am/hy/publication/pdf/354/10888

3. Աստվածաշունչ, Ելից գիրք, 23:8

4. Արմավիրի, Արարատի մարզերում և Երևանում իրականացված «Հասարակագիտություն» առարկայի ուսուցիչների ֆոկուս խմբային քննարկումների ամփոփում, 2023 թ.

5. Բեսելիա Ն., Բոկերիա Ն., Կորձաձե Մ., Ինչպես դառնամ ակտիվ քաղաքացի. աշակերտի գիրք, քաղաքացիական կրթության օժանդակ ձեռարկ IX դասարանի համար, երկրորդ հրատարակություն, 2015 https://www.civics.ge/uploads/how_to_become_an_active_citizen_student_manual_folder_.pdf

6. Գյուլբուդուղյան Ա., Հարությունյան Կ., Թովմասյան Տ., Հասարակագիտություն: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի 9-րդ դասարանի համար, Երևան, 2014, http://online.fliphtml5.com/fumf/vwal/#p=50

7. Գործընկերություն հանուն լավ կառավարման, Բարձրագույն ուսումնական հաստատությունների տիպային էթիկայի կանոնագրքեր՝ ուսանողների, վարչական և ակադեմիական աշխատակազմի համար. առաջարկ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը, 2016, https://rm.coe.int/code-of-ethics-arm/168077621a

8. ԹԻՀԿ, Գրիգորյան Ա., Այդինյան Վ., Իրական շահառուների թափանցիկությունը. միջազգային փորձ և հայաստանյան գործընթացներ, 2021 https://transparency.am/assets/documents/1643014090-44187-797.pdf

9. Գրիգորյան Հ., Կոռուպցիա մաս 1, https://www.boonus.am/lesson/21

10. Գրիգորյան Հ., Կոռուպցիա մաս 2, https://www.boonus.am/lesson/22

11. ԵԱՀԿ, Տնտեսական և բնապահպանական գործունեության համակարգողի գրասենյակ, Ինչպես պայքարել կոռուպցիայի դեմ

12. Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես, Վարչական ռեսուրսներ և արդար ընտրություններ, 2019, https://rm.coe.int/booklet-administrative-resources-and-fair-elections-public-ethics-seri/1680a7943f

13. ԹԻՀԿ, 2018 թ.-ի Կոռուպցիայի ընկալման համաթիվ, https://transparency.am/hy/cpi/2018

14. ԹԻՀԿ, Աշակերտական խորհուրդների գործունեության արդյունավետությունը, Երևան, 2022 թ, էջ 49, https://transparency.am/hy/publication/pdf/306/10040

15. ԹԻՀԿ-ի գործունեության մասին, www.moj.am/storage/uploads/T1A_2019.pdf

16. ԹԻՀԿ, Ինչ է կոռուպցիան, https://transparency.am/hy/what-is-corruption

17. ԹԻՀԿ, Հակակոռուպցիոն բառարան, https://transparency.am/glossary/term/state_capture

18. ԹԻՀԿ, Հակոբյան Ա., Խուդավերդյան Ա., Հոկտանյան Վ., Հովհաննիսյան Գ., Բեզիրջյան Խ., Խեչոյան Թ./ «Հակակոռուպցիոն ակադեմիա» դասընթացի գործնական առաջադրանքների ժողովածու, Երևան, 2022 https://www.transparency.am/hy/publication/pdf/304/10018

19. ԹԻՀԿ, Հայաստանի Հանրապետությունում իրավաստեղծ գործընթացների մասնակցայնության ապահովում, քաղաքականության վերլուծություն, Երևան, 2023,

20. Ժողովրդավարական կառավարման փիլիսոփայական հիմքերը, https://www.engagedcitizen.am/book#text_3.8

21. Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն - ՍԻՎԻՏԱՍ, Նախագծային ուսուցման ձեռնարկ: «Հասարակագիտության ուսուցիչների համար», Երևան, 2023

22. Ծաղիկյան Ս., Կոռուպցիայի հակազդումը Հայաստանում.- ՍՊԲ. Անտարես, 2006

23. Ծաղիկյան Ս., Սարգսյան Գ., Կոռուպցիայի հակազդման քաղաքականությունը.-ՀՀ «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ, 2010

24. Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման գործընթացի իրականացման նպատակով ստեղծված հանձնաժողովի 2023 թ. հունվարի 10-ի որոշում, https://www.gov.am/files/docs/5144.pdf

25. Հայաստան. աղքատության սուբյեկտիվ գնահատականը 2010 թ.-ին, https://armstat.am/file/article/poverty_2011a_5.pdf

26. Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխություններ, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, 2015, https://www.arlis.am/documentview.aspx?docid=102510

27. Հայրապետյան Գ., Խաչատրյան Մ., Զգուշ, երեխաներ են, Ուղեցույց երեխաների անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ երեխաների և բոլորի համար, Երևան, 2018, https://shorturl.at/8TuOm

28. Հասարակագիտություն: 7-րդ դասարանի դասագիրք, Հ. Բայադյան, Դ. Ստեփանյան, Վ. Սողոմոնյան, «Մասնակցային դպրոց» ԿՀ, Երևան 2023, https://online.fliphtml5.com/fumf/uycm/#p=2

29. «Հասարակագիտություն» առարկայի ավագ դպրոցի չափորոշիչ և ծրագրեր, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2009

30. Հասարակագիտություն: Հանրակրթական հիմնական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք, Կ. Հարությունյան, Հ. Բարսեղյան, Ն. Գալստյան, Ա. Մանուչարյան, Տ. Սիմոնյան, Երևան 2023, https://online.fliphtml5.com/fumf/atnk/#p=5

31. Հասարակագիտություն: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի 8-րդ դասարանի համար, Ա. Գյուլբուդաղյան, Կ. Հարությունյան, Տ. Թովմասյան, Երևան 2013, https://online.fliphtml5.com/fumf/bjlf/#p=2

32. Հասարակագիտություն: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի 9-րդ դասարանի համար, Ա. Գյուլբուդաղյան, Կ. Հարությունյան, Տ. Թովմասյան, Երևան, 2014, https://online.fliphtml5.com/fumf/vwal/#p=2

33. Հասարակագիտություն: 9-րդ դասարանի դասագիրք, Գ. Ղազինյան, Ա. Վաղարշյան, Երևան, 2014, https://online.fliphtml5.com/fumf/yxxz/#p=2

34. Հասարակագիտություն: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի 10-րդ դասարանի համար, Ս. Պետրոսյան, Ս. Խաչատրյան, Հ. Խաչատրյան և այլք, Երևան, 2009, https://online.fliphtml5.com/fumf/oopd/#p=2

35. Հասարակագիտություն 10: Հանրակրթական ավագ դպրոցի 10-րդ դասարանի դասագիրք, Կ. Հարությունյան, Հ. Բարսեղյան, Ն. Գալստյան, Ա. Մանուչարյան, Երևան, 2023, https://online.fliphtml5.com/jkxbr/yysb/#p=4

36. Հասարակագիտություն: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի 11-րդ դասարանի համար, Գ. Ղազինյան, Ա. Վաղարշյան, Ա. Գյուլբուդաղյան, Երևան, 2015, https://online.fliphtml5.com/fumf/jrlc/#p=2

37. Հասարակագիտություն: Դասագիրք հանրակրթական ավագ դպրոցի 12-րդ դասարանի համար, Ս. Պետրոսյան, Ս. Խաչատրյան, Երևան, 2011, https://online.fliphtml5.com/fumf/aibo/#p=2

38. Հարությունյան Խ., Ազդարարի ուղեցույց, Երևան, 2019,https://transparency.am/hy/publication/pdf/149/1226

39. Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ, Հայաստանի բարեվարքության ծրագիր. կոռուպցիայի հանրային ընկալումը, 2022 թ. https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Arm_v2.pdf

40. ՀՀ Կառավարություն, Խորհրդի կազմ, https://www.gov.am/am/anticorruption-council-members/

41. ՀՀ Կառավարության N 136-Ն որոշում, ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին, 2021թ, https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

42. ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի նոյեմբերի 24-ի N62-Ն հրաման, Հանրակրթական ուսումնական հաստատությունների 7-րդ և 10-րդ դասարանների «Հասարակագիտություն» առարկայի ծրագրերը հաստատելու մասին, https://www.irtek.am/views/act.aspx?aid=156310

43. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի փետրվարի 28-ի N141-Ա/Ք հրամանի հավելված N1, հանրակրթական հիմնական դպրոցի «Հասարակագիտություն» առարկայի չափորոշիչ և ծրագիր, 8-9-րդ դասարաններ, 2012, https://edumedia-depot.gei.de/bitstream/handle/11163/2186/792923987_2012_A.pdf?sequence=2

44. ՀՀ Օրենքը Հակակոռուպցիոն կոմիտեի մասին, 2021, https://www.arlis.am/documentview.aspx?docID=151799

45. ՀՀ օրենք Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին, https://www.arlis.am/documentview.aspx?docid=44673

46. Ղուրան, Սուրա Ալ-Բակարա, 02:188

47. Մասնակցային բյուջետավորում, Ինչ է մասնակցային բյուջետավորումը, https://pbudgeting.am/?p=171

48. Միջազգային կառույցների կողմից հրապարակված ցուցանիշների ուսումնասիրություն, ՀՀ Կոռուպցիայի ընկալման ինդեքս – 2022, Հաշվետվություն «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» միջազգային կազմակերպության կողմից հրապարակված զեկույցի (2022 թ.) հիման վրա, Լույս հիմնադրամ, 2023

49. Մուրադյան Մ. Հ., Պետությունը և կոռուպցիան. սոցիալական հիմնախնդրի միջազգային և ներպետական իրավական լուծումները, ՀՀ ոստիկանության կրթահամալիր, Երևան, 2012

50. Շապովալովա Ն., Տարապատովա Օ.,Պայքար կոռուպցիայի դեմ Արևելյան գործընկերության երկրներում. քաղաքացիական հասարակության տեսակետները, https://www.moj.am/storage/uploads/001.Ardir_49..pdf

51. Սարգսյան Ն., Ավետիսյան Հ., Օդաբաշյան Հ. Խորհրդարանական վերահսկողություն. գործիքակազմն ու մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում .- Երևան, «Լույս» հիմնադրամ, 2020, https://www.luys.am/img/artpic/small/856a815aeb1803c6615aխորհրդարանականվերահսկողություն_Final.pdf

52. Տեր-Գաբրիելյան Գ., Քաղաքացիական կրթության կարողունակությունները գնահատելու գործիքը մշակելու ճանապարհին, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2021 թ., https://epfarmenia.am/sites/default/files/Document/Civics_Competence_Arm.pdf

53. Քաղաքացիական կրթություն բոլորի համար, Գլուխ 1, Դաս 10, Քաղաքացի, հասարակություն, պետություն, http://am.civiceducation.ge/lessons/1-10

54. Алёна Вандышева, После войны наступает расследование: злоупотребления властью в воюющих странах, лекция

55. Addressing corruption as a driver of democratic decline: positions towards summit for democracy, 2021, https://www.transparency.org/en/publications/summit-for-democracy-2021-addressing-corruption-democratic-decline

56. Aiolfi G., Müller Torbrand C., Is Collective Action against corruption a competition risk for companies?, ICC, 2022, https://shorturl.at/w3Rri

57. Anderson J., To tackle climate change, take on corruption, Development, and a Changing Climate, 2021, https://blogs.worldbank.org/climatechange/tackle-climate-change-take-corruption

58. Augusto Lopez-Claros, 6 Strategies to Fight Corruption, Global Governance Forum, 2014 https://globalgovernanceforum.org/6-strategies-to-fight-corruption/

59. Barret D., State capture and development: a conceptual framework, J Int Relat Dev (Ljubl). 2023, https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC10034251/

60. Barrett D. E. State capture and development: a conceptual framework. J Int Relat Dev (2023). https://link.springer.com/article/10.1057/s41268-023-00290-6

61. Bertrand Venard, Corruption and war: two scourges that feed off each other, The Conversation, 2023, https://theconversation.com/corruption-and-war-two-scourges-that-feed-off-each-other-199265

62. Billon P., Buying Peace or Fuelling War: The Role of Corruption in Armed Conflicts, Journal of International Development, vol.15, 2003, https://gsdrc.org/document-library/buying-peace-or-fuelling-war-the-role-of-corruption-in-armed-conflicts/

63. Bonderud D., The most mind-blowing money laundering statistics of 2023, https://shorturl.at/Lr35x

64. Da Ros L., Checks and Balances: The Concept and Its Implications for Corruption, 2021, https://www.scielo.br/j/rdgv/a/4RS7DBhrzgc9Bn8K6drZQwG/

65. Duncikaite Ieva, Participatory budgeting initiatives lead to greater transparency: example of two Lithuanian schools, 2019, https://etico.iiep.unesco.org/en/participatory-budgeting-initiatives-lead-greater-transparency-example-two-lithuanian-schools

66. Effects Of Corruption On People, Journal of Contemporary Issues in Business and Government, https://www.cibgp.com/article_7367_bb42f63cce207bcb4a7ead8080816046.pdf

67. Elsayed S., Cryptocurrencies, corruption and organised crime Implications of the growing use of cryptocurrencies in enabling illicit finance and corruption, Transparency International the global coalition against corruption, 2023, https://knowledgehub.transparency.org/helpdesk/cryptocurrencies-corruption-and-organised-crime-implications-of-the-growing-use-of-cryptocurrencies-in-enabling-illicit-finance-and-corruption

68. Every year, over US$ 1 trillion is paid in bribes around the world, enriching the corrupt and robbing generations of a future, UNODC, https://www.unodc.org/newsletter/200601/page004.html

69. GIACC, Liability for Corruption, 2020, https://shorturl.at/y3OL9

70. GIACC, What is Corruption, https://shorturl.at/fq9F7

71. Gloppen S., Courts, corruption and judicial independence, 2014, https://www.cmi.no/publications/file/5091-courts-corruption-and-judicial-independence.pdf

72. Goel R., Sharma P., Kaushal T., Separation of powers, 2022, https://blog.ipleaders.in/separation-of-powers/#Introduction

73. Gumede W., Policy briefs 33: impact of corruption on democracy and development, Democracy works foundation - Providing tools to build resilient democracies., providing tools to build resilient democracies., 2019, https://www.democracyworks.org.za/policy-brief-33-impact-of-corruption-on-democracy-and-development/

74. Heather A. Conley, Ruslan Stefanov, James Mina, Martin Vladimirov, The Kremlin Playbook: Understanding Russian Influence in Central and Eastern Europe, Appendix.: Case Studies, 2016, https://www.jstor.org/stable/resrep23311.13

75. Hrvolova M., Katz J., Alexander J., The Anti-Corruption Role of Free Media and Investigative Journalism, 2021, https://www.gmfus.org/news/anti-corruption-role-free-media-and-investigative-journalism

76. Hülya Ünlü, Merve Karacaer Ulusoy, What is Administrative Corruption, Handbook of Research on Theory and Practice of Financial Crimes, 2021, https://www.igi-global.com/dictionary/innovation-and-corruption-in-turkey/97827

77. Human trafficking and corruption, OECD, https://shorturl.at/9XzLy

78. International Monetary Fund, Sanjeev Gupta, Hamid Davoodi, Rosa Alonso-Terme, Does corruption affect income inequality and poverty? 1998, https://shorturl.at/C05V9

79. Javier Luque, Bulgarian independent media operating in a 'captured state', International Press Institute, 2020, https://ipi.media/bulgarian-independent-media-operating-in-a-captured-state/

80. Kalman G., Offshore Finance Hurts Us—All of Us, Global financial Integrity, 2022, https://gfintegrity.org/offshore-finance-hurts-us-all-of-us/

81. Klitgaard R., A Holistic Approach to the Fight against Corruption, 2008, https://scholar.cgu.edu/robert-klitgaard/wp-content/uploads/sites/22/2017/02/Holistic_Approach_1-08.pdf

82. Klitgaard R., On culture and corruption, Blavatnik School of Government, University of Oxford, 2017, page 16, https://www.bsg.ox.ac.uk/sites/default/files/2018-05/BSG-WP-2017-020.pdf

83. Knowledge tools for academics and professionals UNODC Module Series on Anti-Corruption, Module 1, What Is Corruption and Why Should We Care? https://www.unodc.org/e4j/zh/anti-corruption/module-1/key-issues/effects-of-corruption.html

84. Knowledge tools for academics and professionals UNODC Module Series on Anti-Corruption, Module 3, Corruption and Comparative Politics, https://grace.unodc.org/grace/uploads/documents/academics/Anti-Corruption_Module_3_Corruption_and_Comparative_Politics.pdf

85. Knowledge tools for academics and professionals UNODC Module Series on Anti-Corruption, Module 4, Public Sector Corruption, https://grace.unodc.org/grace/uploads/documents/academics/Anti-Corruption_Module_4_Public_Sector_Corruption.pdf

86. Knowledge tools for academics and professionals UNODC Module Series on Anti-Corruption, Module 5, Private Sector Corruption, https://grace.unodc.org/grace/uploads/documents/academics/Anti-Corruption_Module_5_Private_Sector_Corruption.pdf

87. Knowledge tools for academics and professionals UNODC Module Series on Anti-Corruption, Module 7, Corruption and Human Rights, https://grace.unodc.org/grace/uploads/documents/academics/Anti-Corruption_Module_7_Corruption_and_Human_Rights.pdf

88. Knowledge tools for academics and professionals UNODC Module Series on Anti-Corruption, Module 10, Citizen participation in Anti-Corruption Efforts, https://www.unodc.org/e4j/en/anti-corruption/module-10/key-issues/the-role-of-citizens-in-fighting-corruption.html

89. Kopecek Vincenc, How to Capture a State. The Case of Azerbaijan, University of Ostrava, 2016, https://www.researchgate.net/publication/304284675_How_to_Capture_a_State_The_Case_of_Azerbaijan

90. Matorera D., Corruption: Drivers, Modes and Consequences, Corruption - New Insights, 2022, Corruption: Drivers, Modes and Consequences | IntechOpen

91. Mauro P., Why Worry About Corruption? ECONOMIC ISSUES NO. 6, 1997, https://www.imf.org/EXTERNAL/PUBS/FT/ISSUES6/INDEX.HTM

92. Mgbemere E. Re-submission of best practice that link anti-corruption measures with the realization and protection of human rights, Center for Grassroot Development and Crime Prevention, page 2 https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Issues/Corruption/BestPractices/CentreDevelopmentCrimePrevention.docx

93. Michael A. Weber, Global Trends in Democracy and Authoritarianism: Challenges to Press Freedom, 2024, https://crsreports.congress.gov/product/pdf/IF/IF12137

94. Napal G., An assessment of the ethical dimensions of corruption, EJBO Electronic Journal of Business Ethics and Organization Studies, Vol. 11, No. 1 (2006) http://ejbo.jyu.fi/pdf/ejbo_vol11_no1_pages_5-9.pdf

95. OECD, Education for Integrity Teaching on Anti-Corruption, Values and the Rule of Law, page 80, https://www.oecd.org/governance/ethics/education-for-integrity-web.pdf

96. Ohlbaum L. D., Terrorism, Inc.: How Shell Companies Aid Terrorism, Crime, and Corruption, OSF, 2013, https://www.opensocietyfoundations.org/publications/terrorism-inc-how-shell-companies-aid-terrorism-crime-and-corruption#publications_download

97. Patricia Popelier, "A Legal Perspective on Regulatory Impact Assessments," International Symposium on Regulatory Impact Analysis, International symposium - Regulatory Impact Analysis, 23-24 November, 2017, https://www.eca.europa.eu/sites/regulatory-impact-analysisconference/EN/Documents/Artcicle%20Popelier.pdf

98. Pepys N. M., Corruption and the Justice Sector January 2003, Management Systems International, Washington, https://pdf.usaid.gov/pdf_docs/PNACT878.pdf

99. Perlstein Rick, Watergate scandal, United States history, 2023, https://www.britannica.com/topic/The-Washington-Post

100. Project Against Corruption in Albania, Education against corruption, Manual for teachers, Tirana, 2012, https://rm.coe.int/education-against-corruption-en/168078299e

101. Saha S., Democracy and Corruption: An Empirical Analysis in a Cross-Country Framework*, Department of Economics and Finance Massey University Palmerston North, New Zealand, https://www.nzae.org.nz/wp-content/uploads/2011/08/nr1215384016.pdf

102. Saha S., Campbell N., Studies of the Effect of Democracy on Corruption, Department of Applied and International Economics Massey University, Palmerston North New Zealand, Prepared for the 36th Australian Conference of Economists 'Economics of Corruption Session' Tasmania, Australia, 2007, https://esacentral.org.au/images/Saha.pdf

103. Škorić V., Civil society participation: an essential element in anti-corruption efforts, UNCA Coalition Civil Society, 2015, https://uncaccoalition.org/civil-society-participation-an-essential-element-in-anti-corruption-efforts/

104. Social Responsibility and Ethics, https://shorturl.at/sayJz

105. Sofuoglu M., Why war and corruption are inseparable, TRT World, 2021 https://www.trtworld.com/magazine/why-war-and-corruption-are-inseparable-49816

106. Report of the International Narcotics Control Board, chapter I. Drugs and corruption, 2010 https://www.incb.org/documents/Publications/AnnualReports/Thematic_chapters/English/AR_2010_E_Chapter_I.pdf

107. The electoral Knowledge Network, https://aceproject.org/main/english/pc/pc23.htm

108. The Government Defence Integrity, About, https://ti-defence.org/gdi/about/

109. The World Bank, Social Dimensions of Climate Change, 2023, https://www.worldbank.org/en/topic/social-dimensions-of-climate-change

110. Transparency International Deutschland, Corruption as a threat to stability and peace, 2014, https://ti-defence.org/wp-content/uploads/2016/03/2014-01_CorruptionThreatStabilityPeace.pdf

111. Transparency International France, Rafitoson K., Valérian F., Corruption, and climate change: the key to the past and the fight for the future, https://shorturl.at/EofAa

112. Transparency International the global coalition against corruption, Conflict at the bottom, https://www.transparency.org/en/news/conflict-at-the-bottom

113. Transparency International the global coalition against corruption, Judiciary, and law enforcement, https://www.transparency.org/en/our-priorities/judiciary-and-law-enforcement

114. Transparency International the global coalition against corruption, Literature review: corruption as a driver of migration, Anti-Corruption Resource Centre https://knowledgehub.transparency.org/assets/uploads/helpdesk/Literature_review_corruption_and_migrations.pdf

115. Transparency International the global coalition against corruption, LAND CORRUPTION, Our priorities, https://www.transparency.org/en/our-priorities/land-corruption

116. Transparency International the global coalition against corruption, TOPIC GUIDE: ELECTORAL CORRUPTION, ANTI-CORRUPTION MEASURES, https://knowledgehub.transparency.org/guide/topic-guide-on-electoral-corruption/5245

117. Transparency International, What Works to Curb Political Corruption? A Review of the Evidence Base, 2016, https://knowledgehub.transparency.org/assets/uploads/helpdesk/What_works_in_political_corruption_formated_final.pdf

118. United Nations Department of Economic and Social Affairs Public Institutions, Citizen Engagement and Preventing Corruption, https://publicadministration.un.org/en/CitizenEngagementandPreventingCorruption

119. UNODC, Countering the global problem of corruption. Every year, over US$ 1 trillion is paid in bribes around the world, enriching the corrupt and robbing generations of a future. https://www.unodc.org/newsletter/200601/page004.html

120. Upneet Lalli, Praveen Kumari Singh, The Psychology of Corruption, https://mu.ac.in/wp-content/uploads/2023/08/198-214-The-Psychology-of-Corruption.pdf

121. Uslaner M. E., Corruption and inequality, CESifo DICE Report, 2011 https://www.ifo.de/DocDL/dicereport211-forum4.pdf

122. Zamfir I., Fighting corruption globally: The link with human rights, EPRS | European Parliamentary Research Service, 2021 https://www.europarl.europa.eu/RegData/etudes/ATAG/2021/690625/EPRS_ATA(2021)690625_EN.pdf